



ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԿԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ЯЗЫКОВ И СОЦИАЛЬНЫХ НАУК
ИМЕНИ В. БРЮСОВА
YEREVAN BRUSOV STATE UNIVERSITY OF
LANGUAGES AND SOCIAL SCIENCES

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ЯЗЫКОВ И
СОЦИАЛЬНЫХ НАУК ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF YEREVAN BRUSOV STATE UNIVERSITY OF LANGUAGES AND
SOCIAL SCIENCES

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(50)

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2019

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ ԵՊԼՀ գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета ЕГУЯСН.

Bulletin is published twice a year by the decision of YSULS Scientific Council.

Խմբագրական խորհուրդ՝

<i>Եղիազարյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր /գլխավոր խմբագիր/
<i>Արզումանյան Լիլիթ</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Բարլեզիզյան Արամ</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Բիմ-Բաղ Բորիս</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ կրթության ակադեմիայի իսկական անդամ
<i>Գասպարյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Թոփուզյան Աիդա</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Խաչատրյան Կարեն</i> <i>Խաչատրյան Նարայա</i>	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Մարկոսյան Աշոտ</i>	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
<i>Միրումյան Կառլեն</i>	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Նալբանդյան Ջոն</i> <i>Պախասարյան Նարայա</i>	հանրային կառավարման դոկտոր, պրոֆեսոր բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Սերերրյակովա Սվետլանա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Տարվալո Նինա</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խմբագրական կազմ՝

<i>Աբրահամյան Կարինե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Գևորգյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Համբարձումյան Դիանա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Ալավերդյան Անահիտ</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

<i>Ապրեսովա Սոնյա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ասատրյան Սուսաննա</i>	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Հովհաննիսյան Ֆրունզե</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ղազարյան Էլիզա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Մանուկյան Նահրա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Մարգարյան Բելա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Սողկյան Քրիստինե</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ղարիբյան Դավիթ</i>	բանասիրական գիտությունների թեկնածու
<i>Մարոյան Հակոբ</i>	փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Տեխնիկական խմբագիրներ՝

Փրլավջյան Հասմիկ /գլխավոր տեխնիկական խմբագիր/

Ավետիսյան Աննա /տեխնիկական խմբագիր/

Редакционный совет:

Егизарян Гаяне, доктор филологических наук, профессор /гл. редактор/

Арзуманян Лилит, доктор филологических наук, профессор

Барлезизян Арам, доктор филологических наук, профессор

Бим-Бад Борис, доктор педагогических наук, профессор, диств. член Академии Наук РД.

Гаспарян Гаяне, доктор филологических наук, профессор

Топузян Аида, доктор педагогических наук, профессор

Хачатрян Карен, доктор исторических наук, профессор

Хачатрян Наталья, доктор филологических наук, профессор

Маркосян Ашот, доктор экономических наук, профессор

Мирумян Карлен, доктор философских наук, профессор

Налбандян Джон, доктор государственного управления, профессор

Пахсарян Наталья, доктор филологических наук, профессор

Серебрякова Светлана, доктор филологических наук, профессор

Таткало Нина, доктор педагогических наук, профессор

Редакционная коллегия:

Абрамян Карине, доктор филологических наук, профессор

Геворгян Гаяне, доктор филологических наук, профессор

Амбарцумян Диана, доктор филологических наук, профессор

Алавердян Анаит, кандидат филологических наук, доцент

Апресова Сося, кандидат филологических наук, доцент

Асатрян Сусанна, кандидат педагогических наук, доцент

Оганнисян Фрунзе, кандидат филологических наук, доцент

Казарян Элиза, кандидат филологических наук, доцент

Манукян Наира, кандидат филологических наук, доцент

Маргарян Бела, кандидат филологических наук, доцент

Согикян Кристине, кандидат филологических наук, доцент

Гарибян Давид, кандидат филологических наук

Мадоян Акоп, кандидат философических наук

Технические редакторы: *Пилавджян Асмик, Аветисян Анна*

Editorial Council:

Yeghiazaryan Gayane, Doctor of Sciences (Philology), Professor
Arzumanyan Lilit, Doctor of Sciences (Philology), Professor
Barlezizyan Aram, Doctor of Sciences (Philology), Professor
Bim-Bad Boris, Doctor of Sciences (Pedagogy), Professor, Active Member (academician) of the Russian Academy of Sciences
Gasparyan Gayane, Doctor of Sciences (Philology), Professor
Topuzyan Aida, Doctor of Sciences (Pedagogy), Professor
Khachatryan Karen, Doctor of Sciences (History), Professor
Khachatryan Natalya, Doctor of Sciences (Philology), Professor
Markosyan Ashot, Doctor of Sciences (Economics), Professor
Mirumyan Karlen, Doctor of Sciences (Philosophy), Professor
Nalbandyan John, Doctor of Sciences (Public Administration), Professor
Pakhsaryan Natalya, Doctor of Sciences (Philology), Professor
Serebryakova Svetlana, Doctor of Sciences (Philology), Professor
Tatkalo Nina, Doctor of Sciences (Pedagogy), Professor

Editorial Board:

Abrahamyan Karine, Doctor of Sciences (Philology), Professor
Gevorgyan Gayane, Doctor of Sciences (Philology), Professor
Hambardzumyan Diana, Doctor of Sciences (Philology), Professor
Alaverdyan Anahit, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Apresova Sonya, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Asatryan Susanna, Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
Hovhannisyan Frunze, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Ghazaryan Eliza, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Manukyan Naira, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Margaryan Bela, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Soghikyan Kristine, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Gharibyan David, Candidate of Sciences (Pedagogy)
Madoyan Hakob, Candidate of Sciences (Philosophy)

Technical Editors: *Pilavjyan Hasmik, Avetisyan Anna*

Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաառարկագիտական համալսարանի: Լեզվաբանություն և բանասիրություն 1(50): – Երևան, Լինգվա, 2019, 241 էջ:
Вестник Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Брюсова. Лингвистика и филология 1(50). – Ереван, Лингва, 2019, 241 с.
Bulletin of Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Linguistics and Philology 1(50). – Yerevan, Lingva, 2019, 241 pages.

ISSN 1829-3107
© Լինգվա, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ԼԵՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ЛИНГВИСТИКА И МЕЖКУЛЬТУРНАЯ КОММУНИКАЦИЯ
LINGUISTICS AND INTERCULTURAL COMMUNICATION

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵԴՅԱՆ	ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԱՆԳԼԱԼԵՋՈՒ ԱՌՑԱՆՑ ԼՐԱԳՐԱՆՅՈՒԹԵՐՈՒՄ	13
ГАЯНЕ БАРСЕГЯН	НЕОЛОГИЗМЫ КАК СРЕДСТВО АКТУАЛИЗАЦИИ НОВЫХ РЕАЛИЙ В АНГЛИЙСКИХ ЖУРНАЛЬНЫХ СТАТЬЯХ	
GAYANE BARSEGHYAN	NEOLOGISMS AS A MEANS OF ACTUALIZATION OF NEW REALIA IN ENGLISH JOURNALISTIC ARTICLES	
ՋՈՐԻ ԲԱՐՍԵԴՅԱՆ	ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ ՊԵՐԻՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂԱՑՆՈՂ ԵՎ ՆՎԱԶԵՑՆՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	26
ЗОРИ БАРСЕГЯН	ВЛИЯНИЕ УТВЕРЖДЕНИЙ УМЕНЬШАЮЩИХ И УСИЛИВАЮЩИХ КОММУНИКАТИВНЫЕ СТРАТЕГИИ В АКАДЕМИЧЕСКОЙ ПИСЬМЕННОЙ РЕЧИ	
ZORI BARSEGHYAN	THE COMMUNICATIVE STRATEGIES FOR INCREASING AND REDUCING THE FORCE OF STATEMENTS IN ACADEMIC WRITING	
ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ	ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ	33

	ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ	
ГАЯНЕ ГЕВОРГЯН	ДРЕВНЕАРМЯНСКАЯ МОДАЛЬНО-ВРЕМЕННАЯ СИСТЕМА ГЛАГОЛОВ В АРЕАЛЬНЫХ ВАРИАНТАХ АРМЯНСКОГО ЯЗЫКА	
GAYANE GEVORGYAN	OLD ARMENIAN STRUCTURES IN SYSTEMS OF MOOD AND TENSE OF ARMENIAN TERRITORIAL VARIANTS	
Լիլիթ Գեվորգյան	ԱՐԵՎԵԼՔԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ	42
ЛИЛИТ ГЕВОРКЯН	ТЕМА ВОСТОКА В ТВОРЧЕСКОМ МИРЕ ТУМАНЯНА	
LILIT GEVORGYAN	THE THEME OF THE EAST IN TUMANYAN'S CREATIVE WORLD	
Ռուզաննա Գեվորգյան	ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԴՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽԱՔՈՒՄԻԿ ՍՊԱՍՄԱՆ ՀՆԱՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑ ԴԵՏԵԿՏԻՎ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ	54
РУЗАННА ГЕВОРКЯН	ТРАНСПОЗИЦИЯ СИНТАКСИЧЕСКИХ КОНСТРУКЦИЙ КАК СРЕДСТВО ОРГАНИЗАЦИИ ЭФФЕКТА “ОБМАНУТОГО ОЖИДАНИЯ” В ТЕКСТЕ ДЕТЕКТИВНОГО РАССКАЗА	
RUZANNA GEVORGYAN	TRANSPOSITION OF SYNTACTICAL CONSTRUCTIONS AS A MEANS OF CREATION OF THE EFFECT OF DECEPTIVE EXPECTANCY IN DETECTIVE STORIES	
Թամարա Դանիելյան	ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԽՈՍՔԻ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏԻՎ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ԼԵՉԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ՎԱՇԻՆԳՏՈՆ ՓՈՍՏ ԹԵՐԹԻ «ՀԻՆԳ ԲԱՆ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ	66

	<p>ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՈԴԿԱԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)</p> <p>ЛИНГВИСТИЧЕСКАЯ ЭКСПЕРТИЗА РЕЧЕВЫХ МАНИПУЛЯТИВНЫХ ПРИЕМОВ В ПЕЧАТНЫХ СМИ (НА МАТЕРИАЛЕ СТАТЬИ ВАШИНГТОН ПОСТ “ПЯТЬ ВЕЩЕЙ, КОТОРЫЕ НАДО ЗНАТЬ О КАРАБАХСКОМ КОНФЛИКТЕ”)</p> <p>LINGUISTIC EXPERTISE OF SPEECH MANIPULATION TECHNIQUES IN PRINT MEDIA (BASED ON THE ARTICLE “HERE ARE FIVE THINGS YOU NEED TO KNOW ABOUT THE DEADLY FIGHTING IN NAGORNO KARABAKH” BY THE WASHINGTON POST)</p>	
ТАМАРА ДАНИЕЛЯН		
TAMARA DANIELYAN		
ՌՈՒԶԱՆՆԱ ԴՈԽՈՅԱՆ	<p>ՀԱԿԱՆՇՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՆԹԱԴԱՇՏՈՒՄ</p> <p>ПРОЯВЛЕНИЯ АНТОНИМИИ В СЕΜΑΝТИЧЕСКОМ ПОДПОЛЕ РЕЧЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СОВРЕМЕННОГО АРΜЯНСКОГО ЯЗЫКА</p> <p>MANIFESTATIONS OF ANTONYMY IN THE SEMANTIC SUBFIELD OF SPEECH ACTIVITY IN MODERN ARMENIAN</p>	76
РУЗАННА ДОХОЯН		
RUZANNA DOKHOYAN		
ՍՅՈՒԶԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ	<p>ԱԾԱԿԱՆԱԲԱՐ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ</p> <p>СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ИМЕНИ СУЩЕСТВИТЕЛЬНОГО В АДЪЕКТИВНОЙ ФУНКЦИИ В СОВРЕМЕННОМ</p>	84
СЮЗАН ТОРОСЯН		

SYUZAN TOROSYAN	ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКЕ THE SEMANTIC-FUNCTIONAL PECULIARITIES OF THE ADJECTIVIZED NOUNS IN MODERN FRENCH	
Լիլիթ ՀԱԿՈՔՅԱՆ	ՇՀԿ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՆՍԻՏՆՈՒՑԻՈՆԱԼ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՏԱՐՐ	92
ЛИЛИТ АКОПЯН	ДОКУМЕНТЫ ШОС ПО ПРОТИВОДЕЙСТВИЮ ЭКСТРЕМИЗМУ КАК ЭЛЕМЕНТ ИНСТИТУЦИОНАЛЬНОГО ДИСКУРСА	
LILIT AKOPYAN	SCO DOCUMENTS ON COUNTERACTING EXTREMISM AS AN ELEMENT OF INSTITUTIONAL DISCOURSE	
ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՔՋԱՆՅԱՆ	ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ	104
АНАИТ АКОБДЖАНЫН	СЛОВА РАЗГОВОРНОГО СТИЛЯ И КАРАБАХСКИЕ ДИАЛЕКТИЗМЫ В СКАЗКАХ ГАЗАРОСА АГАЯНА	
ANANIT HAKOBYANYAN	COLLOQUIALISM AND KHARABAKH DIALECTAL WORDS IN FAIRY TALES BY GHAZAROS AGHAYAN	
ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ	ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՆՈՒՅՆԱՐԺԵՓՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	113
ДОНАРА КАЗАРЯН	ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКВИВАЛЕНТНОСТИ ХУДОЖЕСТВЕННЫХ ТЕКСТОВ	
DONARA GHAZARYAN	THE PROBLEMS OF EQUIVALENCE IN FICTION TRANSLATION	

ԱՍՏԴԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ	ԻՐՈՒՅԹՆԵՐԻ (ՌԵԱԼԻԱՆԵՐԻ) ԽՆԴԻՐԸ. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԼԵԶՎԱՓՈԽԱԴՐՈՒՄ	124
АСТХИК МАРГАРЯН	ПРОБЛЕМА РЕАЛИЙ: КЛАССИФИКАЦИЯ И ПЕРЕВОД, ПЕРЕДАЧА	
ASTGHİK MARGARYAN	THE PROBLEM OF REALIA: CLASIFICATION AND TRANSMISSION	
ASTGHİK MARGARYAN	LE PROBLÈME DES REALIA: CLASSIFICATION ET TRANSMISSION	
ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ	ԱՐՎԵՍՏԻ ԵԶՐԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	135
АНАИТ МКРЯН	ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ТЕРМИНОВ ИССКУСТВА В ИТАЛЬЯНСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ	
ANAHIT MKRYAN	ETYMOLOGICAL CHARACTERISTICS OF ART TERMS IN ITALIAN AND ARMENIAN	
ԼԻԼԻԹ ՄՈՎՍԵՍՅԱՆ ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ	ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ TechWordNet ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	146
ЛИЛИТ МОВСЕСЯН ЛИЛИТ АКОПЯН	ИЗУЧЕНИЕ КОМПЬЮТЕРНОЙ ТЕРМИНОЛОГИИ В РАМКАХ ПРОЕКТА TechWordNet	
LILIT MOYSESYAN LILIT HAKOBYAN	STUDY OF COMPUTER TERMINOLOGY THROUGH TechWordNet PROJECT	
ՇԱՀԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ	ԴԱՐՁՎԱԾՔԻ ՆԵՐՔԻՆ ՁԵՎ ԵՎ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ (ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)	159
ШАГАНЭ ПЕТРОСЯН	ВНУТРЕННЯЯ ФОРМА И	

	<p>МОТИВИРОВАННОСТЬ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ (НА МАТЕРИАЛЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ РАЗГОВОРНОГО ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА).</p>	
SHAHANE PETROSYAN	INNER FORM AND MOTIVATION OF SOME PHRASEOLOGICAL UNITS IN COLLOQUIAL FRENCH	
ԻՐԻՆԱ ՍԻՆԻՑԱ	<p>ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԻՋՈՑ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻՆ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ</p>	167
ИРИНА СИНИЦА	<p>МЕТАФОРА КАК СРЕДСТВО ПОЗНАНИЯ РУССКОЙ МЕНТАЛЬНОСТИ В КУРСЕ ПРЕПОДАВАНИЯ РУССКОГО ЯЗЫКА ИНОФОНАМ</p>	
IRYNA SYNYSIA	<p>METAPHOR AS A MEANS OF UNDERSTANDING RUSSIAN MENTALITY WHILE TEACHING THE RUSSIAN LANGUAGE TO FOREIGN STUDENTS</p>	
ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ	<p>ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԵՂՄԱՍՈՒԹԱՅԻՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑԱՅԻՆ ԲԱՅԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ</p>	179
СЮЗАННА СТЕПАНЯН	<p>АНАЛИЗ АНГЛИЙСКИХ ЭВФЕМИСТИЧЕСКИХ ФРАЗОВЫХ ГЛАГОЛОВ С МЕТАФОРИЧЕСКОЙ ПЕРСПЕКТИВЫ</p>	
SYUZANNA STEPANYAN	<p>ANALYSIS OF ENGLISH EUPHEMISTIC PHRASAL VERBS FROM A METAPHORICAL PERSPECTIVE</p>	

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ЛИТЕРАТУРА И КУЛЬТУРА
LITERATURE AND CULTURE

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ	ՄՈԳԱԿԱՆ ՌԵԱԼԻՉՄԻ ԱՌԿԱՅԱՑՈՒՄԸ ԹՈՆԻ ՄՈՐԻՍՈՆԻ «ՍԻՐԵԼԻՆ» ՎԵՊՈՒՄ	195
АНИ АСЛАНЯН	АКТУАЛИЗАЦИЯ «МАГИЧЕСКОГО РЕАЛИЗМА» В РОМАНЕ ТОНИ МОРИСОНА «ЛЮБИМАЯ»	
ANI ASLANYAN	THE ACTUALIZATION OF MAGICAL REALISM IN THE NOVEL “BELOVED” BY TONI MORRISON	
ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	ԸՆՏԱՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ	202
ГАЯНЕ ЕГИАЗАРЯН	ТРАНСФОРМАЦИЯ ТРАДИЦИОННОЙ МОДЕЛИ СЕМЬИ В ПРОИЗВЕДЕНИЯХ СОВРЕМЕННЫХ АРМЯНСКИХ ПИСАТЕЛЬНИЦ	
GAYANE YEGHIAZARYAN	TRANSFORMATION OF THE TRADITIONAL FAMILY MODEL IN THE WORKS OF CONTEMPORARY ARMENIAN WOMEN WRITERS	
ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ	ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀՂՄԱՆ ՁԵՎԵՐ (ԱԿՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ)	212
ЕЛЕНА ЭТАРЯН	ФОРМЫ САМООТНЕСЕННОСТИ ЛИТЕРАТУРЫ: ИСТОКИ И ПРИМЕРЫ В СОВРЕМЕННОМ ИСКУССТВЕ И ЛИТЕРАТУРЕ	
YELENA ETARYAN	FORMS OF SELF- REFERENTIALITY OF LITERATURE: ORIGINS AND EXAMPLES IN	

MODERN ART AND LITERATURE

ԱՄԱԼՅԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ	ՕՏԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԽԱԼԵԴ ՀՈՍԵՅՆԻԻ «ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔԵՑԻՆ ԼԵՌՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ	224
АМАЛИЯ СОГОМОНЯН	ПРОБЛЕМА ОТЧУЖДЕНИЯ В РОМАНЕ ХАЛЕДА ХОССЕЙНА «И ЭХО ЛЕТИТ ПО ГОРАМ»	
AMALYA SOGHOMONYAN	THE PROBLEM OF ALIENATION IN KHALED HOSSEINI'S NOVEL "AND THE MOUNTAINS ECHOED "	
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ INFORMATION ABOUT THE AUTHORS		237

**ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԱՆԳԱԼԵԶՈՒ ԱՌՑԱՆՑ
ԼՐԱԳՐԱՆՅՈՒԹԵՐՈՒՄ**

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հիմնաբառեր՝ նորաբանություն, դիպվածաբանություն, իմաստային նորաբանություն, իմաստային համաբանություն, համապեքստ, լրագրանյութ, միալեզու բառարաններ, լեզվական կորպուս

Արտալեզվականի ներհոսքը լեզվի մեջ ծնունդ է տալիս նոր բառերի երևան գալուն: Արտալեզվական պայմանավորվածություն ունեցող բովանդակությունն առկայանում է ներլեզվական միջոցներով: Լրագրանյութերում նորաբանությունները հիմնական տեքստակազմիչ գործոն են: Դրանց միջոցով լրագրանյութի հեղինակը պատկերում է այն իրակությունը, որում ծավալվում են իրադարձությունները:

20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում ձևավորված գործաբանական հայեցակարգը հնարավոր է դարձնում նոր լեզվամիավորների ուսումնասիրությունն իրականացնել գործաբանական դիտանկյունից: Գործաբանական տեսության մեջ կարևորվում են լեզվական գործունեությունը, ներգործող սուբյեկտները, հաղորդակցման նպատակները և արդյունքները, հաջողված լեզվական հաղորդակցումը, հաղորդակցման կանոնները և օրինաչափությունները, լեզվամիավորների ընտրությունը տվյալ հաղորդակցական իրավիճակում և հասարակական-մշակութային համատեքստում (Halliday & Hasan 2013):

Հաղորդակցական-գործաբանական դիտանկյունից՝ լեզվական նորակազմությունների երևան գալը պայմանավորված է ոչ միայն նոր բառերի միջոցով լեզվակիր հանրային մեջ որոշ հասարակական կարևորություն ունեցող իրակություններ անվանելու և ամրապնդելու անհրաժեշտությամբ, այլև հաղորդակցական-գործաբանական գործոններով և պատճառներով, ինչպես նաև նրանով, թե ինչ գնահատական է տրվում այս կամ այն երևույթին կամ իրադարձությանը, ինչ նպատակադրումով է առարկան կամ երևույթը նոր անվանումով ներկայացվում խոսույթում: Իսկ խոսքաշարում նոր լեզվամիավորների ընտրությունը և տեղին գործածումը պայմանավորված է զրուցակցի վրա ներգործելու միտմամբ:

Գործաբանական ուսումնասիրություններում կենտրոնական տեղ է զբաղեցնում համատեքստը (Levinson 2003; Givón 2005; Chapman 2011; Zufferey 2015): Համատեքստը դիտվում է որպես «մի համընդհանուր երևույթ, որպես լեզվական և ոչ լեզվական նշանակությունների ամբողջություն, որոնք իրենց արտահայտումն են ստանում լեզվական և ոչ լեզվական մակարդակներում» (Колшанский 1980:23):

Հոդվածի հիմնական նպատակն է ուսումնասիրել գիտատեխնիկական առաջընթացով և հանրալեզվաբանական գործոններով պայմանավորված նորաբանությունների ի հայտ գալը անգլալեզու լրագրանյութերում: Հոդվածում քննվել են նորաբանությունների մեջ ներդրված իմաստը և դրա դերը համատեքստում: Կիրառվել են բաղադրիչային վերլուծության, նկարագրական և վիճակագրական մեթոդները:

Ուսումնասիրված նորաստեղծ բառային միավորները քննության առնենք ստորև:

Օրինակ 1. In addition to silvertail, there is shiny bum (office worker), ant's pants (an outstandingly good person or thing), and sticker licker (an issuer of parking fines) (The Guardian 04 Dec 2014).

Ant's pants բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող չպատճառաբանված հարադրություն է: Այն նշանակում է «հրաշալի անձնավորություն»: Վերջինս արտացոլվում է նախադասության մեջ գործածված *an outstandingly good person or thing* բառակապակցության միջոցով:

Օրինակ 2. When a pupil doesn't show up for school without advance notice from their parents, the school contacts the parents immediately [...] Big Mother is watching you (The Hamilton Spectator 19 March 1993).

Big Mother բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ հարադրություն է, որում mother վերջնաբաղադրիչը լրացնում է big գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է «մայր, որը հետևում է, որպեսզի իր երեխան դպրոց հաճախի»: Ակնհայտ է, որ Big Mother բառային միավորն ունի գործաբանական նշանակություն. այն բավականին դիպուկ կերպով փոխանցում է հեղինակի մտադրությունը և աչքի է ընկնում իմաստային պատճառաբանվածությամբ: Big Mother բառային միավորը կազմվել է Big Brother բառային միավորի բառակազմական և իմաստային համաբանությամբ: Այն նշանակում է «մեծ եղբայր», այն է՝ մարդկանց ասածն ու արածը վերահսկող մարդ՝ կազմակերպություն (Լազարյան, Համբարձումյան, Հայրապետյան 2008: 54):

Օրինակ 3. *Whether Brexit or **Bremain**, fear will triumph over fear* (headline) (The Guardian 21 Jan 2016).

Bremain բառը կազմվել է British/Britain և remain բառերի համակցումով: Այն նշանակում է «Մեծ Բրիտանիայի մնալը ԵՄ-ի կազմում»: Հարկ է նշել, որ Bremain բառը *Brexit /Մեծ Բրիտանիայի հավանական դուրս գալը Եվրագոյություն/* բառի հակառակն է և համահավասար է anti-Brexit բառին:

Օրինակ 4. ***Anti-Brexit** protests break out on London streets after petition for a SECOND EU referendum hits 1.5 million names in a day* (The Daily Mail 25 June 2016).

Ինչպես երևում է վերը բերված օրինակից՝ anti-Brexit բառը նշանակում է «Բրիտանիայի ԵՄ-ից դուրս գալուն դեմ»:

Brexit, Bremain, anti-Brexit բառային փունջն ամբողջացնում է **post-Brexit** բառը.

Օրինակ 5. *The **post-Brexit** financial world remains deeply uncertain* (headline) (The Guardian 24 June 2016).

Կազմության տեսանկյունից՝ post-Brexit բառն ածանցված է. այն կազմվել է նախածանցման եղանակով: Լրագրանյութում post-Brexit բառն իրացնում է «Մեծ Բրիտանիայի ԵՄ-ից դուրս գալը հանրաքվեից հետո» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 6. *Man v chilli: what's impressive about a month on fire?* (headline) [...] *That the kind of people who are drawn to thrill-seeking action movies and risk-taking are also drawn to searing off the top layer of their tongues with Carolina Reapers or **Ghost Peppers*** (The Guardian 05 Feb 2015).

Ghost pepper բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը pepper վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է «կծու կարմիր պղպեղ, որ աճում է Ասիայի հարավում»:

Հարկ է նշել, որ անգլալեզու լրագրանյութերում առկա է ghost առաջնաբաղադրիչով կազմված ևս երկու նոր բառ՝ ghost detector և ghost money:

Օրինակ 7. *What you gonna call? The £ 130 '**ghost detector**' pocket-sized gadget claims to detect supernatural entities* (headline) (The Daily Mail 2 Feb 2015).

Օրինակ 8. *One Karzai aide called it '**ghost money**' because 'it came in secret, and it left in secret'* (The New York Times 30 April 2013).

Ghost detector բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է և նշանակում է

«ուրվականների դետեկտոր. ոգիների և ուրվականների ներկայությունը հայտնաբերող սարք»: Տվյալ նորահայտ բառը անվանում է նոր իրակություն գիտության մեջ: Իսկ *ghost money* բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երիբաղադրիչ ստորադասական հարադրություն է և նշանակում է «գաղտնի կառավարական գործակալությամբ փոխանցված գումար»:

Վերը նշվածից հետևում է, որ *ghost detector* և *ghost money* նորահայտ բառային միավորներում *ghost* առաջնաբաղադրիչի իրացրած բառիմաստային տարբերակները տարբերվում են *ghost pepper* բառային միավորում իրացրած բառիմաստից:

Օրինակ 9. From MAMIL to shiny bum: new words added to OxfordDictionaries.com (headline) (The Guardian 04 Dec 2014).

Shiny bum բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող չպատճառաբանված հարադրություն է: Այն նշանակում է «գրասենյակային աշխատող»: Բերված առաջին օրինակում բառիմաստի վերհանմանը նպաստում է *office worker* բառակապակցությունը: Իսկ երկրորդ օրինակում լրագրանյութի հեղինակը վկայում է, որ տվյալ բառային միավորն արդեն իսկ ընդգրկվել է Օքսֆորդի բառարանում:

Օրինակ 10. WAGs - an acronym for the wives and girlfriends of the English football team - was obviously a close runner for the title (The Guardian 12 Oct 2006).

Վերը նշված օրինակում *WAGs* տառային հապավումը նշանակում է «Ֆուտբոլիստների կանայք կամ ընկերուհիները»: Լրագրանյութում բառիմաստի վերհանմանը նպաստում է *an acronym for the wives and girlfriends of the English football team* հատվածը: Հետևաբար, տվյալ տառային հապավումն ունի համատեքստային գործառույթ, քանի որ իրացրած բառիմաստը բացատրվում է լրագրանյութում:

Օրինակ 11. Either way, the future looks secure for Tim and original Twag (tennis wife and/or girlfriend) (The Guardian 21 Aug 2007).

Twag տառային հապավումը նշանակում է «թենիսիստի կին կամ ընկերուհի»: Լրագրանյութում տվյալ հապավման բառիմաստի վերհանմանը նպաստում է *tennis wife and/or girlfriend* հատվածը: Այն ունի համատեքստային գործառույթ և դիպուկ կերպով արտահայտում է հեղինակի մտադրությունը: *Twag* տառային հապավումը կազմվել է *Wag* հապավման բառակազմական համաբանությամբ: Ակնհայտ է, որ *Wag* և *Twag* տառային հապավումները կազմվել են լեզվական միջոցները տնտեսելու նպատակադրումով:

Հարկ է հավելել, որ *Wags* և *Twag* տառային հապավումների բառակազմական համաբանությամբ կազմվել է մեկ այլ տառային հապավում՝ *iWag*.

Օրինակ 12. One of the newest recruits to the dubiously named iWAG, crew is Kaitlyn Trigger, girlfriend of Instagram co-founder Mike Krieger (Grazia 14 May 2012).

Այս օրինակում *iWAG* տառային հապավումը նշանակում է «համացանցային ազատ ձեռնարկատիրոջ կինը կամ ընկերուհին»: Ի տարբերություն *Wags* և *Twag* հապավումների, *iWAG* տառային հապավումը վերաբերում է ոչ թե սպորտի, այլև գործարար ոլորտին:

Անգլերենի բառաֆոնդը հարստանում է ոչ միայն ածանցման, բառաբարդման, այլև համակցման եղանակով (*blending*)՝ երկու բառերի հատվածների ձուլման միջոցով:

Օրինակ 13. The Jaipur festival runs from 20 to 24 January and Rushdie is due to talk at a session on “English, Amlish, Hinglish [...] (The Guardian 10 Jan 2012).

Amlish բառը կազմվել է *American* և *English* բառերի համակցումով և նշանակում է «ամերիկյան անգլերեն»: Ակնհայտ է, որ տվյալ բառային միավորը կազմվել է լեզվական միջոցները տնտեսելու, ասելիքն առավել հակիրճ ներկայացնելու նպատակադրումով:

Օրինակ 14. We don’t talk about the “wasband”! Woman who advised Gwyneth Paltrow and Chris Martin to use term ‘conscious uncoupling coins new phrase to describe ex-husbands (The Daily Mail 21 Sept 2015).

Wasband բառը կազմվել է *to be* բայի *was* անցյալ ձևի և *husband* բառերի համակցումով: Այն նշանակում է «նախկին ամուսին»: Լրագրանյութում բառիմաստի վերհանմանը նպաստում է *consciously uncoupling coins new phrase to describe ex-husbands* հատվածը: Նորաստեղծ *wasband* բառը բավականին դիպուկ փոխանցում է հեղինակի մտադրությունը: Տվյալ բառը հետաքրքրական է հենց բառակազմության դիտանկյունից, քանի որ համակցման եղանակում գործածվել է բայի անցյալ ձևը:

Օրինակ 15. JEXODUS Floundering Jeremy Corbyn on the ropes after dozens of his own MPs beg him to quit as Labour leader (headline) (The Sun 28 June 2016).

Նշված օրինակում *Jexodus* բառը կազմվել է *Jeremy* և *exodus* բառերի համակցումով: Լրագրանյութի հեղինակը գործածում է տվյալ բառը «Մեծ Բրիտանիայի լեյբորիստական կուսակցության առաջնորդ Ջերեմի Կորբինի հրաժարականի պահանջը» նշանակությամբ: Կիրառվելով լրագրային հոդվածի վերնագրում՝ *Jexodus* բառը ձեռք է բերում կարևոր

գործաբանական արժեք և դիպուկ կերպով փոխանցում է հեղինակի մտադրությունը: Տվյալ բառը դիպվածային է, և դրա գործածությունը սահմանափակված է տվյալ լրագրանյութով:

Ուշագրավ է այն, որ համակցման եղանակով կազմված բառերում առկա են *honemoon* բառով կազմված մի քանի նորահայտ բառ՝ **maternymoon**, **buddymoon**, **jobbymoon**, որոնք կազմվել են *babymoon* բառի բառակազմական համաբանությամբ:

Օրինակ 16. *For us, we were quite happy with a driving holiday overseas for our first **maternymoon**, however, we've decided on a relaxing, tropical holiday closer to home for our second one* (www.nowtolove.com.au 16 August 2016).

Այս օրինակում *maternymoon* բառը կազմվել է *maternity leave* և *honeymoon* բառերի համակցումով և նշանակում է «արձակուրդ, որն ընտանիքն անցկացնում է այն ժամանակամիջոցում, երբ մայրն օգտվում է երեխաներ ունենալու արձակուրդից»:

Օրինակ 17. *One honeymoon option becoming increasingly popular is the **buddymoon**, or a honeymoon where you bring your gang along for the ride* (*Bride* /magazine/, 24 November 2017).

Ինչպես երևում է վերը նշված օրինակից, *buddymoon* բառը կազմվել է *buddy* և *honeymoon* բառերի համակցումով և նշանակում է «մեղրամիս, որն ամուսնացած զույգն անցկացնում է ընկերների ընկերակցությամբ»: Լրագրանյութում բառիմաստի վերհանմանը նպաստում է *a honeymoon where you bring your gang along for the ride* հատվածը:

Օրինակ 18. *In a busy world where employees are so overworked they routinely fail to take the holiday time they are entitled to, a **jobbymoon** presents a unique opportunity to review achievements and reassess priorities* (*The Guardian* 11 June 2018).

Վերոբերյալ օրինակում *jobbymoon* բառը կազմվել է *jobby* և *honeymoon* բառերի համակցումով: Այն նշանակում է «արձակուրդ, որը նախորդում է մի աշխատանքից մյուսին անցնելուն»: Ակնհայտ է, որ *jobbymoon* բառը կազմվել է *buddymoon* բառի բառակազմական համաբանությամբ՝ համակցման եղանակով:

Բառերի փոխաբերական գործածությունները հանգեցնում են բառիմաստային փոփոխությունների: Իմաստափոխությունը որևէ առարկայի, հասկացության անվանման փոխադրումն է մի այլ առարկայի հասկացության վրա: Լրագրանյութերում լեզվում առկա բառերի գործածությունը նոր նշանակությամբ առավել պատկերավոր կերպով ամբողջացնում է հաղորդվող նյութի ներկայանակը:

Ստորև ներկայացնենք անգլալեզու լրագրանյութերից քաղված օրինակներ, որոնցում արձանագրում ենք իմաստային նորաբանություններ:

*Օրինակ 19. This is the work of Mortuary Affairs, the Marine Unit that catalogues the remains of American servicemen who die in combat, referred to as **angels**, as well as the Iraqi guerillas they fight and civilian victims (Kansas City Star 27 Dec 2004).*

Տվյալ օրինակում *angel* բառն իմաստափոխության է ենթարկվել: *Angel* բառը, որը «հրեշտակ» է նշանակում, տվյալ համատեքստում իրացնում է «ռազմաճակատում զոհված զինվոր» բառիմաստային տարբերակը: Լրագրանյութում բառիմաստի վերհանմանը նպաստում է *American servicemen who die in combat* հատվածը: *Angel* բառով ռազմաճակատում զոհված ամերիկյան զինվորներին նկարագրելը լեզվակիրների աշխարհընկալման և լեզվամտածողության արգասիք է: Զինվորը հայրենիքի պաշտպանն է, որն իր կյանքն անձնվիրաբար զոհում է հանուն հայրենիքի և հայրենակիցների, երկրի խաղաղության և խաղաղ երկնքի, ապագա սերնդի հարատևության և ազգային ինքնության պահպանման: Հետևապես, պատահական չէ, որ անգլերենում *angel* բառը գործածվել է «ռազմաճակատում զոհված զինվոր» նշանակությամբ:

Օրինակ 20. "Battlefield 'Bear' robot to rescue fallen soldiers (headline) (New Scientist 06 June 2007).

Վերոբերյալ օրինակում *bear* բառը, որն «արջ» է նշանակում, իմաստափոխության է ենթարկվել՝ անվանելով հեռակառավարվող ռոբոտ, որը փրկում է վիրավոր զինվորներին: Լրագրանյութում բառիմաստի վերհանմանը նպաստում է *robot to rescue fallen soldiers* հատվածը: Տվյալ իմաստային նորաբանությունն անվանում է նոր իրականություն՝ գիտության ոլորտում:

*Օրինակ 21. Believe it or not, a little controlled **catfishing** is something that plenty of the Instant Message generation has experimented with, even if we're unwilling to admit it (www.jezebel.com (online news agency) 30 Jan 2013)*

Այս օրինակում *catfish* բառը, որը նշանակում է «երկարատամիկ» (ծուկ), իմաստափոխության է ենթարկվել՝ անվանելով «կեղծ անձնական տվյալների հրապարակումը սոցցանցերում», և վերագրվում է առցանց տիրույթին՝ վիրտուալ հաղորդակցմանը: Անգլերենի *catfish* բառի փոխաբերական իմաստով գործածությունը և իմաստափոխությունը պայմանավորված է նկարագրվող երևույթի արտացոլման անհրաժեշտությամբ, քանի որ յուրաքանչյուր բառային միավորի մեջ դրված է աշխարհը լեզվի միջոցով ընկալելու յուրահատկությունը:

Օրինակ 22. *Maybe it's an attempt to get a crate sent to him (after all, he can't just pop to Boots - the cashier might @ him on Twitter, telling the world the man behind Pass Out has had a rich dinner and as a result is experiencing a spot of heartburn)* (The Guardian 18 Aug 2012).

Վերոբերյալ օրինակից երևում է, որ էլեկտրոնային հասցեներում գործածվող @ նշանը տվյալ լրագրանյութում բայական արժեք ունի և իրացնում է «հաղորդագրություն գրել Twitter սոցիալական կայքում» բառիմաստային տարբերակը: Այս օրինակն առանձնանում է նրանով, որ իմաստափոխության է ենթարկվել ոչ թե լեզվի բառաֆոնդում առկա որևէ բառ, այլ էլեկտրոնային փոստում կիրառվող նշան: Նշենք, որ վերջինս դրսևորում է եզակի կիրառություն և պատկանում է լրագրանյութի հեղինակի գրչին: Հետևապես, այն դիպվածային բնույթ ունի:

Լեզվի նորաստեղծ և նորահայտ բառային միավորների զարգացման միտումները կապված են բառարաններ և համագործածական բառապաշար մուտք գործելու հետ: Ուսումնասիրված բառային միավորները որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում:

Այսպես, *ant's pants* բառային միավորն ընդգրկվել է միմիայն *Oxford Dictionaries Online* բառարանում: *Bremain* բառն ընդգրկվել է *Macmillan Dictionary Online* և *Collins English Dictionary Online* բառարաններում: *Catfish* բառի իրացրած նոր բառիմաստային տարբերակն արդեն իսկ արձանագրվել է ուսումնասիրված բոլոր բառարաններում: *Ghost pepper* բառային միավորն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* և *Collins English Dictionary Online* բառարաններում: *Shiny bum* բառային միավորն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* բառարանում: *Wasband puns* ընդգրկվել է *Macmillan Dictionary Online* բառարանում: *Buddymoon* բառն ընդգրկվել է *Collins English Dictionary Online* բառարանում: *Twag* և *WAG* տառային հապավումները գետեղվել են *Oxford Dictionaries Online*, *Cambridge Dictionary Online*, *Macmillan Dictionary Online*, *Collins English Dictionary Online* և *Longman Dictionary of Contemporary English* բառարաններում (<http://www.oxforddictionaries.com>; <http://dictionary.cambridge.org>; <http://www.ldoceonline.com>; <https://www.macmillandictionary.com>; <https://www.collinsdictionary.com/dictionary/english>):

Amlish, *Anti-Brexit*, *Big Mother*, *ghost detector*, *ghost money*, *iWAG*, *Jexodus*, *jobbymoon*, *maternymoon* և *post-Brexit* բառային միավորները դեռևս չեն ընդգրկվել ուսումնասիրված անգլերեն միալեզու բացատրական բառարաններում: *Angel*, *bear* և էլեկտրոնային

հասցեներում գործածվող @ նշանի իրացրած նոր բառիմաստային տարբերակները նույնպես չեն ընդգրկվել տվյալ բառարաններում:

Կորպուսային ուսումնասիրության մեթոդով վեր ենք հանել քննության առնված բառային միավորների հաճախականությունը՝ ըստ ժամանակակից անգլերենի COCA (*Corpus of Contemporary American English*) և GloWbE (*Corpus of Global Web-Based English*): COCA և GloWbE կորպուսներում ամենամեծ հաճախականությունն ունի *post-Brexit* բառը (COCA - 14, GloWbE - 14): *Ghost pepper* բառային միավորը ներկայացված է 5 համատեքստում (COCA - 5, GloWbE - 5), *anti-Brexit*, *ghost money*, *wasband* բառային միավորները ներկայացված են ընդամենը 1 համատեքստում (COCA - 1, GloWbE - 1) (<http://corpus.byu.edu/coca>: <http://corpus.byu.edu/glowbe>):

Հարկ է փաստել, որ *angel*, *bear*, *Big Mother*, *catfish* և *WAG* բառային միավորները ներկայացված են COCA և GloWbE կորպուսներում, բայց չեն իրացնում առանձնացրած օրինակներում առկա բառիմաստային տարբերակները:

Վերը նշված կորպուսներում բացակայում են *amlish*, *ant's pants*, *Bremain*, *buddymoon*, *iWAG*, *ghost detector*, *Jexodus*, *jobbymoon*, *maternymoon*, *shiny bum*, և *Twag* բառային միավորները: Էլեկտրոնային հասցեներում գործածվող @ նշանի բայական արժեքով գործածությունը նույնպես բացակայում է տվյալ կորպուսներում:

Ամփոփելով սույն ուսումնասիրության արդյունքները՝ անգլալեզու առցանց լրագրանյութերում գործածված նոր բառերի վերաբերյալ, կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Նորաբանությունների ստեղծումը և գործածությունը լրագրանյութերում ճանաչողական-իմացաբանական բնույթ ունի: Նորաբանություններում արտալեզվական երևույթները միաձուլվում են նորաստեղծ բառի բովանդակություն-արտահայտություն կապակցության մեջ: Գործաբանական դիտանկյունից նոր բառերի գործածությունը լրագրանյութերում պայմանավորված է ասելիքն առավել դիպուկ արտահայտելու և խոսքաշարին արտահայտչականություն և հուզականություն հաղորդելու նպատակադրումով:

2. Ուսումնասիրված բառային միավորները գերազանցապես գոյականական կազմություններ են և առավելապես հանդես են գալիս «Գործարարություն, օրենք և քաղաքականություն (Business, Law, Politics, and Government)» և «Մարդիկ և հասարակություն (People and Society)» բառիմաստային և/կամ թեմատիկ խմբերում: Իսկ քննության առնված բառային միավորներից 6-ը կազմվել են լեզվում առկա բառային

միավորների համաբանությամբ (*Big Mother, Twag, iWAG, maternymoon, buddymoon, jobbymoon*):

3. Ուսումնասիրված բառային միավորներից 6-ը ընդգրկվել են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում և վերաձվել նորաբանությունների (*ant's pants, Bremain, ghost pepper, WAG, Twag*), իսկ գերակշռիչ մասն ունեն դիպվածային կարգավիճակ: Մասնավորապես, էլեկտրոնային հասցեներում գործածվող @ նշանը, որի բայական արժեքով գործածությունը դիպվածային է:

4. Քննության առնված իմաստային նորաբանություններում (*angel, bear, catfish*) իմաստափոխությունը հիմնականում պայմանավորված է երկու նշանակյալների իմաստային նմանությամբ: Համակցման եղանակով կազմված *Jexodus* բառը *the Sun* պարբերականի լրագրողի հեղինակային նորաբանությունն է, իսկ քննության առնված մյուս բառերը լրագրողների հեղինակային նորաբանություններ չի կարելի համարել, քանզի դրանք ի հայտ են եկել զուտ գիտատեխնիկական առաջընթացով և հանրալեզվաբանական գործոններով պայմանավորված:

Քննելով նոր իրակությունների առկայացումը անգլերեն լրագրանյութերում գործածվող բառային միավորներում՝ նկատել ենք, որ նոր բառերն առավելապես կազմվում են համակցման եղանակով: Սրանից հետևում է, որ անգլերենի բառապաշարի զարգացման ներկա միտումները պայմանավորում են բառերի հատվածների ծուլումով կազմված նորաբանությունները: Հետևապես, համակցումը բառակազմական այն եղանակն է, որի միջոցով հյուսվում են բառերը և վերաձվում լեզվի բառաֆոնդում ամրագրված կայուն միավորների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եզեկյան Լ.Կ., Հայոց լեզվի ոճագիտություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2003, 376 էջ:
2. Մարտիրոսյան Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Էդիթ Պրինտ հրատարակչություն, Երևան 2007, 235 էջ:
3. Chapman S., Pragmatics, Palgrave Macmillan, 1st edition, 2011, 213p.
4. Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca20.09.2019>.

5. Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe> 20.09.2019.
6. Givón T., *Context as Other Minds: The Pragmatics of Sociality, Cognition and Communication*, John Benjamins Publishing Company, 2005, 285p.
7. Halliday M.A.K. & Hasan R., *Cohesion in English*, Routledge: Taylor and Francis Group, London & New York, 2013, 373p.
8. Katamba F. & Stonham J., *Morphology*, Palgrave Macmillan, 2nd edition, 2006, 382p.
9. Levinson S., *Pragmatics*, Cambridge University Press, Cambridge, 15th edition, 2003, 423p.
10. Zufferey S., *Acquiring Pragmatics: Social and cognitive perspectives*, 1st edition, Routledge: Taylor and Francis Group, London & New York, 2015, 201p.
11. Колшанский Г.В., *Контекстная семантика*, Наука, 1980, 147с.
12. Яцук Н., Семантико-деривационные особенности лексических окказионализмов Ю. Полякова // *Вестник Удмуртского университета, История у философия*, 2011.

REFERENCES

1. Ezekyan L.K., *Hayoc lezvi otwagitowt'yown, EPH hratarakchownt'yown*, Er&an, 2003, 376 e'j.
2. Martirosyan A., *Ardi hayereni norabanowt'yownneri bar'akazmakan kaghaparnery'*, E'dit' Print hratarakchownt'yown, Er&an 2007, 235 e'j.
3. Chapman S., *Pragmatics*, Palgrave Macmillan, 1st edition, 2011, 213p.
4. Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca> 20.09.2019.

5. Davies, Mark. (2013) Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE). Available online at: <http://corpus.byu.edu/glowbe> 20.09.2019.
6. Givón T., Context as Other Minds: The Pragmatics of Sociality, Cognition and Communication, John Benjamins Publishing Company, 2005, 285p.
7. Halliday M.A.K. & Hasan R., Cohesion in English, Routledge: Taylor and Francis Group, London & New York, 2013, 373p.
8. Katamba F. & Stonham J., Morphology, Palgrave Macmillan, 2nd edition, 2006, 382p.
9. Levinson S.C., Pragmatics, Cambridge University Press, Cambridge, 15th edition, 2003, 423p.
10. Zufferey S., Acquiring Pragmatics: Social and cognitive perspectives, 1st edition, Routledge: Taylor and Francis Group, London & New York, 2015, 201p.
11. Kolshanskij G.V., Kontekstnaja semantika, Nauka, 1980, 147s.
12. Jacuk N., Semantiko-derivacionnye osobennosti leksicheskikh okkazionalizmov Ju. Poljakova // Vestnik Udmurtskogo universiteta, Istorija u filosofija, 2011.

ГАЯНЕ БАРСЕГЯН - НЕОЛОГИЗМЫ КАК СРЕДСТВО АКТУАЛИЗАЦИИ НОВЫХ РЕАЛИЙ В АНГЛИЙСКИХ ЖУРНАЛЬНЫХ СТАТЬЯХ

Ключевые слова: неологизм, окказионализм, семантический неологизм, семантическая аналогия, контекст, публицистическая статья, одноязычные словари, лингвистический корпус

Данная статья рассматривает роль неологизмов в выражении новых реалий в английских журнальных статьях. В статье анализируются различные лингвистические теории о сущности и видах новых слов, затем анализируется текстообразующая роль новых слов в английских журнальных статьях. Примеры анализируются с точки зрения их вида, значения, смысловой мотивации и прагматической ценности. В статье также уточняется развитие изучаемых слов, а именно: остается оно окказиональным или становится частотным.

GAYANE BARSEGHYAN - NEOLOGISMS AS A MEANS OF ACTUALIZATION OF NEW REALIA IN ENGLISH JOURNALISTIC ARTICLES

Keywords: *neologism, nonce word, semantic neologism, semantic analogy, context, journalistic article, monolingual dictionaries, linguistic corpus*

The present article focuses on the role of neologisms in the expression of new realia in English journalistic articles. It analyzes various linguistic theories on the essence and types of new words, proceeding with the analysis of the text-forming role of new words in English journalistic articles. The examples are analyzed from the point of view of their type, meaning, semantic motivation and pragmatic value. The study sheds light on the development of the newly-coined words, whether it remains a nonce word or is socialized and fixed in English monolingual dictionaries.

Ներկայացվել է՝ 24.09.2019
Գրախոսվել է՝ 27.09.2019

THE COMMUNICATIVE STRATEGIES FOR INCREASING AND REDUCING
THE FORCE OF STATEMENTS IN ACADEMIC WRITING

ZORI BARSEGHYAN

Keywords: hedge, booster, academic writing, modality

It is common knowledge that academic writing has gained a considerable scholarly popularity due to the crucial role it plays in the research process. On the other hand, English has become the prevalent language in academic world, and the increasing number of non-native speakers of English, as well as established researchers should take into consideration the academic style peculiar to the English language. And as a specialized writing, academic writing has developed its own conventions. It includes *objectivity, clarity* of language, *precision, impersonality*, etc. Central to these features is the position shared by a great number of scholars and researchers that in academic writing the expression of *doubt* and *certainty* is considerably essential. With regard to expressing opinions and attitudes in academic writing, it would appear that there is a contradiction. On the one hand, writing is typically objective; on the other hand, it needs to contain a considered opinion based on research, analysis and critical thinking. In other words, we can say that in academic writing opinion needs to be presented so that it appears to be objective. Academic writing is always a form of evaluation that asks you to demonstrate knowledge and show proficiency with certain disciplinary skills of thinking, interpreting, and presenting (Irvin 2010:8). As it is seen, academic writing is a complicated process of mental activities which requires great concentration and proficiency of various techniques to produce a relevant academic product (scientific article, review, and dissertation). Since academic writing is too 'delicate' writing and writer-responsible, it is advisable to soften or strengthen claims, ideas or views presented in academic papers. Its importance lies in the fact that in academic writing statements are rarely made without subjective assessments of their reliability. In linguistic resources the two techniques used to achieve these goals are referred as *attenuation* or *hedges* and *intensifiers, certainty markers* or *boosters*.

Hedges belong to one of those linguistic categories which are difficult to define, and over which there is much dispute among linguists. This is the reason why there is no clear definition for hedges. Moreover, in different

studies hedges are defined differently which also reflects the difficulty of pinpointing what a hedge is. However, in linguistic resources there is a more or less accepted definition for hedges. Lexical devices used to signal the speaker's lack of confidence or to assert something tentatively are described as hedges. This may be to show doubt and indicate that information is presented as an opinion rather than a fact, or it may be to convey deference, humility, and respect for colleague's views (Hyland 1998:351). Unlike spoken discourse where frequent use of hedges may be viewed as features of powerless language, hedges in academic writing convey a cautious approach to the material or research results being presented, which in turn helps "academics gain acceptance for their work" (Hyland 2000: 179). As Brown and Levinson conclude: "hedging can be achieved in indefinite numbers of surface forms" (Brown, Levinson 1987:146). These surface forms can range from single lexical items to syntactic structures.

Hedges can be classified according to their forms and functions. The forms that hedges take are the following:

- Impersonal constructions: agentless constructions, agentless passives, 1st person plural/majestic or modesty/. For example: *Drought is recognized* as being a major problem for many developing countries. *It appears that* in a number of instances jobs were assigned on the basis of gender.
- Epistemic modality: Epistemic modal verbs, epistemic verbs, possibility/probability adverbs and adjectives. For example: Lightning *may* have struck some chemicals dumped in a swamp and triggered spontaneous cellular activity that issued in me. *It is likely* that growth will remain above 3 % in the final three months of this year. *Maybe* a weaker condition about character or experience than this is enough for personal identity. The claim that God is a person or personal is, *perhaps*, one of the most fundamental claims which religious believers make about God.
- Approximators or imprecision markers: Adverbs and verbs expressing vagueness and imprecision. For example: *Nearly* four out of five respondents say that they've felt the impact of the financial downturn, with *approximately* one-third of them saying that the turmoil has had a big impact on their lives.
- Hedging by concessive conjunctions. For example: *However*, there was little positive news in the latest survey about the short-term outlook for the region's workers.
- Hedging by negation: For example: *Not all the experts agree* about the long-lasting effects of bailout, claiming that it will not work in the long run.

It should be borne in mind that too many hedges altogether in one place can make academic writing difficult to read and may sound tentative. However, there are qualifiers that work in the opposite way to hedging. Lexical devices used to express strong conviction are described as *boosters*. Boosters allow academic writers to express conviction and assert a proposition with confidence. Affectively, they also mark involvement and solidarity with an audience, stressing shared information, group membership, and direct engagement with readers (Hyland 1998:350). For example: English *must* reflect the cultural norms of its speakers (modal verb). From these figures we can *verify* that this approach is equally effective in the classroom (verb). These studies have provided compelling *evidence* (noun). Boosters function to express the speaker's intentions with confidence and strong conviction. Although they have received little attention in academic writing, boosters are seen to play an important role in creating solidarity between participants. The forms that boosters take are:

- Modal verbs: must, will, etc.
- Epistemic lexical verbs: demonstrate, show, find, confirm, assure.
- Epistemic adjectives: rigorous, superior, undeniable, absolute, complete, definite, essential.
- Epistemic adverbs: actually, always, clearly, assuredly, certainly, definitely, entirely, evidently
- Nouns: certainty, confidence, evidence, fact.

Boosters are most often used in the *introductory* and *concluding* sections of papers, theses and books. This is because the introduction and conclusion are where the writer wants to influence the reader. For example: **One important finding of our research** is the empirical validation of the relationship between corporate associations and consumer product responses. Consequently, **another important contribution of this research** is the identification and validation of multiple paths of influence for corporate associations.

Boosters can promote the novelty, value and importance of the research and writing, too. Moreover, boosters are the academic writer's way of emphasizing that there is a strong relationship between the results they have presented and the interpretation and claims they make. Boosters are linguistic means of presenting the newsworthiness of research. They are intended to persuade. But mostly, conclusions in theses and early papers in particular suffer from too much hedging. Armenian students, who study English and in particular academic writing, find it difficult or problematic to express doubt and certainty in their academic papers. In most cases they fail

to hedge and boost statements adequately. This fact can badly impede their participation in research world. In order to sharpen their academic skills students should start to learn to recognize and use hedging and boosting strategies in their academic writing. This would boost their confidence in their productive skills in both written and spoken academic English.

As it is universally known, vocabulary is an essential building block of language and as such it makes sense to start teaching hedging and boosting strategies by introducing them as vocabulary items. Thus, it can be claimed that vocabulary is basic to teaching hedging and boosting strategies because without adequate vocabulary items learners cannot express doubt and certainty in academic writing. Wilkins states, "... while without grammar very little can be conveyed, without vocabulary nothing can be conveyed" (Wilkins 1972:111). Academic writing is considered to be a productive activity, thus, it is necessary to develop effective strategies for turning receptive vocabulary into productive one. It is stated that a student knows vocabulary words receptively first and only after intentional learning they become available for their productive use (Zhou 2010:15). In other words, the vocabulary items that we can recognize and understand are receptive vocabulary items, whereas the lexical items that we can deploy in our communication and writing are productive vocabulary items. As such hedges and boosters are vocabulary items, they require the same approach as other language elements. Teachers of academic writing should start the instruction with exercises. Both receptive and productive exercises are useful. Gap-filling, matching, replacement, expansion, transformation exercises provide the most desirable result. For example,

Rewrite each sentence using the words in brackets at the end of the sentence.

1. It is possible that an economic downturn lowers mortgage interest rates. /can/
2. There is a possibility the department will exceed its budget this financial year. /may/
3. There is a possibility we will get an increase in our student allowance next year. /maybe/

Transform the following sentences using one of the phrases in the box. Make necessary changes.

Appear to	Seem to	Is/are to be
-----------	---------	--------------

1. This news story may have been edited to make viewers sympathize with the government.
2. News editors agreed that all the stories must be written in a neutral tone.

3. The newsreader's authority might have been relaxed a little as a result of a more casual style of dress.
4. There may have been an increase in the amount of live reporting in order to make the news seem more up-to-date.

Research shows that in written academic corpus both *seem/s/ to* and *appear/s/ to* are commonly used when the writer does not want to make a statement that is too direct (Thaine 2012:87).

Use hedges to make the following sentences less certain and direct.

1. Internet marketing will increase sales by as much as 20%.
2. Creating a budget is going to help solve financial problems.
3. An increase in sales will have a positive effect on staff motivation.
4. The economy is going to improve next year.

Fill in the gaps using hedging words and expressions below.

also, generally speaking, in principle, in general, seemingly

- 1.-----, business has suffered less than individuals as a result of IT and criminal activity.
- 2.-----, however, automatic processing provided by computer technology has improved controls and checks on employees.
- 3.-----, computers and information technology provide many benefits.
- 4.-----, prosecutors may not be well prepared from a technical perspective to prosecute such cases.
- 5.-----, the criminal justice system tries to deal with computer criminals.

Rewrite 'cautiously' the following statements.

1. A drop of nicotine kills the horse.
2. The most influential component of a computer is a central processing unit.
3. Diseases are the results of the interaction of genetic and environmental factors.
4. The expansion of the Universe continues.
5. Monetary policy is not effective.

In addition to exercises, instructors should take the teaching methodology into consideration. Most instructors who teach academic writing or vocabulary teach the isolated word, without presenting the detail components of the family words of the vocabulary and the collocations that go with the word. Thus, hedges and boosters must be taught in the form of collocations, which will help to simplify the process of acquisition. For

example, *nearly impossible*, *absolutely exact*, *basically obvious*, *entirely thorough*, *essentially total*, *factually evidence*, *fully fact*, etc.

Instructors having more time on introducing hedges and boosters rather than practicing them, make a gap between learning the words theoretically and practically. Lack of real-life context hinders the process of acquisition, too. Utilizing a variety of teaching vocabulary activities aids the learners to easily retrieve them. This means, the activity makes a great possibility for the students to learn the word and store it in the long memory.

In conclusion, hedges and boosters are communicative strategies for increasing or reducing the force of statements. Boosters such as *clearly*, *obviously* and *of course* allow writers to express conviction and assert a proposition with confidence, whereas hedges, like *possible*, *might* and *perhaps* represent a weakening of a claim. They work to balance objective information and subjective evaluation; this can be a powerful persuasive factor in gaining acceptance for claims. These considerations are an important dimension of academic discourse and a principal way that writers can use language flexibly to adopt positions, express points of view and signal allegiances.

REFERENCES

1. Brown, P. & Levinson, S. Politeness: Some Universals in Language Usage. Cambridge: Cambridge University Press, 1987, 345p.
2. Holmes, J., Hedges and boosters in women's and men's speech. *Language and Communication*, 10(3), 19.90, 185-205p.
3. Hyland, K., Boosting, Hedging and the Negotiation of Academic Knowledge. *Text*, 8(3), 1998, 349-382p.
4. Hyland, K., Hedges, Boosters and Lexical Invisibility: Noticing Modifiers in Academic Texts. *Language Awareness*, 9(4), 2000, 179-197p.
5. Irvin, L., What is Academic Writing? *Writing Spaces: Readings on Writing*. West Lafayette, Indiana, Parlor Press LLC, 2010, 288p.
6. Taine C., *Cambridge Academic English*, Cambridge, Cambridge University Press, 2012, 176p.
7. Wilkins, D., *Linguistics in Language Teaching*, Cambridge, MA, MIT Press, 1972, 250p.

8. Zhou, S., Comparing Receptive and Productive Academic Vocabulary Knowledge of Chinese EFL Learners. Asian Social Science.6(10),2010,Retrievedfrom<http://www.ccsenet.org/journal/index.php/ass/article/view/6313>

ՀՈՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ - ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ ՊԵՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂԱՑՆՈՂ ԵՎ ՆՎԱԶԵՑՆՈՂ ՀԱՂՈՐԴԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր՝ հեղջ, բուստեր, ակադեմիական գրագրություն, մոդալություն

Հոդվածում անդրադարձ է կատարվում արդի լեզվաբանության մեջ տեղ գտած այնպիսի երևույթների, ինչպիսիք են հեղջինգը և բուստինգը: Հեղջինգը և բուստինգը ակադեմիական գրագրության առանցքային հասկացություններից են: Հեղջինգ և բուստինգ ռազմավարությունները գործադրվում են շարադրանքին կասկած և վստահություն հաղորդելու նպատակով: Ոչ լեզվակիրները հարկ է, որ յուրաքանչեւ ակադեմիական գրագրության զատորոշիչ այս տարրերը՝ ակադեմիական հանրույթի մաս կազմելու համար:

ЗОРИ БАРСЕГЯН - ВЛИЯНИЕ УТВЕРЖДЕНИЙ УМЕНЬШАЮЩИХ И УСИЛИВАЮЩИХ КОММУНИКАТИВНЫЕ СТРАТЕГИИ В АКАДЕМИЧЕСКОЙ ПИСЬМЕННОЙ РЕЧИ

Ключевые слова: хедж, бустер, академическое письмо, модальность

Данная статья вводит читателя в краткий экскурс одного из важнейших лингвистических течений хеджинга и бустинга. Хеджинг и бустинг являются одним из центральных особенностей академического письма. С их помощью соискатель выражает уверенность или сомнение в академическом дискурсе. Не носитель языка должен знать эти отличительные черты академического письма и надлежащим образом употреблять стратегии хеджинга и бустинга в своей работе. Это позволяет им стать частью академического письма.

Ներկայացվել է՝ 24.09.2019
Գրախոսվել է՝ 18.09.2019

**ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հիմնաբառեր՝ հինհայերենյան կազմություններ, տարածքային տարբերակներ, ժամանակաձևեր, եղանականիշ մասնիկներ, եղանակաժամանակային համակարգեր, գրաբարատիպ ներկա, ապառնի դերբայ, անցյալ ժամանակաձևեր

Տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերը անմիջականորեն կապվում են հայերենի տարբեր փուլերի հետ, նրանց տարաբնույթ փոփոխությունների և հետագա զարգացման արդյունք են և ձևավորվել են՝ լեզվի ներքին զարգացման օրինաչափություններով, ձևաբանական ու հնչյունական օրենքներով պայմանավորված: Նրանցում պահպանված են հինհայերենյան ձևեր ու կազմություններ, որոնց քննությունը կարևոր է հայերենի զարգացման պատմական ընթացքը դիտարկելիս:

Տարածքային տարբերակներում որպես ըղձական եղանակի ժամանակաձևեր գործածվում են գրաբարյան ներկայի և անցյալ անկատարի կազմություններ, որոնք, ինչպես գրաբարում, զուրկ են նախամասնիկից: Ըղձական ապառնիի կազմությունները տարածքային տարբերակների արևելյան և արևմտյան խմբակցություններում դրսևորվում են գրաբարյան ներկայի տիպի բայաձևերով և բացի հնչյունական փոփոխություններից՝ ձևային այլ տարբերակվածություն հանդես չեն բերում: Ըղձական անցյալի իմաստը դրսևորվում է 3 կառուցատիպերով՝ հինհայերենյան անցյալ անկատար տիպի բայաձևերով (աղի, աղիր, աղէր, աղինք, աղիք, աղին), հինհայերենյան անցյալ անկատար տիպի բայաձևերով և ժամանականիշ մասնիկներով (խօսէմ էր, խօսէս էր, խօսէր, խօսէնք էր, խօսէք էր, խօսէն էր), գրաբարյան անցյալ անկատարի եզակի երրորդ դեմքի բայաձևերով ու դիմային վերջավորություններով (մընէր էմ, մընէր էս, մընէր, մընէր էնք, մընէր էք, մընէր էն):

Հինհայերենյան կազմություններ են գործառուում նաև ներկայի և անցյալ անկատարի կառուցատիպերում: Խոտրջուր, Արամո տարածքում գրաբարատիպ ներկան և անցյալ անկատարը մասամբ պահպանվել են (տե՛ս Ղարիբյան 1958:42; Կոստանոյան 1985:59): Սրանցում բաղաձայնասկիզբ բայերի ներկան և անցյալ անկատարը գրաբարատիպ

են (մընամ, մընաս, մընա..., մընայի, մընայիր, մընար....), իսկ ծայնավորասկիզբ բայերինը՝ նախամասնիկավոր, այսպես՝ կաղամ, կաղաս, կաղա..., կաղայի, կաղայիր, կաղար: Հինհայերենյան ներկա ժամանակաձևերի նմանատիպ կիրառություն ոչ օրինաչափ ձևով նկատելի է նաև Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գավաշի, Հայոց ձորի խոսվածքներում (տե՛ս Աբեղյան 1936:72):

Որոշ տարածքներում (Կոզեն, Լոռի, Շամշադին-Դիլիջան, Թովուզ) իմաստային և կառուցվածքային ընդհանրություն ունեցող երկու ժամանակաձևերից (անկատար ներկա, անցյալ անկատար) միայն անցյալ անկատարի հարացույցում է հինհայերենյան սահմանական անցյալի ձևը պահպանվել (խօսի, խօսիր, խօսէր...), իսկ ներկան ստացել է նոր արտահայտություն, այսպես՝ սիրում եմ, սիրում ես, սիրում ա, սիրում ենք, սիրում էք, սիրում եմ: Դ. Կոստանդյանը, փորձելով բացատրել այս իրողությունը, իրավացիորեն կարծում է. «Անցյալ անկատարը չի ունեցել ներկայի նման իմաստային ծանրաբեռնվածություն, որի պատճառով էլ նրա հիմնական իմաստը՝ անցյալ անկատարությունը, իր ձևային արտահայտությամբ հայերենի թեկուզև փոքր տարածքում պահպանվել է անաղարտ» (Կոստանդյան 1985:58-59):

Թերևս անցյալ անկատարում դերբայակազմ ձևերի գործածությունը ներկայի կազմությունների համաբանության և գրական լեզվի ազդեցության արդյունք է, իսկ գրաբարյան անցյալ անկատարի պահպանումը Դ.Կոստանդյանը բացատրում է հինհայերենյան անցյալ անկատարի՝ ըղձական անցյալի իմաստով կիրառությամբ: Մեր կարծիքով ևս այդ կիրառությունը հանգեցրել է նրան, որ անցյալ անկատարի համար ստեղծվել են նոր կաղապարներ, իսկ անցյալ անկատարի ձևերը դրսևորել են միայն ըղձական եղանակի անցյալի իմաստ: Այս երևույթը հավանաբար ընդգրկել է հայերենի ողջ տարածքը՝ բացառելով միայն գրաբարատիպ անցյալ անկատարով բարբառային միավորները, որոնցում բայական հիշյալ ձևերի զարգացումը ընթացել է այլ կերպ: Դրանք ըղձական անցյալի համար են ստեղծել նոր ձևեր՝ պահպանելով գրաբարատիպ անցյալ անկատարը՝ որպես սահմանական եղանակի ժամանակաձև:

Ներկա-ապառնի ժամանակային անցումը բնորոշ է եղել հայերենին իր պատմական զարգացման ողջ ընթացքում, և ինչպես նշում է Լ. Հովսեփյանը, հայոց լեզվի պատմության մեջ այդ անցումը տեղի է ունեցել երկու անգամ: Նախ գրաբարյան ներկան է գործածվել ապառնիի իմաստով, իսկ ներկայի համար ստեղծվել են նոր ձևեր. «Ճիշտ նույն ձևով

միջին հայերենի կու մասնիկով ներկան իմաստային և գործառական անցում է կատարում դեպի ապառնի, իսկ աշխարհաբարի

(գրական արևելահայերեն) համար ստեղծվում է ներկայի նոր՝ վերլուծական ձև: Ընդ որում, ուշագրավ է, որ ներկա-ապառնի անցումը ուղեկցվում է եղանակային իմաստի փոփոխություններով՝ սահմանականից ըղձական՝ գրաբարից միջին հայերենին անցնելու շրջանում և սահմանականից պայմանական՝ միջին հայերենից ժամանակակիցին անցնելու շրջանում» (Հովսեփյան 1997:54-55):

Տարածքային մի շարք միավորներում գործառում են ներկայի և անցյալ անկատարի անորոշով կազմություններ (սիրալ էմ, սիրալ էս, սիրալ ի, սիրալ էի, սիրալ էք, սիրալ էն): Դրանք մատենագրությամբ ավանդված են դեռևս հինհայերենյան շրջանից: Այսպես՝

ա) Հ. Աճառյանը նշում է անորոշ դերբայով կազմված անցյալ անկատարի ձևեր, որոնք ավանդված են 5-րդ դարից՝ Ետ *ում տալ էր զօրէնսն* (որին որ հաղորդություն տալիս էր կամ տալու էր կամ տվեց) Բուզ., 23, *Ընդ որ գալ էր* (որով գալիս էր կամ գալիս էին) Բուզ., 250 (տե՛ս Աճառյան 1961:174): Հիշյալ օրինակները ենթադրել են տալիս համապատասխան ներկայի գոյությունը նույն ժամանակաշրջանում:

բ) Անորոշով ներկայի առաջին օրինակները հանդիպում են՝ սկսած 7-րդ դարից: Այս մասին վկայում է Ա. Այտընյանը՝ բերելով հետևյալ օրինակները՝ *Յոյնք են ի գալ ի վերայ մեր* (է դար), վրանիս կու գան. *Դուք զտաճարն այլ յայրել էք ի տալ* (է դար), տաճարն այլ այրել կու տաք (տե՛ս Այտընեան 1866:87):

գ) Ղ. Հովնանյանը, ուսումնասիրելով միջինհայերենյան գրավոր նյութերը, անորոշով ներկայի օրինակներ է նշում Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական» և Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն թաթարաց» աշխատանքներում: Նա Արևելցու մոտ *-ում* վերջամասնիկով անկատար դերբայի մեկ օրինակ է վկայում՝ հավելելով, որ նրա լեզվում *ի* նախդրով անորոշի և օժանդակ բայի հարադրությամբ կազմությունները հաստատական ներկայի հիմնական ձևերն են (տե՛ս Յովնանեան 1897:254-255):

Վերոբերյալ փաստերից հետևում է, որ անորոշով ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի առաջին վկայությունները հասնում են մինչև 7-րդ դար, դրանց նախատիպերը առկա են դեռևս մեր մատենագրության սկզբնավորման շրջանում, ժխտական կազմությունները գործառում են՝ 10-րդ դարից սկսած, մինչդեռ *կու* եղանականիշ մասնիկով և *-ում* վերջամասնիկն ունեցող դերբայով բաղադրված ներկայի և անցյալ անկատարի առաջին օրինակները մատենագրության մեջ գործառում են՝ 12-րդ դարից սկսած: Այս ամենը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ անորոշ դերբայով և օժանդակ

բայով զուգադրությունները նորակազմ ներկայի և անցյալ անկատարի նախնական ձևերն են եղել և սկսել են կիրառվել այն ժամանակ, երբ հինհայերենյան ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի՝ ստորադասականի իմաստով հետզհետե հաճախացող գործառությունների հետևանքով ստեղծվել են նոր կազմություններ: Հավանաբար նորակազմ անորոշով ներկայի և անցյալ անկատարի ձևատիպարները նախապես, երբ տարածքային տարբերակների քերականական առանձնահատկությունները դեռ նոր էին սկսում գծագրվել, ընդգրկել են հայերենի ողջ տարածքը՝ գործառելով գրաբարյան ներկային և անցյալ անկատարին զուգահեռ: Հետագայում հին շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների խորացմանը զուգընթաց ստեղծվել են նորակազմ կառուցատիպեր, իսկ անորոշով ներկան և անցյալ անկատարը կենտրոնացել են արևելյան տարածքի տարբերակների մի մասում: Այս գործընթացին թերևս նպաստել է այն, որ այդ ժամանակաձևերը ևս ժամանակի ընթացքում ձեռք են բերել բազմիմաստություն (այդ են վկայում բարբառային որոշ միավորներում անորոշով կազմությունների կիրառությունը ապառնիի իմաստով), հետևաբար չի լուծվել ներկայի և անցյալ անկատարի իմաստագործառական բազմարժեքության հաղթահարման հարցը, և դարձյալ առաջացել է դրանց ձևաբանական տարբերակման խնդիրը: Միայն ներկայի և անցյալ անկատարի իմաստներն արտահայտող կաղապարային կառույցներ ունենալու, բայական միավորների բովանդակության պլանում հստակություն մտցնելու միտմամբ հայերենի տարածքային տարբերակները դիմել են նոր միջոցի՝ գործառելով *կու* եղանակիչ մասնիկով և դիմավոր բայաձևերով համադրված զուգորդությունները: Վերջիններս նախապես զբաղեցրել են ընդարձակ տարածք (այդ են վկայում կու եղանականիչ մասնիկով համադրված ապառնիի ձևերը)՝ ներկայի և անցյալ անկատարի իմաստներին զուգահեռ արտահայտելով նաև ապառնիի իմաստ: Տարածքային տարբերակների արևմտյան խմբակցությունը, առ այսօր պահպանելով այդ բազմիմաստությունը, ներկայի և անցյալ անկատարի իմաստների արտահայտման համար առանձին ձևեր չի ստեղծել, արևելյան խմբակցության բարբառները, խուսափելով բազմիմաստությունից, կիրառել են ներկայի և անցյալ անկատարի կազմության նոր կառուցատիպեր՝ *-ում*, *-իս*, *-ման* վերջամասնիկներն ունեցող դերբայներով և օժանդակ բայով զուգորդված, իսկ *կու* եղանականիչ մասնիկով բաղադրությունները պահպանել են միայն ապառնիի իմաստն արտահայտելու գործառությունը: Այս օրինաչափությունից շեղվում են Կոզենի, Հավարիկի, Ագուլիսի, Մեղրու բարբառները, որոնք ապառնի

ժամանակի իմաստի դրսևորման համար գործառու են անորոշ դերբայով կազմված հարադրությունները (մընալ ըմ (նէլ): Հիշյալ փաստարկը, կարծում ենք, լրացուցիչ կռվան է՝ հիմնավորելու վերն արտահայտած այն կարծիքը, թե անորոշով ներկան և անցյալ անկատարը նախապես ընդգրկել են հայերենի ողջ տարածքը և հետագայում արտահայտելով նաև ապառնիի և անցյալի ապառնիի ժամանակահիմաստներ՝ նպաստել ներկայի և անցյալ անկատարի նորակազմ ձևերի առաջացմանը:

Գրաբարում գործածվում էր ապառնի դերբայի երկու տարբերակ՝ *-ng* և *-h* վերջամասնիկներով: Հայտնի է, որ գրաբարի քերականները դրանք միմյանցից առանձնացնում էին սեռի հիման վրա: Նրանք ներգործական (երբեմն չեզոք) սեռի համար ընդունում էին *ng* հնչակապակցությամբ, իսկ կրավորականի համար՝ *h* վերջնահնչյունով դերբայները (տե՛ս Աբրահամյան 1953:129): Դրանցից հայերենի բարբառներում (Ագուլիսում և Ջուղայում) պահպանվել է *-ng* վերջամասնիկով դերբայը *ag* կամ *tg* վերջամասնիկն ունեցող տարբերակային ձևերով, այսպես՝ *թըկէլաց ըմ* (թակելու եմ), *ըրվէլաց ըմ* (երևալու եմ), *կատարելէց ամ* (կատարելու եմ), *մնալէց ամ* (մնալու եմ) (տե՛ս Ա. Աբրահամյան, 1953, էջ 142): Միջինհայերենյան շրջանում գրաբարյան ապառնի դերբային զուգահեռ գործառել է նաև *-nj* վերջամասնիկով տարբերակը, որը, ըստ Հ. Աճառյանի, անորոշի սեռականն է (տե՛ս Աճառյան 1961:201): Վերոնշյալ դերբայը, լայն գործածություն ունենալով միջին հայերենում, կրել է հնչյունական փոփոխություն՝ *ոյ>ու*: Նրանով բաղադրված կաղապարային կառույցները հաճախադեպ են տարածքային տարբերակների արևելյան խմբակցությունում:

Անցյալ ժամանակաձևերը ևս տարածքային տարբերակներում արտահայտման տարատեսակ ձևեր ունեն և զարգացման երկարատև շրջան են անցել: Հայտնի է, որ հինհայերենյան անցյալ ժամանակի ձևերը երեքն էին՝ հարակատար, գերակատար և ստորադասական անցյալ: Հիշյալ երեք ժամանակաձևերն էլ կազմվել են *-եալ* վերջավորությամբ անցյալ դերբայով, այսպես՝ *գրեալ եմ* (գրել եմ), *գրեալ էի* (գրել էի), *գրեալ իցեմ* (գրած լինեմ): Հետագայում պատմական հնչյունափոխության արդյունքում տեղի է ունեցել անցյալ դերբայի վերջավորության *եալ>ել* փոփոխությունը, որից հետո այն վերանվանվել է որպես վաղակատար: Վերջինիս գործառության սկիզբը Ա. Այտընյանը համարում է 10-11-րդ դարերը: Միջինհայերենյան շրջանում առկա էին վաղակատար դերբայի՝ *-ել* և *-եր* վերջամասնիկներով փոփոխակները:

Վաղակատարի լ>ր բաղաձայնական հերթագայությունը <. Աճառյանի կարծիքով սովորական երևույթ չէ հայերենի համար. «Ձայնափոխությունը կատարված է զանազանություն դնելու համար -ել անցյալ դերբայի և -ել անորոշի միջև, որ կարող էր որոշ դեպքերում շփոթվել նրա հետ» (Աճառյան 1961:216): Մեր կարծիքով ևս -եր վերջամասնիկով վաղակատար դերբայի առաջացումը պետք է դիտել ե խոնարհման պարզ բայերի անորոշ և վաղակատար դերբայների քերականական համանունությունից խուսափելու միջոց: Տարածքային միավորներում վաղակատար դերբայով բաղադրված կազմությունները բնութագրվում են գործառական բազմարժեքությամբ. դրանք ժամանակային 3 իմաստ են արտահայտում՝ վաղակատարի, հարակատարի և անցյալ կատարյալի:

Հին հայերենում, ինչպես հայտնի է, ներգործաձև խոնարհման դեպքում անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքը վերջավորություն չի ունեցել. բազմավանկ բայերի անցյալ կատարյալի շեշտված հիմքն է ծառայել իբրև եզակի թվի 3-րդ դեմքի բայաձև, իսկ միավանկ բայերը սկզբում ստացել են ե կամ է նախահավելվածը: Այս օրինաչափությանը չեն ենթարկվել ե կամ է սկզբնահնչյունով բայերը: Նախահավելվածի կիրառությունը, ըստ <. Աճառյանի, նպատակ է ունեցել տարբերակելու անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքի և բուն հրամայականի եզակի թվի համանուն ձևերը (տե՛ս Աճառյան 1959:308): Բայական հիշյալ կազմությունը առկա է նաև տարածքային տարբերակներում: Դրանցում մի խումբ բայերի (անկանոն) անցյալ կատարյալը հատկանշվում է եզակի թվի 3-րդ դեմքում նախահավելվածավոր ձևերի առկայությամբ, այսպես՝ էթօղ (թողեց), հպու (տվեց), հպի (բերեց), հպի (դրեց):

Տարածքային տարբերակների եղանակաժամանակային կազմությունների զուգադրական քննությունից պարզ դարձավ, որ վերջիններս թեև պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են փոփոխությունների, այնուամենայնիվ պահպանել են հինհայերենյան որոշ ձևեր ու կազմություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ, Սասնա ծոեր, Ե., 1936:
2. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953:
3. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 4 գիրք Ա, Ե., 1959:
4. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 4, գիրք Բ, Ե., 1961:
5. Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
6. Գևորգյան Գ., Զուգաձևություններ բարբառների խոնարհման համակարգում, Ե., 2009:
7. Կոստանդյան Դ., Խոտրջուրի բարբառային յուրահատկությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1985:
8. Հովսեփյան Լ., ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Ե., 1997:
9. Ղարիբյան Ա., Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Ե. 1958:
10. Յովնանեան Ղ., Հետազոտութիւնք նախնեաց ուսմկօրէնի վրայ, Վիեննա, 1897:

REFERENCES

1. Abeghyan M, Sasna c'r'er, E., 1936.
2. Abrahamyan A., Hayereni derbaynery' & nranc d'&abanakan nshanakowt'yowny', E., 1953.
3. Atwar'yan H., Liakatar qerakanowt'yown hayoc lezvi hamematowt'yamb 562 lezowneri, h. 4 girq A, E., 1959.
4. Atwar'yan H., Liakatar qerakanowt'yown hayoc lezvi hamematowt'yamb 562 lezowneri, h. 4, girq B, E., 1961.
5. Ayty'nean, Qnnakan qerakanowt'iwn ashxarhabar kam ardi hayere'n lezowi, Vienna, 1866.

6. G&orgyan G., Zowgad'owt'yownner barbar'neri xonarhman hamakargowm, E., 2009.
7. Kostandyan D., Xotrijowri barbar'ayin yowrahatkowt'yownneri lezvaashxarhagrakan bnownt'agiry', Hayereni barbar'agitakan atlas, E., 1985.
8. Hovsep'yan L., JhG dari hayeren d'er'agreri hishatakaranneri lezown, E., 1997.
9. Gharibyan A., Hayereni norahayt barbar'neri mi nor xowmb, E. 1958.
10. Yovnanean Gh., Hetazo'towt'iwnq naxneac r'amko're'ni vray, Vienna, 1897.

ГАЯНЕ ГЕВОРГЯН - ДРЕВНЕАРМЯНСКАЯ МОДАЛЬНО-ВРЕМЕННАЯ СИСТЕМА ГЛАГОЛОВ В АРЕАЛЬНЫХ ВАРИАНТАХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

***Ключевые слова:** Древнеармянская модально-временная система, ареальные варианты, глаголы армянского языка, грамматические значения, частицы-показатели наклонения, древнеармянское настоящее время, будущее причастие, прошедшее время*

Система спряжения армянского глагола претерпела значительные изменения в процессе своего исторического развития, в частности это повлияло на количество наклонений и временных форм (некоторые древнеармянские временные формы глагола исчезли, уступив свое место новым образованиям), а также на структуру сложных глагольных образований и средств выражения грамматических значений глагола, при этом были модифицированы и сами грамматические значения. Все эти изменения нашли свое отражение в ареальных вариантах армянского языка. Хотя вышеупомянутые изменения нашли свое выражение в ареальных вариантах армянского языка, они сохранили древнеармянские структуры, изучение которых важно для исторического курса развития языка.

GAYANE GEVORGYAN - OLD ARMENIAN STRUCTURES IN SYSTEMS OF MOOD AND TENSE OF ARMENIAN TERRITORIAL VARIANTS

***Keywords:** old Armenian structures, systems of mood and tense, territorial variants, verbal units, grammatical meanings, time-determining particles, old Armenian present, future participle, past tense*

The conjugation system of the Armenian verb has undergone significant changes during its historical development; it has particularly influenced the number of conjugations and tense-forms: certain tense-forms of Old Armenian have disappeared, giving way to newly-formed structures, as well as the structure of complex verb formations, means of expressing the grammatical meanings of the verb wherein the grammatical meanings have also been subjected to modifications. Although the above-mentioned changes are reflected in the territorial variants of the Armenian language, they have preserved the ancient Armenian structures, the study of which is important for the historical course of the language development.

Ներկայացվել է՝ 24.09.2019
Գրախոսվել է՝ 19.09.2019

ԱՐԵՎԵԼՔԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հիմնաբառեր՝ արևելք, բանաստեղծ, պոեզիա, մշակույթ, թարգմանություններ, չափածո, հողված, ստեղծագործական կյանք, հեքիաթ, քառյակ

Թումանյանի ստեղծագործության արևելյան մոտիվների մասին շատ է խոսվել հայ գրականագիտության մեջ ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում: Հարցը սովորաբար վերաբերում է այն բանին, թե բանաստեղծը, դժգոհ լինելով արևմտյան հաշվենկատ բարքերից, «անարատ» մարդու և մաքուր բարոյականի իր իդեալը որոնում է Արևելքի նախնական կացութաձևում: Այդ պահը, իհարկե, կա, և դա, ինչպես կտեսնենք ստորև, ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Սակայն նույնիսկ այդ դեպքում Արևմուտք-Արևելք թումանյանական հարցադրումը միանշանակ այս կամ այն կողմի խնդիր չի դնում, այլ ավելի շուտ պատմական-մշակութաբանական լայն տարածության վրա փորձում է գտնել հավասարակշռության եզրը:

Թումանյանն ունի «Արևելքի նոր դարագլուխը» խորագրով մի հողված՝ գրված 1916 թվականին, այն օրերին, երբ ուսական բանակը հաղթականորեն առաջ էր գնում, և բանաստեղծը հավատում էր օսմանյան կայսրության մոտալուտ փլուզմանը, արևելքի ու արևմուտքի քաղաքակիրթ ժողովուրդների ազատագրությանը խավար բռնատիրությունից: Հողվածը հակաթուրքական-քաղաքական ուղղվածություն ունի, բայց կարևոր մտքեր է պարունակում նաև մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ: «Ասիան ու Եվրոպան կամ, ուրիշ խոսքով, Արևելքն ու Արևմուտքը,- գրում է բանաստեղծը,- լոկ աշխարհագրական տերմիններ չեն, այլ տարբեր քաղաքակրթություններ ու աշխարհայացքներ: Հազարավոր տարիների ընթացքում էդ աշխարհներից ամեն մինը հանդես է բերել իր էս կամ էն գերազանց ուժը իբրև իրեն ներկայացուցչությունը մյուսի հանդեպ» (Թումանյան 1995, հ.1:272-273): Եվ կողմերից ամեն մեկը ձգտել է մյուսի «հեգեմոնիայի» դեմ հանդես բերել քաղաքական նոր նվաճումներ, և այդպիսով ստեղծվել է «հավասարակշռություն», քանի դեռ որևէ խանգարող ուժ չի հայտնվել դրա ճանապարհին: Եվ հետագայում, բացատրում է Թումանյանը, մինչդեռ դարեր շարունակ քրիստոնյա Եվրոպան ձգտում էր

քաղաքակրթական նոր հավասարակշռության՝ «պարսիկ, արաբ կամ հնդիկ հանճարներին» հանդիպադրելով իր «Ռաբլեին ու Տաստյին, Շեքսպիրին ու Սերվանտեսին, Ռուբենսին ու Ռաֆայելին, Կոպեռնիկոսին ու Գալիլեյին, Կոլումբոսին ու Գուտենբերգին», պատմության ասպարեզում հանկարծակի հայտնված քոչվոր թուրքերը, «իսլամ ընդհանուր անվան տակ» ծպտված, քաղաքակրթություններ էին կործանում: Օսմանյան կայսրության փլուզման հեռանկարը, որ այդ օրերին դեռ ոգևորում էր բանաստեղծին, հողվածի վերջում լուսավոր լավատեսության է մղում նրան. «Պատմական ի՞նչ հոյակապ ավետիս: Բացվում են Արևելքի ոսկի դռները՝ ազատ ժողովուրդների, լուսավորության ու քաղաքակրթության համար և սկսվում է մի նոր դարազլուխ Արևելքի պատմության մեջ» (Թումանյան 1995, հ.1:275):

Եթե մի կողմ թողնենք հողվածի քաղաքական ուղղվածությունը, ընդհանուր տրամաբանությունից հեշտ է եզրակացնել, որ արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների մասին թումանյանական մտորումները, իրոք, հակադրության, առավել ևս փոխադարձ մերժումի որևէ երանգ չունենին. բանաստեղծի ընդվզումը համամարդկային քաղաքակրթության այդ երկու գոյավիճակների բնական հաղորդակցությունն ու փոխադարձ հարստացումը խոչընդոտող երևույթների դեմ է: Այս իմաստով պետք է հասկանալ նաև նոր ժամանակներում արևմտյան հասարակական բարքերի մեջ արմատավորված հաշվենկատ եսապաշտությունից բանաստեղծի դժգոհությունը, որ տարիներ անց՝ 1921 թ., դասական արտահայտություն պիտի ստանար հայտնի քառյակում.

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արևմուտքի ստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խոտներամ
Դեպ Արևելքն աստվածային–հայրենիքը իմ հոգու

(Թումանյան 1995, հ.2:49):

Այս քառյակը Թումանյանի այն ստեղծագործություններից է, որոնց մասին բանաստեղծն ասում էր, թե դրանց «...մեկնաբանությունը իրենցից շատ ու շատ է երկար, որոնք կենսագրություն ունեն, պատմություն ունեն իրենց ետևը: Այսպիսի ոտանավորների տողերում է, որ թաքնված է լինում բանաստեղծի հոգին» (Թումանյան 1995, հ.9:438): Իրոք, շատ երկար, տխուր էջերով լի պատմություն կար այս չորս տողերի հետևում: Ավարտվել էր Առաջին աշխարհամարտը՝ հայ ժողովրդի համար ծանր հետևանքներով: Պատերազմի սկզբում բանաստեղծին համակած ոգևորությունը փոխվել էր խոր հիասթափության: Ռուսաստանի և քաղաքակիրթ Եվրոպայի հետ կապված հույսերը ի դերև էին ելել:

Ամենայն հայոց բանաստեղծը հոգեմաշ ապրումների մեջ էր իր բզկտված հայրենիքի, բնաջնջված ժողովրդի, բարոյական նկարագիրը կորցրած քաղաքակիրթ աշխարհի, գազանացած մարդ արարածի համար: Այդ հոգեվիճակում նա փորձում է հանգստության հանգրվան գտնել հայեցողական խոհերի մեջ՝ հավերժական ճշմարտությունների, բարոյական անմեռ արժեքների մասին: Արևելքը, որ արևմտյան մտքի համար էկզոտիկ ժամանց էր միայն, հայ բանաստեղծի համար դառնում է «հոգու հայրենիք»: Ստեղծագործական հոգեբանության այս շրջվածքն առհասարակ բնորոշ էր 20-րդ դարի առաջին տասնամյակների հայոց բանաստեղծությանը:

Արևելքի գրականությանը Թումանյանն, իհարկե, ռուսական աղբյուրների միջոցով ծանոթ էր դեռևս երիտասարդության տարիներից: Բայց ծրագրված ստեղծագործական հետաքրքրությունը արևելյան քաղաքակրթության ու մշակույթի հանդեպ սկսվել է համեմատաբար ուշ: Այս տեսակետից ուշագրավ վկայություն կա Լեոյի՝ 1911 թ. հուլիսի 24-ին Թումանյանին հասցեագրված նամակում. «Այս թոնրի մեջ Ֆիրդուսի եմ կարդում ու դրանով մխիթարվում, մոռանում ամեն ինչ,- գրում է Լեոն:- Ա՛խ, Հովհաննես ջան, կատարյալ քո աշխարհն է, քո տաղանդի տեղն է... ինչ ահագին գրկանք է քեզ համար այդ նյութին անծանոթ լինելը» (Թումանյան 1998:357): Լեոն հիմք ունե՞ր կարծելու, թե Թումանյանն անծանոթ է Ֆիրդուսու հանրահռչակ վիպերգին, թե՞ ոչ, այս դեպքում այնքան էլ էական չէ: Բայց եթե բանաստեղծն այդ օրերին հատուկ նպատակով արդեն սկսած լիներ հետաքրքրվել արևելյան մշակույթով, Լեոն դրան անպայման տեղյակ կլիներ: Թումանյանի ստեղծագործական զարգացման բուն տրամաբանությունն էլ ցույց է տալիս, որ արևելյան քաղաքակրթությունն ու մշակույթը հայ բանաստեղծի նպատակային հետաքրքրությունների շրջանակում հայտնվում են հիմնականում 1910-ական թվականներին՝ քաղաքների շրջանում:

Արևելյան մշակութային աշխարհի հետ Թումանյանի ստեղծագործական շփումները դրսևորվել են գլխավորապես թարգմանությունների և փոխադրությունների ձևով, որոնց բնօրինակների մեջ հայ բանաստեղծը ոչ միայն գտել է իրեն հոգեհարազատ իմացական ու բարոյական արժեքներ, այլև տեսել ու ճանաչել է ինքն իրեն:

Թումանյանն այն ստեղծագործողներից է, որոնց ամենատես հայացքից չի վրիպում մարդկային կեցության ոչ մի բնագավառ: Սակայն նա, ներկայացնելով դրանց իրական պատկերը, դա բովանդակավորում և իմաստավորում է հազարամյակների փորձով հաստատված ճշմարտությունների ու բարոյական չափանիշների դիտակետից: Դա Թումանյանական գեղագիտության կարևոր հատկանիշներից է, որով

պայմանավորված է նաև նրա մշտական հետաքրքրվածությունը ժողովրդական հեքիաթներով:

Արևելյան հեքիաթային մշակույթի հետ նա կապվում է հատկապես արաբական, ճապոնական, հնդկական բանահյուսական ավանդույթների միջոցով:

Ճապոնականից փոխադրել է «Լեզուն կտրած ծիտիկը»՝ ձեռքի տակ ունենալով ռուսերեն տարբեր թարգմանություններ և ճապոներեն բնօրինակի ճոխ նկարազարդումները, որոնք օգտագործվել են հայերեն հրատարակության մեջ: Հետաքրքիր է, որ հրատարակության հովանավոր իշխանուհի Մարիամ Թումանյանը հեքիաթը այնքան էլ հարմար չի համարում մանուկ ընթերցողների համար՝ ասելով, թե չար պառավի կողմից ծտի լեզուն կտրելը նրանց վրա ճնշող տպավորություն կարող է թողնել: Մինչդեռ Թումանյանը հեքիաթի հրատարակչին գրում է. «Դա մանկական ամենալավ հեքիաթներից մեկն է, իսկ նկարազարդումները կարծես իրենց նմանը դեռ չեն ունեցել հայոց մանկական գրականության մեջ»: Եվ իրոք, չարի և ագահության պատժվելը, դրան հակառակ՝ բարու և անշահասիրության հատուցումը արժանի շնորհակալությամբ, որ մշտապես հոլովվում է Թումանյանի դավանած բարոյական արժեքների շարքում, շատ ավելի դրական հույզեր կարող են առաջ բերել մանկական ներաշխարհում, քան պառավական չարությունը՝ ճնշող տպավորություն:

Արաբական հեքիաթների ռուսերեն թարգմանություններից Թումանյանն ընտրել է «Անգին քարը»՝ մարդկային իմաստության, բարության ու խղճի մասին ուսանելի մի գրույց, որի հանդեպ մշտապես տեղի են տալիս դրանց հավիտեական ուղեկից չարությունն ու նախանձը: Թարգմանությունը բավական ազատ է. Թումանյանը հեքիաթային անցուդարձերին ուղղություն է տալիս բարոյական խորհուրդներով, որ ծանոթ արտահայտություններով գործառում են նրա ողջ ստեղծագործության մեջ: Ահա, օրինակ, թագավորական խնջույքի հրավիրվածները մեկի՝ «հեքիաթախոսի» գրույցից մի հատված. «Աշխարհքում շատ գանձեր կան, բայց ամենաթանկ գանձը լավ անունն է: Լավ անունով մարդը միաժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազար ու մի մարդու սրտում: Լավ անունով մարդը էնպես տեղեր է հասնում, որ չի կարող հասնել ո՛չ ձիով, ո՛չ ոտով, և ո՛չ ուրիշ միջոցով: Լավ անունով մարդը չի մեռնում: Նա մահից հետո էլ անտեսանելի ապրում է մեր միջում, ինչպես ոգի» (Թումանյան հ.4, 1995:323): Դժվար չէ նկատել, որ սա «Թմկաբերդի առումը» պոեմի հիմքում գործող ամենքիս ծանոթ բարոյական պատվիրանն է: Ուշագրավ է նաև, որ ռուսերեն բնագրի «Драгоценный камень» խորագիրը բառացի չի թարգմանել՝

«Թանկարժեք քարը», այլ նախընտրել է հայ ժողովրդական հեքիաթներում ընդունված «Անգին քարը»:

Թումանյանական «հոգու հայրենիքի» կատարելատիպ պատկերը լիովին հստակվում է հնդկական «Ոսկի քաղաքը» հեքիաթի փոխադրության մեջ: Եթե նկատի ունենանք, որ փոխադրությունը կատարված է ռուսերեն թարգմանությունից (Թումանյան հ.5,1994:221), որ իր հերթին կարող էր հնդկական բնագրում փոփոխություններ կատարած լինի, ինչպես բնորոշ է ռուսերեն թարգմանություններին առհասարակ, ապա կարելի է ասել, որ հայերեն փոխադրությունը պատմելաոճի շատ ընտիր հայկականությամբ, մանավանդ երկխոսությունների թումանյանականությամբ, ինքնուրույն ստեղծագործության արժեք է ստանում: Իսկ չափածո հատվածները ամբողջությամբ անկասկած թարգմանչի հավելումներն են: Ուշագրավ է հատկապես դրանցից մեկը.

Գոհ աշխարհից, գոհ իր կյանքից,

Սիմուրդ հավքի զմրուխտ թեկին.

Երջանկության հայրենիքից

Գնում է նա, գնում կրկին:

Գնում է նա վերածնված

Մաքուր սիրով, բարի սրտով.

Դեպի երկիրն իր նախահարց,

Ցավերի տուն, արցունքի ծով:

Տանում է նա ուժը ոգու,

Անվերջ սերերը, անհատ բարին.

Երջանկություն ամեն մարդու,

Խաղաղություն ողջ աշխարհին (հ. 5:792):

Կասկած չկա, որ այս տողերը գրելիս հայ բանաստեղծը աչքի առաջ է ունեցել իր «ցավերի ծով» հայրենիքը: Հնդկական հեքիաթում նա իրականացած է տեսնում երջանկության աշխարհի մասին իր նվիրական երազանքը, որ զանազան դրսևորումներով ուղեկցել է նրան ողջ ստեղծագործական կյանքում, ինչպես, օրինակ, «Քոշաքարում ես վազել եմ...» հայտնի բանաստեղծության մեջ, որ Թումանյանը գրել է դստեր՝ Անուշի ալբոմում հեքիաթի թարգմանությունից տարիներ անց՝ 1917-ին.

Իմ մուրազը շատ էր շըքեղ,

Դըրախտ պիտեր քաղաք ու գեղ.

Երզը հոսեր հառաչքի տես,

Սերն ու բարին՝ Արագ, Անուշ:

Ակնհայտ է նմանությունը երջանկության այն աշխարհի հետ, որ արևելյան ճոխ երևակայությամբ ստեղծել է հնդիկ ժողովուրդը «Ոսկի քաղաքը» հեքիաթում:

Արևելքի տեսիլը Թումանյանի բանաստեղծական գիտակցության մեջ սաղմնավորվել է դեռևս վաղ պատանեկության տարիներից: Արևելյան սիրավեպերի երգախառն պատմությունները ընտանի էին նրա հայրական հարկի տակ: Քահանա հայրը, ավագ եղբայրը սիրում էին պատմել կեսիրապատում, կեսհրաշապատում այդ հրապուրիչ հեքիաթները. մանավանդ հայրը չոնգուրի նվագակցությամբ հաճախ էր երգում այդ պատմություններին ուղեկցող հուզառատ սիրերգերից: Դրանցից մեկը՝ «Քյարամի հրաժեշտը», 1910-ականների վերջերին թուրքերենից թարգմանել է Թումանյանը: Թուրք երիտասարդը, սիրահարված հայ քահանայի դստերը, հրաժեշտ է տալիս աշխարհում ամեն ինչին և գնում է փնտրելու նրան՝ իր սիրահարված սրտի բարի մաղթանքները թողնելով աշխարհին.

Եղ ու մեղր հոսեն դաշտ ու հանդերով,

Խոր ձորերը կտրեն անուշ կաթի ծով,

Բար ու պտուղ՝ ծըմակներով, սարերով,-

Գարուն բացվի ճրմռանը պաղ աշխարհի (հ. 5:328):

Այս մաղթանքները շատ նման են բանաստեղծի՝ վերոբերյալ «շքեղ մուրազին», և դա ունի երկու բացատրություն. նախ՝ այդ երազը ուղեկցել է Արևելքի բոլոր ժողովուրդներին բոլոր ժամանակներում, և ապա՝ միայն սերն է այդ «մուրազի» իրականացման արդար ճանապարհը: Սերը և բարին, որոնց ձևաչափով է կերտված Թումանյանի ստեղծագործական աշխարհը, Արևելքի հայեցողական կենսափիլիսոփայության հիմնային արժեքներից են: «Իմ երգը» ծրագրային բանաստեղծությունը անվերապահորեն հաստատում է հայ բանաստեղծի հավատարմությունը այդ արժեքներին:

Կյանքի վերջին տարիներին՝ հատկապես քառյակների շրջանում, Թումանյանին խորապես հետաքրքրել է նաև Արևելքի ինչպես հնագույն, այնպես էլ նոր ժամանակների դասական պոեզիան: Առաջին գործնական անդրարձներից մեկը հնդիկ բանաստեղծ Թերուվալլովայի «Պարիայի երգը» բանաստեղծության թարգմանությունն է ռուսերենից, որ տպագրվել է «Հորիզոն» թերթում թարգմանչի հետևյալ ծանոթագրությամբ. «Պարիաների դասը, քառասուն միլիոն մի բազմություն, ամեն ինչքից ու իրավունքից զուրկ, հասարակությունից մերժված մի դաս է Հնդկաստանում: Բրամինների սահմանած օրենքով (Ավադանա սաստրա) նրանց արգելվում է մարդաբնակ շենքեր մտնել, աման գործածել, գնացական ջուր խմել, լվացում կատարել, թաղումն անել, աստծուն պաշտել, ընտանիք ունենալ և այլն: Անգլիական կառավարությունը չկարողացավ միանգամից ջնջել հին օրենքն ու ադաթը և ազատել պարիաներին իրենց դաժան վիճակից: Պարիաները մի բանաստեղծ

ունեն Թերուվալլովա անունով, որ միակ պարիա բանաստեղծն է ամբողջ Հնդկաստանում. թեև պարիան համարվում է ավելի գարշելի, քան ամենապիղծ կենդանին, այնուամենայնիվ, հենց իրենք բրամինները Թերուվալլովային անվանում են աստվածային պարիա: Թերուվալլովայի էս ոտանավորը թարգմանված է ռուսերենից» (h.2:604): Պարիա բանաստեղծը, լի աշխարհի բարիքներից անմասն, իր տրորված ժողովրդի տրտունջն է բարձրաձայնում երկնքի ու երկրի դիմաց՝ հույս էլ չունենալով, որ արդարության ձայնը կհասնի աստվածների խուլ ականջին.

Իզուր մերժեցի ես մահը դաժան
Եվ անտառների խորքերումը խուլ
Սրբազան հեղումն արի լիսսիրտ,
Որ աստվածների սրտերը մեղմեմ,
Ո՛հ, նրանք փախան իմ մոտենալիս:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք
Ի՛նչ ենք մենք...(273)

Այսպես մեծ մարդասեր հայ բանաստեղծն էր իզուր արդարություն ակնկալում «խտրող ու դաժան» երկնային սրբերից ու աստվածներից «Բարձրից»՝ իր «գարկված ու զրկված» հայրենիքի («Հայրենիքիս հետ»), տառապող մարդկության արհամարհված դատի համար:

Թումանյանի թղթերում պահպանվել է Ռ. Թագորի «Գիտանջալի»-ից մի հատվածի թարգմանության նախնական ձեռագիրը: Թվում է՝ այդ թարգմանությունը հեռավոր կապ պետք է ունենա «Պարիայի երգի» թարգմանության հետ, քանի որ Թագորը այն հնդիկ մտավորականներից էր, որոնք հետևողականորեն պայքարում էին հասարակության մեջ կաստայական խտրականության դեմ: Թարգմանված հատվածը՝ «Լո՛ւս, ո՛վ լուս, աշխարհքը լցնող լուս...» սկսվածքով, լուսի փառաբանություն է, որ նաև հայ բանաստեղծի մարդասիրական իդեալի խորհրդանիշն է նրա գեղագիտության համակարգում:

Նույն 1910-ական թվականներին Թումանյանը թարգմանության փորձեր է արել նաև հնդկական վեդաներից: Ընտրված հատվածները բնորոշ են այն առումով, որ լիովին համահունչ են քառյակներում և այդ շրջանի մի քանի խոհաքնարական երգերում բանաստեղծին հուզող փիլիսոփայական մտորումների հետ: Մտքով իմաստուն և հոգով խաղաղված բանաստեղծը «Վայրէջք»-ում որոնում է տիեզերքի, գոյության սկիզբների սկիզբը, ինչպես վեդայական հիմների հեղինակները.

Ո՛րտեղից է ծագել արդյոք կազմը էս երկրի,
Ստեղծա՞ծ է բնությունը, թե չէ.
Իր պահապանը գիտի միակն երկնքում,

Կամ, թերևս, նա ինքն անգամ չըզհտի(321):

1910-ականների երկրորդ կեսին Թումանյանը չինական պոեզիայից թարգմանել է երեք նմուշ՝ Կոնֆուցիուսի (մ.թ.ա. VI-V դդ.) «Մարդու ճակատագիրը», Լի-Թայ-Պոյի (մ.թ. VIII դ.) «Կարմիր վարդը» և Մա-Խուանդ-Թունգի (մ.թ. XIX դ.) «Մերժվածը» բանաստեղծությունները: Առաջինում խոսքը տիեզերական կյանքի հավիտենական նորոգումի և մարդու վաղանցիկության դրամայի մասին է, որ շարունակ հուզել է աշխարհի բոլոր բանաստեղծներին բոլոր ժամանակներում, երկրորդում արծարծվում է պատերազմի դաշտում կռվող սիրած ամուսնուն սպասող կնոջ կարոտի թեման, որ նույնպես ծանոթ է ու կրկնվող, երրորդը քնարական տրամադրությամբ ավելի մոտ է մեր ժամանակներին. արտահայտում է սիրահարված և մերժված երիտասարդի հոգեկան տվայտանքները:

Թումանյանի ձեռքի տակ եղել է «Свирель Китая» (СПБ 1914) ժողովածուն, և թվում է՝ թարգմանության համար հատկապես այս բանաստեղծությունների ընտրությունը պատահական չէ: Դրանք թարգմանվել են գրեթե միաժամանակ և միասնաբար, մեկը մյուսին լրացնելով, հավերժականի և ակնթարթայինի մարդկային դրաման լուծում են «կյանքը շարունակվում է» պարզ կենսափիլիսոփայությամբ, որ բանաստեղծներն արտահայտում են հազար ու մի ձևերով: Օրինակ՝ Թումանյանի մոտ՝

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՞նչ կա որ.
Ես եղել եմ, կա՛մ, կըլինեմ հար ու հավետ, ի՞նչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ (51):

Իսահակյանի մոտ՝

Բայց ամեն մի նոր ծնվածի համար նորից է պատմվում հեքիաթն
այս շքեղ,
Նորից սկսվում և ավարտվում է ամեն մի մարդու կյանքի հետ
մեկտեղ:

«Աբու-Լալա Մահարի»

Եվ այսպես շարունակ...

Իրանի միջնադարյան պոեզիայից Թումանյանը թարգմանել է միայն XII դարի նշանավոր բանաստեղծ Խաքանիի վեց քառյակները, որոնք բովանդակությամբ մոտ են իր բանաստեղծական կենսափիլիսոփայությանը: Պարսիկ բանաստեղծին ևս հանգիստ չի տալիս մարդու կյանքի վաղանցիկության ցավը.

Հոգուդ հավքը հանկարծ թըռավ՝ ի՞նչ ես դու.

Ճամփիդ կիսում ձիդ որ կորավ՝ ի՞նչ ես դու.

Եթե մարդ ես – կյանքը փոխ է տրված քեզ,

Փոխտրվողը որ ետ տարավ՝ ի՞նչ ես դու:

Ցավն առավել է խորանում այն գիտակցությունից, որ այդ կարճատև կյանքն էլ լի է զրկանքներով ու դառնություններով.

Ե՛կ, Խաքանի ու հեռացիր էս չարության զնդանից,

Շեն ու շենսիրտ , անցի՛ր, գնա ցավ ու հոգսի էս տանից.

Կյանք ես առել երկընթիցը, դա շրդթա է դառել քեզ,

Ետ տուր իրեն տրված կյանքը, թըղիր ազատ ամենից:

Եվ իզուր են մարդիկ փորձում իրենց մխիթարել փրկչի գալստյան հույսով.

Ասում են՝ թե հազար տարին մի անգամ

Մի փրկիչ է աշխարհ գալիս – մի անգամ.

Մին, երբ եկավ, ծնված չէինք մենք մորից,

Մին էլ, երբ գա, մեռած կըլնենք ցավերից (285):

Թումանյանն, իհարկե, ռուսերեն թարգմանությունների միջոցով քաջածանոթ էր միջնադարի մյուս պարսիկ բանաստեղծներին, թեև նրանցից թարգմանություններ չի կատարել: Այդ մասին են վկայում, օրինակ, Ֆիրդուսուն դիմելը «Թմկաբերդի առումը» պոեմում, կամ Խայամին՝ հայտնի քառյակում.

Խայամն ասավ իր սիրուհուն.- Ուղղը ըզգույշ դիր հողին,

Ո՛վ իմանա՝ որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի...

Հե՛յ, ջա՛ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի

էն սիրունի բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի (Թումանյան 2018:46):

Պարզված է (540-541), որ այս քառյակի հղացումը բանաստեղծին հուշել է Խայամի հետևյալ քառյակը.

Երբ Նովուզին ամպը ցողով լալաների դեմքը դադի

Ելի՛ր մենք էլ գինու գավով դաշտերն ելնենք՝ խաղ ու տաղի,

Այս մարգերը, որտեղ այսօր մենք ենք շրջում երազելով

Գալ գարունքին, ո՛վ իմանա, գուցե բուսնեն հենց մեր հողին:

Ինչպես իր ժամանակին, այնպես էլ հետագայում՝ խորհրդային տարիներին, Թումանյանին երբեմն քննադատել են, թե նա, մտնելով հավերժական հարցերի այս հայեցողական ոլորտը, հեռանում է կյանքի հրատապ խնդիրներից: Իրականությունն այն է, սակայն, որ բանաստեղծը այդ խնդիրներին մոտենում է այլ կերպ՝ դրանք մեկնաբանելով բարոյական բարձրագույն արժեքների դիտակետից: Եթե նա այդքան սրտի մոտ է ընդունում հայ գյուղացու անվերջանալի զրկանքներն ու առօրյա հոգսերը, ինչպես, ասենք, «Գութանի երգում»

կամ «Հին օրհնության» մեջ, եթե այդքան ցավագին է վերապրում մայր ժողովրդի դարավոր վիշտը, ինչպես «Հայոց վիշտը» կամ «Նախերգանք» բանաստեղծություններում, եթե ոչ պակաս դառնությամբ է արձանագրում, որ «մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կմնա» («Հոգեհանգիստ»), որ «դեռ հեռու է մինչև Մարդը իր ճամփան» («Բերանն արնոտ մարդակերը էն անբան...»),- ապա դրանք որքան սոցիալական կամ քաղաքական, նույնքան և ավելի բարոյափիլիսոփայական խնդիրներ են նրա գեղագիտության ներդաշնակ համակարգում: Այդ համակարգի տրամաբանությամբ է հայ բանաստեղծը իր հայացքը ուղղում դեպի Արևելք:

Թումանյանը և Արևելքը թեման ավելի լայն ու բազմակողմանի քննություն է ենթադրում բանաստեղծի ստեղծագործության ամբողջական համատեքստում: Հոդվածում փորձ արվեց անդրադառնալ ծավալուն հարցադրման միայն մի քանի էական կողմերի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թամրազյան Հ., Ընտիր երկեր: Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Ե., 1986:
2. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1955, 1958, 1990:
3. Թումանյան Ն., Հուշեր և զրույցներ, Ե., 1987:
4. Թումանյան Ն., Ինչպես էր մշակում Հ. Թումանյանը իր երկերը, Գրական սերունդ, Ե., 1934:
5. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Ե., 1978:
6. Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Ե., 1966:
7. Մկրյան Մ., Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Ե., 1981:
8. Պապոյան Ա., Հավերժի տենչը (Հովհաննես Թումանյանի պաթոսի ուրվագծերից մեկը) «Մշակ», 1991, N40, փետրվարի 20:
9. Ջրբաշյան Էդ., Չորս գագաթ, Ե., 1982:
10. Ջրբաշյան Էդ., Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ, Ե., 1988:
11. Սարգսյան Խ., Թումանյանի քառյակները, պատմաբանսիրական հանդես, 1959, N4, էջ 69-85:
12. Վարդազարյան Փ., Վշտի և թախծի երգիչ Հովհաննես Թումանյան, Թ., 1905:
13. Конрат Н. Восток и Запад, М., 1972.

REFERENCES

1. T'amrazyan H., Y'ntir erker: Banasteghc'owt'yan hazaramya xorhowrdu', E., 1986:
2. T'owmanyanyan H., Erkeri liakatar jhoghovac'ow, E., 1955, 1958, 1990:
3. T'owmanyanyan N., Howsher & zrowycner, E., 1987:
4. T'owmanyanyan N., Inchpes e'r mshakowm H. T'owmanyany' ir erkery', Grakan serownd, E., 1934:
5. Ishxanyan R', Ar&elahay banasteghc'owt'yan lezvi patmowt'yown, E., 1978:
6. Haxverdyan L., T'owmanyanyani ashxarhy', E., 1966:
7. Mkryan M., Hovhannes T'owmanyanyani steghc'agorc'owt'yowny', E., 1981:
8. Papoyan Al., Haverjhi tenchy' (Hovhannes T'owmanyanyani pat'osi owrvagc'eric meky') «Mshak», 1991, N40, p'etrvari 20:
9. Jrbashyan E'd., Chors gogat', E., 1982:
10. Jrbashyan E'd., T'owmanyanyan: Steghc'agorc'owt'yan problemner, E., 1988:
11. Sargsyan X., T'owmanyanyani qar'yaknery', patmabansirakan handes, 1959, N4, e'j 69-85:
12. Vardazaryan P', Vshti & t'axc'i ergich Hovhannes T'owmanyanyan, T', 1905:
13. Konrat N. Vostok i Zapad, M., 1972.

ЛИЛИТ ГЕВОРКЯН - ТЕМА ВОСТОКА В ТВОРЧЕСКОМ МИРЕ ТУМАНЯНА

Ключевые слова: *восток, поэт, поэзия, культура, переводы, статья, творческая жизнь, сказка, четверостишие*

В рамках статьи предметом изучения стали восточные мотивы и темы, используемые в произведениях Туманяна. Статья посвящена восточной культуре и творческим связям Туманяна, которые в основном проявляются в переводах. Данная тема также развита в сказках и особенно в четверостишиях. В статье предпринята попытка охватить лишь некоторые существенные стороны восточных мотивов творческого мира Туманяна.

LILIT GEVORGYAN - THE THEME OF THE EAST IN TUMANYAN'S CREATIVE WORLD

Keywords: *east, poet, poetry, culture, translations, article, creative life, fairytale, quatrain*

The eastern motives and themes used in Tumanyan's works have become the subject of study within the current article. The article dwells on the Eastern culture and Tumanyan's creative relations which are mainly manifested in translations. This topic is also developed in fairy tales and especially in quatrains. In the article an effort has been made to cover only some essential aspects of the Eastern motives of Tumanyan's creative world.

Ներկայացվել է՝ 01.10.2019
Գրախոսվել է՝ 17.09.2019

**ТРАНСПОЗИЦИЯ СИНТАКСИЧЕСКИХ КОНСТРУКЦИЙ КАК СРЕДСТВО
ОРГАНИЗАЦИИ ЭФФЕКТА “ОБМАНУТОГО ОЖИДАНИЯ” В ТЕКСТЕ
ДЕТЕКТИВНОГО РАССКАЗА**

РУЗАННА ГЕВОРКЯН

***Ключевые слова:** детективный текст, феномен “обманутого ожидания”, усиление экспрессивности, употребление синтаксических стилистических приемов, транспозиция синтаксических конструкций, отрицание, создание напряжения, экспрессивный потенциал транспозиций*

Детективный текст многими исследователями (Банникова 1995; Вулис 1986; Вольский 2006; Анциферова 1994 и др.) рассматривается как текст с низкой мерой предсказуемости, имеющий высокий коэффициент реализации феномена “обманутого ожидания”.

Эффект “обманутого ожидания” рассматривается как одна из основных художественных особенностей детективного рассказа, так как в большинстве случаев он основан на “повторении ожидаемого, резко прерываемого неожиданным” (Банникова 1995:17). Разрушение гипотез или ожиданий, созданных предыдущим контекстом, а также объективно существующими понятиями, мнениями, суждениями, являющимися компонентами тезауруса читателя, заставляет читателя по-новому взглянуть на известные ему факты, ведет к возникновению и усилению экспрессивности, напряжения и оставляет сильное впечатление на реципиента.

Հականիշները բնութագրվում են իրենց լեզվամիավորների իմաստային կառուցվածքի միակերպությամբ՝ հարացուցայնորեն հակադրվելով ըստ իրենց նշանակություններում առկա հակադիր իմակների տարբերակիչ մեկ հատկանիշի, որն էլ դրսևորվում է նրանց բացատրության մեջ, օր.՝ **գոչել** /բարձր ձայնով մի բան ասել//**-22նջալ**/ ցածր ձայնով մի բան ասել/ ևն: Հականշային հակադրության նվազագույն միավորը բառի բառաիմաստային տարբերակն է. հետևաբար միևնույն բազմիմաստ բառը կարող է մտնել հականշային տարբեր շարքերի մեջ, օր.՝ **խոստովանել-թաքցնել, խոստովանել-ժխտել**:

Հականշությունը սերտորեն կապված է բառաիմաստային այլ կարգերի հետ, գլխավորապես՝ հոմանշության: Միևնույն բառը կարող է միաժամանակ մտնել և՛ հականշային, և՛ հոմանշային հարաբերությունների մեջ (Лингвистический энциклопедический словарь 1990: 35-36), օր.՝ **թուլացնել-ուժեղացնել**//**ուժգնացնել, զորեղացնել, սաստկացնել, ազդեցիկ, կորովի դարձնել** ևն:

Հականիշները, ըստ բաղադրիչային կազմիչների, լինում են բառային /**զուգավորվել-կենտանալ**/, բառադարձվածային/**անկողին ընկնել-առողջանալ**/, դարձվածային/**դիմակ դնել-դիմակը հանել**/, բառակապակցական /**կույր աչք ունենալ-կույր միտք ունենալ**/, հաղորդակցական՝ առած-ասացվածքների, ասույթների կազմում /**Մե՛կ խոսիր, տա՛սը լսիր, Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք**/:

ԽԳԻԵ են ներառվում նաև դարձվածային հականշագույզեր, որոնք իրենց ընդհանուր իմաստով /իմաստային/³ կամ դարձվածքը բաղադրող բաղադրիչներով /բաղադրիչային/ (տե՛ս Դոխոյան 2017:115-128) արտահայտում են հականշային հարաբերություններ: Իմաստային հականիշների օրինակ են **վիզ առնել** /համաձայնել, խոստովանել՝ *ասացական*, այսուհետ՝ **Ա/-ետ կանգնել** /հրաժարվել՝ *վարքարտահայտման*, այսուհետ՝ **Վ/**, **թևերը թուլանալ** /հուսահատվել, վիատվել՝ *զգացական*, այսուհետ՝ **Ձ/-հույսով լինել** /հուսալ՝ **Ձ/**, բաղադրիչային հականիշների օրինակ են **արցունքը զսպել** /լացը հազիվ պահել՝ **Ձ/-արցունք թափել** / աղիողորմ լաց լինել՝ **Ձ/**, **դիրք գրավել** /իր արժանի տեղը զբաղեցնել՝ **Վ/-դիրքը զիջել** /տեղի տալ, նահանջել՝ **Վ/** ևն:

Հականիշ բառերով ոչ միայն հականշային դարձվածային զույգեր են կազմվում, այլև այնպիսի առանձին դարձվածքներ, որոնք հականշություն են արտահայտում նույն դարձվածքի բաղադրիչների հակադրմամբ. դրանք ներհակիմաստ դարձվածքներն են⁴, օր.՝ **տակից-գլխից** խոսել (դատարկաբանել՝ **Ա**), **ծուռ** նստել, **շիտակ** խոսել (անկեղծանալ՝ **Ա**), **ծանր ու թեթև** անել (կշռադատել՝ **Մ**), **կարմիրը դուրս** անել, **սևը՝ ներս** (վիշտը թաքցնել՝ **Ձ**), մեծի հետ **մեծ** լինել, փոքրի հետ՝ **փոքր** (յուրաքանչյուրի հետ վարվել ըստ արժանվույն՝ **Վ**):

Ըստ գործածության՝ հականիշները լինում են **լեզվական, բացարձակ /հարկադրել-համոզել/**, պատկանում են նույն խոսքի մասին, արձանագրված են բառարաններում և **խոսքային, հարաբերական** /Եկեք միասին չհարգենք նրա՛նց, Ովքեր սերտում են և ոչ թե դատում, **Ճառու՛մ են**, բնավ **չե՛ն կշռադատում...ՊՍ/**, որոնք կարող են պատկանել կամ չպատկանել նույն խոսքի մասին /Նրա կյանքի մեջ մի

³Դարձվածային զույգը ձևավորող **բաղադրիչները** կարող են նաև հականիշներ չլինել, **բայց հակադրվել դարձվածային ընդհանուր իմաստով**՝ արտահայտելով ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման իմաստներ՝ ՌԴ:

⁴Ա. Մարգարյանը դրանք անվանում է ներհականշային դարձվածքներ. տե՛ս Մարգարյան 1990:341, մենք՝ ներհակիմաստ՝ «ԽԳԻԵ-ի ԲԻԽ-երի բայերի ներհականշություն» տերմինակապակցությունից տարբերելու համար՝ ՌԴ: Այդ մասին տե՛ս նաև Миллер 1990:140, ուր խոսվում է **էնանտիոսեմիայի**՝ ներհականշության մասին:

ամենօրյա **գեղեցկություն** կա, Որ ինձ նրա /Կասիոյի/ մոտ **տգեղացնում է՝ Շ/**, արձանագրված չեն բառարաններում, ձևավորվում են խոսքաշարի պահանջով և բազմիմաստության շնորհիվ իրենց երկրորդային և փոխաբերական իմաստներով կարող են հականշային զույգ կազմել կամ էլ մտնել հականշային տարբեր զույգերի մեջ (էլոյան 1989:154):

Բայական համակարգում հականշությունը դրսևորվում է գործողությունների, դրանց կատարման հետևանքով առաջացած վիճակների, եղելությունների տարատեսակ հակադրություններով, օր.՝ **իրազեկել-տարազեկել, հարձակվել-նահանջել** ևն:

Բայական հականիշները կարելի է դասակարգել ըստ իմաստային հետևյալ **հատկանիշների՝ գործողության կատարման չափ՝ կիսաբաթոնել-ավարտել, ծավալ՝ կարճացնել-երկարացնել, արտաքին ձևական՝ մաքրվել-կեղտոտվել, ներքին որակական՝ ինքնաժխտել-ինքնահաստատվել, հույզ, զգացում, ապրում մատնանշող՝ արիանալ-վեհերել, մարդու ֆիզիկական վիճակ մատնանշող՝ առողջանալ-հիվանդանալ, մարդկային բնավորություն արտահայտող՝ աշխատել-ծուլանալ, մարդկային վարք արտահայտող՝ շփվել-մեկուսանալ** ևն:

Հականշային հարաբերությունների ընդլայնման և ծավալման գործում մեծ է համաբանության դերը. հականիշ որևէ զույգի զուգորդությամբ կազմվում են նորերը. դրան նպաստում է հոգեբանական գործոնը (Առաքելյան և այլք 1979:216-217):

ԽԳԻԵ-ում բայերը, հակադրվելով միմյանց, հարբերակցվում են՝ ի հայտ բերելով գործողությունների **սեռային/ասացական, մտածական, զգացական, վարքարտահայտման/** որոշակի ընդհանրություններ և **տեսակային /**վերոհիշյալ չորս հարացույցների բայերի ենթահարացուցային, խմբային, ենթախմբային ևն/ հականշային տարբերություններ:

Հականշությանը հատուկ է գնահատողական իմաստաբանությունը, հետևաբար ԽԳԻԵ-ում հականշային խմբերի ձևավորման հիմքում դնում ենք գործողությունների գնահատման հետևյալ չափանիշները՝ **ասացականության ԲԻԽ-ում հաղորդման հաստատում/ժխտում՝ հաստատվել-հերքել, իսկություն/կեղծություն՝ ճշմարտախոսել-ստել, արդյունավետություն/անարդյունավետություն՝ քչախոսել-շատախոսել, բովանդակայնություն/անբովանդակայնություն՝ իմաստաբանել-դատարկաբանել, մտքի ճկունության առկայություն/բացակայություն՝ տրախոսել-տրափակախոսել, ձայնի ցածրություն/բարձրություն՝ գոռալ-փսփսալ, ասելիքի արագություն/դանդաղություն՝ արագախոսել-դանդաղախոսել, գովեստ/պարսավանք՝ դրվատել-պարսավել,**

խնդրանք/հրաման՝ խնդրել-հրամայել, քարոզ/հակաքարոզ՝ քարոզել-հակաքարոզել ևն:

Մտածական ԲԻԽ-ում հակադրվում են մտածական գործողության հետևյալ հատկանիշները՝ **տրամաբանականություն/անտրամաբանականություն՝ տրամաբանել - հակատրամաբանել, ընդհանրություն/կոնկրետություն՝ ընդհանրացնել - կոնկրետացնել, համադրում/հակադրում՝ համադրել-հակադրել, միավորում /տրոհում՝ խմբավորել-առանձնացնել, ուշադրություն/անուշադրություն՝ ցրվել-կենտրոնանալ, որոշակիություն/անորոշություն՝ կողմնորոշվել-մոլորվել, լարվածություն /հավասարակշռություն՝ լարվել - հավասարակշռվել, համոզմունք /թերահավատություն՝ համոզվել - թերահավատալ, գնահատման չափը՝ գերազնահատել - թերազնահատել** ևն:

Զգացական ԲԻԽ-ում զգացմունքների, հուզական զգացողությունների հոգեբանական ներհակությունը արտահայտվում է տարատեսակ հույզերի, ապրումների, զգացմունքների /զգացումների լեզվականացմամբ/խոսքայնացմամբ:

Զգայական ընկալման տեսանկյունից հակադրվում են **զգայություն/անզգայություն՝ զգայել - անզգայանալ, տեսանելիություն /անտեսանելիություն՝ երևալ - անհեղանալ, ջերմազդեցության հակադրություն՝ տաքանալ-սառչել, տարատեսակ զգացմունքների տեսանկյունից՝ հարզանք/անարզանք՝ հարզել - անարզել, սեր /ատելություն՝ սիրել-ատել, կոպտություն /քնքշություն՝ կոպտանալ-քնքշանալ, ոգևորություն/հուսահատություն՝ ոգևորվել-հուսահատվել, ուրախություն /տխրություն՝ հրճվել - տխրվել, երջանկություն /դժբախտություն՝ երջանկանալ - դժբախտանալ, խորթություն /հարազատություն՝ խորթանալ - հարազատանալ, հանցանք /ապաշխարանք՝ մեղանչել-զղջալ, հոգնություն/հանգստություն՝ հոգնել-հանգստանալ, զսպվածություն /անզսպություն՝ մոլեգնել-ինքնատիրապետել, հաճույք /տհաճություն՝ ախորժել - խորշել, բարություն /չարություն՝ բարիանալ - չարանալ, քաջություն /վախկոտություն՝ խիզախել - երկնչել, հրապուրանք /վանում՝ հրապուրել - վանել, հարձակում /ընկրկում՝ հարձակվել - ընկրկել** ևն:

Վարքարտահայտման ԲԻԽ-ում հակադրվում են հանրային, անձնային, նպատակային, խոսքային, զարգացման, ազդեցության, բարոյականության, վարվելակերպի, վարքափոխակերպման դրական/բացասական, բարեկիրթ/անբարեկիրթ դրսևորումները՝ արտահայտվելով հետևյալ հատկանիշներով՝ **մեղադրանք/արդարացում՝ մեղադրվել-արդարանալ, հաջողություն /անհաջողություն՝ հաջողել-ձախողվել, պատասխանատվություն/անպատասխանատվություն՝**

ստանձնել-թերանալ, աջակցում/խոչընդոտում՝ ստարտել-խոչընդոտել, առաջադիմություն /հետադիմություն՝ առաջադիմել - հետադիմել, բարեգործություն /չարագործություն՝ բարեգործել - չարագործել, երդում /դրժում՝ ուխտել - դրժել, մեծահոգություն /փոքրոգություն՝ վեհանձնանալ - ճղճիմանալ, առատաձեռնություն /ժլատություն՝ առատաձեռնանալ - ժլատանալ, կուտակում /սպառում՝ կուտակել - մսխել, արգելք /թույլտվություն՝ արգելել - թույլատրել, գոհություն /դժգոհություն՝ գոհանալ-դժգոհել, հնազանդություն /անհնազանդություն՝ ենթարկվել - ապստամբել, շահ /վնաս՝ շահել - կորցնել, խրախույս/ պատիժ՝ խրախուսել - պատժել, հաղթանակ /պարտություն՝ հաղթել- պարտվել, կռիվ /ընդհարում՝ գժտվել - հաշտվել ևն:

Հականիշները ձևավորվում են ինչպես միևնույն ԲԻԽ-ի ենթահարացույցի, խմբի, ենթախմբի, շարքի, ենթաշարքի շրջանակներում՝ դրսևորելով ներհականչային հարաբերություններ, այնպես էլ տարբեր ԲԻԽ-երում՝ դրսևորելով արտահականչային հարաբերություններ:

Ներհականչային կապերը առկա են միևնույն բառափմաստային խմբում, օր., ասացական ԲԻԽ-ում՝ մենախոսել-երկխոսել, օրհնել-անիծել, ավետել-գուժել, բարեխոսել-չարախոսել, գովազդել-հակագովազդել ևն: Մտածական ԲԻԽ-ում՝ բովանդակել-բովանդակագրել, միավորել-տրոհել, անտեսել-կարևորել, պարզեցնել-բարդացնել, հիշել-մոռանալ ևն: Զգացական ԲԻԽ-ում՝ զգալ-ընդարմանալ, շռտագունել-գունատվել, ծիծաղել -արտասվել, բորբոքվել-խաղաղվել, հանդուրժել-պոռթկալ ևն: Վարքարտահայտման ԲԻԽ-ում՝ օգնել-խանգարել, լրջանալ-ցինիկանալ, վատնել-տնտեսել, մեծարել-ստորացնել, գերակատարել-թերակատարել ևն:

Արտահականչային կապերը առկա են ԽԳԻԵ-ի տարբեր ԲԻԽ-երի միջև, օր.՝ խոսել՝ Ա-լռել՝ Մ, մխիթարել՝ Ա-վշտացնել՝ Զ, տիտղոսատրել՝ Ա-տիտղոսագրել՝ Վ, հրավիրել՝ Ա- վրարել՝ Վ, արարել՝ Մ-ոչնչացնել՝ Վ ևն:

Հականիշների բազմիմաստության շնորհիվ գործում են նաև համահականչային կապեր, երբ հականչային զույգերը վերաբերում են մեկից ավելի ԲԻԽ-երի, օր.՝ հաստատել-հերքել, մերժել-ընդունել /Ա և Մ/, լացացնել-ծիծաղեցնել, հուզել-հանգստացնել, հուսադրել-հուսալքել /Ա և Զ/, քննադատել-դրվատել, ամբաստանել-պաշտպանել /Ա և Վ/, առաջադիմել-հետադիմել, քողարկել-բացահայտել /Մ և Վ/, կենտրոնանալ-ցրվել, գերազնահատել-թերազնահատել, բթանալ-զգոնանալ /Մ և Զ/, աղմկել-խաղաղվել, նմանվել-տարբերվել /Զ և Վ/, երդվել-դրժել, գոհանալ-դժգոհել, կոպտել-սիրաշահել /Ա, Զ, Վ/ ակտիվանալ-պասիվանալ, աշխատել-ծուլանալ /Մ, Զ, Վ/ ևն:

Հականիշների փոխհարաբերության հատվող ցանցը ԽԳԻԵ-ում վերոհիշյալ ԲԻԵ-երի համակարգայնության վկայությունն է:

Այսպիսով, հասկացությունների հակադրման/համադրման միջոցով է ձևավորվում մարդու հաղորդակցման, մտածական, զգացական, վարքարտահայտման, հոգեմշակութային արժեհամակարգը, հետևաբար, հականշային բառապաշարի իմացությունն ու կիրառումը նպաստում է աշխարհի լեզվապատկերի ճիշտ ընկալմանն ու նպատակային կիրառմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Վ. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:
2. Դոխոյան Ռ., Արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի բայերի բաղադրիչային, իմաստային և գործաբանական դրսևորումները դարձվածքներում, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2017:
3. Էլոյան, Ս. Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989:
4. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990:
5. Շալունց Ռ., Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Ե., 1979:
6. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:
7. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999:
8. Лингвистический энциклопедический словарь, М., 1990:
9. Миллер Е., Природа лексической и фразеологической антонимии, Саратов, 1990:

REFERENCES

1. Ar'aqelyan V. & aylq, Jhamanakacic hayoc lezow, h. 1, E., 1979:
2. Doxoyan R', Ardi hayereni xosqayin gorc'owneowt'yan imastayin ent'adashti bayeri baghadrichayin, imastayin & gorc'abanakan drs&orowmneri' dard'vac'qnerowm, «Jahowkyanakan y'nt'ercowmner» mijazgayin gitajhoghovi zekowcowmneri jhoghovac'ow, E., 2017:
3. E'loyan, S. Jhamanakacic hayereni bar'ayin otwabanowt'yown, E., 1989:
4. Margaryan A., Jhamanakacic hayoc lezow, E., 1990:
5. Shalownc R', Hakanish bar'ery' jhamanakacic hayerenowm, E., 1979:

6. Petrosyan H., Hayerenagitakan bar'aran, E., 1987:
7. Sowqiasyan A., Jhamanakakic hayoc lezow, E., 1999:
8. Lingvisticheskij jenciklopedicheskij slovar', M., 1990:
9. Miller E., Priroda leksicheskoy i frazeologicheskoy antonimii, Saratov, 1990:

РУЗАННА ДОХОЯН - ПРОЯВЛЕНИЯ АНТОНИМИИ В СЕМАНТИЧЕСКОМ ПОДПОЛЕ РЕЧЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Ключевые слова: семантическое подполе речевой деятельности; антонимия; антономические ряды лексико-семантических групп глаголов говорения, мышления, чувства, поведения; энантиосемические, внеантонимические, единоантонимические отношения/связи; сетка пересекающихся взаимоотношений антонимов

В статье антонимия как формально-семантическая группа рассматривается в контексте исследования семантического подполя речевой деятельности. Во-первых, обобщается имеющаяся информация об антонимии, описываются антонимические проявления в глагольной системе, выявляется перекрещивание энантиосемических, внеантонимических и единоантонимических связей в кругу ЛСГ глаголов говорения, мышления, чувства, поведения как указателя системности.

RUZANNA DOKHOYAN - MANIFESTATIONS OF ANTONYMY IN THE SEMANTIC SUBFIELD OF SPEECH ACTIVITY IN MODERN ARMENIAN

Keywords: semantic subfield of speech activity; antonymy; chain of antonyms of the lexico-semantic group of the verbs of "saying", "thinking", "feeling", "behavior"; inside-antonymy relations, outside-antonymy relations, co-antonymy relations; net crossing the interrelations of antonyms

In the article antonymy as a formal semantic group is studied in the framework of the semantic subfield of speech activity. First, information on antonymy is summarized, manifestations of antonymy in the verbal system are described, crossing the relations inside antonymy, outside antonymy and coantonymy of semantic subfield of the verbs of speech activity are discovered as a system index.

Ներկայացվել է՝ 27.09.2019
Գրախոսվել է՝ 25.09.2019

ԱԾԱԿԱՆԱԲԱՐ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

ՍՅՈՒՉԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ բառակազմություն, խոսքիմասային փոխանցում, գոյականների ածականացում, լեզվական գործոններ, արտալեզվական գործոններ, լրատվամիջոցներ, գովազդի լեզու, զուգորդելիություն

Լեզուներում խոսքիմասային տեղաշարժերի երևույթը նոր չէ և բառային կազմի համալրման կարևորագույն միջոցներից մեկն է, որը ծառայում է բառիմաստային ու ոճարտահայտչական հնարավորությունների ընդլայնմանը:

Խոսքիմասային փոխանցումների ոլորտին վերաբերող դրսևորումների մեջ ժամանակակից ֆրանսերենում առանձնահատուկ տեղ ունի գոյականների ածականաբար գործածությունը, որը գնալով ընդհարձակում է կիրառության շրջանակները և, այս առումով, ավելի ու ավելի է գրավում լեզվաբանների ուշադրությունը:

Որոշի պաշտոնով գործածվող ածականից բացի ամենասովորականը *de* նախդրով նախորդված գոյականի կիրառությունն է որպես *որոշիչ* կամ *մակդիր*. *sac de papier, objet de luxe, robe de bal, des yeux de passion, couleur du ciel, un homme de cœur, une faim de loup, une femme de goût, un poète de génie*, և այլն: Սակայն *de* նախդրի ներկայությունը պարտադիր չէ, որպեսզի գոյականը որոշի պաշտոն ստանձնի, և հետևապես, հանդես գա որպես իրական ածական: Այս դեպքում փոխանցումը որևէ ցուցիչով նշույթավորված չէ, այսինքն նշույթավորումը հավասար է զրոյի. *un ruban orange, une robe citron, un remède miracle, un élève modèle*, և այլն:

Լ. Տենյերը հետևյալ կերպ է բնութագրում երևույթը.

«Խոսքիմասային փոխանցման հետևանքը, եթե ոչ նպատակը, խոսողի մոտ առաջացող դժվարությունը հաղթահարելն է, որը երևան է գալիս, երբ վերջինս արտահայտվելիս ստիպված է լինում հանպատրաստից օգտագործել մի բառ, որը պատկանում է քերականական մեկ այլ կարգի և ուղղակի, անմիջական կապի մեջ չէ նախադասության տվյալ հատվածի բառերից մեկի հետ: Այսպիսով, նախադասության մեջ կատարած դերի և պիտանիության առումով խոսքիմասային փոխանցումն այն երևույթն է, որը ձերբազատվում է

կարգային տարբերություններից և թույլ է տալիս կազմել ցանկացած նախադասություն՝ ցանկացած բառամիավոր փոխակերպելով մեկ այլ միավորի» (Tesnière 1976:365):

Նույն տեղում, շարունակելով միտքը, Լ. Տենյերը նշում է, որ երբեք չենք տեսնում որևէ լեզվով բնականոն կերպով արտահայտվող անձի, որը հանկարծ դժվարություն ունենա ավարտելու սկսած նախադասությունն ու պապանձվի՝ չկարողանալով գործածել մի բառ լոկ այն պատճառով, որ վերջինս պատկանում է բառաքերականական մի կարգի, որի ներունակ լծորդականությունը համահունչ չէ մինչ այդ արտասանված բառերի հետ:

Չնշոյթավորված փոխանցումը հատկապես առկա է անձանց հատուկ անունների դեպքում այն պարզ պատճառով, որ դրանց մեծ մասով ածականական ձևեր չեն ստեղծվել. *la tour Eiffel, Résidence Yézéguelian, le dossier Dink, l'Académie Goncourt*, և այլն:

Այսպիսով, ելակետային գոյականներն ու դրանց գործառական կիրառությունը ածականաբար կարելի է դիտել իբրև բառաքերականական համանուններ:

Բերենք մի քանի օրինակ. *une critique vache, un sifflement canaille, un livre cochon, un exemplaire type, une ferme modèle, une industrie clé*, և այլն:

Մի շարք հատկանիշներ փաստում են, որ ցուցիչի բացակայության պայմաններում գոյականն իրոք վերածվել է ածականի.

ա) փոխանցելին (ածականացած գոյականը) կարող է լրացվել մակբայով. *une critique très vache*,

բ) փոխանցելին կարող է հոգնակիության նշան ընդունել. *des critiques très vaches*.

գ) փոխանցելին իր հերթին կարող է սովորական ածականի պես մակբայ կազմել. *critiquer vachement*

դ) փոխանցված գոյականը կարող է ունենալ որոշիչ. *il est très vache avec moi*.

Պատմական ժամանակաշրջաններ նշող գոյականները դյուրությամբ վերածվում են ածականների, երբ ժամանակի ոճն են մատնացույց անում. *le style Louis XIV, des ornements Renaissance*.

Որո՞նք են, ի վերջո, քննարկվող երևույթի տարածվածության ու կենսունակության նախադրյալները: Ուսումնասիրված լեզվանյութը ի հայտ է բերում լեզվական և արտալեզվական մի շարք գործոններ, որոնցից հարկ ենք համարում հիշատակել հատկապես հետևյալները. հանրային կյանքի օրեցօր արագացող դիթմը, լրատվամիջոցների՝ մասնավորապես գովազդային լեզվի զարգացումը, առավել սեղմ արտահայտվելու ցանկությունը, բազմալանկ ածականների

գործածությունից խուսափելու հակումը (փաստենք, որ ածականաբար գործածվող գոյականների գերակշիռ մասը միավանկ կամ երկվանկ է), լայն առումով՝ լեզվական նշանի տնտեսման միտումն ու խոսելիս նվազագույն ճիգ գործադրելու պահանջը, բառամիավորի իմաստային ծավալի ընդարձակումը, ընդհուպ՝ նոր իմաստի ձեռքբերումը կամ նրբիմաստային երանգ ստանալը, իմաստային ու շարահյուսական զուգորդելիության հնարավորությունները, վերջապես՝ գոյականի և ածականի խոսքիմասային հարացույցների նմանությունը: Միաժամանակ ակնհայտ է, որ հիշյալ գործոնները փոխհատվում են և փոխլրացնում միմյանց:

Գոյականի ածականացումը խթանող կամ այն արգելակող գործոնների մեջ կարևոր դեր է վերապահված լեզվական կանոնի (նորմի) կողմից տվյալ զուգորդման ընդունումը կամ մերժումը:

Ածական-որոշչի պաշտոնով գործածվող գոյականն ավելի լայնիմաստ է, չեզոք, ինչ էլ նրան օժտում է հարակցելիության ավելի մեծ հնարավորություններով, քան նրա հոմանիշները: Այսպես, *remède miracle, solution miracle, évolution miracle, progrès miracle, effet miracle, onguents miracles*, և այլ կապակցություններում *miracle (հրաշք)* գոյականի գործածությունը միանգամայն ընդունելի է, սակայն զուգահեռաբար գոյություն ունեցող գոյական հոմանիշներն ունեն որոշակի սահմանափակումներ և ընդունելի չեն լեզվական կանոնի տեսանկյունից. *remède miracle*, բայց ոչ՝ *remède mystère, solution miracle*, բայց ոչ՝ *solution prodige*, և այլն:

Արդի ֆրանսերենում հաճախադեպ են *modèle* գոյականի ածականացման դեպքերը. *élève modèle, conduite modèle, usine modèle, père modèle, mari modèle, fidélité modèle, générosité modèle, միաժամանակ, fidélité modèle*, բայց ոչ՝ *fidélité échantillon*, և այլն:

Ուսումնասիրված լեզվանյութի հիման վրա հանգում ենք այն եզրակացության, որ գոյականները հիմնականում համալրում են հարաբերական ածականների դասը (*miracle-miraculeux*), մասնավորապես այն դեպքերում, երբ գոյական հիմքից կազմված ածականը բացակայում է. Օրինակ *clé* գոյականից կազմված ածական ֆրանսերենում գոյություն չունի, ինչն էլ խթանել է գոյականի գործածությունը ածականաբար. *position clé, poste clé, industrie clé, étape clé*: Հմմտ. նաև՝ *prix choc, photo choc, phrases choc*, և այլն:

Il serait trop difficile de résumer ici en quelques mots le contenu de son discours (de Nikol Pachinian) s'appuyant sur *des phrases choc*.

(France-Arménie, octobre 2018, p.12)

Հիշատակենք մերօրյա ֆրանսերենում որոշակի տարածում ստացած օրինակներ.

- pilote-> classe *pilote*, expériences *pilotes*, industrie *pilote*, ferme *pilote*,
և այլն,
- record-> chiffre *record*, production *record*, déficit *record*, temps
record, vitesse *record*, և այլն,
- sport-> tenue *sport*, chaussures *sport*, complet *sport*, և այլն,
- chic-> gens *chic*, robes *chic*, toilette *chic*, dîner *chic*, réception *chic*,
voyage *chic*, և այլն,
- surprise-> attaque *surprise*, visite *surprise*, succès *surprise*, և այլն:
- éclair-> mariage *éclair*, guerre *éclair*, visite *éclair*, nouvelle *éclair*,
fermeture *éclair*, և այլն,
- monstre-> travail *monstre*, succès *monstre*, réclame *monstre*, և այլն,

Le Premier ministre arménien Nikol Pachinian, a effectué une **visite de travail surprise** en France le 13 et 14 septembre.

(France-Arménie, octobre 2018, p.10)

Օրինակները վկայում են, որ դրանք մեծ մասամբ նախդրավոր կազմությունների պարզեցման հետևանք են.

- robe de lainage ->robe *lainage*
- police de secours->police *secours*
- assurance contre le chômage->assurance *chômage*
- gare de terminus->gare *terminus*
- cercles de snobs->cercles *snob*, և այլն

Ընդունելով, որ ածականացած գոյականներն օժտված են ածական խոսքի մասի առանձնահատկություններով, մենք, այդուհանդերձ, դրանք բաժանում ենք երկու մեծ խմբերի՝ ա) գոյականի հետ սեռով և թվով համաձայնվող և բ) գոյականի հետ սեռով և թվով չհամաձայնվող միավորների: Երկրորդ դեպքում գոյականն իգականի հատուկ ձև չունի, ուստի ձևական համաձայնություն կարող է լինել միայն թվով:

Օրինակներ.

ա) une ambiance *ménagère*, des sciènes *bouffonnes*,

բ) matières *miracles*, étudiantes *modèles*, expériences *pilotes*, և այլն:

Ածականաբար գործածվող և սեռով ու թվով չհամաձայնվող գոյականների շարքին են դասվում ֆրանսերենում յուրացված անգլաբանությունները՝ *cravate club (à royures obliques)*, *structure sandwich*, *verres sandwich*, *chiffres record*, *pièces standart*, և այլն:

Չմոռանանք նշել, որ կան նաև ֆրանսերեն ածականացած գոյականներ, որոնք նույնպես սեռով և թվով անփոփոխ են, օրինակ՝ *des*

bottes nickel, des dossiers nickel, cuisines assez nickel, des pendules rococo, des parapluies rococo, fraises nature, և այլն:

Քիչ չեն դեպքերը, երբ գոյական-որոշիչը կարող է ուղեկցվել սաստկական մակբայով. *une robe très dernière mode, un père plus crocodile que jamais, il est très coureur* (ստ. վերադիր), *un appartement aussi modèle que l'autre*, և այլն: Երևույթն այնքան սովորական է դարձել, որ ամեն օր մամուլում կարելի է հանդիպել նորանոր, անսպասելի զուգորդումների.

À l'occasion du premier anniversaire de la disparition de Charles Aznavour, Richard Findykian, Conseiller de la Métropole Aix-Marseille-Provence, propose en association avec **la mission cinéma** de la ville de Marseille...

(Noyan Tapan, 21 septembre 2019, p.29)

Ինչպես նշել էինք վերևում, N+N կառույցի օրինակներն այսօր ամենահաճախադեպն են գովազդներում: Այսպես, *secteur joaillerie-bijouterie-horlogerie, jeux enfants, Miss 7 continents, appartement phénomène, conférence dédicace, vente dédicace, opération Noël*, և այլն:

Շարադրանքն ավելի ամբողջական դարձնելու ու վերոհիշյալ առանձնահատկությունները ցայտուն դարձնելու համար բերենք լրատվամիջոցներից քաղված մի շարք տեքստային օրինակներ.

Le président de la République d'Artsakh s'est rendu vendredi à Los Angeles en prévision du téléthon traditionnel organisé par le Fonds Hayastan, **une source clé** pour les financements des projets d'infrastructure.

(Noyan Tapan, 23 novembre 2018).

L'annonce du ministère des Affaires étrangère précise que le gouvernement est à la recherche de partenaires dans le cadre **du projet pilote** destiné à la réorganisation de la restauration dans l'armée.

(Noyan Tapan, 19 décembre 2018).

Ara Toronian a rappelé pour sa part les conditions dramatiques de l'arrivée en France des réfugiés arméniens, devenus aujourd'hui **des citoyens modèles** et parfaitement intégrés.

(France-Arménie, février 2014)

Խոսքիմասային փոխանցմամբ երևան եկած բառամիավորների չափավոր գործածությունը բնորոշ է գրական ու կանոնակարգված ընդհանուր խոսակցական ոճին, իսկ չափազանցված օգտագործումը՝ ցուցամուլների (սնոբների) խոսքին:

Ֆրանսերենում դյուրությամբ ածականանում են գործող անձ ցույց տվող գոյականները, օրինակ՝ *un pays acheteur, un peuple cultivateur* և այլն: Այս գոյականների լիակատար ածականացման ապացույցը նրանց

համաձայնեցումն է սեռով և թվով. *un courant porteur - une onde porteuse, un homme travailleur - une femme travailleuse*: Ինքնին հասկանալի է, որ հոգնակի թվի կազմությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ տվյալ գոյականը կարող է գործածվել հոգնակի թվով. *des pays acheteurs, des peuples cultivateurs, des temps records*, և այլն:

Թեև գոյականի գործածությունը որպես որոշիչ իր հաստատուն տեղն ունի ֆրանսերենում և գնալով ընդարձակում է կիրառության շրջանակները, լեզվաբանների կողմից այն բուն ածական չի դիտվում, այլ միջանկյալ դիրք է գրավում երկու կարգերի՝ ածականի և գոյականի միջև: Գոյականի փոխանցումը ածականի տվյալ դեպքում վերջնական ու ամբողջական չէ: Եվ սա է պատճառը, որ այն համարվում է գործառական ածական (Marouzeau 1954; Referovskaïa, Vassiliéva 1973:133-134):

Ածականացած (գործառական) գոյականներն ու դրանցով կազմված նախդրավոր կառույցները հաճախ իմաստով տարբերվում են. *un chapeau paille* (ծղոտագույն գլխարկ) և *un chapeau de paille* (ծղոտե գլխարկ):

Ժամանակակից ֆրանսերենում շարունակաբար երևան են գալիս նորանոր գոյականներ, որոնք խոսքիմասային փոխանցմամբ համալրում են ածականների դասը, հարստացնում լեզուն ոճիմաստային բազմաբնույթ երանգներով՝ ստեղծելով բառապաշարի բավականին ստվար մի շերտ, որը բառագետի առջև բաց է անում ուսումնասիրության լայն հորիզոններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Barlézian A. Précis de Lexicologie du français moderne, Erevan, 2011.
2. Marouzeau J. Entre l'adjectif et le substantif, «Le Français moderne», 1954, N3.
3. Référovskaïa E. A., Vassilieva A.K. Essai de grammaire française, Cours théorique, Leningrad, 1973.
4. Tesnière L. Eléments de syntaxe structurale, deuxième édition, Paris, 1976.
5. Лопатникова Н.Н., Мовшович Х.А. Лексикология современного французского языка, Москва, 2003.
6. Соколова Г.Г. Транспозиция прилагательных и существительных, Москва, 1973.

7. Тимескова И.Н., Тархова В.А. Лексикология современного французского языка, Ленинград, 1967.
8. Le journal hebdomadaire «Noyan Tapan».

REFERENCES

1. Barlézizian A. Précis de Lexicologie du français moderne, Erevan, 2011.
2. Marouzeau J. Entre l'adjectif et le substantif, «Le Français moderne», 1954, N3.
3. Référovskaja E. A., Vassilieva A.K. Essai de grammaire française, Cours théorique, Leningrad, 1973.
4. Tesnière L. Eléments de syntaxe structurale, deuxième édition, Paris, 1976.
5. Lopatnikiova N.N., Movshovich H.A. Leksikologija sovremennogo francuzskogo jazyka, Moskva, 2003.
6. Sokolova G.G. Transpozicija prilagatel'nyh i sushhestvitel'nyh, Moskva, 1973.
7. Timeskova I.N., Tarhova V.A. Leksikologija sovremennogo francuzskogo jazyka, Leningrad, 1967.
8. Le journal hebdomadaire «Noyan Tapan».

СЮЗАН ТОРОСЯН-СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ИМЕНИ СУЩЕСТВИТЕЛЬНОГО В АДЪЕКТИВНОЙ ФУНКЦИИ В СОВРЕМЕННОМ ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: словообразование, конверсия, адъективация, лингвистические и экстралингвистические факторы, медиадискурс, язык рекламы, семантическая сочетаемость

Настоящая статья посвящена новейшим проявлениям конверсии в качестве одного из важнейших источников словообразования в современном французском языке. Предметом исследования являются, в частности, субстантивные конструкции N+N с именем существительным в адъективной функции, которые за последние годы получили широкое распространение во французском рекламном и медиадискурсе.

Исследуются факторы как лингвистического, так и экстралингвистического порядка на основе многочисленных примеров, взятых из франкоязычной прессы, высвечиваются семантико-синтаксические особенности данного явления, в частности, вопросы, связанные с семантической сочетаемостью отдельных компонентов изучаемой конструкции.

SYUZAN TOROSYAN - THE SEMANTIC-FUNCTIONAL PECULIARITIES OF THE ADJECTIVIZED NOUNS IN MODERN FRENCH

Keywords: *word-formation, conversion, adjectivization of nouns, linguistic factors, extra-linguistic factors, mass media, publicistic discourse, combinability*

The article touches upon one of the most important sources of word-formation: conversion in Modern French.

A special type of conversion that is the use of nouns as adjectives, is a special type of constructions N+N which are used more and more in these days. The above-mentioned constructions are particularly used in journalistic discourse.

Not only are some linguistic and extra-linguistic factors presented but also some examples are provided taken from the contemporary media.

The main features of the above- mentioned structures are analyzed and categorized based on the studied material. Some problems concerning the nouns used as adjectives are also highlighted.

Ներկայացվել է՝ 01.10.2019

Գրախոսվել է՝ 04.09.2019

Երաշխավորվել է ԵՊԼՀ Ռոմանական
լեզուների ամբիոնի կողմից՝ 06.09.2019

ДОКУМЕНТЫ ШОС ПО ПРОТИВОДЕЙСТВИЮ ЭКСТРЕМИЗМУ КАК ЭЛЕМЕНТ ИНСТИТУЦИОНАЛЬНОГО ДИСКУРСА

ЛИЛИТ АКОПЯН

Ключевые слова: дискурс, экстремизм, документы ШОС, институциональный дискурс, политический дискурс

Коммуникативная парадигма современной философии в качестве одного из важнейших методологических постулатов выдвигает идею о том, что изучение языка – ключ к изучению человека и мира. Эта идея в междисциплинарном аспекте получила название «лингвистического поворота». При этом с 60-х годов XX века базовым понятием, определяющим сущность такого подхода, является дискурс. Фактически в настоящее время целая исследовательская область, которая трактуется как «теория дискурса», является наиболее продуктивным направлением многих общественных наук, а само понятие, благодаря терминологии постмодернизма и семиотики, стало поистине универсальным (Олешков 2011:9).

Целью данной статьи является описание отличительных черт институционального дискурса на примере документов Шанхайской организации сотрудничества (ШОС) по противодействию экстремизму.

Ссылаясь на определение дискурса французского философа и культуролога Мишеля Фуко, авторы книги “Методы анализа текста и дискурса” С. Тичер, М. Мейер, Р. Водак, Е. Веттер пишут: “Итак, наконец-то удалось не сузить очень изменчивое значение понятия “дискурс”, а дополнить его” (Тичер, Мейер, Водак, Веттер 2009:45). И, действительно, термин “дискурс”-многогранный феномен лингвистической науки, который в ряде случаев приравнивается к понятию “текст”, пережил сложный путь в своём становлении и понимании. Исследование дискурса занимает важное место в различных отраслях современной научной парадигмы.

Фуко считает, что каждая научная дисциплина обладает своим дискурсом, выступающим в виде специфической для данной дисциплины «форме знания» – понятийного аппарата с тезаурусными взаимосвязями. И, как следствие, экстралингвистические факторы выдвигаются на первый план и становятся определяющими по отношению к лингвистическим (Савельева 2015:95).

В своем интервью электронному журналу “Современный дискурс-анализ” известный голландский лингвист Тен ван Дейк отметил: “Понятие «дискурс» так же сложно, как и многие другие понятия в науках, например, «язык», «коммуникация», «сознание», «мозг», «общество» или «власть». И многие другие. В зависимости от того, какой аспект нас интересует, дискурс можно определить как «использование языка», «форму коммуникации», «форму социального взаимодействия», «речевой акт», «текст», «разговор» и так далее. Лингвистически говоря, дискурс – это связанная последовательность письменных предложений или устных высказываний, выраженных в определенной коммуникативной ситуации с целью передачи информации или выполнения других социальных действий (цитата по: Тяжелов, Кожемякин 2013:4-5).

Дискурс – это социальный и познавательный процесс, который отражает, создает, формирует, воссоздает и вновь обретает смысл в мире жизни (Strauss, Feiz 2014:1).

В.И Карасик выделяет два основных вида дискурса: персональный и институциональный, определяя институциональный дискурс как общение в заданных рамках статусно-ролевых отношений. По его мнению, в современном коммуникативном пространстве выделяются следующие виды институционального дискурса: политический, дипломатический, административный, юридический, военный, педагогический, религиозный, мистический, медицинский, деловой, рекламный, спортивный, научный, сценический и массово-информационный (Карасик 2000:9).

По словам авторов книги “Discourse Analysis. Putting or worlds into words” С. Штраусс и П. Фейц, институциональным является любой дискурс, который создан членами определенного слоя населения и для членов того же слоя, организуется с помощью соответствующего типа общественного строя. Члены этих слоев действуют в соответствии с определенными конкретными целями, все из которых выходят за дискурсивные рамки повседневной жизни (Strauss, Feiz 2014:76).

Институциональный дискурс выделяется на основании двух системообразующих признаков: цели и участники общения. Цель политического дискурса — завоевание и удержание власти, педагогического дискурса — социализация нового члена общества, медицинского дискурса — оказание квалифицированной помощи больному и т.д. Основными участниками институционального дискурса являются представители института (агенты) и люди, обращающиеся к ним (клиенты) (Карасик 2000:9).

Политический дискурс представляет собой институциональное общение, которое, в отличие от лично ориентированного общения, использует определенную систему профессионально ориентированных знаков, т.е. имеет собственный подъязык (паремиология, фразеология, лексика) (Суханов 2017:147).

Согласно позиции Ю. Суханова, функциональные особенности политического дискурса могут быть рассмотрены с двух сторон: с позиции системообразующей интенции политического дискурса и с позиции исполнения общеязыковых функций. К самым актуальным общеязыковым функциям политического дискурса можно отнести: побудительную/ регулятивную функцию, в том числе такие ее проявления, как воодушевление и запрет. Функциональная специфика политического дискурса по отношению к иным видам дискурса проявляется в его основной функции – использовании его в качестве инструмента политической власти, которая реализуется в борьбе за власть, перераспределении, стабилизации, осуществлении, сохранении власти или овладении ею. Это позволяет выделить главные функции политического дискурса, считающиеся аспектами проявления исследуемой функции: функции дифференциации и интеграции групповых агентов политики, функции гармонизации и атональности, ориентации и интерпретации, функции побуждения и контроля, информационная и акциональная функции (Суханов 2017:148).

Согласно Т. А. Волковой, главными параметрами институционального дискурса могут считаться: 1. речевые тактики и стратегии, которые обусловлены интенциональной составляющей; 2. набор типичных для этой сферы коммуникативных ситуаций — речевых событий; 3. представление о типичных моделях речевого поведения при выполнении конкретных социальных ролей; 4. ограниченную тематику общения; 5. специфический набор интенций (Волкова 2011: 40-41).

Как видим, в исследованиях, выполняемых в разных лингвистических направлениях, называются и анализируются разные характеристики, позволяющие говорить о политическом дискурсе как институциональном. При этом во многих работах в качестве политического рассматривается преимущественно дискурс средств массовой коммуникации. Мы же политическим дискурсом называем тексты, направленные на массового читателя, гражданина, имеющие определенную терминологию, целью которых является борьба за власть, сохранение международного спокойствия и безопасности. К текстам политического дискурса мы относим дипломатические документы (конвенции, концепции, соглашения

и т.д.), законы, уставы, указания, приказы, протоколы и т.д., к которым относятся документы ШОС, направленные на противодействие экстремизму.

С целью предупреждения и предотвращения данного феномена государства-участники ШОС подписали определенные документы, которые, являясь примером официально-делового стиля, имеют, на наш взгляд, и свойства институционального дискурса. Прежде всего, цель создания этих документов – обеспечить правовую базу для борьбы с одной из международных угроз. Поэтому все документы дают характеристику данному явлению и обосновывают необходимость борьбы с ним. Таким образом, в текстах документов создаются два образа: образ агента (представителя международного института, главная функция которого – организация борьбы с экстремизмом) и образ клиента (тех, кто, с одной стороны, является сторонником антиэкстремистских действий, с другой стороны – является экстремистом). В лице агента в документах ШОС по противодействию экстремизму выступают государства-участники ШОС, которые являются отдельным институтом, образов клиента два – все слои общества и экстремисты, для борьбы с которыми агент и создает данную платформу.

Агенты данных документов, будучи ограниченными лингво-коммуникативными рамками официально-делового стиля, имеют возможность использовать ограниченный языковой материал для описания сущности понятия «экстремизм».

Для уточнения понятийных признаков феномена «экстремизм» в научной литературе обратимся к Современному толковому словарю русского языка под редакцией Т. Ф. Ефремовой, согласно которому *экстремизм* – «1. Приверженность к крайним взглядам и мерам (обычно в политике). 2. Использование крайних мер террористических актов, похищений, убийств и т.п. при достижении своих целей. 3. Унижение национального достоинства; террор» (Ефремова 2000).

Обратимся к документам ШОС по противодействию экстремизму и сравним понятийные признаки «экстремизма» в словарной дефиниции и документах ШОС.

Первым специальным международным актом, на основе которого государства взяли на себя обязательства бороться с экстремизмом, является Шанхайская конвенция о борьбе с терроризмом, сепаратизмом и экстремизмом, принятая в рамках ШОС 15 июня 2001 г. Как замечает автор диссертации «Международно-правовые средства борьбы с экстремизмом» К. Мельшина, из названия Конвенции видно, что борьба с

экстремизмом осуществляется наряду с борьбой с терроризмом и сепаратизмом. Данная Конвенция отличается не только названием, в котором обозначены три преступных деяния, но и тем, что она содержит ориентиры для определения того, что понимается под этими деяниями (Мельшина 2018:107).

Согласно определению, данному в Конвенции, «экстремизм» – какое-либо деяние, направленное на насильственный захват власти или насильственное удержание власти, а также на насильственное изменение конституционного строя государства, а равно насильственное посягательство на общественную безопасность, в том числе организация в вышеуказанных целях незаконных вооруженных формирований или участие в них. При его характеристике в тексте используются стилистически нейтральные слова и словосочетания: *предупреждение, выявление и пресечение данного деяния; преступление, влекущее выгоду*. Негативное отношение агента к данному явлению актуализируется аксиологическими компонентами семантической структуры лексем *преступление, угроза, насильственный захват и удержание власти, насильственное изменение конституционного строя государства, насильственное посягательство на общественную безопасность, организация в вышеуказанных целях незаконных вооруженных формирований или участие в них*. Согласно толковому словарю С. И. Ожегова, *преступление* – общественно опасное действие, нарушающее закон и подлежащее уголовной ответственности (Ожегов 2018). Согласно толковому словарю Д. Н. Ушакова, *угроза* – 1. обещание причинить кому-чему-нибудь какую-нибудь неприятность, зло; 2. опасность, возможность возникновения чего-нибудь неприятного, тяжкого (Ушаков 1935-1940).

На наш взгляд, концентрация в пределах незначительного по объёму фрагмента текста указанных лексем создаёт определённое эмоциональное напряжение у читателя. Возникновению такого эмоционального состояния, как нам представляется, способствуют названные лексемы с отрицательными оценочными компонентами в своей семантической структуре.

5 июля 2005 г. была принята Концепция сотрудничества государств – членов Шанхайской организации сотрудничества в борьбе с терроризмом, сепаратизмом и экстремизмом, определяющая основные цели и задачи противодействия таким деяниям, как терроризм, экстремизм и сепаратизм: «выработка общих подходов государств-членов ШОС к борьбе с терроризмом, сепаратизмом и экстремизмом;

совершенствование правовых основ сотрудничества, а также развитие и гармонизация законодательств государств-членов ШОС в области борьбы с терроризмом, сепаратизмом и экстремизмом; выявление и устранение причин и условий, способствующих терроризму, сепаратизму и экстремизму, а также ликвидация их последствий на территориях государств-членов ШОС; предупреждение и пресечение терроризма, сепаратизма и экстремизма на территориях государств-членов ШОС; противодействие финансированию в любых формах терроризма, сепаратизма и экстремизма; повышение эффективности взаимодействия компетентных органов государств-членов ШОС по предупреждению, выявлению, пресечению и расследованию терроризма, сепаратизма и экстремизма, выявлению и пресечению деятельности организаций и лиц, причастных к ним; содействие укреплению международного антитеррористического сотрудничества, созданию в мире атмосферы полного неприятия терроризма, сепаратизма и экстремизма».

Примечательно, что в правовом обеспечении противодействию экстремизма в ШОС отмечается, что в Казахстане, Кыргызстане, России и Таджикистане в этих целях приняты законы о противодействии экстремизму (экстремистской деятельности). В Китае и Узбекистане такие законы отсутствуют, но противодействие различным формам экстремистской деятельности может осуществляться на основе положений других актов, в частности, регулирующих деятельность общественных организаций.

9 июня 2017 г. в городе Астана членами ШОС была подписана Конвенция по противодействию экстремизму. Данная Конвенция является первым документом ШОС, направленным непосредственно на противодействие экстремизму. Попробуем на примере данного документа доказать принадлежность документов ШОС по противодействию экстремизму к институциональному дискурсу. Во-первых, основными участниками являются государства-участницы ШОС в роли представителей данного института и весь сектор общества в роли людей, обращенных к ним. Во-вторых, одно только название Концепции уже доказывает ограниченную тематику общения, что и характерно институциональному дискурсу. В-третьих, изучив данный документ, мы замечаем такие понятия, как «экстремистский акт», «финансирование экстремизма», «экстремистские материалы», «экстремистская организация», которые и являются составляющей словаря собственного подъязыка данного дискурса. В-четвертых, в Концепции отмечено: государства-участники глубоко обеспокоены эскалацией проявлений

экстремизма как серьезной питательной среды терроризма, который представляет угрозу миру и безопасности, территориальной целостности государств, развитию дружественных отношений между ними. В данном случае мы имеем дело с интенциональной составляющей институционального дискурса. В-пятых, в данном документе мы имеем дело с таким проявлением функции как запрет и осуждение, т.е. запрет и осуждение распространения практики и идеологии экстремизма в любых его формах и проявлениях, недопустимость публичных призывов и подстрекательства к экстремизму. Таким образом, функцией данного документа является контроль, стабилизация и сохранение власти, что и является характерными чертами институционального дискурса. Целью Конвенции является повышение эффективности сотрудничества государств-участниц ШОС по противодействию экстремизму.

Итак, согласно ведущим дискурсивным характеристикам политической коммуникации, описанным А. П. Чудиновым, многие политические документы формально вообще не имеют автора и обнародуются от имени государства или его структур, политических организаций и движений (конституция страны, устав партии или ее программа). Ответственность за содержание этих документов берут на себя правительство, парламент, политическая партия и другие подобные структуры (Чудинов 2012:54). К ним также относятся документы ШОС по противодействию экстремизму, которые обнародованы от имени государств-участниц данной международной организации. Важная характеристика политического текста, согласно А. П. Чудинову,— институциональный статус автора, то есть его принадлежность к политическим институтам или иным институтам (а также роль в этих и институтах). Текст, подписанный псевдонимом, будет восприниматься совершенно иначе, чем текст, опубликованный за подписью президента страны, директора государственного банка, лидера оппозиционной партии или известного журналиста (Чудинов 2012: 54). Стоит обратить внимание, что документы ШОС подписаны главами государств-участниц данной организации, что придает большей значимости и важности. То есть перед нами пример институционального дискурса, созданного группой участников определённой политической организации – ШОС. Поэтому мы вправе охарактеризовать агента как обобщённо-коллективного. С одной стороны, международное политическое сообщество хорошо знает всех участников ШОС, с другой стороны – степень ответственности распределяется между всеми государствами-участниками.

Еще одна характеристика – адресность политической коммуникации. Документы ШОС являются текстами, ориентированными на массового адресата, что и доказывает их принадлежность к институциональному политическому дискурсу. Как отмечает А. П. Чудинов, политическая коммуникация преимущественно институциональна: это означает, что общение происходит не между конкретными людьми, а между представителем одного социального института (правительства, парламента, общественной организации, муниципалитета и т. п.) и представителем другого социального института или «гражданином», «избирателем» (Чудинов 2012:56). По отношению к анализируемым документам их адресатом являются, с одной стороны, граждане государств-участниц ШОС, с другой стороны, экстремисты, которые представляют угрозу для вышеупомянутых граждан и целостности государств-участниц и всего мирового сообщества.

Итак, мы попытались выявить отличительные черты институционального дискурса на примере документов ШОС по противодействию экстремизму, которые, на наш взгляд, будучи политическими документами, являются элементами институционального дискурса. Мы выделили следующие основные черты: функция – контроль, стабилизация и сохранение власти; основные участники; ограниченная тематика общения; составляющая словаря собственного подъязыка данного дискурса; интенциональная составляющая и т.д. Такие исследователи, как Э. В. Будаев, А. П. Чудинов, В. И. Карасик, также склонны полагать, что институциональный политический дискурс – это тексты, непосредственно созданные политиками и используемые в политической коммуникации.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Волкова Т.А. Дискурсивно-коммуникативная модель перевода в исследовании институционального дискурса // Вестник Челябинского государственного университета. 2011. № 17.
2. Дискурс, культура, ментальность: коллективная монография / Отв. ред. М. Ю. Олешков. - Нижний Тагил: Нижнетагильская государственная социально-педагогическая академия, 2011. - 526 с. (Серия «Язык и дискурс». Выпуск 3).
3. Ефремова Т. Ф. Новый словарь русского языка. Толково-словообразовательный. - М.: Русский язык, 2000
<https://dic.academic.ru/contents.nsf/efremova/>

4. Карасик В.И. О типах дискурса // Языковая личность: институциональный и персональный дискурс. Волгоград: Перемена, 2000. С. 5-20.
5. Конвенция Шанхайской организации сотрудничества по противодействию экстремизму, 2017, <https://bit.ly/2Si3q4i>
6. Концепция сотрудничества государств – членов Шанхайской организации сотрудничества в борьбе с терроризмом, сепаратизмом и экстремизмом, 2005 <http://ecrats.org/upload/iblock/7bd/6.pdf>
7. Кулявина А.П. Соотношение понятий “текст” и “дискурс” как методологическая проблема, Известия Самарского научного центра Российской академии наук, т. 17, №1(5), 2015.
8. Мельшина К.Ю. Международно-правовые средства борьбы с экстремизмом, дисс...канд.юр.наук, Москва, 2018
9. Ожегов С.И. Толковый словарь русского языка, Мир и образование, Оникс, 2018
10. Правовое обеспечение противодействия экстремизму на пространстве Шанхайской организации сотрудничества <http://ecrats.org/upload/iblock/9d9/7.pdf>
11. Савельева Е.Б. О взглядах Мишеля Фуко на теорию дискурса, Вестник Московской международной академии, 2015, <https://cyberleninka.ru/article/n/o-vzglyadah-mishelya-fuko-na-teoriyu-diskursa>
12. Суханов Ю.Ю. Специфика политического дискурса, Тамбов: Грамота, 2017. № 5 (71): в 3-х ч. Ч. 1.
13. Тичер С., Мейер М., Водак Р., Веттер Е. Методы анализа текста и дискурса, Харьков: Гуманитарный центр, 2009
14. Толковый словарь русского языка /Под ред. Д.Н. Ушакова. — М.: Гос. ин-т "Сов. энцикл."; ОГИЗ; Гос. изд-во иностр. и нац. слов., 1935-1940. (4 т.).
15. Тяжелов Я., Кожемякин Е., Интервью с Т.А.Ван Дейком: о трендах в дискурсном подавлении, европейском национализме и гуманитарной ядерной бомбе, Современный дискурс-анализ, электронный журнал, выпуск 9, 2013.

16. Чудинов А.П. Дискурсивные характеристики политической коммуникации, журнал “Политическая лингвистика”, Екатеринбург, 2 (40), 2012.
17. Шейгал Е. И. Семиотика политического дискурса: монография. Волгоград: Перемена, 2004. 367 с.
18. Strauss S., P.Feiz, Discourse Analysis. Putting our worlds into words, Taylor & Francis, 2014.

REFERENCES

1. Volkova T.A. Diskursivno-kommunikativnaja model' perevoda v issledovanii institucional'nogo diskursa // Vestnik Cheljabinskogo gosudarstvennogo universiteta. 2011. № 17. S. 37-42.
2. Diskurs, kul'tura, mental'nost': kollektivnaja monografija / Otv. red. M. Ju. Oleshkov. – Nizhnij Tagil: Nizhnetagil'skaja gosudarstvennaja social'no-pedagogičeskaja akademija, 2011. – 526 s. (Serija «Jazyk i diskurs». Vypusk 3).
3. Efremova T. F. Novyj slovar' russkogo jazyka. Tolkovo-slovoobrazovatel'nyj. – M.: Russkij jazyk, 2000 <https://dic.academic.ru/contents.nsf/efremova/>
4. Karasik V.I. O tipah diskursa // Jazykovaja ličnost': institucional'nyj i personal'nyj diskurs. Volgograd: Peremena, 2000. S. 5-20.
5. Konvencija Shanhajskoj organizacii sotrudničestva po protivodejstviju jekstremizmu, 2017, <https://bit.ly/2Si3q4i>
6. Koncepcija sotrudničestva gosudarstv - chlenov Shanhajskoj organizacii sotrudničestva v bor'be s terrorizmom, separatizmom i jekstremizmom, 2005 <http://ecrats.org/upload/iblock/7bd/6.pdf>
7. Kuljavina A.P. Sootnoshenie ponjatij “tekst” i “diskurs” kak metodologičeskaja problema, Izvestija Samarskogo nauchnogo centra Rossijskoj akademii nauk, t. 17, №1(5), 2015.
8. Mel'shina K.Ju. Mezhdunarodno-pravovye sredstva bor'by s jekstremizmom, diss....kand.jur.nauk, Moskva, 2018.
9. Ozhegov S.I. Tolkovyj slovar' russkogo jazyka, Mir i obrazovanie, Oniks, 2018.
10. Pravovoe obespečenie protivodejstvija jekstremizmu na prostranstve Shanhajskoj organizacii sotrudničestva <http://ecrats.org/upload/iblock/9d9/7.pdf>

11. Savell'eva E.B. O vzglyadah Mishelja Fuko na teoriju diskursa, Vestnik Moskovskoj mezhdunarodnoj akademii, 2015, <https://cyberleninka.ru/article/n/o-vzglyadah-mishelya-fuko-na-teoriyu-diskursa>
12. Suhanov Ju.Ju. Specifika politicheskogo diskursa, Tambov: Gramota, 2017. № 5(71): v 3-h ch. Ch. 1.
13. Ticher S., Mejer M., Vodak R., Vetter E. Metody analiza teksta i diskursa, Har'kov: Gumanitarnyj centr, 2009.
14. Tolkovyj slovar' russkogo jazyka / Pod red. D.N. Ushakova. - M.: Gos. in-t "Sov. jencikl."; OGIZ; Gos. izd-vo inostr. i nac. slov., 1935-1940. (4 t.).
15. Tjazhelov Ja., Kozhemjakin E., Interv'ju s T.A.Van Dejkom: o trendah v diskursnom podavlenii, evropejskom nacionalizme i gumanitarnoj jadernoj bombe, Sovremennyj diskurs-analiz, jelektronnyj zhurnal, vypusk 9, 2013.
16. Chudinov A.P. Diskursivnye harakteristiki politicheskoi kommunikacii, zhurnal "Politicheskaja lingvistika", Ekaterinburg, 2 (40), 2012.
17. Shejgal E. I. Semiotika politicheskogo diskursa: monografija. Volgograd: Peremena, 2004. 367 s.
18. Strauss S., P.Feiz, Discourse Analysis. Putting our worlds into words, Taylor & Francis, 2014.

**ԼԻԼԻԹ ՀԱԿՈՔՅԱՆ - ՇՀԿ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԴԻՍԿՈՒՐՍԻ ՏԱՐԻ**

Հիմնաբաներ՝ դիսկուրս, ՇՀԿ փաստաթղթեր, ծայրահեղականություն, ինստիտուցիոնալ դիսկուրս, քաղաքական դիսկուրս

Հոդվածի ուսումնասիրության առարկա է ինստիտուցիոնալ դիսկուրսը, որն այժմ ճանաչողական լեզվաբանության մեջ զբաղեցնում է իր ուրույն տեղը: Ուսումնասիրման նպատակով որպես օրինակ են ծառայել Շանհայի Համագործակցության Կազմակերպության պաշտոնական փաստաթղթերը՝ ուղղված ծայրահեղականության դեմ պայքարին:

**LILIT AKOPYAN - SCO DOCUMENTS ON COUNTERACTING EXTREMISM
AS AN ELEMENT OF INSTITUTIONAL DISCOURSE**

Keywords: *discourse, SCO documents, extremism, institutional discourse, political discourse*

The given article attempts to dwell on the core characteristics of institutional (political) discourse. For the research we preferred to use Shanghai Cooperation Organization's documents on countering extremism, as extremism is not fully studied and researched yet, being a socially dangerous phenomenon.

Ներկայացվել է՝ 25.09.2019
Գրախոսվել է՝ 19.09.2019
Երաշխավորվել է ԵՊԼՀ Կոնֆուցիուսի
ինստիտուտի կողմից՝ 19.09.2019

**ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԵՐԸ
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՐՋԱՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ հեքիաթի ժանրի հիմնադիր ու տեսաբան, ժողովրդական ստեղծագործության ակունքներ, ժողովրդայնացված գրական հայերեն, ղարաբաղյան բարբառաբանություններ

Անգնահատելի է հայ գրող, մանկավարժ, գրական գործիչ Ղազարոս Աղայանի դերը մանկական գրականության զարգացման գործում: Մանուկների սիրելի Աղայանը հեքիաթի ժանրի հիմնադիրն ու միաժամանակ այդ ժանրի տեսաբանն է հայ գրականության մեջ:

Ղ. Աղայանը հեքիաթի ժանրում դիմել է ժողովրդական ստեղծագործության ակունքներին՝ առաջին հերթին ուսուցիչ ունենալով Մովսես Խորենացուն, փորձելով նրա պես այլաբանության մեջ գտնել ճշմարտությունը (Հակոբջանյան 2007:368) Իր տեսական հոդվածներում Աղայանը խիստ կարևորում է հեքիաթի դաստիարակչական դերը մանուկների ու պատանիների աշխարհայացքի ձևավորման և զարգացման գործում: *«Մարդու հանճարի ու տաղանդի սաղմերը պեպք է նրա լսած հեքիաթներումը փնտրել, - գրում է Աղայանը և հավելում, - եթե ես գիտենայի, թե որպիսի հեքիաթների լսելով է զարգացել Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեի, Շիլլերի, Կոլումբի և սրանց նմանների երևակայությունը, ես նույն հեքիաթները կտայի իմ ընթերցող սիրելի մանուկներին, թեկուզ նրանց լսած հեքիաթները լինեին ավելի ևս ահռելի ու զարհուրելի»* (Աղայան 1963:214) :

Իր հեքիաթներով Աղայանը ցանկանում էր նրանց մեջ մանկուց քաջության, անվեհերության, վեհանձնության, հնարագիտության սերմեր ցանել: *«Աղայանը հայտնագործեց ժողովրդական բանահյուսության հարստությունները, ըմբռնեց նրա կրթադաստիարակչական նշանակությունը և նրան օժտեց հասարակական հնչեղությամբ»* (Հակոբջանյան 2007: 364) - իրավացիորեն նկատում է գրականագետ Արտաշես Հակոբջանյանը:

Եվ մանուկների քաղցրախոս պապը՝ զրույց է արել երեխաների հետ կախարդական աշխարհներից (Թումանյան 1969:49), նրանց հոգիներում սերմանել բարի հունդեր:

¹ Տե՛ս Ղ. Աղայանը ժամանակակիցների հուշերում, Ե. , 1967, էջ 211:

Մեր նպատակն է ցույց տալ, թե Աղայանը լեզվական առումով որքանով է հարազատ մնացել հեքիաթի ժանրին բնորոշ առանձնահատկություններին: Այդ նպատակով մենք քննել ենք Ղազարոս Աղայանի տասնմեկ հեքիաթներ՝ «Անահիտ», «Անտառի մանուկը», «Օձամանուկ և Արևհատ», «Արևամանուկ», «Հնարագետ ջուլիակը», «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» «Այծատուր», «Եղեգնուհի», «Չանգի-Չրանգի», «Ասլան-Բալա» «Հազարան բլբուլ»:

Հեքիաթների քննությունից առաջին իսկ հայացքից նկատելի է, որ հեղինակային և հերոսների խոսքի միջևնական առումով տարբերություններ չկան՝ անկախ նրանից, թե հերոսը հասարակության որ շերտի ներկայացուցիչ է: Բերենք համապատասխան օրինակներ: Ահա «Անահիտ» հեքիաթի սկիզբը.

«...Մեկ անգամ Վաչե թագավորի միամոր որդին՝ Վաչագանը, որ մի նորահաս երիտասարդ էր, պալատի պարզամբի վրա կոթնած, նայում էր իրանց այդ ծառաստանին: Այս տխուր մրմրուքից հանեց Վաչագանին նրա մայրը՝ Աշխեն թագուհին, որ այդ պահուն մոտեցավ նրան և, մոտը նստելով, հարցրեց.

-Վաչի՛կ, ես տեսնում եմ, որ դու սրտումդ մի ցավ ունիս, բայց թաքցնում ես մեզանից: Որդի՛, ասա՛ ինձ, ինչո՞ւ համար ես այդպես տխուր:

-Մայր, ճշմարիտ ես ասում, - պատասխանեց որդին, - աշխարհիս փառքն ու վայելչությունը ասքիս չեն երևում: Ուզում եմ հեռանալ աշխարհիցս, գնալ անապատ: Ասում են՝ Մեսրոպ վարդապետը կրկին եկել է Հացիկ, իր շինած վանքումը միաբանություն է հաստատել, աշակերտներ ժողովել, ուզում եմ ես էլ գնալ այնտեղ:» (Աղայան 1979:343-345):

Մեկ այլ հատված էլ մեջբերենք, որտեղ զրուցում են Անահիտի շինական հայրը՝ Առանը, և նրանց տուն Վաչե թագավորի կողմից խնամախոսության գնացած Վաղինակը.

«-Ինչո՞ւ տխրեցիր, Առան՝ եղբայր, մենք քեզ ուրախություն ենք բերել և ո՛չ տխրություն: Մենք քո աղջիկը բռնի տանելու չենք: Այդ կախված է քո միակ կամքից:

-Իմ պարվակա՛ն հյուրեր,-պատասխանեց Առանը, - ես շատ շնորհակալ եմ, որ մեր տեր թագավորը իր ճոխ պալատի համար իր ծառայի աղքատիկ խրճիթից մի զարդ է ուզում տանել: Գուցե այդպիսի մի զարդ, ինչպես ասացիք գորգի համար, չկա նրա պալատի մեջ, բայց ճշմարիտն ասում եմ ձեզ՝ իմ ձեռին չէ տալն ու չտալը: Ահա կգա ինքը, իրան կհարցնեք. եթե կհոժարի, ես ոչինչ չունիմ ասելու» (Աղայան 1979:343-345):

ինչպես նկատելի է, թե՛ հեղինակի, թե՛ հերոսների խոսքը գրական հայերենով է՝ տեղ-տեղ ժողովրդայնացված գրական լեզվով (Իշխանյան 1978:173), որը և՛ հեղինակի, և՛ ժամանակի լեզվամտածողության դրսևորումն է և որոշ աղերսներ ունի Ղարաբաղի բարբառի հետ: Վերջին պարագայում դեր է խաղացել ոչ միայն Աղայանի ծագումը (նրա պապը Արցախի Սեյդիշեն գյուղից տեղափոխվել էր Գուգարաց աշխարհի Բոլնիս-Խաչեն գյուղ, և ընտանիքը պահպանել էր Ղարաբաղի բարբառը, ինչպես նաև շատ սովորություններ), այլ նաև հեքիաթի՝ իբրև ժողովրդական բանավոր ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները, հեղինակի կողմից տիպական հանգամանքներ ու միջավայր ստեղծելու ցանկությունը:

Հայտնի է, որ գոյականի հոգնակերտ մասնիկները տարբեր ոլորտների են պատկանում. **եր** և **ներ** մասնիկները հատուկ են գրական լեզվին (մարդ և կին գոյականների համար՝ **իկ**-ը և **այք**-ը), իսկ **իք**, **անք**, **ենք**, **(մ)ունք**, **նի**, **ան**, **աներ**, **երք**, **ք** հոգնակերտները ժողովրդական, բարբառային ձևեր են (Պողոսյան 1990:229)²: Ուստի խոսքի մեջ ոչ գրական հայերենին հատուկ հոգնակերտով կազմված ձևերը ստեղծում են իրենց միջավայրին հատուկ երանգներ:

Ղ. Աղայանի վերոնշյալ հեքիաթներում հանդիպում ենք ինչպես գրական հայերենին, այնպես էլ ժողովրդական, բարբառային ոճին հատուկ հոգնակերտների և նրանց համապատասխան հոլովածների, սակայն գերիշխում են **ք**, **երք**, **ունք**, **անք** մասնիկներով կազմվածները, ինչպես՝ *աղբյուրք*, *աղջկերք*, *աշխարհք*, *թագուհիք*, *իրանք*, *ծնողք/աց*, *հարձակմունք*, *հարցմունք*, *որդկերանք*, *որոպմունք*, *փղերք*, *քաղաքացիք* և այլն:

Ժողովրդական, բարբառային ազդեցություններ են նաև հեքիաթներում առկայացման քերականական կարգի դրսևորումները սեռական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով, մի իրողություն, որ հատուկ է **ում** ճյուղի բարբառներին (Տես՝ Պողոսյան 1990:230; **Ասատրյան** 2002.93)³ : Ղ. Աղայանի հեքիաթներում հանդիպում ենք առկայացման կարգի նման բազմաթիվ իրողությունների, ինչպես՝ *աղլուխովը*, *աղջկանը*, *աշխատանքովը*, *աչքովը*, *աչքումը*, *առջևը*, *Բարդումը*, *բարկությունիցը*, *երազումը*, *խորքումը*, *ծնողացը*, *ճեղքումը*, *մարդկանցը*, *նավիցը* և այլն:

Հեքիաթներում նկատվում են նաև ստացական հոդի հետ համապատասխան դեմքի **դերանունների** գործածության դեպքեր, մի

² Նշվածներից **անք**, **ունք**, **ենք** մասնիկները դարձել են ածանցներ:

երևույթ, որ հատուկ է նաև Ղարաբաղյան բարբառին: Օրինակ՝ *իմ աղջկանս, իմ ամուսինս, իմ արքայազնուհիս, քո թախամաններդ, քո խոսքիդ* և այլն:

Նկատելի է, որ հեքիաթներում գործածված բայաձևերը ևս գրականացված բարբառային ձևեր են, որոնց բարբառային տարբերակներն այսօր էլ «կենդանի» են Ղարաբաղի բարբառում. Այսպես, օրինակ,

համադրական ձևեր՝ *ազապվինք, ապրիս, արավ, բանեցնիլ, բռնիլ, դրավ, երկայնանալ, (կ)զրկվինք, (չեմ) լսած, խնայելու չէի, (չի) համարիլ, (չի) հավատալ, հատալ (=հատ/նիլ-վերջանալ, սպառվել) (Աճառյան 1913:641), մեռնիմ, փանելու չենք, փխրեցան, (չես) ուզիլ, ունինք* և այլն:

Ժողովրդական, բարբառային դրսևորումներ են նաև բայական **հարադրությունների՝** *ականջ էին դնում, բաց արավ, գլուխը քաշ գցել, դուր չեկավ, դուրս բերավ, թաք կենալ, թիկն փալ, խորհուրդ արին, ներս անել* (1.լուռ իր ներսում տառապել, 2.տուն անել)⁴, *ոտնափակ փվավ, ողջույն փալ, վեր կթոչի, ցույց փվավն, և կրկնավորների՝ դմբդմբալ, ծվվալ, կկլալ, մշմշալ (քթով շնչելիս կամ արտաշնչելիս օդի մղումը լսելի դարձնել)⁵, շողշողալ, շվշվալ, պաշպալ, պլպլալ, վազվզել, ցուլցալ, քլքքլալ (=քլքլալ-1.ջրի մեղմ խոխոցելը, 2.ծխի կամ գոլորշու ոլոր-մոլոր դուրս գալը)⁶ ևն, լայն գործածությունները հեքիաթներում:*

Նկատելի են նաև բայի երկրորդական վերլուծական ժամանակաձևերի կիրառություններ, ինչպես՝ *դուրս գալու կլինենք, պետք է վերկացած լիներ, չի կարողանում եղել, զբոսնելիս է լինում* և այլն:

Հեքիաթներում կան նաև ժողովրդախոսակցական բառաշերտին բնորոշ բառեր, ինչպես՝

գոյականներ/ածականներ՝ *ազիզ* (սիրելի, թանկագին), *ապրանք* (այստեղ՝ ընտանի անասուններ), *բյուբյուլ* (սոխակ, փխբ. քաղցրախոս), *բութա* (հույս, ապավեն, հենարան, թիկունք, պաշտպան), *դերվիշ* (մահմեդական թափառական կրոնավոր, որ զբաղվում է նաև գուշակությամբ, հեքիմությամբ), *զարբաբ* (=զառբաբ-մետաքսյա ոսկեթելից հյուսված կտոր՝ դիպակ), *խաս ու դումաշ* (մետաքսյա կտոր, կերպաս), *խուրջին* (ուսին կամ գրաստին գցելու երկաշքանի պարկ), *ծննդկան* (նոր երեխա ծնող կին), *կոթ* (բույսի, տերևի ծաղկի, պտուղի ծայրի հաստ մասը, գործիքի բռնելատեղը, գրիչի փայտե մասը), *կոռնը* (թև), *հաղող* (խաղող), *հասած* (այստեղ՝ չափահաս դարձած,

⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան՝ ՀԼԲԲ, հ. 4, Ե. , 2007, էջ 152:

⁵ Նույն տեղում, հ. 4, էջ 70:

⁶ Նույն տեղում, հ. 7, էջ 132:

հասունացած), *հավուզ* (ավազան), *հերթ* (երդիկ), *դարաչի* (1. գնչու, 2. աներես, անզգամ), *ճապկի* (լեռնային ծառ), *մամխի* (վայրի սալորենիների ցեղին պատկանող ծառ, որի փայտը գործածվում է ճախարակագործության մեջ), *մանիշակ* (մանուշակ), *շահիր* (=շայիր-բանաստեղծ), *շահմար* (օձի առանձին տեսակ, որ ավելի մեծ է և կարմիր գույն ունի), *շարմաղ* (այստեղ՝ քնքուշ, նուրբ, գեղեցիկ, սպիտակամաշկ), *շափաղ* (գ. ցուլք, ած. ցուլուն, փայլփլող, շողշողուն), *շիմշափ* (1.մշտադալար բույս, որի կարծր դեղնագույն փայտից տարբեր իրեր են պատրաստում, 2.սլացիկ, ճկուն ճյուղեր կամ հասակ ունեցող), *շվաք* (ստվեր, շուք), *շուշաբանդ* (ապակեպատ պատշգամբ), *ոսկեքաքուլ* (ոսկեգույն խոպոպներով, ոսկեհեր), *չարսավ* (սավան, որով կանայք փաթաթվում են), *պառակ* (1.լեռ, սար, 2.արեգունի տեղ, լեռան հարավային մասը, որտեղ ոչխարները մակաղում են), *ջահրա* (անվավոր գործիք, որով բուրդ կամ բամբակ են մանում, ճախարակ), *ջադուքյար* (կախարդ, վիուկ), *ջառահ* (հեքիմ, ինքնուս բժիշկ), *ջինդար* (1. կախարդ, գրբաց), *ջուհար* (թանկագին քար, գոհար), *սանդր* (սանր), *սեռ* (1. բլուրների ամենաբարձ գոտի, որից սկսվում է թեքումը, 2.ողնաշար), *սովդաքար* (վաճառական), *սուփրա* (սփռոց), *փալչի* (=ֆալչի-գուշակ, բախտագուշակ), *փարչ* (կավե կամ պղնձե ունկավոր զավաթ), *օղա* (գոմի այն բաժինը, որտեղ մարդիկ հավաքվում էին և զրուցում), *օյին* (խորամանկ միջոց, մեքենայություն՝ մեկին փորձանքի մեջ զցելու համար),

բայեր՝ *ածել* (նվագել), *սկանել* (նայել, դիտել, աչքի անցկացնել, ներկայությունը ստուգել), *գջլել*(=գջլտել-պատահոտել, գզգզել, պոկոտել, փետել) (Աճառյան 1913: 256), *գարգանդիլ* (սարսափել, զարհուրել), *խլշել* (=խլըլըլ-1. ականջները ցցել (կենդանիների մասին), 2.փխբ.լսողությունը լարել՝ սրել), *կակղացնել* (=կակղել=կըկըղել-1.կակուղ դառնալ, փափկել, 2.փխբ. բարկությունը անցնել), *հախտել* (ամբողջ բերանով խածել, ազահորեն կծել՝ խլել՝ խժոել), *կոնել* (=կըոթնել-թևը դիմահար անելով՝ հենվել), *հիներել* (կտավի կամ կարպետի՝ գորգի հիմնական թելերը տորքի կամ գետնի վրա պատել՝ ձգել)⁷, *սփածվել* (զ/ս+փածանել-մի բան վրան առնել՝ իբրև վերարկու) (Մալխասյան 1945: 282), *տերվետեր* անել (=տերետեր՝ տերեցտեր՝ տերըտեր անել-1.յուրաքանչյուր իր տիրոջը հանձնել, 2.տեղավորել, ամեն իր իր տեղը դնել,⁸ *փոնել* (փնովել) և այլն:

Ահա ժողովրդախոսակցականբառերի մոտավոր քանակը, որ մենք դուրս ենք գրել տասնմեկ հեքիաթներից:

⁷ՀԼՐԲ, հ. 3, Ե. , 2004, էջ 285:

⁸ՀԼՐԲ, հ. 6, էջ 172:

Վերոհիշյալ ցանկում առանձնանում են բառեր, որոնք դարաբաղյան բարբառաբանություններ են⁹, այսինքն՝ հանդես են գալիս միայն Ղարաբաղի բարբառում: Ըստ Հր. Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանի»՝**դարաբաղյան բարբառաբանություններ են՝**

գոյականներ/ածականներ՝ անհամբարք (=անհամբարանք-անթիվ, անհամար), **զկռի-զկռի** (ծառ), **խորխ** (1. ծառի կեղև, 2. ծաղիկ հիվանդութեան ժամանակ բշտիկներուն ծայրը ձեւացած և թափուած թեփերը, 3. հարբուխէ յետոյ քիթին ծայրը ձեւացած թեփը, 4. շերամի բոժոժին վրայէն հանուած բուրդի պէս անպէտ մազմզուքներուն ամէնէն գէշ մասը)¹⁰, **կռեջան** (=կեռջան- ծայրը կոր ձող (փայտէ կամ երկաթէ), **կոթոն** (ճյուղերը թափած ավելի մնացորդ), **հեղևակին** (=լէտնակին- մէկուն երկրորդ կինը՝ առաջինը մեռնելէն յետոյ), **սզնի** (անտառային ծառ մը է՝ միջակ բարձրութեամբ, կուտայ սիսեռի չափ փոքր, քաղցրահամ ուտելի պտուղ մը՝ կարմիր կամ սև գոյնով), **շնածանճ** (տիգ),

բայեր՝ ծկլթալ (շատ սուր ձայնով պոռայ), **հափռել** (ափով մը ամբողջ յափշտակել):

ՀԼԲԲ-ում ևս նույնիմաստով և իբրև դարաբաղյան բարբառաբանություններ են ներկայացված **անհամբարք, շնածանճ, սզնի, ծկլթալ, հափռելթառ-թառ** (կապույտ)¹¹, **փալանգ** (առյուծ), **զինահարվիլ**¹² բառերը:

Հր. Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանում» և ՀԼԲԲ-ում չկա **մափոռաշ**=նափոռա բառը, որի իմաստը ճշտել ենք Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանից». այն *գորգափիպ գործվածք, որով փաթաթում կամ որի մեջ տեղավորում են աղջկա օժիպը* բացատրությունն ունի (Սարգսյան 2013:496): Երեք բառարաններում էլ չկան **պապր փալ** (փաթաթել, պտտել, ոլորել), **լախոսհաչիփալ** (պարապ-սարապ այստեղ-

⁹ Մենք դրանք դարաբաղյան բարբառաբանություններ ենք համարել՝ ելնելով նախ Հր. Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանի» ընձեռած տվյալներից, որից հետո միայն անդրադարձել ենք ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Հայոց լեզվի բարբառային բառարանի», Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանի» և Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանի» տվյալներին:

¹⁰ Ղ. Աղայանի հեքիաթում *խորխ* բառն ունի *մաշկ, մորթի, կաշի, պապյան* իմաստը (տե՛ս **Ղ. Աղայան**, ՀԴԳ, էջ 395):

¹¹ ՀԼԲԲ-ում բերված է Ղազարոս Աղայանի օրինակը՝ *Ա՛յ աչեր, վա՛ն աչեր, Մանուշակի թառ-թառ աչեր*:

¹² Հր. Աճառյանը «Հայերէն գաւառական բառարանում» չի տալիս այս բառը, սակայն իմաստի ճշգրտումով այն տրված է «Հայերէն արմատական բառարանում»: *Սարսուալ* իմաստով բառը ՀԼԲԲ-ում տրված է միայն Ղարաբաղի բարբառի համար և օրինակն էլ բերված է Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթից:

այնտեղ թափառել և լեզվին տալ) ղարաբաղյան բարբառաբանությունները:

Եթե հաշվի առնենք, որ վերոբերյալ ժողովրդախոսակցական բառերը գործածվել են տասնմեկ հեքիաթներում՝ մոտ երկու հարյուր էջի սահմաններում, ապա պետք է խոստովանել, որ դրանք մեծ թիվ չեն կազմում: Ուրեմն և կարող ենք արձանագրել, որ ժողովրդախոսակցական և Ղարաբաղի բարբառի բառերը հեքիաթներում չնչին տոկոս են կազմում, այն էլ՝ գործածված հիմնականում ոճավորման նպատակով:

Հեքիաթների լեզվական քննությունից պարզ է դառնում, որ Ղազարոս Աղայանը հեքիաթներում թեև տուրք չի տվել բարբառաբանություններին, սակայն չի էլ խուսափել դրանց գործածությունից: Ընդհակառակը, նա զարմանալի հմտությամբ իր շարադրանքում կարողացել է հյուսել դրանք ժամանակի գրական աշխարհաբարին: Ժողովրդախոսակցական-բարբառային բառերի տեղին գործածությունը միայն հաստատում է Ղ. Աղայանի նուրբ լեզվագագացողությունը, գեղարվեստական գրականության լեզուն կենդանի պահելու, ժողովրդականացման ճանապարհով այն ճոխացնելու աղայանական հմտությունը, որն իր ամբողջական, տեսական ու գործնական կիրառությունը գտավ Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում և արժանիորեն անվանվեց թումանյանական (Իշխանյան 1965: 52):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Ղ., Հայ դասականների գրադարան, Ե., 1979:
2. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963:
3. Աղայանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1967:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1926:
5. Աճառյան Հ., Հայերէն գաւառական բառարանում, Թիֆլ., 1913:
6. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2002:
7. Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1969:
8. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Ե., 1965:
9. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Ե., 1978:
10. Հակոբջանյան Արտ., Ղազարոս Աղայան. գեղարվեստական ժառանգությունը, Ստեփ., 2007:
11. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. 1-7, Ե., 2001:

12. Մալխասյան Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ.4, Ե., 1945:
13. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Ե. , 1990:
14. Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, 2013:

REFERENCES

1. Aghayan Gh., Hay dasakanneri gradaran, E., 1979.
2. Aghayan Gh., Erkeri jhoghovac'ow, h. 3, E. , 1963.
3. Aghayany' jhamanakakicneri howsherowm, E. , 1967.
4. Atwar'yan H., Hayeren armatakan bar'aran, hh. 1-4, E., 1926.
5. Atwar'yan H., Hayere'n gawar'akan bar'aranowm, T'ifl., 1913.
6. Asatryan M., Jhamanakakic hayoc lezow, E. , 2002.
7. T'owmanyen Hovh., Erkeri jhoghovac'ow, h. 4, E. , 1969.
8. Ishxanyan R', Bakownci lezvakan arvesty', E., 1965:
9. Ishxanyan R', Ar&elahay banasteghc'owt'yan lezvi patmowt'yown, E., 1978.
10. Hakobjanyan Art., Ghazaros Aghayan. gegharvestakan jhar'angowt'yowny', Step'., 2007.
11. Hayoc lezvi barbar'ayin bar'aran, hh. 1-7, E., 2001.
12. Malxasyan St., Hayere'n bacatrakan bar'aran, h.4, E. , 1945.
13. Poghosyan P., Xosqi mshakowyt'i & otwagitowt'yan himownqner, girq ar'ajin, E. , 1990.
14. Sargsyan A., Gharabaghi barbar'i bar'aran, 2013.

АНАИТ АКОБДЖАНЯН - СЛОВА РАЗГОВОРНОГО СТИЛЯ И КАРАБАХСКИЕ ДИАЛЕКТИЗМЫ В СКАЗКАХ ГАЗАРОСА АГАЯНА

***Ключевые слова:** основатель и теоретик жанра сказки, истоки популярной литературы, популярной литературный армянский язык, карабахские диалектизмы*

Неоценима роль армянского писателя, педагога, литературного деятеля Газароса А. в развитии детской литературы. Агаян является основателем жанра «сказка» и одновременно теоретиком данного жанра в армянской литературе. Немногочисленная карабахская диалектная лексика

встречающаяся в сказках, искусно гармонирует с текстом. Использование народных диалектных слов к месту только подчеркивает чувство языка Газароса Агаяна и умение поддерживать язык “живым”.

ANAHIT HAKOBYANYAN - COLLOQUIALISM AND KHARABAKH DIALECTAL WORDS IN FAIRY TALES BY GHAZAROS AGHAYAN

Keywords: *founder and theorist of the fairy tale genre, the origins of popular literature, popularized literary Armenian, Karabakh dialects*

The role of the Armenian writer, pedagogue and literary figure Ghazaros Aghayan is invaluable in the development of children’s literature. Aghayan is the founder of the fairy tale genre and at the same time he is the theorist of the mentioned genre in Armenian literature.

Some of the few Kharabakh dialectisms in fairy tales are skillfully combined in the narrative. The proper usage of folklore-dialect words only confirms Ghazaros Aghayan’s delicate language alertness and the proficiency to keep the language of fiction alive.

Ներկայացվել է՝ 30.09.2019
Գրախոսվել է՝ 30.09.2019

ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ իմաստային համարժեքություն, ոճական համարժեքություն, գործաբանական արժեք, նույնարժեքություն, նույնարժեքության աստիճան, մշակութային ակնկալիք, հեղինակային մտադրություն, արտալեզվական գործոններ, փոխակերպում

Դեռևս անցած դարերում թարգմանիչներին հուզել են մի շարք հարցեր որակյալ թարգմանությունների վերաբերյալ և փնտրվել են այն օբյեկտիվ չափանիշները, որոնք թույլ կտան գնահատել թարգմանությունը, թարգմանության համարժեքությունը բնագրին՝ հեղինակի ոճի, լեզվական նրբությունների, մտքի խորության և ձևակերպման անկրկնելիության տեսանկյունից:

Դասական շրջանի հայ հնագույն թարգմանությունների «գլխավոր թարգմանչական սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ոչ ստրկական վերարտադրությունը, որ հնարավորություն էր տալիս առանց մեղանշելու հայոց լեզվի օրինաչափությունների դեմ, ճշգրիտ արտահայտել բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները» (Տեր-Պետրոսյան 1985:8): Հետագայում, հունաբան դպրոցի ներկայացուցիչները առաջնորդվում էին «բնագրի բառացի, նյութական վերարտադրության սկզբունքով, այդ պատճառով նրանց իրագործած թարգմանություններին բնորոշ են խրթին ոճը և հայոց լեզվին անհարազատ շարադասական կառուցվածքները» (Տեր-Պետրոսյան 1985:10): Ակնհայտ է, որ այստեղ տարբերակումը տրված է ըստ թարգմանության լեզվի՝ հայերենի օրինաչափությունների պահպանման կամ խախտման չափանիշի:

Հայ մեծ գրող, բանաստեղծ և թարգմանիչ Հ.Թումանյանը խոսելով գեղարվեստական թարգմանությունների հնարավորությունների մասին գրում է. «Միշտ պահանջելի է, որ թարգմանիչը հավատարիմ մնա գործքի մտքին և հասկանալի տա ընթերցողին» (Թումանյան 1994:124-130): Եվ վերլուծելով Քուչակի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունները՝ նա հավելում է. «Բոլորսովը թարգմանում է վարպետի ձեռքով՝ աշխատելով հաղթել գրեթե անհաղթահարելի արգելքների» (Թումանյան 1995:197-204):

Ժամանակակից թարգմանաբանությունը շարունակում է անդրադառնալ այս հարցադրումներին՝ փորձելով դրանց պատասխանել նույնականության (adéquation) հիմնախնդրի ուսումնասիրության միջոցով (գեղարվեստական տեքստերի թարգմանությունը երբեք չի կարող նույնական լինել, ուստի ճիշտ է կիրառել նույնարժեքություն եզրույթը): Սա հիմնարար տեսական հարցադրում է թարգմանաբանության համար, միաժամանակ՝ թարգմանչական աշխատանքի հանգուցային խնդիր: Վերջինս ամեն անգամ յուրովի լուծում է պահանջում, որը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի մի շարք գործոններով՝ ելակետային տեքստի ժանրային ու գործառական պատկանելությամբ, պահանջվող թարգմանության տեսակով, հեղինակի դիտավորությամբ և դրա թարգմանչական ընկալումով, թարգմանչի հմտությամբ, իրավիճակի առանձնահատկություններով և այլն:

Նույնարժեքությունը սահմանվում է որպես բնագրի և թարգմանվածքի ճշգրիտ համապատասխանություն, լիակատար եռաբաղադրիչ համընկնում, այն է՝ բնագրի և թարգմանվածքի համարժեքություն ըստ՝

- Արտահայտված մտքի (կամ հույզի) իմաստի
- Գործադրված լեզվաոճական միջոցների յուրահատկությունների
- Գործաբանական նշանակության

Ըստ այդմ՝ գիտության մեջ առանձնացվում են նույնարժեքության դրսևորման աստիճանները, այսինքն՝ փորձ է արվում քանակապես արտահայտելու թարգմանության որակը: Բարձրագույն (կամ «բացարձակ») նույնարժեքությունը թարգմանության երեք բաղադրիչների լիակատար ապահովումն է, երբ ելակետային ու թարգմանյալ տեքստերի և՛ բովանդակությունը, և՛ արտահայտչամիջոցների բնութագրերն ու գործաբանական արժեքը նույնն է, այսինքն՝ երկու տեքստերի հասցեատերերից ակնկալվող արձագանքն է նույնը, իսկ առաջին, երկրորդ և այլ աստիճանի նույնարժեքությունը գնահատվում է ըստ նույնական բաղադրիչների քանակի, ինչպես նաև դրանց միջև առկա առանձին նմանությունների ու տարբերությունների (Նազարյան, Բաղդասարյան, 2000: 18):

Նույնարժեքության ապահովման խնդիրը տարաբնույթ լուծում է ստանում ամենից առաջ ժանրային-գործառական առանձնահատկության շնորհիվ. մի բան է գրասենյակային-վարչական որևէ փաստաթղթի թարգմանությունը, մեկ այլ բան՝ գեղարվեստական տեքստի թարգմանությունը: Գեղարվեստական արձակն ու չափաձոն ենթադրում են իմաստային, ոճական ու գործաբանական համապատասխանության տարբեր պահանջների բավարարում:

Եթե համարում ենք, որ թարգմանությունը լեզվամշակութային միջնորդավորման տեսակ է, ապա թարգմանիչը միջնորդի դեր է կատարում երկու մշակույթների միջև: Սակայն հարկ է նշել, որ այս միջնորդավորումը անանձնական բնույթ ունի: Թարգմանիչը, կարծես երկատվում է. թարգմանելով հեղինակի մտադրությունները՝ նա փաստորեն ներկայանում է որպես այդ ստեղծագործության հեղինակ՝ թարգմանող լեզվի մշակույթի կրողների համար: Հանուն նշված նպատակի, թարգմանիչը միաժամանակ պետք է պահպանի ու դուրս գա իր «ես»-ից, քանի որ միայն այդ կերպ նա կարող է լեզվամշակութային նոր միջավայրին հարազատորեն հաղորդել բնագրի հեղինակի մտադրությունները, այսինքն՝ ապահովել թարգմանության նույնարժեքությունը:

Սա վերաբերում է նաև նոր միջավայրի մշակութային ակնկալիքներին, քանի որ այստեղ ներմուծված նոր արժեքը գործառում է իր բնագրային պատկանելությամբ. հայ ընթերցողը «Համլետ»-ն ընթերցում ու ընկալում է ոչ որպես թարգմանչի ստեղծագործություն, այլ՝ Վիլյամ Շեքսպիրի: Նմանապես՝ գիտական շրջանառության մեջ են շեքսպիրյան գաղափարները, ասույթները, պատկերները, մեջբերվում ու մեկնաբանվում է դարձյալ Շեքսպիրը, ոչ թե նրա թարգմանիչը:

Թարգմանչի աշխատանքի անանձնականությունը գեղարվեստական թարգմանության ասպարեզում ունի իր յուրահատկությունը: Բնագիրը ստեղծագործություն է, թարգմանվածքը՝ նույնպես: Իսկ դա նշանակում է, որ թարգմանիչն ինքն էլ ստեղծագործում է, ստեղծագործում ոչ միայն բուն թարգմանության գործընթացի առումով, այլև բնագրի ստեղծագործական վերարտադրության՝ որպես ինքնուրույն, միաժամանակ, բնագրին համարժեք ստեղծագործություն:

Մենք փորձել ենք տարանջատել նաև երկու հիմնարար հասկացությունների՝ «համարժեքության» և «նույնարժեքության» տիրույթները. առաջինը վերաբերում է թարգմանության գործընթացին, իսկ երկրորդը՝ թարգմանվածքին: Այլ կերպ ասած, եթե մենք սահմանում ենք «նույնարժեքություն»-ը որպես «թարգմանության տեքստի ճշգրիտ համապատասխանություն ելակետային տեքստին, ինչը ենթադրում է նրանց լիակատար համընկնումը իմաստային, գործառական, ոճական և գործաբանական պլաններում» (Նազարյան, Բաղդասարյան, 2000:68), ապա «համարժեքություն»-ը (équivalence) առնչվում է նույնարժեքության բաղադրիչներին, քանի որ սահմանվում է որպես «ելակետային և թարգմանության տեքստերի միավորների միջև նույնանշանակ համապատասխանություն, որը կախված է համատեքստից» (Նազարյան, Բաղդասարյան, 2000: 371): Ըստ այդմ՝ գործածվում են ածանցյալ

հասկացություններ՝ «իմաստային համարժեքություն», «ոճական համարժեքություն», «գործաբանական համարժեքություն», «հարաբերական համարժեքություն», «դինամիկ համարժեքություն» և այլն (Комиссаров 1999:10-12):

Այսպիսով, ինչ է նշանակում պարզել թարգմանության իմաստային համարժեքության աստիճանը: Բնագրի յուրաքանչյուր բառը, բառակապակցությունը, նախադասությունը, ի վերջո, ողջ տեքստը, որոշակի իմաստ ունի, և թվում է, թե համարժեքությունն ինքնին ապահովվում է՝ համապատասխան լեզվական միավորը ստույգ ընկալելով և այն թարգմանող լեզվի միջոցներով ստույգ հաղորդելով: Սակայն, քանի որ բնական լեզուներին հատուկ է բազմիմաստությունը, ապա խնդիրը ոչ թե սուսկ իմաստային համապատասխանությունները որոնելն է, դրանք համեմատելը, այլ հատկապես այն իմաստի ըմբռնումն է, որ բնագրի հեղինակը ցանկացել է հասցնել իր ընթերցողին և դրա համարժեք վերամարմնավորումը թարգմանվածքի մեջ՝ վերջինիս հասցեատիրոջ համար: Կարդալով բնագիրը՝ թարգմանիչն ընկալում է ոչ միայն ասվածի բովանդակությունը, այլև հեղինակի վերաբերմունքն իր ասածի հանդեպ: Թարգմանվող տեքստի բովանդակությունը ներկայանում է այն տեղեկույթի ձևով, որ կրում է բնագրի տեքստը որպես որոշակի նշանային համակարգ՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների ամբողջություն: Հեղինակային վերաբերմունքը դրսևորվում է ասվածի կերպի, ընտրված ժանրային առանձնահատկությունների, ոճական հնարների, բառագործածության մեջ և այլն: Այդ երկու բաղադրիչը՝ ասելիքը և ասելիքի հանդեպ անձնային վերաբերմունքը կազմում են այն տրամադրությունը, դիրքորոշումը, գործողության ազդակը, որ նա ցանկանում է հաղորդել իր ընթերցողին: Թարգմանական գրականության մեջ բնագրի հեղինակի այդ հաղորդակցական մտադրությունը, որ ստացել է դիտավորություն (ինտենցիա) անվանումը կարող է դրսևորվել որևէ տեղեկության, դատողության, հույզի, պատկերի տեսքով, և թարգմանիչն ապահովում է իմաստային համարժեքությունը, եթե թարգմանվածքի ընթերցողը ստանում է այդ նույն տեղեկությունը, հույզը, պատկերը և այլն:

Ոճական համարժեքությունը, որպես հաղորդակցական դիտավորության բաղադրիչ, ինքնանպատակ չէ, այլ ի վերջո ենթարկվում է իմաստային բովանդակության համարժեքության ապահովման խնդրին: Պատահական չէ, որ բնագրի ոճական արժանիքները «լեզվաբանական արժեքների աստիճանակարգում» դիտարկվում են որպես բաղիմաստային միավորներին ստորադաս, բոլոր մյուս հանգամանքների հավասարության պարագայում՝ թարգմանաբանորեն գերադասելի է

նախ՝ ապահովել բառային-իմաստային, այնուհետև՝ բնագրի ոճական առանձնահատկությունների համարժեքությունը, իսկ բնագրի ոճական բնութագրերը՝ գործածված լեզվական միավորների միջոցով, միտված են բացահայտելու հեղինակային մտահաղացումը: Առավել ևս, և՛ բնագրի, և՛ թարգմանող լեզվի քերականական համակարգերի թարգմանական առնչություններն ուղված են իմաստային համարժեքության պահպանմանը:

Դրա հետ մեկտեղ, իմաստային նույնարժեքության պահպանումը մասամբ կարող է փոխհատուցել բնագրի ոճական արժանիքների թարգմանության որոշ անհարթությունները, սակայն հակառակը պնդել չենք կարող. ոճական անհաջող թարգմանությունը կարող է խաթարել իմաստային նույնարժեքությունը, հատկապես գեղարվեստական թարգմանության դեպքում:

Կա ևս մեկ կարևոր հանգամանք. բնագրի ոճական առանձնահատկությունները համարժեքորեն հաղորդելը վեր է հանում նաև թարգմանող լեզվի արժանիքները: Սա թումանյանական հիմնադրույթներից մեկն է: Գնահատելով «Համլետ»-ի մասեիյանական թարգմանության որակը՝ Հ.Թումանյանը գրում է. «Ինչ արժանավայել ճոխությամբ է խոսում հայոց լեզուն Դանիայի արքայազնի բերանում», այնպես, որ հենց լեզվաոճական համարժեքության ապահովման առումով դրա հետ «ռուսական լավագույն թարգմանությունները դժվար թե համեմատվեն» (Թումանյան 1995:459-465):

Գործաբանական համարժեքության ապահովման հարցում անհարժեշտ է անպայման հաշվի առնել արտալեզվական գործոնները, և ինչպես նշում է ռուս լեզվաբան Շչետինկինը, «բառի մակարդակում առաջին պլան է մղվում թարգմանության լեզվաբանական կողմը, մինչդեռ տեքստի մակարդակում վճռորոշ նշանակություն է ձեռք բերում իրավիճակի իմացությունը» (Щетинкин 1987:29):

Կարծում ենք, այդուհանդերձ, սա չի կարելի անվերապահ կանոն համարել. հաճախ բնագրի հեղինակի կողմից առանձին բառի ընտրությունն անգամ բացատրելի է իրավիճակային յուրահատկությունների միջոցով, ավելի ստույգ ձևակերպմամբ՝ վերջիններիս հեղինակային ընկալմամբ, դրանց որոշակի բեկմամբ՝ հեղինակի դիտավորությունների ուսայնակի միջով: Թարգմանության նույնարժեքության ապահովման արդյունավետ, թեպետ վերջին տարիներին նվազ գործածական միջոցներից է թարգմանչի սեփական ասելիքը՝ մեկնաբանությունների ու բացատրությունների տեսքով, որը կարծում ենք, անհրաժեշտ և օգտակար լրացում է, ու թերևս կարելի է անվանել «լրացուցչության սկզբունք»: Ի դեպ, թարգմանվածքն ուղեկցող

այդ մեկնաբանություններն ու բացատրությունները կարող են վերաբերել թե՛ թարգմանության իմաստային կողմին (այս կամ այն բառի, արտահայտության, ձևակերպման, ասելիքի հեղինակային դիտավորության լրացուցիչ պարզաբանումը), թե՛ ոճական կողմին (օրինակ՝ հավելյալ տեղեկություններ բնագրային բառախաղերի ու զուտ լեզվական հիմքով գոյացող ակնարկների վերաբերյալ, ինչպես նաև ոճական արժեք ներկայացնող նորաբանությունների, միայն տվյալ հեղինակին բնորոշ արտահայտչամիջոցների մասին և այլն) և թե՛ գործաբանական կողմին, մանավանդ երկու մշակութային միջավայրերի տարբերությունների պարագայում ցանկալի է ներկայացնել որոշ պարզաբանումներ հեղինակային միտքը կամ պատկերը թարգմանող լեզվամշակութային համակարգի հասցեատերերին հնարավորինս մատչելի դարձնելու նպատակով:

Զուր չէր Հ. Թումանյանը նույն «Համլետ»-ի մասեհյանական թարգմանության կապակցությամբ թերություն համարում հատկապես նմանօրինակ մեկնաբանությունների բացակայությունը, որոնք «կարևոր են թե՛ թարգմանչի համար, որ ցույց տա, թե այս ինչ տեղն ինչու այսպես է թարգմանել և ոչ այնպես, և թե՛, մանավանդ, ընթերցողի համար, որ կարողանար Շեքսպիրը պարզ հասկանալ» (Թումանյան 1995:55):

Այս բնույթի լրացուցիչ աշխատանքը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ հաղորդակցական համակարգերում անխուսափելի է տեղեկատվության որոշակի կորուստը, որը կարող է վերաբերել այդ տեղեկատվության իմաստին, դրա ոճական յուրահատկություններին և այլն: Կրճատումը, զեղչումը, խտացումը, խոսքային հաղորդակցության «խնայողության» մյուս եղանակները այստեղ սովորական երևույթ են և պայմանավորված են որոշակի գործաբանական հանգամանքներով: Միննույն լեզվով հաղորդակցվողները այդ կորուստը դյուրին վերականգնում են լեզվամշակութային ընդհանուր պատկանելության շնորհիվ, այլ կերպ ասած՝ «հաղորդող-ընկալող» կապի մեջ հաղորդման բուն բովանդակությանը վերաբերող իմաստային կողմը՝ ընկալման իմաստային համարժեքությունը, լրացվում-վերականգնվում է գործաբանական համարժեքության շնորհիվ, ընդ որում՝ դա տեղի է ունենում ինքնաբերաբար, հաճախ չգիտակցվելով ո՛չ հաղորդման հեղինակի, ո՛չ էլ նրա հասցեատիրոջ կողմից: Թարգմանության դեպքում իրավիճակն ավելի բարդ է, քանի որ թարգմանչի միջոցով հասցեատիրոջը փոխանցվող տեղեկատվության իմաստային և գործաբանական կողմերի այդ ինքնաբերական փոխլրացումը տեղի չի ունենում: Ավելին, բացառված չեն թարգմանության հետևանքով լրացուցիչ կորուստները, հեղինակային դիտավորության աղավաղումները

և այլն: Ուստի, թարգմանաբանական մեկնաբանությունների ու բացատրությունների դերը՝ որպես թարգմանության իմաստային համարժեքությանը նպաստող միջոցի, մեծանում է: Ընդ որում, գերադասելի են ոչ այնքան լեզվական, նեղ մասնագիտական, որքան մշակութային բնույթի մեկնաբանությունները, քանի որ դրանք պարզաբանում են թե՛ իմաստը, թե՛ ճշգրտում են այս իմաստը՝ հարմարեցնելով լեզվամշակութային նոր միջավայրի ակնկալիքներին ու պահանջներին:

Գրական թարգմանությունների նույնարժեքության վերաբերյալ տեսական մեր դրույթները փորձենք լուսաբանել Պոլ Սկարոնի «Տապանագիր» բանաստեղծության թարգմանության վերլուծության միջոցով՝ կատարված Ավետիք Իսահակյանի կողմից:

ÉPITAPHE

Celui qui ci maintenant dort
Fit plus de pitié que d'envie,
Et souffrit mille fois la mort
Avant que de perdre la vie.
Passant, ne fais ici de bruit,
Prends garde qu'aucun ne l'éveille;
Car voice la première nuit
Que le pauvre Scaron sommeille.

ԻՐ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Նա, որ հիմա հանգչում է այստեղ,
Արժանի է գուրթի, քան թե նախանձի
Նա կյանքից զրկվելուց առաջ
Հազար անգամ մահը տեսավ:
Անցո՛րդ, կամա՛ց գնա,
Զգո՛ւյ՛ջ, չարթնացնես նրան.
Զէ՛ որ առաջին անգամն է ահա,
Որ խեղճ Սկարոնը քնում է:

Հարկ է նշել, որ բնագրի տրամադրությանը բնորոշ թախճոտ հումորը, անչար տրտունջը, և առհասարակ ողջ բանաստեղծական պատկերը համարժեքորեն վերարտադրված է թարգմանվածքում: Կանգ առնենք թարգմանության մեջ կատարված փոխակերպումներին: Բնագրի վերնագրում տապանագիրը ընդհանրացված է, քանի որ բանաստեղծության մեջ արտահայտված խնդրանքը՝ ուղղված անցորդներին, կարող է բնորոշ լինել յուրաքանչյուր տապանագրի, և նույնիսկ անձի ցուցիչը՝ արտահայտված եզակի 3-րդ դեմքով «le»՝ «Prends garde qu'aucun ne l'éveille» - «Զգո՛ւյ՛ջ, չարթնացնես **նրան**», մահվան մասին հեղինակի խոհերը՝ «Նա, որ հիմա հանգչում է այստեղ, արժանի է գուրթի, քան թե նախանձի», կարող է վերաբերել ընդհանրապես բոլոր ննջեցյալներին, և միայն բանաստեղծության վերջին տողում է բացահայտվում, որ դա հեղինակի տապանագիրն է «...le pauvre Scaron sommeille»-«...խեղճ Սկարոնը քնում է»: Իսահակյանը, օգտագործելով «իր» ստացական դերանունը, բանաստեղծի խոհերը կարծես մասնավորեցրել է միայն մեկ ննջեցյալի՝ Սկարոնի օրինակով:

«la première nuit» արտահայտության մեջ «nuit»- «գիշեր» բառային միավորը փոխարինված է *առաջին անգամ* բառակապակցությամբ՝ առավել ցայտուն դարձնելով անդրշիրիմյան այս «բաղձանքի» ողբերգականությունը: Չէ՞ որ գիշերվան հաջորդում է առավոտը, իսկ սա Սկարոնի առաջին ու վերջին գիշերն է, առաջինը, որին ոչինչ չի հաջորդում:

«ne fais ici de bruit» ասույթը ևս թարգմանիչը բառացի՝ «մի աղմկիր այստեղ» չի թարգմանել, այլ գործաբանական համարժեքության ապահովման նպատակով թարգմանել է՝ «Անցո՛րո, կամա՛ց գնա», որն առավել հարազատ է հայ ընթերցողին, և, բացի այդ, բանաստեղծի այս հորդոր-խնդրանքը առավել ստույգ է հասցեագրված: Նույն նպատակով է կատարվել նաև «Prends garde qu’aucun ne l’éveille» արտահայտության ոչ բառացի թարգմանությունը՝ «Ձգո՛ւյ՛ջ, չարթնացնես **նրան**», որը հայ բարոյամշակութային ընկալմանն առավել համարժեք է. ննջեցյալը (որ վերջապես պիտի քնի), անմիջաբար խնդրում է անցորդին, այլ ոչ թե նրան հանձնարարություն է տալիս:

Այսպիսով, թարգմանության նույնարժեքության ապահովումը իմաստային, ոճական և գործաբանական համարժեքությունների միասնությունն է, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկություններն ու միջոցները, և որոնք միմյանց օժանդակում, լրացնում և միևնույն ժամանակ բարձրացնում են թարգմանվածքի նույնարժեքության աստիճանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թումանյան Հ., Շեքսպիր. «Համլետ», թարգմ. Գարեգին Հ.Բաբազյան //Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հատ.6,Եր.:ՀՀ ԳԱԱ հրատ., 1994:
2. Թումանյան Հ., «Համլետ», ողբերգություն Շեքսպիրի: Անգլերենից թարգմանեց Հովհաննես Խան Մասեհյան// Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հատ.6,Եր.: ՀՀ ԳԱԱ հրատ., 1995:
3. Թումանյան Հ., Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում, էջ 463,461// Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հատ.6,Եր.:ՀՀ ԳԱԱ հրատ., 1995:
4. Թումանյան Հ., Քուչակ Նահապետ և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առիթով// Հ.Թումանյան, Երկերի

լիակատար ժողովածու տաս հատորով, հատ.7,Եր.;<< ԳԱԱ հրատ., 1995:

5. Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Եր., «Ամարաս, 2000,
6. Սկարոն Պ., Իմ տապանագիրը // «Ֆրանսիական պոեզիա», Եր.:Երևանի համալսարան, հրատ.,1984:
7. Տեր-Պետրոսյան Լ., Հայ հնագույն թարգմանությունների մատենաշարը// Գիրք ծննդոց: Քննական բնագիր, Եր.:ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985:
8. Щетинкин В. Е., Пособие по переводу с французского языка на русский язык 29. М.; Просвещение, 1987:
9. Комиссаров В.Н., Переводоведение в XX веке; некоторые итоги// Тетради переводчика. Научно-теоретический сборник. М.;МГЛУ, 1999:
10. Scarron P., Epitaphe // Anthologie poétique française:XVII-e siècle, t.2, Paris:Garnier-Flammarion, 1966:

REFERENCES

1. T'owmanyanyan H., Sheqspir. Hamlet, t'argm.Garegin H.Babazyan //H.T'owmanyanyan, Erkeri liakatar jhoghovac'ow tas hatorov, hat.6,Er.;HH GAA hrat., 1994.
2. T'owmanyanyan H., «Hamlet», oghbergowt'yown Sheqspiri: Anglerenic t'argmanec Hovhannes xan Masehyan// T'owmanyanyan H., Erkeri liakatar jhoghovac'ow tas hatorov, hat.6,Er.; HH GAA hrat., 1995.
3. T'owmanyanyan H., T'argmanowt'yownnery' & hratarakowt'yownnery' mezanowm, e'j 463,461// H.T'owmanyanyan, Erkeri liakatar jhoghovac'ow tas hatorov, hat.6,Er.;HH GAA hrat., 1995.
4. T'owmanyanyan H., Qowchak Nahapet & Sayat'-Novayi r'owseren t'argmanowt'yownneri ar'it'ov// H.T'owmanyanyan, Erkeri liakatar jhoghovac'ow tas hatorov, hat.7,Er.;HH GAA hrat., 1995.
5. Nazaryan A., Baghdasaryan H., T'argmanabanakan owsowmnakan d'er'nark, Er., «Amaras, 2000.
6. Skaron P., Im tapanagiry' // «Fransiakan poezia», Er.:Er&ani hamalsaran, hrat.,1984.

7. Ter-Petrosyan L., Hay hnagowyn t'argmanowt'yownneri matenashary'// Girq c'nndoc: Qnnakan bnagir, Er.:HSSH GA hrat., 1985.
8. Shhetinkin V. E., Posobie po perevodu s francuzskogo jazyka na russkij e'j 29. M.; Prosveshhenie, 1987.
9. Komissarov V.N., Perevodovedenie v XX veke; nekotorye itogi// Tetradi perevodchika. Nauchno-teoreticheskij sbornik. M.;MGLU, 1999.
10. Scarron P., Epitaphe // Anthologie poétique française:XVII-e siècle, t.2, Paris:Garnier-Flammarion, 1966.

ДОНАРА КАЗАРЯН - ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКВИВАЛЕНТНОСТИ ХУДОЖЕСТВЕННЫХ ТЕКСТОВ

Ключевые слова: *семантическая эквивалентность, стилистическая эквивалентность, художественная ценность, адекватность, уровень адекватности, культурное ожидание, авторские намерения, экстралингвистические факторы, трансформация*

Проблема обеспечения эквивалентности решается по-разному в первую очередь в силу жанрово-функционального своеобразия: одно дело – перевод административно-канцелярского документа, другое дело – перевод художественного текста. Художественные проза и поэзия предъявляют разные требования к обеспечению семантического, стилистического и прагматического соответствия.

В статье предпринята попытка разграничить диапазоны двух основополагающих понятий: “эквивалентность” и “адекватность”, первое из которых относится к процессу перевода, а второе – к переведённому тексту.

В теории перевода принято рассматривать адекватность как единство семантических, стилистических и прагматических эквивалентов, каждый из которых имеет свои особенности и методы решения проблемы, дополняя друг друга и в то же время повышая степень адекватности перевода.

DONARA GHAZARYAN- PROBLEMS OF EQUIVALENCE IN FICTION TRANSLATION

Keywords: *semantic equivalence, stylistic equivalence, pragmatic value, adequacy, degree of adequacy, cultural expectation, authorial intent, extra-linguistic factors, transformation*

The problem of adequacy in translation is first and foremost solved by genre and functional features of the text. Translation of official documents greatly differs from literal translation. Translation of literary prose and verse requires semantic, stylistic and pragmatic equivalence.

The article attempts to differentiate the domains of two basic concepts: "equivalence" and "adequacy", the former relates to the translation process and the latter- to the translated text.

In translation theory, adequacy is considered as a unity of semantic, stylistic and pragmatic equivalents, each of which, having its own means and peculiarities of solving the problem, complements and enhances the degree of translation adequacy.

Ներկայացվել է՝ 01.10.2019
Գրախոսվել է՝ 01.10.2019

LE PROBLÈME DES REALIA: CLASSIFICATION ET TRANSMISSION

ASTGHİK MARGARYAN

Mots - clefs: traduction, realia, langue source, langue cible, couleur locale, culture populaire, stratégie, classification

La nature d'un pays est faite par les écrivains, la littérature mondiale par les traducteurs

Harrie Lemmens

Les realia sont des mots et des expressions d'une langue représentant des dénominations d'objets, de concepts, de phénomènes typiques d'une aire géographique concrète, de la vie matérielle ou des particularités culturelles, historiques, sociales de certains peuples et nations, tribus, qui illustrent une couleur locale ou historique. Ces unités lexicales n'ont pas d'équivalents absolus dans d'autres langues et leur traduction ou plutôt transmission reste toujours un des problèmes cruciaux de nos jours.

L'actualité du présent article est conditionnée par l'intérêt croissant pour la traduction, surtout pour la traduction des realia, ainsi que par la nécessité de différents moyens de transmission et de stratégies de celles-ci.

Notre *objectif* est d'analyser les différentes définitions des realia constatées dans les études traductologiques et de proposer notre approche concernant le terme en question ainsi que les voies et les stratégies de sa transmission dans la culture cible.

Les realia sont issus de la culture populaire ou de l'histoire culturelle d'un pays ou d'une région. En traduction, les realia sont une catégorie spéciale des moyens d'expression désignant des éléments, des choses ou concepts spécifiques à une culture source. Le terme *realia* vient du latin médiéval (pluriel de *reale*, forme neutre de l'adjectif *realis*) et signifiait à l'origine "les choses réelles", ce qui relève du concret, par opposition à l'abstrait.

La première étude approfondie sur les *realia*, a été menée par les traducteurs bulgares S. Vlahov et S. Florin, et c'est à eux que l'on doit le sens moderne du terme *realia*.

De nombreux savants ont accordé une grande importance à l'étude des particularités des traditions, de la culture, de la littérature, de la science, du

mode de vie d'un peuple donné, aux realia. La traductologie les étudie en tant qu'éléments linguistiques d'expression de la singularité nationale, éléments de la couleur locale et historique qui sont attachés à la culture source. Le but de ces éléments culturels est d'approcher dans un texte le lecteur à la culture étrangère.

La traduction, activité humaine, née avec l'humanité, nécessaire à toute époque et dans tous les recoins du monde a pour le but final de transposer l'information, écrite ou orale, dans la langue cible. C'est surtout lors de la traduction des realia, des éléments de couleur nationale qu'on se heurte aux différentes difficultés et qu'on cherche des moyens à trouver les solutions des problèmes qui se posent. La traduction des realia, des choses, des phénomènes concrets, des dénominations d'éléments reflétant la vie quotidienne, l'histoire, la culture inconnus, parfois étrangers au peuple porteur de la langue d'arrivée pose toujours des problèmes. Et ce n'est pas seulement le traducteur, un médiateur entre les usagers de la langue source et ceux de la langue cible, qui se heurte à ces problèmes, mais tous ceux qui sont en contact avec d'autres langues et cultures et qui sont obligés de traduire un message d'une langue à une autre.

Présentons ici les définitions et les classifications qui nous paraissent intéressantes et que nous trouvons importantes.

C'est tout d'abord celle des traducteurs bulgares S.Vlahov et S.Florin, translatoles qui sont les premiers à proposer une définition aux realia, une définition qui en révèle assez clairement les particularités, ainsi que leur classification. "Les mots et les expressions composés du langage populaire représentent des dénominations d'objets, de concepts, de phénomènes typiques d'un endroit géographique donné, de la vie matérielle ou des particularités historico-sociales de certains peuples, nations, pays, tribus, qui pour cette raison illustrent une couleur nationale, locale ou historique; ces mots n'ont pas d'équivalents exacts dans d'autres langages" (Влахов, Флорин 1980:343).

Diederik Grit, traducteur néerlandais, dans son article "De vertaling van realia" précise ce qu'il entend par le terme realia, présente ses réflexions sur leur traduction et propose des stratégies. Selon D.Grit les realia sont les notions catégorielles ou les phénomènes concrets qui sont particuliers pour un certain pays ou certaines cultures et qui n'ont aucun équivalent ou ont un équivalent partiel, ainsi que les termes qui sont utilisés pour ces notions et phénomènes (Grit 2004:189).

Selon Ritva Leppihalme, professeur à l'Université de Helsinki, "... les realia sont des éléments lexicaux (mots ou phrases) qui se réfèrent au monde en dehors du langage" (Leppihalme 2001:139-148).

Le dictionnaire Larousse propose une définition aussi simple que vaste des realia. "Les realia sont des unités lexicales qui désignent une réalité particulière à telle ou telle culture" (Larousse : 15.09).

D'autres translatoques, comme V. Koller, E. Markstein, I. Fedenco utilisent le mot *realia* pour désigner des choses ou concepts spécifiques à une culture source.

Dans le Trésor de la langue française nous trouvons une citation d'Alain Rey qui définit les realia comme "Objets existants du monde perçus ou considérés indépendamment de leur relation avec le signe (Rey 1979)".

L'analyse des définitions précitées des realia nous permet de constater le fait qu'elles se distinguent par leur originalité, par une qualité qui leur est intrinsèque et par le référent culturel auquel elles renvoient.

Il existe plusieurs types de classifications des realia. En tant qu'unités de traduction, les realia sont divisées en:

- abréviation: HEMA, l'UMP, MiG;
- mots: une livre, un lavache, un moujik, une carpette;
- groupe de mots: Aller à Canossa, Maison Blanche;
- proposition: Octobre est bon s'il est de saison. On ne va pas à Toula avec son samovar.

Ayant étudié, synthétisé et complété les classifications sémantiques des realia présentées par les linguistes précités, nous proposons la classification suivante.

- Géographie physique: oasis, taïga, step ;
- Météorologie: cyclone, Mousson, el Niño est La Niña, Simoun;
- Espèces endémiques:
 - animale : kangourou, panda, lémurien ;
 - végétale : banane, mangue, cyprès ;
- Toponymie: Ararat, Niagara, Paris, Hawaii, Djermuk ;
- Vie quotidienne et vêtements : cigare, ninas, sauna, henné, narguilé, sari, sombrero, kimono ;
- Gastronomie:
 - nourriture : lavache, basturma, camembert, croissant, pizza
 - boisson : absinthe, cocktail, cognac, calvados, Cinzano,
- Religion : synagogue, rabbin, brahmane, gallicanisme, haram,
- Habitats et constructions: rotonde, véranda, mansarde, minaret ;

- Art et artisanat: balalayka, rondo, barde, kamancha, kanon, doudouk, ikebana,
- Caractérisations ethniques : Boche, gringo, yankee,
- Unités de mesure et devises : dinar, dollar, dram, kopek, piastre, rouble, lire, euro, luma, arshin, pied, mille, yard,
- Moyens de transports: gondole, galère, canoë, caravelle, Boeing,
- Divisions administratives et territoriales: arrondissement, canton, district, vilayet,
- Organes, fonctions et titres : forum, Douma, sultanat, congrès, calife, sultan, khan, tsar, pharaon, doge, lord, vizir, satrape, chancelier, mayor, junta, sheriff, ataman,
- Realia historiques: bolchevik, carbonari, jacobisme, janissaire, pandacte, péronisme, samouraï,
- Realia militaires: yatagan, machette, bolas, fedayin, colt, légion, horde, carabine, katyusha, général, commando, P 38,
- Notions institutionnelles et publiques: Peugeot, Renault, Fiat, Carrefour, City.

Dans le processus de traduction, on rapproche non seulement deux langues, mais aussi deux cultures différentes parfois très proches, parfois très éloignées. Le problème posé par la traduction des realia représente un moment important de médiation et de compréhension entre cultures. Le traducteur dont le but est de transmettre la réalité culturelle et d'atteindre l'effet de la langue de départ dans la langue cible, est très souvent obligé d'explicitement toutes sortes d'aspects implicites. La stratégie choisie par le traducteur doit avoir pour but de respecter la culture source et de la transmettre à la langue cible. Donc, il faudrait que le traducteur connaisse à fond les différences existant entre les deux cultures pour les présenter de façon que le lecteur de la culture cible soit capable de décoder le message.

Il y a deux points de vue sur la "traduction des realia". L.N. Sobolev trouve les realia d'habitude intraduisibles (Соболев 1955:290). I. Léviy les classe sur la liste des crucez translatorum, c'est-à-dire des souffrances de la croix des traducteurs (Левый 1974:149).

Le deuxième point de vue affirme qu'il n'y a aucun mot intraduisible, au moins d'une façon descriptive, "et ce qui est impossible à propos de l'élément à part, est possible à propos de toute union complexe". C'est pourquoi la question finale qui se pose n'est pas de savoir si la réalité peut être traduite ou non mais comment la traduire. Comment traduire les realia? (Федоров 1983:182).

Et puisque, les realia se réfèrent d'abord à des objets et non aux mots qu'elles désignent, leur transmission nécessite une approche spéciale.

Une des différences importantes entre deux cultures est la conception qu'on a du monde. Wilhelm von Humboldt a déjà constaté au XVIII^e siècle que la langue crée en fait une certaine perspective entre le regard et ce qu'on voit. La conception qu'on a du monde est donc dans un certain sens prédéterminée par la langue. Par conséquent les gens n'aperçoivent pas ce qu'ils ne savent pas nommer, ils distinguent seulement ce qui est connu dans leur langue. De cette façon, la conception du monde diffère d'une culture à l'autre. Le problème qui surgit, c'est la difficulté, voire l'impossibilité de traduire ces différents concepts, ces différentes visions du monde, un mot désignant un concept qui est inconnu dans la langue cible.

L'obstacle le plus important dans la traduction des realia est la transformation de l'audience culturelle inconnue, par conséquent les textes conditionnés des facteurs ethnoculturels peuvent être inconcevables, incompréhensibles pour les autres destinataires de l'énoncé. La mission du traducteur est de franchir les difficultés culturelles en menant une étude profonde entre les deux cultures, de trouver les meilleures possibilités et d'utiliser les meilleures versions de la traduction. Dans leur livre "L'intraduisible dans la traduction" S.Vlahov et S.Florin concluent que les realia peuvent être catégorisés sur la base de paramètres de type d'objet, d'endroit d'objet et de temps d'objet.

La stratégie du traducteur repose sur les bons choix dans l'oblique de l'interprétation des composants comme la notion émotionnelle et évaluative des situations de la langue d'arrivée et de départ.

Chaque traducteur a sa propre stratégie: l'un préfère la traduction libre, adapte les mots au texte cible en choisissant des mots connus, des "naturalismes", autrement dit il rend le texte plus accessible au lecteur, en le rapprochant de l'univers de celui-ci, et l'autre préfère une traduction plus littérale, il crée souvent des mots inconnus, des "exotismes". D'une part, le traducteur décide lui-même s'il préfère la traduction qui semble un texte original dans le cas où il choisit des termes connus ou s'il veut apprendre quelque chose d'une autre culture à ses lecteurs en maintenant les termes moins connus ou même inconnus. Parfois le traducteur est instruit par un éditeur qui détermine si le texte doit être traduit littéralement ou plus librement.

Pour assurer la meilleure traduction des realia, tout d'abord il est nécessaire de considérer les trois facteurs suivants: le type de texte, le but du texte, le groupe cible.

Le type de texte: Les différents types de texte demandent une stratégie différente. Par exemple, la traduction d'un texte littéraire est très différente d'un texte commercial.

Le but du texte: Le traducteur doit être conscient du but du texte. Il peut traduire le texte d'une façon naturalisante, ce qui veut dire l'adaptation des éléments étrangers à la langue cible, ou d'une façon exotisante, ce qui veut dire l'adaptation de la langue cible aux éléments étrangers. Donc il doit garder l'équilibre entre la conservation de l'étrangéité et "l'acclimatation à la langue et la culture d'arrivée" (Ballard 2001: 117).

Le groupe cible: On peut distinguer trois types de groupe cible: les profanes absolus, les lecteurs intéressés possédant une connaissance préalable et les experts (Toury 1995). Sur la base d'un groupe cible le traducteur peut choisir sa stratégie en tenant compte du niveau de compréhension du lecteur.

Plusieurs méthodes qui vont de la transcription phonétique à la traduction du sens général des realia sont proposées par différents linguistes.

Gideon Toury, professeur à l'Université de Tel-Aviv, propose les solutions suivantes au problème en question: "transcription du mot", "création d'un nouveau mot", "utilisation d'un mot de la langue source", "explicitation du terme", "substitution d'un mot source par un terme similaire dans la langue cible", "substitution d'un mot par un terme générique ou international", "ajout d'un adjectif", "traduction du sens général". Diederik Grit, traducteur néerlandais propose un certain nombre de stratégies, "procédés" pour la traduction des realia :

"maintien" (handhaving), "calque" (leenvertaling), "approximation" (benadering), "description" ou "définition" (omschrijving of definiëring), "traduction de l'essence" (kernvertaling), "adaptation" (adaptatie), combinaisons de stratégies de traduction. Certaines de ses catégories ressemblent à celles proposées par G. Toury. Les procédés proposés par J.-P. Vinay et J. Darbelnet sont les suivants: "emprunt", "calque", "traduction littérale", "transposition", "modulation", "équivalence", "adaptation".

Parfois la même stratégie de la transmission des realia est appelée différemment par différents linguistes. Par exemple J.-P. Vinay et J. Darbelnet emploient le terme "emprunt" (Vinay et Darbelnet 1958:47) dans le cas où B. Svane préfère "transfert" (Darbelnet 1998:98).

En prenant en considération les stratégies proposées, sur une base individuelle, ainsi que la dénotation et la connotation éventuelle des unités de traduction, nous trouvons possibles les stratégies suivantes:

1. *Le maintien, emprunt* (translittération ou transcription): le terme de la langue source est conservé dans le texte cible et adaptée du point de vue phonétique, orthographique ou morphologique au public cible,
2. *Le calque* : création d'un mot nouveau sous une forme traduite,
3. *La création d'un mot nouveau*, analogue à l'original, mais qui possède une consonance plus locale,
4. *La description ou la définition* : cette stratégie consiste à donner une brève explication des realia,
5. *L'ajout d'un mot nouveau* : le traducteur recourt à un mot nouveau pour présenter le mieux le sens du champ sémantique,
6. *La traduction du sens général*,
7. *La généralisation* est utilisée quand l'élément culturel se compose de plusieurs éléments et le traducteur ne traduit pas tous les composants sémantiques,
8. *L'approximation, l'adaptation* : consiste à remplacer le mot source, mot culturel par un mot proche, quasi équivalent de la langue d'arrivée,
9. *La traduction de l'essence* : il est possible de recourir à un hyperonyme ou à un terme générique, si seul un aspect du realia est important pour le lecteur cible,
10. *L'omission (la suppression)* est appliquée assez rarement, lorsque la dénotation du terme n'est pas pertinente pour le lecteur cible.

Les stratégies que nous avons examinées sont partagées en deux groupes: celles qui visent à préserver l'étrangéité et comme dit M. Ballard celles qui visent à conserver "l'acclimatation à la langue et à la culture d'arrivées" (Ballard 2001:117). Toutes ces stratégies offrent une couverture assez complète, mais elles ne couvrent pas toutes les possibilités de transmission, de traduction des realia. Elles ne sont pas sans problèmes. Le traducteur est souvent obligé de combiner différentes stratégies pour atteindre la meilleure traduction.

L'examen des différentes définitions du terme realia et des stratégies proposées de leur traduction nous permet de présenter notre définition à ce terme qui nous paraît plus ample, regroupant les caractéristiques pertinentes proposées par les linguistes précités:

Les realia sont des mots et des groupes de mots qui désignent des phénomènes, des éléments de la vie quotidienne, de l'histoire, de la culture, des traditions reflétant le coloris national d'un peuple donné, d'un pays, d'un endroit qui n'existent pas ailleurs et qui sont inconnus, parfois étranges pour d'autres peuples.

RÉFÉRENCES

1. Ballard M. Le nom propre en traduction. Paris: Ophrys, 2001.
2. Farina A. Les "Realia francophones" dans les dictionnaires : le modèle d'une traduction exotisante, Consulté à l'adresse <https://www.cairn.info/revue-ela-2011-4-page-465.htm>
3. Vinay, J.P. et Darbelnet J. Stylistique comparée du français et de l'anglais, Paris, Didier, 1972.
4. Grit D. "De vertaling van realia", Consulté à l'adresse <https://www.tijdschrift-filter.nl/jaargangen/1997/44/de-vertaling-van-realia-42-48.aspx>
5. Koller W. coll. Kjetil Berg Henjum: Einführung in die Übersetzungswissenschaft. 8^e édition Tübingen/Basel: Narr Francke Attempto, 2011.
6. Leppihalme R. Translation strategies for realia. Helsinki: Helsinki University Press. 2001.
7. Markstein E. Realia, dans: Handbuch Translation, éd. Mary Snell Hornby / Hans G. Hönlig Paul Kussmaul/Peter A. Schmitt, 2^e éd., Tübingen: Stauffenburg 1999.
8. Toury G. Descriptive Translation Studies and Beyond. Amsterdam, Philadelphia, John Benjamins, 1995.
9. Влахов С., Флорин С. Непереводимое в переводе. М., Высшая школа, 1980.
10. Левый И. Искусство перевода, М., Прогресс, 1974.
11. Соболев Л. Н. О переводе образа образом // Вопросы художественного перевода. М., 1955.
12. Федоров А. В. Основы общей теории перевода, М: Высшая школа, 1983.
13. <https://www.tijdschrift-filter.nl/jaargangen/1997/44/de-vertaling-van-realia-42-48.aspx>
14. <https://www.erudit.org/fr/revues/meta/2008-v53-n4-meta2550/019646ar.pdf>
15. <https://www.cairn.info/revue-ela-2011-4-page-465.htm?fbclid=IwAR0tTn7JuPG1tDErII36LLlu9NMWJ-RocGWzCm6LGU6ndnEuNPDgtI9gs2g#no51>

16. https://books.google.am/books?id=xaY-HPPsvHcC&pg=PA291&lpg=PA291&dq=markstein+realia&source=bl&ots=EvRrxSLHI8&sig=2FJ1UyUH2DRivoqseNrQ_gF25IU&hl=ru&sa=X&ved=0ahUKEwjb9MPrtP_aAhWyxKYKHVMvAokQ6AEIKzAB#v=onepage&q=realia&f=false
17. <https://www.larousse.fr/dictionnaires/francais/realia/66824?q=realia#66078>
18. https://gupea.ub.gu.se/bitstream/2077/32664/1/gupea_2077_32664_1.pdf

REFERENCES

1. Ballard M. Le nom propre en traduction. Paris: Ophrys, 2001.
2. Farina A. Les "Realia francophones" dans les dictionnaires : le modèle d'une traduction exotisante, Consulté à l'adresse <https://www.cairn.info/revue-ela-2011-4-page-465.htm>
3. Vinay, J.P. et Darbelnet J. Stylistique comparée du français et de l'anglais, Paris, Didier, 1972.
4. Grit D. "De vertaling van realia", Consulté à l'adresse <https://www.tijdschrift-filter.nl/jaargangen/1997/44/de-vertaling-van-real-42-48.aspx>
5. Koller W. coll. Kjetil Berg Henjum: Einführung in die Übersetzungswissenschaft. 8e édition Tübingen/Basel: Narr Francke Attempto, 2011.
6. Leppihalme R. Translation strategies for realia. Helsinki: Helsinki University Press. 2001.
7. Markstein E. Realia, dans: Handbuch Translation, éd. Mary Snell Hornby / Hans G. Hönlig Paul Kussmaul/Peter A. Schmitt, 2e éd., Tübingen: Stauffenburg 1999.
8. Toury G. Descriptive Translation Studies and Beyond. Amsterdam, Philadelphia, John Benjamins, 1995.
9. Vlahov S., Florin S. Neperevodimoe v perevode. M., Vysshaja shkola, 1980.
10. Levij I. Iskusstvo perevoda, M., Progress, 1974.

11. Sobolev L. N. O perevode obraza obrazom // Voprosy hudozhestvennogo perevoda. M., 1955.
12. Fedorov A. V. Osnovy obshhej teorii perevoda, M: Vysshaja shkola, 1983.
13. <https://www.tijdschrift-filter.nl/jaargangen/1997/44/de-vertaling-van-realia-42-48.aspx>
14. <https://www.erudit.org/fr/revues/meta/2008-v53-n4-meta2550/019646ar.pdf>
15. <https://www.cairn.info/revue-ela-2011-4-page-465.htm?fbclid=IwAR0tTn7JuPG1tDErII36LLlu9NMWJ-RocGWzCm6LGU6ndnEuNPDgtI9gs2g#no51>
16. https://books.google.am/books?id=xaY-HPPsvHcC&pg=PA291&lpg=PA291&dq=markstein+realia&source=bl&ots=EvRrxSLHI8&sig=2FJ1UyUH2DRivoqseNrQ_gF25IU&hl=ru&sa=X&ved=0ahUKEwjb9MPrtP_aAhWyxKYKHVMvAokQ6AEIKzAB#v=onepage&q=realia&f=false
17. <https://www.larousse.fr/dictionnaires/francais/realia/66824?q=realia#66078>
18. https://gupea.ub.gu.se/bitstream/2077/32664/1/gupea_207732664_1.pdf

**ԱՍՏԴԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ - ԻՐՈՒՅԹՆԵՐԻ (ՌԵԱԼԻԱՆԵՐԻ) ԽՆԴԻՐԸ.
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԼԵԶՎԱՓՈԽԱԴՐՈՒՄ**

Հիմնաբառեր՝ իրույթ, թարգմանություն, թիրախ լեզու, սկզբնաղբյուր լեզու, տեղային երանգավորում, մշակույթ, ռազմավարություն, դասակարգում

Յուրաքանչյուր լեզվին հատուկ այն բառերը, արտահայտություններն ու բառակապակցությունները, որոնք ներկայացնում են տվյալ ժողովրդի կյանքը, կենցաղը, պատմությունն ու մշակույթը և կոչվում են իրույթներ, չունեն իրենց հստակ համարժեքները այլ լեզուներում, իսկ վերջիններիս թարգմանությունը կամ ավելի ճիշտ՝ փոխանցումը մեկ այլ լեզու՝ շարունակում է մնալ մերօրյա առանցքային խնդիրներից մեկը: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել իրույթների վերաբերյալ մի շարք մոտեցումներ, տարբեր լեզվաբան-թարգմանիչների կողմից առաջարկված ռազմավարություններ և

առաջարկել մեր մոտեցումը իրոյթների սահմանման ու դասակարգման խնդրում:

АСТХИК МАРГАРЯН - ПРОБЛЕМА РЕАЛИЙ: КЛАССИФИКАЦИЯ И ПЕРЕВОД, ПЕРЕДАЧА

Ключевые слова: *реалия, перевод, переводческая стратегия, классификация, исходный язык, язык перевода, культура, местный колорит*

Слова, словосочетания и выражения, присущие разговорному языку определенного народа, которые представляют его быт, историю и культуру и которые непонятны другим, в переводоведении называются реалиями. Эти слова не имеют своих четких эквивалентов в других языках, а их перевод, или точнее передача, остается одним из стержневых задач настоящего времени.

Цель данной статьи - изучение ряда подходов и стратегий относительно реалий, предложенных различными лингвистами-переводчиками, а также попытка предложить собственную дефиницию реалий и их классификацию.

ASTGHİK MARGARYAN - THE PROBLEM OF REALIA: CLASIFICATION AND TRANSMISSION

Keywords: *realia, translation, classification, source language, target language, local color, strategy, popular culture.*

The words and expressions of the language especially in the colloquial language represent denominations of objects, concepts, phenomena typical of a given geographical location, material life or the historical and social particularities of certain people, nations, countries and tribes. For this reason they illustrate national, local or historical context color. These lexical units, called realia, culturemes, do not have exact equivalents in other languages and their translation or transmission is still challenging.

The aim of the article is to study several approaches to realias, some strategies suggested by various linguist-translators and to introduce our own approach to the definition and classification of realias.

Ներկայացվել է՝ 01.10.2019

Գրախոսվել է՝ 04.09.2019

**Երաշխավորվել է ԵՊԼՀ Ռոմանական
լեզուների ամբիոնի կողմից՝ 06.09.2019**

**ԱՐՎԵՍՏԻ ԵԶՐԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ արվեստի եզր, ձևույթ, փոխառություն, ծագումնաբանություն, ստուգաբանություն, համադրական բաղադրություն, նախահոռմեական շրջան, դասական լեզուներ, հնդեվրոպական շրջան, վաղնջահայերեն

Սույն հոդվածը նպատակ ունի վերհանել իտալերենի և հայերենի՝ արվեստի բառապաշարում տեղ գտած եզրերի ստուգաբանությունը և ծագումնաբանությունը՝ հիմնվելով իտալացի և հայ լեզվաբանների տեսական մոտեցումների, ինչպես նաև՝ ծագումնաբանական բառարանների նյութի վրա: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է երկու մշակույթներում արվեստի ունեցած դերով ու կարևորությամբ, ինչպես նաև՝ նրանց մասնագիտական լեզուների կիրառման առանձնահատկություններով: Աշխատանքի նորույթն այն է, որ արվեստի եզրերը, երկու լեզուների միջև, ծագումնաբանական և ստուգաբանական տեսանկյունից առաջին անգամ են ենթարկվում զուգադրական ուսումնասիրության: Հետազոտությունն իրականացվել է տարաժամանակյա պլանում: Ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են վերլուծության և համադրության, իսկ լեզվաբանականներից՝ նկարագրության, և բաղադրիչային մեթոդները:

Լեզվի բառապաշարի գոյացման համար անհրաժեշտ են մի շարք գործոններ, որոնցից հարկ է նշել նախ և առաջ ժամանակայինը, այնուհետև նրա միավորների հաստատման համար՝ տարածականը, գործածման անհրաժեշտությունը և այլն: Սա նշանակում է, որ արվեստի բառապաշարի գոյացման, զարգացման և հարստացման համար նույնպես անհրաժեշտ են եղել որոշ նախադրյալներ և արդեն կայացած լեզու՝ օժտված վերջինիս հարստացմանը նպաստող բոլոր անհրաժեշտ հնարներով:

Իտալացի հանրալեզվաբան Ա. Սոբրերոյի կողմից հատուկ ուղրտի լեզուների մասին նշված առանձնահատկություններից մի քանիսը վերաբերում են բառապաշարին: Գլխավոր խնդիրը գիտության, արվեստի առարկաներն ու հասկացությունները աներկբա ձևով անվանելն է:

Ըստ Ա. Սոբրերոյի՝ տերմինապաշարի հարստացման համար կիրառվող գործընթացները չորսն են.

1. «Դիմել օտար լեզուների՝ գործածելով չհարմարեցված փոխառություններ կամ պարճենումներ,

2. Կազմվում են նորաբանություններ բառակազմական բոլոր միջոցների կիրառությամբ: Ամենապարածվածը ածանցումն է, որին պայմանականորեն վերագրվում են որոշակի նշանակություններ: Այդ տերմինաբանական ածանցյալներն իրենց հերթին օժտված են հետևյալ առանձնահատկություններով.

ա. պահանջում են փոքր թվով կայուն բառակապակցություններ,

բ. սրբեղծում են կարարյալ թափանցիկ եզրեր,

գ. սրբեղծում են բաց դասեր նորակազմությունների համար:

Նորաբանությունների սրբեղծման մյուս միջոցն էլ երկու եզրերի հարադրությունն է, սովորաբար՝ երկու գոյականների: Երբեմն այդ միացությունը վերածվում է միաձուլման:

1. Իբրև գիտական եզր գործածվում են ընդհանուր լեզվից վերցված բառեր:

2. Կազմվում են հապավումներ և համառոտագրություններ» (Sobrero 1993:247):

Սակայն, ինչպես նկատվեց երկու լեզուների բառապաշարային, հատկապես փոխառություններին (մասնավորապես կատարված դասական լեզուներից) առնչվող ուսումնասիրության ընթացքում, օտար եզրերը, այնուամենայնիվ, պարզաբանման, մեկնաբանման կարիք ունեն: Հայտնի է, որ նման հետազոտություններ կատարում են լեզվաբանական ծագումնաբանություն և սրուգաբանություն բաժինները, որոնց նպատակը ըմբռնելու համար դիմենք երկու լեզուներում այդ եզրերի սահմանումներին:

Այսպես՝ ծագումնաբանություն եզրը, որն իտալերենում *etimologia*-ն է, ժառանգվել է 1617 թ. լատիներենից՝ *etymolōgia/m*/, որն իր հերթին փոխառվել է հունարենից՝ *ἐτυμολογία*, XIII դարում, որոնք համադրական բաղադրություններ են՝ կազմված լատիներենի *etimo/n*/, հունարենի՝ *ἔτυμον* գոյականից: Վերջինս իր հերթին կազմվել է *étymos* ածականի հիման վրա, որը նշանակում է՝ *ճշմարիտ* և *-λογία* իտալերեն՝ *-logia* արմատներից (վերջինս ծագել է հունարենից 13-րդ դարում և ըստ Դևոտոյի և Օլիի «*Իտալերենի բացառական բառարանի*» սահմանման՝ երկիմաստ բառ է և կարող է նշանակել *միտք* և *խոսք*, մինչդեռ ըստ Դե Մաուրոյի և Մանչինիի «*Ծագումնաբանական բառարանի*»՝ նշանակում է *պարբերական ուսումնասիրություն, ուսմունք*)(De Mauro, Mancini 2000):

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» «ծագումնաբանություն» բառի մի շարք սահմանումներից երկրորդը՝ ամենաընդհանուրը, կարելի է տարածել նաև լեզվի միավորների ծագումնաբանության վրա. «Որևէ երևույթի, որևէ բանի կազմավորման պատմությունը»: «Ստուգաբանություն» եզրի մասին հեղինակը նույն տեղում նշում է. «1. լեզվաբանության մի բաժինը, որն ուսումնասիրում է բառերի, ձևույթների ու քերականական ձևերի ծագումն ու պատմությունը, ինչպես նաև լեզվաբանական միավորների նախնական իմաստներն ու դրանց զարգացումը: 4. Լեզվական այս կամ այն միավորի ծագման ու պատմության մեկնաբանություն»:

Իտալերենի և հայերենի արվեստի բառապաշարներում տեղ գտած որոշ փոխառված եզրերի ստուգաբանական ուսումնասիրության արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

այսպես, իտալերենի՝ դասական լեզուներից արված փոխառություններից *figura* «պատկեր», «քանդակ», «ֆիգուրա» բառը ծագել է լատիներենի *figura/m/* գոյականից, որն իր հերթին կազմվել է *figĕre* բայից (12-րդ դարի երկրորդ կեսին), որը նշանակել է *ծեփել, քանդակել* (De Mauro, Mancini 2000:759):

Medaglia «մեդալիոն» բառը ծագել է ուշ միջնադարյան շրջանի լատիներենի *“medialis”* բառից, որը նշանակել է, որ *գտնվում է ինչ-որ բաների միջև* (1278թ.) (De Mauro, Mancini 2000:1196):

Scala «սանդուղք» եզրի ծագումը նույնպես վերագրվում է լատիներենի ուշ՝ միջնադարյան շրջանին (13-րդ դարի վերջ), որը ծագել է *scandĕre* «բարձրանալ» բառից: Հետաքրքրականն այն է, որ նույն արմատով *scendere* բայը ժամանակակից իտալերենում նշանակում է ոչ թե *բարձրանալ*, այլ ընդհակառակը՝ *իջնել*: Նույն բառի ածանցյալ *scalata*՝ «աստիճանաշարք» բառը կրկին ծագել է լատիներենի՝ *scalāre* բառից, սակայն ավելի ուշ՝ 1521թվականին (De Mauro, Mancini 2000:1858):

Strada «ճանապարհ», «փողոց» բառը ևս ծագել է լատիներենից, որտեղ այն ունեցել է *strata/m/* ձևը: Այն կազմվել է 1211թ. *sternĕre* բայից, որը նշանակում է *սալարկել, սափկապատել* (De Mauro, Mancini 2000:2074):

Paladino «արքունական պալատ» բառը ծագել է միջնադարյան լատիներենի *palatinu/m/* բառից՝ 13-րդ դարում (De Mauro, Mancini 2000:1431):

Architetto կամ *architĕtto* «ճարտարապետ» բառը ծագել է լատիներենի *architectu/m/*, իսկ վերջինս՝ հունարենի *arkitecton* բառից (1374թ.) (De Mauro, Mancini 2000:138): Այն կազմված է *arki* բառից, որը նշանակում է *բարձր աստիճան, մակարդակ*, և *tekton* բառից, որը

նշանակում է *kyannignn, zhınարար* (նախկինում՝ լատ. *architectus*, իսկ հուն.՝ *ἀρχιτέκτων*):

Colore «գույն», «երանգ» բառը ծագել է 1237 թվականին լատիներենի *colore/m/* գոյականից, որը կազմվել է *celare* բայից, որը նշանակում է՝ *թաքցնել* (De Mauro, Mancini 2000:434): Հետագայում ածանցվել են *colorare* «ներկել» բայը (1294թ.) (De Mauro, Mancini 2000:434) և *colorazione* «ներկում» գոյականները (1406թ.) (De Mauro, Mancini 2000:434):

Օտար այլ լեզուներից արված փոխառությունների ստուգաբանման կապակցությամբ բերենք մի քանի օրինակ: Այսպես՝ *galleria* 1.«թունել», 2.«պատկերասրահ» նշանակող գոյականը փոխառություն է ֆրանսերենից (1316թ.), որտեղ ունի *galerie* ձևը (De Mauro, Mancini 2000:823):

Baracca «տնակ», «հյուղակ» գոյականն ունի նախահռոմեական շրջանի ծագում, սակայն իտալերենն այն փոխառել է 1569թ. իսպաներենից (իսպ.՝ *barraca*), որը նշանակում է «հյուղակ» (De Mauro, Mancini 2000:208):

Sala եզրը ծագել է 13-րդ դարում լոնգոբարդների *sala* «սրահ» բառից, որը ժամանակակից գերմաներենում ունի *Saal* ձևը (De Mauro, Mancini 2000:1828) և նշանակում է «սրահ», «լսարան»:

Balcone «պատշգամբ» բառը նույնպես ծագել է լոնգոբարդների լեզվից (1312թ.), որտեղ եղել է *balko*, ինչը նշանակել է *գերան* (De Mauro, Mancini 2000:202):

Baldacchino «եկեղեցու խորանի՝ ծածկ ունեցող սյունազարդ ճարտարապետական կառույց» կոչվող եզրը վերցված է Տոսկանայի բարբառից, որտեղ Բադդադն ունի *Baldacco* անվանումը, որին ավելանալով *-ino* փոքրացուցիչ մասնիկը՝ կազմվել է եզրը (1363թ.) (De Mauro, Mancini 2000:202): Ճարտարապետական տարրի ծածկը երբեմն լինում էր Բադդադում արտադրվող քաթանից, որից էլ ծագել է կառույցի անվանումը:

Հայերենի բառապաշարի ծագումնաբանական դասակարգման մասին հանգամանորեն խոսել է Հր. Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարան»-ում, որտեղ տեղ գտած արվեստի որոշ եզրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ա) *առաստիտ* եզրը բնիկ հայերեն բառ է, ծագել է *stel* «դնել, զետեղել, կանգնեցնել, հենարան» արմատից և *առ-* մասնիկից (Աճառյան 1926:254), բ) *բերդ* եզրը փոխառություն է ասորերենի *bi-ir-tu* «բերդ, ամրոց» բառից, ծագել է իրանյան *bardi* «բարձունք» բառից, որն ունի երկու ձև՝ «բարդ» և «բերդ» (Աճառյան 1926:442), գ) *երդ-երդիք* եզրը, «տանիքի լուսամուտ, երդիք», ըստ Հ.

Աճառյանի, փոխառություն է վրացերենի *երդո* «տափակ տանիք կամ կտուր, նավի տախտակամած» բառից: Պատահական նմանություն ունի լատիներենի *atrium* «հռոմեական տան գլխավոր սենյակ» բառի հետ, որի կտուրի մեջտեղում գտնվում էր երդիք. համարվում է *atr* «մուր» բառից ածանցված (եթե իհարկե էթրուսկերեն բառից չէ) (Աճառյան 1926:44), դ) *թակ*, *թակաղակ*, «փայտի վրա աշխատել, տաշել» արմատից: Ունի նաև «միս ծեծելու հատուկ կոճ» նշանակություն, որից փոխաբերաբար առաջացել է «սյունագլխի ամենավերի խորանարդ քարը» իմաստը, ինչպես և ֆրանսերենում է *tailloir* (Աճառյան 1926:142), ե) *հրապարակ*, «ընդարձակ տեղ քաղաքում, արձակավայր», փոխառություն է վրացերենի *ուրակպարակի* «հրապարակ» բառից, իսկ *լապարակի* «խոսակցություն, խոսք»՝ իբր «հրապարակում», հրապարակն ըմբռնելով իբրև «խոսելավայր» (Աճառյան 1926:132), զ) *որմ*, «պատ». պատահական նմանություն ունի ասորերենի *arammu* «պատ, պատնեշ» բառի հետ, որ թերևս ավելի շուտ *բաբան* է նշանակում (Աճառյան 1926:583), է) *քաղաք*, վրացերեն *քալաքի* «քաղաք» բառից: Հետագայում դարձել է Ասորեստանի մայրաքաղաքի անունը՝ *Kalak* (Աճառյան 1926:543): Բուն նշանակությունն է *բարձունք* կամ *ամրություն*: (Աճառյան 1926)

Է. Աղայանն իր «*Ընդհանուր և հայկական բառագիտություն*» աշխատության մեջ նշում է. «բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը բառերի խմբավորումն է ըստ այն աղբյուրների, որոնց նրանք պատկանել կամ պատկանում են և որոնցից մուտք են գործել աշխարհաբար գրական լեզվի բառային կազմի մեջ» (Աղայան 1984:119):

Բառապաշարի հիմնաշերտի մասին խոսելիս Գ. Զահուկյանը նկատում է. «*Վաղնջահայերենի բառապաշարի միջուկը կազմել են հնդեվրոպական շրջանից ժառանգած բառերը, որոնց թեմատիկ խմբերը բերվել են հայերենի տարածքային բնութագիրը տալու կապակցությամբ: Բացի արմատական կամ իբրև այդպիսիներ գիտակցված բառերից, վաղնջահայերենի բառապաշարի մեջ մտել են նաև մեծ թվով վերջածանցավոր և նախածանցավոր, բարդ ու կրկնավոր նորակազմություններ*» (Զահուկյան 1987:257-258, 261-262): Այնուհետև հեղինակն առաջ է քաշում այն դրույթը, որ բոլոր լեզուների բառապաշարը բաժանվում է երկու հիմնական շերտի՝ մշակութային առումով համեմատաբար չեզոք և մշակութաքաղաքակրթական արժեք ներկայացնող բառեր: Երկրորդ կարգի բառերը, ըստ լեզվաբանի, ընտանեկան հարաբերությունների, տնտեսական, քաղաքական և հոգևոր մշակույթի անուններն են:

Իտալերենի արվեստի եզրերի ընկալման առումով անհրաժեշտ է ստուգաբանական վերլուծություն կատարելը, քանի որ ռոմանական լեզուներում կրկնվող հիմքերը և երկրորդական բառակազմական ձևայինները կարող են դյուրին դարձնել եզրի նշանակության ընկալումը, մինչդեռ հայերենին կարող է օգնել միայն հնդեվրոպական արմատների ստուգաբանական վերլուծությունը:

Այսպես՝ հայերենի արվեստի բառապաշարում առկա դասական լեզուներից փոխառված եզրերից *կիոպ* «սրբապատկերախորշ (եկեղեցու պատի մեջ)» եզրը ծագել է լատիներենի *claustru(m)* բառից, որը նշանակում է «փակ տեղ»: Այն իր հերթին ծագել է *claudere* «փակել» բառից (1294թ.) (De Mauro, Mancini 2000:385): Նույն հիմքից է առաջացել նաև *կլաուզուրա* «ճարտարապետական խնդրի լուծման ուրվագիծ» նշանակող եզրը, որը վաղ միջնադարյան լատիներենում ունեցել է *clusura(m)* ձևը (945թ.), իսկ ուշ միջնադարում (1305-06թթ.)՝ *clausura* ձևը (De Mauro, Mancini 2000:386): Իտալերենում *կիոպ* բառին համապատասխանում է *chiostro* ձևը, իսկ *կլաուզուրա* բառին՝ *chiusura*-ն:

Կապելլա «աղոթարահ (կաթոլիկական մատուռ)» եզրը ծագել է միջնադարյան լատիներենի *cappella(m)* բառից, 1297թ.-ին: Այն կազմված է *cappa* «մատուռ» բառից և փոքրացուցիչ *-ella* վերջածանցից (De Mauro, Mancini 2000:325): Իտալերենում այն ունի *cappella* ձևը:

Դիպլեր(-ու) բառը «կրկնապայմանաշար», ծագել է լատիներենի գիտական տերմինաբանության մաս կազմող *diptera* բառից (1521թ.), որն էլ իր հերթին փոխառված է եղել հունարենից՝ *dípteros*: Այն կազմված է *di*, որ նշանակում է *երկու* և *-pteros*, որ նշանակում է *թև*, բառերի համադրումից (De Mauro, Mancini 2000): Իտալերենում այն ունի *dittero* ձևը:

Դեկաստիլ «տասնապյուն շենք» եզրը հունական ծագում ունի՝ *δεκάστυλος*: Այն որպես ճարտարապետական եզր մուտք է գործել տարբեր լեզուների բառապաշար (1758թ.): Կազմված է *δέκα* «տասը» և *στυλος* «պյուն» բաղադրիչներից (De Mauro, Mancini 2000:532): Իտալերենում այն ունի *decastilo* ձևը:

Եվստիլո «պյունաշարավոր տաճար» եզրը ծագել է 1778թ. հունարեն *εὐστυλος* բառից, որը կազմված է *εὖ* ածանցից, որը նշանակում է «լավ», «ճշմարիտ», «իրական» և *στυλος*՝ կրկին «պյուն» արմատից (De Mauro, Mancini 2000:723): Իտալերենում այն ունի *eustilo* ձևը:

Կարիատիդ «կնոջ կերպարանքով պյուն» նշանակող եզրը ծագել է 1617թ. հունարենի *Καρυάτις* -իձոս բառից, որը նշանակել է «աթենացիների կողմից գրավված Կարիե քաղաքի բնակչուհի» (De Mauro, Mancini 2000:334): Իտալերենում այն ունի *cariatide* ձևը:

Այլ օտար լեզուներից կատարված փոխառություններից է *մինարե* եզրը, որի սկզբնաղբյուրը եղել է արաբերենի *manāra* բառը, որը նշանակել է «մզկիթի աշտարակ», «փարոս», ֆրանսերենում՝ *minaret* (1606թ.), որն այնուհետև թուրքերենում հնչյունափոխվել, դարձել է *minare* (1794թ.) (De Mauro, Mancini 2000:1251): Իտալերենի բառապաշար այն մուտք է գործել ֆրանսերենից և ունի *minareto* և *mineré* ձևերը: Չի բացառվում, որ հայերենն այն փոխառած լինի անմիջականորեն թուրքերենից՝ արևմտահայերենի միջոցով:

Մենհիր «մենաքար», եզրը ծագել է ֆրանսերենից, Բրետոնի բարբառից (1834թ.) (De Mauro, Mancini 2000:1209): Այն կազմված է *men* «քար» և *hir* «երկար» բառերից: Իտալերենում նույնպես այն ունի *menhir* ձևը:

Այսպիսով, վերլուծության արդյունքում պարզվեց, որ իտալերենի արվեստի տերմինապաշար մուտք գործած փոխառություններից մեծ թիվ կազմող լատիներեն և հունարեն եզրերը իտալերենին անցել են կա՛մ անմիջականորեն, կա՛մ հետագայում, ըստ անհրաժեշտության՝ սովորական փոխառությունների ձևով: Դասական լեզուներից փոխառություններ կան նաև հայերենում, որոնք մեծ մասամբ չհարմարեցված են: Երկու լեզուների տերմինապաշարում տեղ են գտել նաև անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից, ռուսերենից, ինչպես նաև իտալերենի և ֆրանսերենի բարբառներից կատարված փոխառություններ: Հայերենում առկա են նաև իտալերենից փոխառված եզրեր: Հայերենի՝ արվեստի բառապաշարի հարստացման միջոցներից առանձնապես արդյունավետ են բառապաշարի հարստացման արտաքին և ներքին ուղիները: Վերջինիս արտաքին փոխառություններից առավել մեծ թիվ են կազմում միջնորդավորվածները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Բ, Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1984. - 371 էջ:
2. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976:
3. Աճառյան Հր., Հայերենի արմատական բառարան, վեցհատորյակ, Երևանի համալսարան, ապակետիպ, N.60, 1960:
4. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, մաս Ա, ԵՊՀ հրատ., Ե., 1970:
5. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, մաս Գ, ԵՊՀ հրատ., Ե. - 1977:
6. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, ԵՊՀ հրատ., Ե., 1983:
7. Խլղաթյան Ֆ. Հ., Ժամանակակից հայոց լեզու, Մաս Ա, «Ձանգակ-97» հրատ., Ե., 2009:
8. Խլղաթյան Ֆ. Հ., Ժամանակակից հայոց լեզու, Մաս Գ, «Ձանգակ-97» հրատ., Ե., 2009:
9. Հացագործյան Զ. Ա., Դարբինյան Ա. Հ., Հովունյան Ն. Գ., Սրվանձոյան Գ. Հ., Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Ե., 1988:
10. Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., Ե., 1987:
11. ARTEMISIA progetti editoriali, Dizionario etimologico Garzanti (edizione aggiornata), Legoprint, Trento, 2007.
12. Avramenko B.I., Sokolskij Ju.A., Dizionario politecnico russo-italiano, «Russo», Mosca, 2000.
13. Avramenko B.I., Dizionario tecnico delle costruzioni italiano-russo e russo-italiano, a cura di Alissanov S.B., Casa editrice “Lingua russa”, Mosca, 1978.
14. Cardona G. R., Introduzione all’etnolinguistica, De Agostini Scuola SpA, Novara, 2006.

15. Dardano M., La formazione delle parole nell'italiano di oggi, Bulzoni Editore, Roma, 1978.
16. De Mauro T., Mancini M., Dizionario etimologico, Garzanti Linguistica, Milano, 2000.
17. Introduzione all'italiano contemporaneo, Variazioni ed usi, a cura di A.A. Sobrero, Editori Laterza, Roma, 1993.
18. Sensini M., Le forme della lingua (Parole, regole e testi), 2, Il lessico, Mondadori Education S.p.A., Milano, 2010.
19. Silvestrini C., Dizionario illustrato plurilingue di arte italiana, Guerra Edizioni, Perugia, 2005.

REFERENCES

1. Aghayan E. B., Y'ndhanowr & haykakan bar'agitowt'yown, EPH hrat., Er&an, 1984. - 371 e'j:
2. Aghayan E. B., Ardi hayereni bacatrakan bar'aran, «Hayastan» hrat., E., 1976:
3. Atwar'yan Hr., Hayereni armatakan bar'aran, vechatoryak, Er&ani hamalsaran, apaketip, N.60, 1960:
4. Asatryan M. E., Jhamanakakic hayoc lezvi d'&abanowt'yan harcer, mas A, EPH hrat., E., 1970:
5. Asatryan M. E., Jhamanakakic hayoc lezvi d'&abanowt'yan harcer, mas G, EPH hrat., E.. – 1977:
6. Asatryan M. E., Jhamanakakic hayoc lezow, D'&abanowt'yown, EPH hrat., E., 1983:
7. Xlghat'yan F. H., Jhamanakakic hayoc lezow, Mas A, «Zangak-97» hrat., E., 2009:
8. Xlghat'yan F. H., Jhamanakakic hayoc lezow, Mas G, «Zangak-97» hrat., E., 2009:
9. Hacagorc'yan Z. A., Darbinyan A. H., Hovownyan N. G., Srvand'tyanG. H., R'ows-hayeren politexnikakan bar'aran, Haykakan sovetakan hanragitarani glxavor xmbagrowt'yown, E., 1988:

10. Jahowkyan G. B., Hayoc lezvi patmowt'yown, Naxagrayin jhamanakashrjan, HSSH Gitowt'yownneri akademiayi hrat., E., 1987:
11. ARTEMISIA progetti editoriali, Dizionario etimologico Garzanti (edizione aggiornata), Legoprint, Trento, 2007.
12. Avramenko B.I., Sokolskij Ju.A., Dizionario politecnico russo-italiano, «Russo», Mosca, 2000.
13. Avramenko B.I., Dizionario tecnico delle costruzioni italiano-russo e russo-italiano, a cura di Alissanov S.B., Casa editrice “Lingua russa”, Mosca, 1978.
14. Cardona G. R., Introduzione all’etnolinguistica, De Agostini Scuola SpA, Novara, 2006.
15. Dardano M., La formazione delle parole nell’italiano di oggi, Bulzoni Editore, Roma, 1978.
16. De Mauro T., Mancini M., Dizionario etimologico, Garzanti Linguistica, Milano, 2000.
17. Introduzione all’italiano contemporaneo, Variazioni ed usi, a cura di A.A. Sobrero, Editori Laterza, Roma, 1993.
18. Sensini M., Le forme della lingua (Parole, regole e testi), 2, Il lessico, Mondadori Education S.p.A., Milano, 2010.
19. Silvestrini C., Dizionario illustrato plurilingue di arte italiana, Guerra Edizioni, Perugia, 2005.

АНАИТ МКРЯН - ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ТЕРМИНОВ ИСКУССТВА В ИТАЛЬЯНСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Ключевые слова: термины искусства, морфема, заимствование, этимология, сложносочиненные термины, предроманский период, классические языки, индоевропейский период, древнеармянский язык

Данная статья преследует цель выявить этимологию и происхождение терминов, нашедших свое место в словаре, относящемся к искусству в вышеуказанных языках, основываясь на теоретических взглядах итальянских и армянских лингвистов, а также на материале этимологических словарей.

Исследование было проведено в диахроническом и этимологическом аспекте, с использованием словарного и аналитического методов. В результате были выявлены период и

источники происхождения данных терминов. В плане итальянского языка на первый план выходят термины, происходящие из латинского и древнегреческого, а в плане армянского – из грабара (древний армянский язык).

ANAHIT MKRYAN - ETYMOLOGICAL CHARACTERISTICS OF ART TERMS IN ITALIAN AND ARMENIAN

Keywords: *art terms, morpheme, borrowings, etimological peculiarities, Pre-Roman period, classical languages, Indo-European period, classical Armenian*

This paper touches upon the etymological peculiarities of some art terms in Italian and Armenian. It is necessary to highlight the fact that this is a diachronic attempt to establish etymological peculiarities of some art terms in Italian and Armenian based on the theories of some famous Armenian and Italian linguists.

Ներկայացվել է՝ 01.10.2019
Գրախոսվել է՝ 30.09.2019

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ
TechWordNet ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻԹ ՄՈՎԱԵՍՅԱՆ
ԼԻԼԻԹ ՀԱԿՈՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ տերմին, տերմինաբանություն, էլեկտրոնային նախագիծ, տվյալների բազա, տերմինային համակարգ, համակարգչային բառակապակցություններ, համակարգչային լեզվաբանություն

Բառապաշարի գործառական դասակարգման մեջ տերմինաբանությունը բնութագրվում է որպես տվյալ լեզվի բառապաշարի գործառական մի մասնաշերտ: Այս դեպքում ելակետը բառերի գործառական բնութագիրն է. բառը գործածվում է գիտության, տեխնիկայի, արվեստի, գյուղատնտեսության, դիվանագիտական հարաբերությունների ու բազմաթիվ այլ գործառությունների կոնկրետ բնագավառում՝ ներկայացնելով դրանց հատուկ հասկացական դաշտը:

Սույն թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում լեզվաբանական ուսումնասիրություններում համակարգչային բազմատեսակ ծրագրային միջոցների, այդ թվում էլեկտրոնային լեզվաբանական նախագծերի ստեղծման և արդյունավետ կիրառման ակնհայտ միտումով: Ուսումնասիրության նպատակն է դիտարկել համակարգչային տերմինաբանության իմաստային և կառուցվածքային առանձնահատկություններն անգլերենում և ներկայացնել դրանց համարժեք հայերեն տարբերակները՝ վերհանելով տվյալ հիմք բառով առկա հնարավոր բառակապակցությունները:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ վերհանել անգլերենում առկա համակարգչային հիմնաբառերը, տալ դրանց իմաստային պատկերը և դուրսբերել այդ հիմք բառերի հայերեն համարժեք տարբերակները, դիտարկել հիմք բառով առկա հնարավոր համակարգչային բառակապակցությունները, ներկայացնել դիտարկման արդյունքներն էլեկտրոնային նախագծի տեսքով:

Տվյալների վերլուծությունն իրականացվել է լեզվաբանական վերլուծության և զննման, զուգադրման, իմաստային բաղադրիչների վերլուծության, քանակական վերլուծության և փորձարկման մեթոդների համապատասխան կիրառմամբ:

Անդրադառնալով համակարգչային տերմինաբանությանը՝ նախ նշենք, որ հայ լեզվաբան Է. Աղայանը լեզվի ամբողջ բառապաշարը տերմինագիտական տեսակետից բաժանում է երեք կարգի.

1. *ոչ տերմինային բառեր*, որոնք տերմինային նշանակություն և գործածություն չունեն, ինչպես՝ *գեղեցիկ, լավ, արագ, գնալ, ուրել, քերել* և այլն,
2. *տերմինային բառեր*, որոնք սովորական կամ ընդհանուր գործածությամբ ու նշանակությամբ բառեր են, բայց միևնույն ժամանակ հենց այդ նշանակությամբ նաև գործածվում են իբրև որևէ բնագավառի տերմին, այսպես, *գումարում*՝ մաթեմատիկայի մեջ, *թերթ*՝ հրատարակչական գործի, գրադարանագիտության, ժուռնալիստիկայի և իրազեկագիտության (ինֆորմատիկայի) մեջ, *բառ*՝ լեզվաբանության, *պատ*՝ ճարտարապետության ու շինարարության, *ծառ*՝ բուսաբանության մեջ և այլն,
3. *տերմիններ*, որոնք միայն տերմինաբանական նշանակություն ունեն, անկախ այն բանից, թե նրանք գործառական տեսակետից մասսայական և առօրեական գործածություն ունեն, թե ոչ, ինչպես՝ *հնչոյթ, արտադրամիջոցներ, երեսակ, հորատանցք, հաղորդակ, կոպար, լոգարիթմ* և այլն (Աղայան 1984:312):

Ինչպես տեսնում ենք, առաջին կարգի բառերը տերմինաբանության հետ կապ չունեն, այսինքն տերմիններ չեն: Երկրորդ և երրորդ կարգի բառերը կարող ենք արդեն իսկ դիտարկել որպես տերմինաբանության միավորներ:

Եթե ընդհանրացնենք Է. Աղայանի՝ լեզվի բառապաշարին վերաբերող վերոնշյալ դիտարկումը, կարելի է ասել, որ երկու կարգերը միմյանցից տարբերակող բնութագիրն այն է, որ *տերմինային բառերը* (2-րդ կարգի բառերը) համընդհանուր գործածություն ունեն և գործառապես չեզոք շերտին են անցել հենց իրենց տերմինային նշանակությամբ, մինչդեռ երրորդ կարգի բառերը՝ *տերմինները*, չեզոք շերտին չեն անցել և սահմանափակվում են միայն տերմինային գործածությամբ՝ գործառության որոշակի ոլորտով:

Հիմք ընդունելով վերը ներկայացված դիտարկումները՝ այժմ փորձենք բնութագրել տերմինային իմաստը և տարբերել այն ոչ տերմինային իմաստից: Ինչպես արդեն նշեցինք, *տերմինի նշանակությունը գիտության, արվեստի, տեխնիկայի, արտադրության, արհեստի, հասարակական-քաղաքական կյանքի և այլնի որևէ բնագավառի հասկացությունն է*, ուստի և հենց այդ էլ կհամարենք տերմինային իմաստի առաջին հիմնական բնութագիրը: Իբրև գիտական (տեխնիկական և այլ) հասկացություն, տերմինի (եզրի) իմաստը

սահմանելի է. *ամեն մի տերմինի իմաստ կարող է ներկայացվել որոշակի գիտական սահմանումով*, և սա էլ տերմինային իմաստի երկրորդ բնութագիրն է:

Վերջապես, տերմինային իմաստի երրորդ բնութագիրն է ճշգրտությունը. իբրև գիտական (տեխնիկական, քաղաքական և այլ) հասկացություն՝ *տերմինի իմաստը ոչ միայն լոկ սահմանելի է, այլև ճշգրտորեն սահմանելի*: Ճշգրտությունը տերմինային իմաստի անհրաժեշտ պահանջն է. ոչ ճշգրիտ հասկացությունը և, հետևաբար, դրա ոչ ճշգրիտ սահմանումը գիտական արժեքից կզրկեր և՛ տերմինը, և՛ տերմինային իմաստը: Կարևոր է այն, որ ճշգրտությունն արտացոլում է գիտության (տեխնիկայի և այլնի) և ընդհանրապես մարդկային ճանաչողության զարգացման այսօրվա մակարդակը (Աղայան 1984:321):

Ըստ ռուս լեզվաբան Ս. Գրինևի՝ տերմինաբանության հիմքն են կազմում՝

- *տերմինը*. բառ կամ բառակապակցություն, որն արտահայտում է գիտության, տեխնիկայի, մշակույթի, հասարակական կյանքի որևէ բնագավառի հասկացություն,
- *տերմինոհոները*. բառեր, որոնք նշանակում են չկարգավորված, ձևավորվող հասկացություններ,
- *նախատերմինները*. բառեր, տերմինների մոդելներ, որոնք ընդունված են և օգտագործվում են որոշ մասնագիտական ոլորտի ներկայացուցիչների կողմից (Гринева 1993:309):

Կարելի է եզրակացնել, որ տերմինը գործունեության որոշակի ոլորտի իմաստայնորեն ճշգրիտ սահմանելի գիտական հասկացություն է:

Մեր կյանքում համակարգչի ի հայտ գալուն պես առաջացան տերմիններ, որոնք պետք է առանձին ուսումնասիրության նյութ դառնային: Վերջին տասնամյակների ընթացքում ականատես ենք դարձել «տերմինաբանական պայթյունի», որի մասին նշում են Վ. Լեյչիկը, Ս. Գրինևը, Բ. Գոլովինը, Ռ. Կոբրինը (1993:300-309):

Համակարգչային տերմինաբանությունը բավականին երիտասարդ է, բայց վերջին տարիներին այն ընդլայնվում է, դառնում ավելի ու ավելի հասանելի բնակչության լայն հատվածների համար: Այսօր յուրաքանչյուր անձ, որն օգտվում է համակարգչից, մասամբ տիրապետում է որոշակի համակարգչային բառապաշարի:

Համակարգչային տերմինաբանությունը համարվում է հատուկ համակարգչային բառապաշարի մասը: Ըստ ռուս լեզվաբան Ն. Կոմլևայի՝ այդ բառապաշարը կոչվում է «համակարգչային լեզու», ինչը նշանակում է «հատուկ լեզու», ու տեխնիկապես կապված է անձնական համակարգիչների արտադրանքի և ծրագրային ապահովման հետ:

Կենտրոնական հասկացությունը, ինչի շուրջ ձևավորվում է այս լեզուն, համակարգիչն է (Комлева 2006:155):

Նշենք, որ երբեմն ամբողջ տերմինաբանությունը նշելու համար օգտագործում են *տերմինային համակարգ* անվանումը: Այն ընդգծում է տերմինաբանության կարևոր մի հատկանիշ, ինչպիսինն է համակարգայնությունը: Տերմինային համակարգը կարող է բաժանված լինել մի քանի տարրերի: Այս դեպքում կարևոր է նշել *տերմինաբանական դաշտ* հասկացությունը (Комлева 2006:167): Համաձայն Ն. Կոմլևայի՝ *տերմինաբանական դաշտը* եզրերի և նրանց տարրերի միջև ստորակարգայնորեն ձևավորված տրամաբանական համակարգ է (Комлева 2006: 170):

Տերմինաբանական դաշտը ձևավորվում և զարգանում է *հիմք* հասկացության շուրջ, ինչը, մեր ուսումնասիրության դեպքում, *համակարգիչն* է: Ամբողջ համակարգչային տերմինաբանությունը կապված է այս հասկացության հետ: Համակարգչի կազմը բաժանվում է սարքերի և ծրագրային ապահովման համակարգերի: Հետևաբար համակարգչային տերմինաբանական դաշտը կարելի է բաժանել երկու տերմինաբանական ենթադաշտերի, որտեղ այդ հասկացությունները սերտորեն կապված են: Ենթադաշտերը ևս կարող են բաժանվել ավելի փոքր դաշտերի. օրինակ՝ ծրագրային ապահովումը կարող է ներկայացված լինել Microsoft կազմակերպության կողմից կամ Linux կազմակերպության կողմից:

Համաձայն Ն. Կոմլևայի՝ առանձնանում են հետևյալ թեմատիկ ուղղությունները, որոնց շնորհիվ զարգանում է համակարգչային տերմինաբանությունը՝

- ընդհանուր տեղեկություն համակարգիչների մասին (պատմություն, արտադրություն, մոդել, նշանակություն),
- սարքային ապահովում (սարք, մոնիտոր, հեռախոս և այլն),
- ծրագրային ապահովում (ստանդարտ ծրագրեր),
- ծրագրավորում (մեծ հնարավորությունների սպեկտր՝ կապված տեղեկության և դրա մշակման հետ),
- համակարգչային ծրագիր (հաշվարկային գործողություններ և խնդիրների լուծում համակարգչի միջոցով),
- համակարգչային տեխնոլոգիաներ (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, մուլտիմեդիա և այլն) (Комлева 2006:175):

Այս ուղղություններից յուրաքանչյուրը ներկայանում է որպես ենթադաշտ մի ընդհանուր համակարգչային տերմինադաշտի համար:

Նկատի ունենալով այն, որ ենթադաշտերը կարող են ձևավորված լինել տարբեր հիմքերի վրա, հնարավոր է նրանց խաչաձևումը:

Այսպիսով, համակարգչային տերմինաբանությունը բաժանվում է հետևյալ կերպ՝

- առարկաներ (ֆլեշ քարտ, կոշտ սկավառակ),
- գործընթաց (պատճենում, պահպանում),
- չափման միավոր (բայտ, պիկսել),
- նշաններ և հատկություններ (աշխատանքային սեղան, համակարգի կոնֆիգուրացիա) (Мокрогыз 2015:1-6):

Հաշվի առնելով մեծ թվով տեղեկատվական համակարգերի առկայությունը՝ տերմինաբանների աշխատանքն ավելի է հեշտանում: Ինտերակտիվ համակարգչային ծրագրերն օգնում են տերմինաբաններին՝ բարձրացնելով արդյունքի որակը և հուսալիությունը: Տվյալների բազայում պահվող հսկայական քանակությամբ տեղեկությունը հեշտացնում է աշխատանքի կատարումը:


Տերմինաբանական էլեկտրոնային աշխատանքների համար կարևոր են հետևյալ քայլերը՝

1. նախքան աշխատանքի սկսելը փաստաթղթերի ընտրությունը,
2. կորպուսի ստեղծումը և տվյալների բազայի մեկուսացումը,
3. բառային մուտքերի գրառումը,
4. մուտքագրված տեղեկության ստուգումը,
5. տերմինաբանական գրառումների դասակարգումը (Cabre 1992:166):

Կարևորելով էլեկտրոնային բառարանների և տարբեր նախագծերի դերը մեր օրերում ու դրանց սակավ ներկայացվածությունը հայերենով՝ համակարգչային տերմինաբանության հիմքի վրա մենք նախագծել ենք **TechWordNet** հարթակը՝ սկզբնականում դիտարկելով միայն համակարգչային բառակապակցությունների իմաստաշարահյուսական առանձնահատկությունները: Սա շարունակական նախագիծ է, ինչի համալրումը և տեխնիկական հանգուցալուծումը նախատեսվում են 2020 թվականին: TechWordNet նախագծման համար նախապես ընտրվել է ծրագրակազմ, և իրականացվել է համապատասխան աշխատանքային գործիքակազմի ընտրություն:

Մեր կողմից առաջարկվող TechWordNet անվանումով էլեկտրոնային նախագիծն ունի տվյալների բավականաչափ բազա, որոնման ճկուն համակարգ, որի շնորհիվ դուրս է բերվում բառային շղթան՝ ոչ միայն հիմք բառը, այլև բառակապակցությունը ներմուծելով: Տվյալների ներկայացումն իրականացվում է գծապատկերային շղթայով՝ ի ցույց դնելով բառի և բառակապակցության հարաբերությունները: Այն

ունի կարգավորումներ՝ ներկայացված տվյալների ծավալը փոփոխելու համար, բառի հնչյունադարձում, ինչպես նաև ձայնային հնչողություն (Տե՛ս նկ. 1): TechWordNet էլեկտրոնային նախագծում ներկայացված են բառանյութի հայերեն համարժեքները՝ նպաստելով հայալեզու էլեկտրոնային նյութի ընդլայնմանը:



Նկ. 1 Նախագծի գործառական ինտերֆեյսը և տվյալային վերջնական պատկերը

Նախագծի տվյալների բազան արդեն իսկ համալրված է համակարգչային բառակապակցություններով (Տե՛ս աղ.1): Մեր ուսումնասիրության արդյունքում վեր ենք հանել համակարգչային տերմինաբանական դաշտում կիրառվող անգլերեն **106** տերմին, որոնց

նախագծի շրջանակներում տվել ենք *հիմք բառ* անվանումը: Վերհանված 106 համակարգչային տերմինների 53%-ը ներկայացնում են գոյականական բառային միավորները, 17%-ը՝ բայական, 27%-ը՝ ածականական, իսկ 2%-ը արտահայտվում է կապերի տեսքով:


106 համակարգչային տերմինների կապակցելիական վարքի դիտարկման արդյունքում հնարավոր եղավ վերհանել 725 համակարգչային բառակապակցություն՝ հետևյալ կադապարներով՝ [գոյական+գոյական]՝ 25%, [ածական+գոյական]՝ 30%, [բայ+գոյական]՝ 15%, [բայ+բայ]՝ 5%, [բայ+ածական]՝ 13%, [ածական+գոյական+գոյական]՝ 10%, [գոյական+կապ]՝ 2%: Ակնհայտ է, որ առավել շատ կիրառելի կադապարն է [ածական+գոյական]:

Ստորև ներկայացված են համակարգչային տերմինաբանության վերլուծության մի քանի օրինակ:

Հիմք բառ	Բացատրություն	Թարգմ.	Համակարգչ. բառակապակց.	Թարգմ.
Abbreviate (v.) /əˈbrɪːvi.ɛɪt/	to make a word or phrase shorter by using only the first letters of each word:	կրճատել, համառոտել, հապավել	Abbreviated addressing	Կրճատված հասցեավորում
			Abbreviated text	Կրճատված տեքստ
Absolute (adj.) /ˈæb.sə.luːt/	very great or to the largest degree possible	բացարձակ	Absolute program	Բացարձակ հասցեներով ծրագիր
			Absolute programming	Ծրագրավորում բացարձակ հասցեներով
			Absolute value	Բացարձակ արժեք, բացարձակ մեծություն
			Absolute address	Բացարձակ հասցե Մեքենայական հասցե
			Absolute addressing	Բացարձակ հասցեավորում
			Absolute code	Մեքենայի կոդ, Մեքենայական կոդով գրված ծրագիր
			Absolute coding	Ծրագրավորում մեքենայական կոդով
			Absolute command	Բացարձակ հրաման, հրահանգ
			Absolute coordinate	Բացարձակ կոորդինատ
			Absolute error	Բացարձակ սխալ


Աղյուսակ 1

Համակարգչային տերմինների դիտարկումը ցույց տվեց, որ համակարգչային գործողությունների հիմքում ընկած են երեք հանգուցային երևույթներ, որոնք էլ լեզվում ներկայանում են ամենից շատ բառակապակցություններով (Բ)՝



Data (տվյալ, տեղեկություն) բառային միավորն ունի լայն կիրառում. մաթեմատիկայում՝ *information collected for use*, բիզնես համատեքստում՝ *information, especially facts or numbers, collected to be examined and considered and used to help with making decisions*, ՏՏ ոլորտում՝ *information in an electronic form that can be stored and processed by a computer*:

Ունենալով լայն կիրառում ՏՏ ոլորտում՝ DATA եզարաբառը ձևավորում է 22 համակարգչային բառակապակցություն՝ *Data-base language* (տվյալների բազայի լեզու), *Data-base management* (տվյալների բազան ղեկավարող համակարգ), *Data abstraction* (տվյալների աբստրակցիա, վերացարկում), *Data access* (տվյալային մուտք), *Data acquisition* (տվյալների կուտակում), *Data address* (տվյալների հասցե), *Data adaptor unit* (կապի կանալների ադապտոր), *Data addressed memory* (զուգորդական հիշողություն), *Data area* (տվյալների տիրույթ), *Data bank* (տվյալների բանկ), *Data bit* (երկուական կարգ), *Data block* (տվյալների բլոկ), *Data byte* (տվյալների բայթ), *Data collection* (տվյալների հավաքում), *Data compaction* (տվյալների խտացում), *Data consistency* (տվյալների անհակասելիություն), *Data definition language* (տվյալների սահմանման լեզու), *Data base* (տվյալների բազա), *Data channel* (կապի կանալ), *Data communication* (տվյալների փոխանցում), *Data compression* (տվյալների սեղմում), *Data corruption* (տվյալների ամբողջականության խախտում) (Տե՛ս նկ. 2):



Նկ. 2 DATA եզրաբառի կապակցելիական վարքի ցանցային պատկերումը

Համակարգչային տերմինաբանական դաշտի հաջորդ ամենից շատ կիրառվող միավոր **code**-ն է (կոդ, կոդավորման համակարգ, ծրագիր, հրահանգ, կոդավորել, ծրագրավորել): Տվյալ բառը կարող է նշանակել լեզու/նշանային համակարգ` a system of words, letters, or signs used to represent a message in secret form, or a system of numbers, letters, or signals used to represent something in a shorter or more convenient form, կանոն` a set of rules that are accepted as general principles, or a set of written rules that say how people in a particular organization or country should behave, կենսաբանական եզրաբառ (գեն)` an arrangement of genetic material in DNA (= the chemical that carries genetic information in cells), ինչպես նաև կիրառվում է SS ոլորտում` որպես ծրագրավորման լեզու:

CODE եզրաբառը ձևավորում է 21 համակարգչային բառակապակցություն` *Code alphabet* (կոդի այբուբեն), *Code area* (կոդի տիրույթ), *Code audit* (ծրագրի ստուգում), *Code base* (կոդի հիմք), *Code block* (կոդի բլոկ), *Code chain* (կոդերի հաջորդականություն), *Code character* (կոդային սիմվոլ), *Code compare* (կոդերի համեմատություն), *Code conversion* (կոդի ձևավորում), *Code converter* (կոդի փոխարկիչ), *Code error* (սխալ կոդ), *Code extension* (կոդի ընդլայնում), *Code generation* (ծրագրի գեներացիա), *Code line* (ծրագրի տող), *Code rule* (կոդավորման

կանոն), *Code statement* (1. կոդավորված օպերատոր, 2. ծրագրի օպերատոր), *Code transformation* (կոդի ձևափոխում), *Code independent* (կոդից անկախ), *Coded data* (կոդավորված տվյալներ), *Coded image* (կոդավորված պատկեր), *Coded representation* (կոդավորված ներկայացում):

Երրորդ առավել շատ կիրառվող համակարգչային եզրաբառն, իհարկե, **computer**-ն է (համակարգիչ, հաշվիչ մեքենա): Այլ եզրաբառի հետ կապակցելիության արդյունքում ձևավորվում են 20 համակարգչային բառակապակցություն՝ *Computer-based system* (ավտոմատիզացված համակարգ), *Computer dependent language* (դեպի համակարգիչը կողմնորոշված լեզու), *Computer oriented language* (դեպի համակարգիչը կողմնորոշված լեզու), *Computer center* (հաշվողական կենտրոն), *Computer family* (համակարգիչների ընտանիք), *Computer generation* (համակարգիչների սերունդ), *Computer graphics* (համակարգչային գրաֆիկա), *Computer independent language* (համակարգչից անկախ լեզու), *Computer language* (համակարգչային լեզու), *Computer mail* (էլեկտրոնային փոստ), *Computer memory* (համակարգչային հիշողություն), *Computer name* (եզակի անուն, որը միարժեք որոշում է համակարգիչը ցանցում), *Computer network* (համակարգչային ցանց), *Computer program* (համակարգչային ծրագրեր), *Computer run* (համակարգչային ծրագրի ակտիվացում), *Computer science* (կոմպյուտերագիտություն), *Computer system* (հաշվողական համակարգ), *Computer technology* (համակարգչային տեխնոլոգիա), *Computer virus* (համակարգչային վիրուս), *Computer word* (մեքենական բառ):

Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ ամենաքիչ բառակապակցությամբ դիտարկված եզրաբառն է՝ **abbreviate**՝ *Abbreviated addressing* (կրճատված հասցեավորում), *Abbreviated text* (կրճատված տեքստ):

Այսպիսով, սույն ուսումնասիրությունը TechWordNet նախագծի համալրման ուղղությամբ մեր առաջին քայլերն են՝ դեռևս միայն համակարգչային բառակապակցությունների դիտարկմամբ: Այն կրելու է շարունակական բնույթ՝ ստանալով իր վերջնական տեխնիկական լուծումներն արդեն իսկ մշակված մակրո և միկրո կառուցվածքի տեսական նկարագրերի հիման վրա՝ հետագայում համալրվելով նաև համակարգչային այլ տերմիններով: Այս նախագիծը միտված է լրացնելու այն բացը, ինչը դիտարկելի է հայալեզու էլեկտրոնային նախագծերի շրջանում: Այն միաժամանակ կծառայի որպես մասնագիտական բառապաշարի ձեռքբերման և զարգացման միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Ե., 1984, էջ 312-321:
2. Головин Б., Кобрин Р., Лингвистические основы учения о терминах, Изд-во МГУ, М., 1993, ст. 300-309.
3. Гринев, С., Введение в терминоведение [микроформа], Изд-во МГУ, М., 2004, ст. 309.
4. Комлева Н., Словарь иностранных слов, Изд-во МГУ, М., 2006, ст. 155-175.
5. Cabré M. Teresa, Terminology: Theory, methods and applications, [transl. by John Benjamins, of La Terminologia. La teoria, els mètodes, les aplicacions, Barcelona, Emúries, 1992], Les Presses de l'Université de Montréal, Vol. 46, Philadelphia PA, 1998, pp. 166-167.

REFERENCES

1. Aghayan E., Y'ndhanowr & haykakan bar'agitowt'yown, EPH hrat., E., 1984, e'j 312-321:
2. Golovin B., Kobrin R., Lingvisticheskie osnovy uchenija o terminah, Izd-vo MGU, M., 1993, st. 300-309.
3. Grinev, S., Vvedenie v terminovedenie [mikroforma], Izd-vo MGU, M., 2004, st. 309.
4. Komleva N., Slovar' inostrannyh slov, Izd-vo MGU, M., 2006, st. 155-175.
5. Cabré M. Teresa, Terminology: Theory, methods and applications, [transl. by John Benjamins, of La Terminologia. La teoria, els mètodes, les aplicacions, Barcelona, Emúries, 1992], Les Presses de l'Université de Montréal, Vol. 46, Philadelphia PA, 1998, pp. 166-167.

ЛИЛИТ МОВСЕСЯН, ЛИЛИТ АКОПЯН - ИЗУЧЕНИЕ КОМПЬЮТЕРНОЙ ТЕРМИНОЛОГИИ В РАМКАХ ПРОЕКТА TechWordNet

Ключевые слова: *термин, терминология, электронный проект, база данных, система терминов, компьютерные словосочетания, компьютерная лингвистика*

В последние годы все больше внимания уделяется той части терминологии, которая касается изучения компьютерной лексики. Это относится к компьютерной терминологии. Соблюдая компьютерную терминологию, мы разработали электронный проект TechWordNet. В качестве компьютерного термина мы наблюдали словарный запас, используемый для описания объектов и явлений в информационных технологиях. Новизна нашего исследования заключается в том, что мы делаем первый армянский лингвистический электронный проект. Начальные шаги по созданию этого проекта на основе компьютерных фраз придают этому проекту непрерывный характер. Электронному проекту было дано название TechWordNet, что означает Сеть технических слов, то есть сеть технического словаря. Целью анализа является изучение значения и структурных особенностей компьютерной терминологии на английском языке и представление их эквивалентных армянских версий, показывая все возможные компьютерные фразы на основе ключевого слова. Практическая ценность исследования заключается в том, что результаты исследования, основанные на наблюдении за компьютерными словосочетаниями, а также на принципах предлагаемого электронного проекта TechWordNet, могут в дальнейшем стать основой для создания полноценного армянского электронного проекта.

LILIT MOVSESYAN, LILIT HAKOBYAN - STUDY OF COMPUTER TERMINOLOGY THROUGH TechWordNet PROJECT

Keywords: *term, terminology, electronic project, database, term system, computational collocations, computational linguistics*

In recent years more emphasis has been put on the type of terminology which directly deals with the study of computational vocabulary, i.e. computer terminology, the observation of which has resulted in the creation of the so-called *TechWordNet* electronic project. As a computer term we have studied those lexical units which are used to describe objects and phenomena widely presented in the sphere of information technologies. The novelty of our study is that we are contributing to the creation of a linguistic electronic project

unique in its own way. We are undertaking our first steps for launching this project in Armenia based on computer phrases on its initial stage and then updated with more IT data. “TechWordNet”, as a name of the project, stands for *Network of Technical Words*. Our aim is to study the lexical and structural features of computer terminology in English and to present their Armenian equivalents by revealing and coordinating all the possible computer phrases based on the key word. The practical value of the study is that the results based on the observation of computer key words and their collocations, as well as the sketched functional principles of TechWordNet electronic project can further serve as a basis for the creation of a fully-fledged linguistics electronic project in Armenia.

Ներկայացվել է՝ 30.09.2019
Գրախոսվել է՝ 26.09.2019

**ԴԱՐՁՎԱԾՔԻ ՆԵՐՔԻՆ ՁԵՎ ԵՎ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ
(ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱՄԻՎԱՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ՇԱՀԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ դարձվածային միավոր, խոսակցական ֆրանսերեն, խոսակցական հայերեն, իմաստային պատճառաբանվածություն, ապապատճառաբանվածություն, մշակութային առանձնահատկություններ, փարբերակայնություն, պատկերավորություն

Հոդվածը նվիրված է դարձվածաբանությանն առնչվող կարևոր հարցերից մեկին՝ դարձվածքի ներքին ձևին և պատճառաբանվածության տարբեր աստիճաններին, որոնց հիմքում ընկած է դարձվածքի բաղադրիչների միջև իմաստային կապի առկայությունը կամ բացակայությունը: Թեման սերտորեն առնչվում է դարձվածքների պատկերային համակարգին բնորոշ յուրահատկություններին, մասնավորապես խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշարին, որը համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Ձուգադրումը հայերենի հետ ի հայտ է բերում երկու լեզուներին բնորոշ ընդհանրություններն ու տարբերությունները, պատկերների հիմքում ընկած ոճահնարների բազմապիստությունը, ինչն ավելի ամբողջական է դարձնում քննարկվող նյութը:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է հենց թեմայի ընտրությամբ, քանի որ ֆրանսերենի դարձվածաբանության մեջ ամենաքիչ ուսումնասիրված բաժինը խոսակցական լեզվի դարձվածապաշարն է: Նորույթն այն է, որ առաջին անգամ զուգադրական ուսումնասիրության են ենթարկվում ֆրանսերենի և հայերենի դարձվածքները, որը և եղել է հոդվածի հիմնական նպատակներից մեկը, և որին հասնելու համար դիմել ենք նկարագրական, բաղադրիչային վերլուծության և հակադրական (կոնտրաստիվ) մեթոդների օգնությանը՝ ուսումնասիրելով տարաբնույթ աղբյուրներում ամփոփված դարձվածամիավորները:

Հանրահայտ է, որ իրականության առարկաները, երևույթներն ու դրանց հատկանիշները տարբեր կերպ են անվանվում հաղորդակցական ակտի ընթացքում՝ պայմանավորված մի շարք գործոններով, ինչպիսիք են խոսողի (գրողի) հաղորդակցական դիտավորությունը (intention), իրադրային առանձնահատկությունները, խոսակիցների սոցիալական կարգավիճակը, կրթվածության աստիճանը, տարիքը, մնայուն կամ

անցողիկ հոգեվիճակը, նախորդ փորձը, իմացության մակարդակը, և այլն: Միաժամանակ այս կամ այն ոլորտին կամ հաղորդակցման տվյալ պայմաններին համապատասխան օգտագործվող արտահայտության միջոցներն ամփոփում են ուրույն երանգավորման մի ցուցիչ, որով տարբերվում են այլ պարագաներում գործածվող իրենց տարբերակներից:

Այս տեսակետից միայն խորհրդանշանային նշոյթավորվածությունից զուրկ բառերն ու արտահայտություններն են, որ սովորաբար գործածվում են հաղորդակցության ամենատարբեր պայմաններում և դրանով իսկ վերածվում լեզվական անփոփոխակաների բառադարձվածային մակարդակում: Ինչ վերաբերում է ոճականորեն նշոյթավորված տարբերակներին, ապա վերջիններս, իրենց բնույթով իսկ պայմանավորված, գործառական առումով սահմանափակ կիրառություն ունեն:

Տարբերակների գոյությունը լեզվի համակարգի բոլոր մակարդակներին բնորոշ երևույթ է, և որքան ավելի հարափոփոխ ու «բաց» է տվյալ մակարդակը, այնքան ավելի փոփոխելի է այն: Ասվածից հետևում է, որ բառադարձվածային մակարդակը, լինելով լեզվի ամենից ավելի հարաշարժ բնագավառը, նաև տարբերակներով ամենահարուստն է:

Դարձվածքների տարբերակայնությունը սերտորեն առնչվում է նրանց ներքին ձևի ու պատճառաբանվածության հետ, ընդ որում դարձվածային միավորների ներքին ձևն ավելի դժվար է ջնջվում ու մոռացվում, քան բառերինը: Երևույթն ունի երկու բացատրություն. նախ, դարձվածքը միշտ պատկերավոր անվանումից առաջացած լեզվամիավոր է, ուր պատկերն առանձնահատուկ կարևորություն ունի նրա իմաստագոյացման մեջ: Երկրորդ, դարձվածքի վերլուծականությունը դյուրացնում է այդ պատկերի ընկալումը՝ ապահովելով վերջինիս թափանցիկությունն ու կայունությունը: Երբ ճամարտակ, շաղակրատ, դատարկաբան, դատարկախոս մարդուն (un raseur) կոչում են **un robinet d'eau tiède** (բառացի՝ գոլ ջրի ծորակ), դարձվածքի ներքին ձևն առանց դժվարության ընկալվում է. դա ծորակից անընդհատ ու միալար հոսող ջրի պատկերն է, որը նյարդերի վրա է ազդում: Ավելացնենք, որ դարձվածքի հիմքում ընկած պատկերը չէ միայն, որ ստեղծում է երկու տարբեր երևույթների միջև կապը, այլ նաև դրանց սուբյեկտիվ զուգորդումը, որից էլ գոյանում է արտահայտության նվաստական բաղադրիչը:

Ներքին ձևի դիտարկումը հոգեբանական տեսանկյունից ի հայտ է բերում առարկայի կամ երևույթի յուրահատուկ ընկալումը նրա անվանման պահին: Հասարակական, պատմական և զուտ իրադրային

գործոնները էական ազդեցություն են թողնում դարձվածքի ընկալման վրա: Յուրաքանչյուր լեզու աշխարհընկալման իրեն բնորոշ գծերով է օժտված, և, ինչպես հաստատում է ուսումնասիրված լեզվանյութը, խոսակցական լեզուն է, որ ամենից ավելի ինքնատիպ է ներքին ձևի արտասովորությամբ: Օրինակ, խոսակցական ոճին պատկանող **une vraie concierge** (բառացի՝ իսկ և իսկ դռնապանուհի) դարձվածքը գործածվում է շատախոս ու բացբերան անձնավորություն նշելու համար և արտահայտում է ֆրանսիացի դռնապանուհիների բնավորությանը հատուկ գծերից մեկը: Կամ՝ **avoir l'estomac dans les talons** (բառացի՝ ստամոքսը կրունկների մեջ լինել) նշանակում է սաստիկ քաղցած լինել, որի հայերեն խոսակցական համարժեքները բոլորովին այլ պատկերներ են ամփոփում՝ փորը վեց-վեց անել, սոված գլուտալ (*գռիկ*.) և այլն:

Մյուս կողմից ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ միանգամայն տարբեր լեզուներում, ինչպիսիք են ֆրանսերենը և հայերենը, ներքին ձևի մի շարք նմանություններ են արձանագրվում, որոնք առավելապես բնորոշ են երկու լեզուների խոսակցական ոճին և փոխազդեցությունների կամ պատճենումների հետևանք չեն, այլ առօրյա կյանքի ու կենսագործունեության ընդհանրության արդյունք: Որոշ դեպքերում շեղումներն աննշան են, մասնակի, առկա է զգալի նմանություն, հաճախ մեկ բաղադրիչի տարբերությամբ միայն:

Օրինակ՝ *scier le dos à qn* (բառացի՝ մեկի մեջքը սղոցել) – *հայ.* մեկի ականջը սղոցել, *avoir une mémoire de lièvre* (բառացի՝ նապաստակի հիշողություն ունենալ), – *հայ.* հավի հիշողություն ունենալ, *lever le menton* (բառացի՝ կզակը բարձրացնել՝ վեր տնկել) – *հայ.* քիթը տնկել, *être fatigué de naissance* (բառացի՝ ի ծնե հոգնած լինել) – *հայ.* ի ծնե ծուլ լինել, *se bouffer le nez* (բառացի՝ իրար քիթ ուտել) – *հայ.* իրար միս ուտել, *se cassser le nez sur qch* (բառացի՝ քիթը ինչ-որ բանի վրա կոտրել) – *հայ.* քիթը քարին առնել, և այլն:

Քիչ չեն դեպքերը, երբ տեսնում ենք պատկերի ամբողջական նմանություն.

օրինակ՝ *se mordre la langue*–լեզուն կծել, *avalier sa langue*–լեզուն կուլ տալ, *fourrer son nez partout* – քիթը ամեն ինչի մեջ խցկել, *c'est de l'or en barre* – ձուլածո ոսկի է, *avoir les nerfs en boule* – նյարդերի կծիկ լինել և այլն:

Դարձվածքի ներքին ձևի թափանցիկությամբ կամ ոչ թափանցիկ լինելով պայմանավորված առաջ է գալիս դարձվածամիավորի պատճառաբանվածության աստիճանների հիմնահարցը, որն առանձնակի կարևորություն ունի նրա իրական իմաստը ճշտելու և նույնարժեք թարգմանություն ապահովելու մեջ:

Դարձվածաբանությանն առնչվող կարևոր հարցերից մեկն այսօր վերաբերում է դարձվածային միավորների պատճառաբանվածությանն ու սպապատճառաբանվածությանը և վերջինիս առաջացման պատճառներին:

Հ. Թունը 1975-ին հրատարակած մի հոդվածում անդրադարձել է դարձվածային միավորների դասակարգմանը՝ առաջարկելով այն կատարել ըստ բաղադրիչների իմաստային կապի առկայության կամ բացակայության (Thun 1975: 52-70): Նա առանձնացնում է դարձվածաբանական միավորների հետևյալ շերտերը.

1) դարձվածային միավորներ, որտեղ բաղադրիչների միջև **չկա** իմաստային կապ,

peau de vache (fam.) – personne méchante – նողկալի մարդ, գարշանք
(բառացի՝ կովի կաշի)

croquer le marmot (fam.) – attendre longtemps – երկար ու զուր սպասել
(բառացի՝ մանչուկին խոթխոթոցով ծամել)

2) դարձվածային միավորներ, որտեղ բաղադրիչների միջև **առկա է** իմաստային կապ,

faire faillite – être ruiné – սնանկանալ (բառացի՝ սնանկ դառնալ)

se rendre compte – s’apercevoir – իրեն հաշիվ տալ

3) դարձվածային միավորներ, որտեղ բաղադրիչների միայն մեկ մասի միջև **է առկա** իմաստային կապ,

s’ennuyer à cent sous de l’heure (fam.) – s’ennuyer très fortement – սաստիկ ծանձրանալ (բառացի՝ ժամում հարյուր սուով ծանձրանալ)

lire en diagonale (fam.) – lire rapidement – հապճեպ՝ շատ արագ կարդալ
(բառացի՝ անկյունագծով շեղակի կարդալ)

Թեև դարձվածաբանության վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները դարձվածքի գոյության ելակետային ու հիմնարար նախապայման էին համարում իմաստային պատճառաբանվածության կորուստը, հետագա աշխատություններն ապացուցեցին երկու կարևոր իրողություն.

ա) յուրաքանչյուր դարձվածային միավոր առաջացման պահին իմաստաբանորեն պատճառաբանված է, այն չի ծագում պատահականորեն, այլ կապակցական որոշակի կանոնների արդյունքում,

բ) ոչ բոլոր դարձվածային միավորներն ունեն իմաստային պատճառաբանվածության միևնույն աստիճանը համաժամանակյա մոտեցմամբ:

Եթե որևէ դարձվածային միավոր կիրառելիս խոսողի մտքում առկայանում է տվյալ երևույթի հիմքում ընկած պատկերը, համարում ենք,

որ այն պատճառաբանված է: Եվ, ընդհակառակը եթե այդ պատկերը բացակայում է կամ սխալ է մեկնաբանվում (նույնիսկ ստուգաբանների կողմից), ապա դարձվածային միավորը ապապատճառաբանված է:

Ինչ վերաբերում է պատկերներին, որոնք դարձվածային միավորի հենքն են կազմում՝ վերջինիս հաղորդելով իմաստային պատճառաբանվածություն, պետք է նշել, որ Շ. Բալլիի նշած բոլոր տեսակներն առկա են նրանում. «**ստույգ պատկերներ**, որոնք ընկալելի են երևակայության մեջ, **հուզազգացական պատկերներ**, որոնք սերում են զգացմունքից, **մեռյալ (անհետացած) պատկերներ**, որոնք կոահելի են մտավոր գործունեության արդյունքում միայն» (Bally 1951:195):

Ստորև բերենք այդ պատկերների մի քանի օրինակ.

- **ստույգ պատկերներ**

Օրինակ՝ se creuser la tête /la cervelle – réfléchir intensément

s'emmêler les pieds – trébucher

mettre la main à la pâte – aider personnellement

- **հուզազգացական պատկերներ**

Օրինակ՝ avoir des mains de beurre – être maladroit, laisser tout échapper et tomber

avoir des doigts de fée – être très habile dans des travaux délicats

avoir des jambes en coton – avoir des jambes faibles, molles

- **մեռյալ (անհետացած) պատկերներ**

Օրինակ՝ avoir **maille** à partir avec qn – avoir un différend avec lui

(առկա է բառային հնաբանություն)

suspendre les hostilités – faire cesser les hostilités (առկա է նախնական իմաստի մթազնում)

Օրինակներից կարելի է եզրակացնել, որ կան դարձվածային միավորներ, որոնց ընդհանուր իմաստը բխում է բաղադրիչների իմաստից, դրանք թափանցիկ են, համաժամանակյա մոտեցմամբ պատճառաբանված (**jeter de l'huile sur le feu, à pas de velours, courir à toutes jambes**) և, հակառակը, գոյություն ունեն այնպիսիք, որոնց ամբողջական իմաստը չի բխում բաղադրիչների իմաստից (**être né coiffé, prendre en grippe, avoir du front, avoir les foies blancs**): Մինչ վերջիններիս անհստակությունը պարզաբանելը հարկ է նշել, որ դրանք իրենց հերթին, ենթադասակարգման կարիք ունեն՝ ըստ ոճական հնարների առկայության կամ բացակայության:

Ոճական հնարներից զուրկ դարձվածային միավորների անվերձանելիության պատճառը խոսքային հնաբանությունն է (պատճառաբանվածության կորուստ), որը կարող է արտահայտվել կամ որպես հնացած վերաբերյալ, կամ որպես հնացած բառույթ: Օրինակ՝

Ֆրանսերենում «maille» բառը որպես «դրամ» դուրս է եկել գործածությունից, սակայն այն նոր կյանք է ստացել «**n’avoir ni sou, ni maille**» արտահայտության մեջ:

Ոճական հնարներ պարունակող դարձվածային միավորների դեպքում անորոշությունը (անվերծանելիությունը) ծնվում է երկու իրողությունների խզումից. իրողություն, որը թույլ է տվել ստեղծել և կիրառել տվյալ դարձվածաբանական միավորը, և իրողություն, որը ցանկանում ենք այսօր արտահայտել:

Օրինակ՝ jeter du lest → faire des concessions

Հասկանալու համար, թե ինչու է «**jeter du lest**» դարձվածքը նշանակում «**faire des concessions**» - զիջումների գնալ, նախ պետք է իմանալ, որ «**lest**» բառը ֆրանսերենում նշանակում է **ավազով լցված պարկ, որ ջուրն էին նետում նավը խորտակումից փրկելու համար**: Հետևաբար նմանությունը երկու երևույթների միջև թույլ է տվել կապակցությունը գործածել **դժվար կացությունից դուրս գալու համար որոշ պահանջներից հրաժարվել** փոխաբերական իմաստով:

Որքան ավելի շատ ենք գործածում առօրյա խոսակցական լեզվին սակավ հայտնի պատկերներ ամփոփող արտահայտություններ, այնքան ավելի նվազում է նրանց բաղադրիչների միջև եղած իմաստային կապի ընկալումը:

Օրինակ՝ faire volte-face, sortir de son amble – (պահանջում են ձիավարության մասին գիտելիքներ), tirer sur qqn à boulets rouges, battre en brèche, faire long feu, tailler des croupières à qqn – (առնչվում են պատերազմին, բախումներին), battre les buissons, faire des gorges chaudes de qqn, marcher sur les brisés de qqn – (հիշեցնում են հետապնդում), jeter le froc aux orties, être réduit à la portion congrue, avoir voix au chapitre, sentir le fagot-(առնչվում են կենսական և կրոնական գործունեությանը), և այլն:

Ամփոփելով պետք է հավելել, որ միշտ չէ, որ նմանության կապն արդարացված է, քանի որ լեզուն, ինչպես նշում է Լը Գերնը, գոյություն ունեցող իրողության ուղղակի պատճենումը չէ (M. Le Guern 1973: 91): Եթե “cœur” - «սիրտ» բառը փոխանվանորեն մատնանշում է զգացմունքներ, դա չի ենթադրում, որ իրական կապ կա սրտի և զգացմունքների միջև, այլ պարզապես լեզվի պատմության որոշակի շրջանում հուզագայական գործողությունների վրա սրտի հնարավոր ազդեցությանը հավատալով է, որ մարդիկ դիմել են փոխանունությանը, որ այն ժամանակ օբյեկտիվ հարաբերության վրա էր հիմնված: Ցանկացած իրողության ոչ հստակ ու որոշակի մեկնաբանումը տանում է դեպի անորոշություն: Շատ ու շատ

երևույթներ, որտեղ առկա են մշակութային առանձնահատկություններ, առօրյա պատկերներ, ուրույն մտածողության կարծրատիպեր, որոնց հիման վրա ստեղծվել են բազում դարձվածային միավորներ, այսօր կորցրել են թափանցիկությունը: Ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու է խոսվում դարձվածքի պատճառաբանվածության կամ ապապատճառաբանվածության (պատճառաբանվածության կորստի) մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ashraf M, Miannay D.**, Dictionnaire des expressions idiomatiques, Librairie Générale Française, 1995.
2. **Bally Ch.**, Traité de stylistique française, III^e éd (I éd.:1909), Paris, Klincksieck, 1951, 2 vol.
3. **Dumitriu D. M.**, Précis de phraséologie, Editura Macedonski, Craiova, 2000.
4. **Le Guern M.**, Sémantique de la métaphore et de la métonymie, Paris, Larousse, coll. “Langue et Langage”, 1975.
5. **Rey A. et Chantreau S.**, Dictionnaire des expressions et locutions, Le Robert, Paris, 1997.
6. **Thun H.**, Quelques relations systématiques entre groupements de mots figés, in Cahiers de Lexicologie, Didier Erudition, 27/1975-II.

ШАГАНЭ ПЕТРОСЯН – ВНУТРЕННЯЯ ФОРМА И МОТИВИРОВАННОСТЬ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ (НА МАТЕРИАЛЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ РАЗГОВОРНОГО ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА).

Ключевые слова: фразеологическая единица, разговорный французский, разговорный армянский, смысловая мотивированность, демотивация, культурные особенности, вариативность, образность

Статья посвящена одной из важнейших вопросов относящихся к фразеологии: внутренней форме и разным уровням мотивированности фразеологизма, в основе которого лежит наличие или отсутствие смысловых связей между компонентами. Тема тесно связана с особенностями, характерными для образной системы фразеологизмов, в частности фразеологического запаса разговорного французского, который недостаточно исследован. Сопоставление с армянским выявляет общность и различие, свойственные двум языкам, многообразие стиливых приемов, заложенных в основу образов, что делает анализируемый материал более целостным.

SHAHANE PETROSYAN - INNER FORM AND MOTIVATION OF SOME PHRASEOLOGICAL UNITS IN COLLOQUIAL FRENCH

Keywords: *phraseological unit, colloquial French, colloquial Armenian, semantic motivation, demotivation, cultural features, variability, figurativeness*

The article refers to one of the important problems of phraseology: the inner form and different degrees of motivation of the phraseological unit, on the basis of which semantic connection between the phrase components is to be taken into account. The subject deals with the typical peculiarities of the figurative system of phraseological units, especially the phraseological reserve of colloquial French, which is studied relatively not well. The juxtaposition with Armenian identifies the similarities and differences typical of both languages, the great variety of stylistic phrases which makes the studying material more complete.

Ներկայացվել է՝ 19.09.2019

Գրախոսվել է՝ 04.09.2019

**Երաշխավորվել է ԵՊՀ Ռոմանական
լեզուների ամբիոնի կողմից՝ 06.09.2019**

МЕТАФОРА КАК СРЕДСТВО ПОЗНАНИЯ РУССКОЙ МЕНТАЛЬНОСТИ В
КУРСЕ ПРЕПОДАВАНИЯ РУССКОГО ЯЗЫКА ИНОФОНАМ

ИРИНА СИНИЦА

Ключевые слова: когнитивная лингвистика, метафора, ментальность, коммуникативная компетенция, художественный текст, преподавание иностранного языка, психолингвистический эксперимент

Лингвокультурология и когнитивистика сегодня всё чаще оказываются рядом как взаимодополняющие и обогащающие друг друга дисциплины. Особенно это заметно при обучении иностранному языку. Язык, будучи психолингвистическим, культурно-образовательным продуктом деятельности как индивидуального, так и коллективного разума, не только аккумулирует всю систему значений, ценностей, традиций, созданных человеком, но и является средством порождения новых смыслов и знаний. И если когнитивная национальная база носителей родного языка, передаваемая в основном генетически, не требует особых усилий для её освоения, то при изучении иностранного языка попытка освоить и понять глубинные смыслы неродной языковой картины мира иногда превращается в невыполнимую задачу. Необходимость решения данной задачи – одно из направлений работы при обучении русскому языку как неродному.

Развитие у обучаемых коммуникативной компетенции предполагает не только формирование комплекса знаний, навыков, умений, приобретённых в ходе занятий и составляющих содержательный компонент обучения, но их активное использование в речевой практике (Щукин 2003:142). Коммуникативно-деятельностный подход – основной метод в преподавании РКИ на современном этапе. Коммуникативно компетентный студент обладает в равной степени системными лингвистическими знаниями фонетики, грамматики, лексики, стилистики, культуры речи и владеет речевыми формами говорения, аудирования, чтения, письма в потребностях, необходимых для той или иной коммуникативной ситуации. Очень важно, что коммуникативную компетенцию рассматривают одной из важнейших характеристик языковой личности, приобретённой её в результате естественной речевой

деятельности и в результате специального обучения (Азимов 2009:98-99).

Неслучайно многие исследователи-методисты отмечают системно-комплексный характер проблем, связанных с пониманием сущности коммуникативной компетенции. Её содержанием они считают «методически, лингвистически, психологически и социолингвистически согласованное единство всех компонентов, образующих ситуации общения, а также знания и умения, необходимые учащимся для понимания и порождения собственных программ речевого поведения. Специфика и объем коммуникативной компетенции зависят от целей овладения языком, которые ставят перед собой учащиеся, их интересов и мотиваций, избираемых ролей, видов коммуникативной деятельности, выполняемых в процессе обучения и после его завершения» (Лебединский 2011:28).

Приобретая коммуникативную компетентность при осуществлении рецептивных и продуктивных видов речевой деятельности, обучаемый под руководством преподавателя стремится не только понимать, но и познавать через язык глубинные пласты культуры и ментальности носителей изучаемого языка. Говоря о ментальности, мы, вслед за В.В. Колесовым, имеем в виду «национальный способ выражения и восприятия мира, общества и человека в формах и категориях родного языка, способность истолковывать явления как их сущности и соответственно этому действовать в определённой обстановке» (Колесов 2006:13). Овладеть языковой системой неродного языка могут многие, но понимать выражаемые с её помощью глубинные смыслы могут единицы. Это не значит, что нужно опустить руки и не обучать скрытым смыслам русского слова. Наоборот, каждый уважающий себя преподаватель РКИ должен научить видеть и прочитывать возникаемые при коммуникации дополнительные смысловые, эмоциональные, аксиологические и другие оттенки лексем. Как правило, преимущественно именно эти компоненты являются экспликаторами национально значимой информации.

Основным языковым средством, с помощью которого передаются глубинные смыслы русского слова, являются образно-метафорические словосочетания. Неслучайно один из дескрипторов в разделе «Чтение» для уровня В2 в «Общевропейских компетенциях владения иностранным языком» предполагает умение использовать для понимания и интерпретации художественного текста содержащиеся в нём образы, метафоры и взаимосвязь событий (Общевропейские компетенции 2003). Поэтому чтение становится тем способом, с помощью которого

преподаватель может помочь студенту понять не только значение переносно употреблённых единиц речи, но и механизм их возникновения-порождения, который в дальнейшем учащийся может применять и для собственного словотворчества. Только такое чтение имеет характер обучающего.

Несомненно, при чтении художественных текстов русской литературы, на которых построены многочисленные учебники и учебные пособия, просто необходимо говорить об образно-метафорических значениях, возникающих в тех или других контекстах художественного дискурса. Сам процесс чтения, конечно, замедлится. Комментирование и объяснение требует от преподавателя не только времени, но и филологической подготовки для объяснения механизмов возникновения метафор, достаточно детально описанных в различных работах.

О месте метафоры в той или другой национально-языковой картине мира написаны многочисленные исследования разных уровней. Теоретические основы, заложенные работами А.А. Потебни, Э. Кассирера, Х. Ортеги-и-Гассета, А. Ричардса, Дж. Серля, Р. Якобсона, М. Блэка, Дж. Миллера, Дж. Лакоффа и М. Джонсона, многочисленными исследованиями Н.Д. Арутюновой, Ю.Н. Караулова, В.Н. Телия, Г.Н. Склярёвской, А.Н. Баранова, Анны Вежбицкой, Д.Н. Шмелёва, И.А. Стернина, А.А. Уфимцевой, Е.А. Некрасовой, Е.С. Кубряковой, А.П. Бабушкина, Н.Н. Болдырева, З.Д. Поповой, Е.В. Рахилиной и др., прочно утвердили отношение к метафоре как к «ключу к адекватному объяснению понимания» (Лакофф 2004:22), с помощью которого можно «открыть» большую часть нашей обыденной концептуальной системы, которая «по своей природе метафорична» (Лакофф 2004:25).

Несмотря на универсальность данного явления, то есть на его функциональность в любом развитом языке, метафорическая картина мира какого-либо языка будет носить национально-индивидуальный, уникальный характер. По этой причине изучающие русский язык, не владеющие данным фрагментом русской языковой картины мира, могут ошибаться, с одной стороны, находя образно-метафорические значения там, где их нет, с другой стороны, не видя те из них, которые являются значимыми для носителей изучаемого языка.

Здесь, на наш взгляд, уместно вспомнить толкования китайской пословицы «Shénme shan shàng shénme ge», предложенные О.А. Корниловым. Первый вариант: «На какую гору поднялся – такую песню и пой» – автор рекомендует «в качестве совета всем, кто исследует язык

как базовую категорию национальной культуры, как вместилище духа народа: поднявшись на «гору» субъективного отражения мира национальным языковым сознанием, следует петь соответствующие месту «песни» и не пытаться искать так называемую истинную реальность. Эту «песню» пусть «поют» учёные на «горе» естественных наук». Второй вариант: «На каждой горе свои песни» - «можно использовать для метафорического обозначения народа и его языка: горы - фрагменты пространственно-временного континуума, в рамках которых протекает бытование народов; песни - языки, на которых эти народы чувствуют, думают и говорят» (Корнилов 2003:326).

Попытка прочесть, то есть понять, созданные на неродном языке метафоры - одна из задач коммуникативно-деятельностного подхода преподавания РКИ. Несмотря на то, что языки у всех народов разные, мыслительные процессы, направленные на познание окружающей действительности, аналогичны. Поскольку метафора сегодня рассматривается как один из способов познания мира, следовательно, расшифровать метафору на неродном языке значит приблизиться к пониманию мира другим народом, то есть к его ментальности.

Такая направленность изучения метафоры прослеживается и в двух основных подходах, утвердившихся в лингвистических исследованиях в качестве базовых: семантический подход (традиционный), в рамках которого основное внимание уделяется изучению значения, и когнитивный подход, где в центре внимания находится не значение, а знание. Общность семантического и когнитивного подходов прослеживается в развитии положения о креативной функции метафоры, проявляющейся в том, что метафора организует и регулирует наше мировосприятие, «высвечивая» и подчеркивая одни черты, «затемняя» при этом другие. Основой метафоризации является аналогия, ибо она – один из способов креативного мышления (1-3).

Утверждение метафоричности процессов не только художественного, но и обыденного человеческого мышления как базового теоретического вывода когнитивной метафорологии неоднократно подтверждено анализом как узуальных, так и индивидуально-авторских метафор русского языка (см., например: Вардзелашвили; Колесов 2006 и др.). При этом сравнивать степень сложности восприятия узуальной, или стёртой, и окказиональной, или индивидуально-авторской, метафор в практике преподавания русского языка как неродного считаем нецелесообразным, поскольку механизм возникновения метафорического значения одинаков, независимо от её различных характеристик. К тому

же, знакомство с функциональными особенностями русского языка учащиеся начинают, как правило, с учебников, где параллельно представлены тексты учебно-научного, художественного и других стилей, сочетающих в себе различные виды метафор. Именно поэтому важно акцентировать внимание не на эстетических функциях данного стилистического тропа, а на его механизме, активно использующемся как в быденном, так и поэтическом освоении окружающего мира.

С целью определения уровня и условий понимания метафор мы провели эксперимент среди китайских студентов, изучающих русский язык как специальность и находящихся на последнем курсе бакалавриата. В эксперименте приняли участие 36 студентов, которые изучают русский язык от трёх до пяти лет преимущественно вне среды бытования русского языка. 52.8 % студентов проходили стажировку в России по программе обмена между вузами КНР и РФ, где они в течение года обучались по смежным специальностям и, следовательно, находились в "языковой бане". 41.7 % опрошенных студентов разговаривают по-русски не только в стенах университета, 44.4 % студентов, кроме учебников, читают и другие источники на русском языке. Цель изучения русского языка у студентов разная. 58.3 % студентов планируют связать свою будущую профессию с русским языком. Таким образом, большая часть респондентов ответственно относится к изучению русского языка, проявляя к нему интерес не только в аудитории, но и читая другую литературу на русском языке и планируя связать своё будущее с изучаемым иностранным языком.

Участникам эксперимента была предложена анкета с десятью короткими высказываниями из поэтических текстов классиков русской литературы. Чтобы исключить возможность их узнавания, были отобраны не очень известные для инофонов строки:

- 1) *Под бурями судьбы жестокой Увял цветущий мой венец*
(А. Пушкин);
- 2) *Упиваясь неприятно хмелем светской суеты* (А. Пушкин)
- 3) *Мы пьем из чаши бытия с закрытыми глазами...* (М. Лермонтов);
- 4) *Выткался на озере Алый цвет зарю...* (С. Есенин);
- 5) *Изба-старуха челюстью порога Жуёт пахучий мякиш тишины*
(С. Есенин);
- 6) *А вы ноктюрн сыграть могли бы На флейте водосточных труб?*
(В. Маяковский);
- 7) *Младенческая грация души Уже сквозит в любом её движении*
(Н. Заболоцкий);

- 8) *Отчего ты сегодня бледна? Оттого что я тёрпкой печалью
Напоила его допьяна* (А. Ахматова);
- 9) *Всей бессонницей я тебя люблю! Всей бессонницей я тебе внемлю*
(М. Цветаева);
- 10) *Дремлет на стене моей Ивы кружевная тень* (Н. Рубцов).

Студентам была поставлена задача: выписать из предложений одно или несколько словосочетаний, в которых есть метафоры. Исходя из особенностей учебных программ по русскому языку в КНР, где внимание лексикологии, семантике, синтаксису и стилистике отведено преимущественно только в практическом аспекте, мы предварительно провели лексическую работу со студентами, в ходе которой вспомнили особенности переносного лексического значения и уточнили значения неизвестных слов в предложенных поэтических фрагментах.

Традиционно среди основных пошаговых приёмов, с помощью которых предлагается изучать узуальные метафорические значения слов русского языка, называют 1) распознавание, 2) реконструкцию и 3) интерпретацию, которые «в простейших случаях сливаются в один познавательный акт» (Гаучи 2007:16).

Поставленная в ходе эксперимента задача непосредственно иллюстрирует начальный этап понимания метафоры, то есть её распознавание (первая задача). Сложность этого этапа обусловлена тем, что когнитивные процессы метафорического осмысления того или другого явления, понятия, концепта со стороны автора (адресанта) и со стороны адресата речи существенно различаются. Для говорящего, по наблюдениям М.В. Никитина, это поиск моделирующих аналогов зародившейся мысли, оптимально высвечивающих её содержание и структуру. В то время как слушающий (адресат) в начале когнитивного процесса целиком зависит от имени, его значения и контекста, в котором имя употреблено. Концепт же формируется вслед за именем в результате мыслительных усилий преодолеть неуместность имени при прямозначном его осмыслении (Никитин 2002:261-262). Именно на этой «неуместности имени» между предметами и явлениями окружающей действительности, с точки зрения реальных отношений, мы акцентируем внимание инофоново в процессе обучения и при выявлении образно-метафорических сочетаний слов.

Полученные в итоге результаты мы представили в виде уравнений. Каждое уравнение содержит такие данные:

первая цифра – количество участников эксперимента,

вторая цифра – количество полученных реакций, которые включают реальные метафорические словосочетания (третья цифра) и сочетания, не имеющие признаков метафоры, то есть ложные метафоры (четвёртая цифра),

пятая цифра – количество вопросов с отсутствующими реакциями. Номер каждой формулы соответствует номеру высказывания:

- 1) $36 = 19 (14 + 5) + 17$
 $100\% = 52.8\% (38.9\% + 13.9\%) + 47.2\%$
- 2) $36 = 19 (10 + 9) + 17$
 $100\% = 52.8\% (27.8\% + 25\%) + 47.2\%$
- 3) $38 = 29 (17 + 12) + 9$
 $100 = 76.3\% (44.7\% + 31.6\%) + 23.7\%$
- 4) $37 = 27 (19 + 8) + 10$
 $100\% = 73\% (51.3\% + 21.6\%) + 27\%$
- 5) $36 = 21 (16 + 5) + 15$
 $100\% = 58.3\% (44.4\% + 13.9\%) + 41.7\%$
- 6) $36 = 20 (10 + 10) + 16$
 $100\% = 55.6\% (27.8\% + 27.7\%) + 44.4\%$
- 7) $37 = 20 (14 + 6) + 17$
 $100\% = 54\% (37.8\% + 16.2\%) + 46\%$
- 8) $38 = 20 (10 + 10) + 18$
 $100\% = 52.6\% (26.3\% + 26.3\%) + 47.4\%$
- 9) $36 = 14 (8 + 6) + 22$
 $100\% = 38.9\% (22.2\% + 16.8\%) + 61.1\%$
- 10) $38 = 22 (15 + 7) + 16$
 $100\% = 57.9\% (39.5\% + 18.4\%) + 42.1\%$

В целом эти данные говорят о том, что инофоны проявили уровень знаний русского языка, достаточный для распознавания поэтических метафор, которые в большинстве своём отражают индивидуально-авторскую картину мира, хотя и построены на основе традиционных для русского языкового сознания моделей. Предложенные для анализа тексты содержат метафоры, актуализирующие разные когнитивные модели, характерные для русского языкового сознания: антропоморфные, предметоцентричные, биоморфные, синсетичные и др. Респонденты с одинаковым уровнем понимания распознали метафорические словоупотребления, созданные по разным моделям.

Наибольший процент недопонимания (предложение, которое не получило реакций – 61.1 %) связан с интерпретацией абстрактных понятий, называющих физиологическое состояние человека «бессоница».

զգացմունքային, հոգեբանական ծանր և խոր ասելիքով: Սեթին մի կին է, որ ստիպում է ընթացողին վերապրել իր կյանքը, իր հիշողությունները, իր ցավը: Հերոսուհուն հաջողվել էր բազմաթիվ դժվարություններով փախչել ստրկության ճամբարից, սակայն միևնույն ժամանակ դառնալ իր հիշողության, ցավի, խեղտող մեղքի զգացումի, և անհամար վախերի ստրուկը: Այս կերպարի միջոցով Մորիսոնը պատկերում է ազատության մեջ ազատություն տենչող կնոջ կերպար: Սեթին ապրում էր իր տանը, որդիների, դստեր և իր իսկ կողմից սպանված աղջնակի ուրվականի հետ: Մորիսոնը ընթացողին տեղափոխում է մի մոգական աշխարհ, որտեղ ընթերցողը ակամայից խորհում է ոչ թե իրադարձությունների հավաստիության, այլ կյանքի վայրիվերումների, դաժանության (ինչին Մորիսոնը անդրադառնում է իր գրեթե բոլոր գործերում), սիրո, մայրական անմնացորդ և միևնույն ժամանակ հիվանդագին հոգատարության, մեղքի զգացումով ապրելու և ի վերջո դրանից ազատվելու հնարավորության մասին:

Սեթին ապրում էր իր կյանքը աղջկա ուրվականի հետ հարմարված և այդ ամենի գերին էր դարձրել նաև իր մյուս աղջկան, Դենվերին, քանզի որդիները պարզապես փախուստի էին դիմել, ինչպես որ ինքն էր ժամանակին փախել: Սակայն կարծես, ամեն ինչ փոխվում է, երբ հայտնվում է Փոլ Դին, Սեթի «Երջանիկ ճամբարի» ընկերը, և որը հերթական փոթորկի ժամանակ ընդդիմանում է «փոքրիկ» ուրվականի քմահաճույքին: Եվ այն պահին, երբ Մորիսոնի հերոսները փորձում են կտրվել մոգական և բնական դարձած մղձավանջից, նոր ալիք է բարձրանում, և Սեթի տան առաջ նրանց սպասում է մոտ տասնութ տարեկան մի աղջնակ, որն իրականում կարծես մեկամյա երեխա լինի, և որի անունը լինում է «Սիրելի», ինչպես որ գրված էր Սեթի աղջկա տապանաքարին:

Մոգական ռեալիզմում հաճախ խախտված է պատճառահետևանքային կապը: Ընթերցողն այստեղ հանդիպում է մի անհավանական իրականության, որը թեպետ սկզբից հերոսների կողմից ընդունվում է զգուշությամբ, սակայն միևնույն ժամանակ ընկալվում է, որպես հավանական մի իրողություն: Մորիսոնը ստեղծում է գեղարվեստական այնպիսի պատկերներ, որ ընթերցողն այլևս չի անդրադառնում «ինչպես, երբ և որտեղ» հարցերին, այլ պարզապես հետևում է շրջադարձային այն օղակին, որը սկսում է այդ պահից ի վեր գլորվել, իր հետ բերելով բազմաթիվ նոր հարցեր, ստանալով մոգական «անհնարին» պատասխաններ, և ստիպում է ընդունել այդ անհնարինը, որպես բնական և սպասված իրադարձություն:

Հատուկ ուշադրություն է պահանջում ծնող-երեխա հարաբերությունների Մորիսոնի ներկայացումն ու մեկնաբանումը: Սեթիի դուստրը՝ Դենվերը միջավայրից կտրված և փակված ապրում է իրենց տանը, և ինչպես գրքի բոլոր կերպարները, լուռ կրում է իր դերը: Սիրելիի գալուստը տակն ու վրա է անում անցած ամեն բան՝ իր հետ բերելով փոթորկային փոփոխություն բոլորի կյանքում: Սեթին մոռանում է բոլորին և ամեն ինչ, և կարծես փորձելով քավել իր մեղքը աղջկա առաջ, իրեն ամբողջությամբ նվիրում է Սիրելիին, սակայն մեկ տարեկան կամակոր աղջկա հոգեբանություն ունեցող Սիրելին, շուտով Սեթին հասցնում է անկողնային վիճակի: Այդ դժվարին և, թվում է, արդեն փակուղի տանող ճանապարհը նրա դստեր՝ Դենվերի համար, կարծես դուռ է բացում դեպի նոր կյանք, և նա ստիպված դուրս է գալիս տանից, և ինչպես Սիրելին էր վերադարձել կյանք՝ «հրաշքի», «պատիժի» կամ կարելի է անգամ ասել «Սեթիի փրկության» տեսքով, այնպես և Դենվերը վերադառնում է իրական կյանք:

Ստեղծելով բարդ հոգեբանական իրավիճակներ, Մորիսոնը կարողանում է ընթերցողին լարվածության մեջ պահել պատումի ամբողջ ընթացքում, և իրարարամերժ զգացմունքային պատկերները հասնում են իրենց գագաթնակետին ստեղծագործության ավարտին, երբ Սիրելին, մուտքի մոտ կանգնած, ինչպես անակնկալ հայտնվել էր, այնպես էլ անհայտանում է՝ տալով Սեթին այդքան բաղձալի ազատությունը: Կարծես ծովը փոթորկից հետո, հանկարծ, խաղաղություն է իջնում բոլորի հոգիներին: Այլևս Սեթին կրել էր այն կտտանքները, որ գուցե Սիրելին, իսկ գուցե հենց ինքը՝ Սեթին էր ուզում, որ կրեր: Այն հակասական ուրախությունը, ֆիզիկական տանջանքներն ու հոգեկան տառապանքը, որն իր հետ բերում է Սիրելիի այլանդակության հասնող կերպարը, Սեթին հասցնում է խելագարության, բայց միևնույն ժամանակ օգնում է ի վերջո կտրվել տանջող հիշողություններից, և ազատվել ապրելուն խանգարող մեղքի զգացումից: Թվում է, թե Սիրելին քանդում էր ամեն բան, սակայն նրա անհետանալուց հետո Մորիսոնին հաջողվում է ընթերցողին համոզել, որ ընդունի, և գուցե անգամ սիրի Սիրելիին, հասկանալով, որ միայն դա էր Սեթիի ազատության ճանապարհը:

Կարծում եմ մոգական ռեալիզմի գրավչությունն այն է, որ հեղինակները ընթերցողին տալիս են ընտրության հնարավորություն՝ հավատալ մոգականին, թե պրագմատիկ այն իրականությանը, որտեղ ամեն ինչ բացատրվում է ֆիզիկայի օրենքների սահմաններում: Մոգական ռեալիզմը ստեղծում է հնարավորություն, հավատով լի կառուցել իրականություն, որը լի է հրաշքներով, անբացատելի երևույթներով և մոգական մտածողությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եղիազարյան Գ., «Անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի արժեքաբանական հարացույցը» մենագրություն, Երևան 2019:
2. Кислицын К. Н. Магический реализм. <https://cyberleninka.ru/article/n/magicheskiy-realizm/viewer>
3. Магический реализм: характерные черты.// <http://kustodiev-art.ru/?item=e7f68878-8915-4d5e-b762-5411c44204e0&termin=aa0254d2-da31-4b08-9cf5-cd71184f9f8e>
4. Мифология : Энциклопедия / гл. ред. Е.М. Мелетинский. - Репр. - М. Большая Российская энциклопедия, 2003.
5. García Mario T.: Luis Leal: An Auto/Biography, 2000.
6. Franz Roh: Nach-Expressionismus. Magischer Realismus. Probleme der neuesten europäischen Malerei. Klinkhardt & Biermann, Leipzig 1925.
7. <http://www.litblog.info/po-tropam-magicheskogo-realizma/>

REFERENCES

1. Eghiazaryan G., «Angliaci & amerikaci kin groghneri erkeri arjheqabanakan haracowucy'» menagrowt'yown, Er&an 2019:
2. Kislicyn K. N. Magicheskij realizm. <https://cyberleninka.ru/article/n/magicheskiy-realizm/viewer>
3. Magicheskij realizm: harakternye cherty.// <http://kustodiev-art.ru/?item=e7f68878-8915-4d5e-b762-5411c44204e0&termin=aa0254d2-da31-4b08-9cf5-cd71184f9f8e>
4. Mifologija : Jenciklopedija / gl. red. E.M. Meletinskij. - Repr. - M. Bol'shaja Rossijskaja jenciklopedija, 2003.
5. García Mario T.: Luis Leal: An Auto/Biography, 2000.
6. Franz Roh: Nach-Expressionismus. Magischer Realismus. Probleme der neuesten europäischen Malerei. Klinkhardt & Biermann, Leipzig 1925.
7. <http://www.litblog.info/po-tropam-magicheskogo-realizma/>

АНИ АСЛАНЯН - АКТУАЛИЗАЦИЯ «МАГИЧЕСКОГО РЕАЛИЗМА» В РОМАНЕ ТОНИ МОРИСОНА «ЛЮБИМАЯ»

Ключевые слова: магический реализм, мифология, сказка, афро-американская традиция, свобода, Тони Моррисон, роман «Любимая»

В статье представлены литературные традиции и особенности магического реализма. Проанализирован роман знаменитого

представителя современной американской литературы Тони Морисона «Любимая». Представлен краткий обзор образов, присутствующих в романе, чья мистическая эстетика проявляется в области «магического реализма».

ANI ASLANYAN - THE ACTUALIZATION OF MAGICAL REALISM IN THE NOVEL “BELOVED” BY TONI MORRISON

Keywords: *magical realism, myth, fairy tale, Afro-American tradition, freedom, Toni Morrison, novel “Beloved”*

The article introduces the peculiarities and traditions of Magical Realism in fiction. Toni Morrison is considered to be one of the most prominent representatives of Magical Realism. The article sums up the images and magical aesthetic of the novel in the context of Magical Realism.

Ներկայացվել է՝ 26.09.2019

Գրախոսվել է՝ 24.09.2019

Երաշխավորվել է ԵՊԼՀ Անգլերենի
ամբիոնի կողմից՝ 27.09.2019

ՀՏԴ 821.19(091)

**ԸՆՏԱՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ**

ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*Կինը ընտանիքի կա՛մ փրկությունն է, կա՛մ կործանումը
Ֆ. Ամիել*

Հիմնաբառեր՝ *հայ ժամանակակից կին գրողներ, ընտանեկան մոդել, փոխակերպում, կնոջ դերն ընտանիքում, կարծրափայեր*

Հոդվածում ուսումնասիրվում է ժամանակակից հայ կին գրողների երկերում ընտանեկան մոդելի և ընտանիքում կնոջ դերի փոխակերպման առանձնահատկությունները: Ներկայացված գրողները գալիս են փաստելու, որ կնոջ և տղամարդու սոցիալական, քաղաքական, իրավական փաստացի հավասար իրավունքներով և հնարավորություններով ապրելու ու գործելու ձևական միջը կազմալուծվել է և փոխարինվել կնոջ իրական ազատագրումով: Այս գրողները ներկայացնում են կնոջ և ընտանիքի հիմնախնդրի նորովի լուծում՝ առաջադրելով երևույթի սոցիալական, բարոյաբանական, կենսաբանական ու փիլիսոփայական առնչությունները:

Տարբեր դարերում և տարբեր քաղաքակրթություններում ընտանիքի մոդելը տարբեր սահմանումներ է ունեցել: Ժամանակակից ընտանիքի մոդելը բացահայտելու տեսանկյունից հետաքրքրական է 19-20-րդ դարերի սահմանագծում ծագած՝ ամուսնական հարաբերությունների և ընտանիքի մասին հաստատութենական (ինստիտուցիոնալ) տնտեսագիտական վերլուծությունը: Ամերիկյան այս ուղղության հիմնադիր Թորստեն Վեբլենն իր «Պարապ դասակարգի տեսություն» (Veblen 1899) աշխատության մեջ նշում է, որ կինը պատմականորեն դիտվել է սկզբնապես որպես հաղթողի ավար, ապա՝ որպես իր տիրոջ համար սպառողական բարիքներ արտադրող և, վերջապես՝ որպես տղամարդու հաջողության և հարստության ցուցադրման օբյեկտ: Իսկ ժամանակակից ամուսնական, ընտանեկան հարաբերությունների տնտեսագիտական տեսությունն իր ծավալապաշտական նկրտումները տարածում է նույնիսկ ընտանիքի մոդելի վրա: Այս ուղղության ներկայացուցիչ **Բեկերի** կողմից ներկայացված ընտանիքի մոդելի հիմքում այն ենթադրություն է, որ ընտանիքում առկա է միայն մեկ անդամ, հանուն որի առավելագույնացվում է օգտակարության գործընթացը. «Ընտանիքի

գլխավորի դրսևորած վարքը կարող է ընտանիքի մյուս անդամներին դրդել համապատասխան վարքի և նպաստել նրանց բարեկեցության ընդհանուր մակարդակի առավելագույնացմանը» (Becer 1981:288): Բեկերի բնորոշմամբ՝ ամուսնությունը տղամարդկանց և կանանց տեսակավորման գործընթաց է, որի ժամանակ ստեղծվում է մի առանձնահատուկ ընտանեկան կապիտալ, որը ներառում է այնպիսի բարիքներ, ինչպիսիք են երեխաները, հասարակական կարծիքը, շրջապատի հարգանքը, նախանձը, չարամտությունը, առողջությունը և զգայական հաճույքները:

Ընտանիքի սոցիալ-հոգեբանական, տնտեսագիտական տեսություններից գատ՝ գոյություն ունի նաև ընտանիքի բարոյահոգեբանական մոդել, որում կարևորվում է տղամարդու և կնոջ զգացմունքային, զգայական վարքը: Այս համատեքստում՝ համաշխարհային, ինչպես նաև հայ գրականությունը ընդգրկում է առավելապես արական սեռի գրական ավանդույթը: Ամենավաղնջական ժամանակների տեքստերից մինչև դասական գրականություն տղամարդ կերպարներին տրվել է ազատ գործելու իրավունք՝ լինելու և դառնալու այն, ինչ իրենք են ուզում, հաղթելու և նույնիսկ ձախողվելու, եթե իրենք դա են նախընտրում: Տղամարդն էր կյանքի բոլոր փորձությունների, գործողությունների մասնակիցը, քաղցր ու դառը պահերի համտեսողը: Իսկ եթե կին կերպարը շեղվում էր ընդունված նորմից և իրեն վերագրված դերից, խստաշունչ կաղապարներից և կարծրատիպերից, ապա անմիջապես ուշադրություն էր հրավիրվում մաքրամաքրության կարևորության վրա, որի կրողները հարկ է, որ լինեին կանացի կերպարները: Կանացի կարծրատիպերը գրականության մեջ երկար ժամանակ նույնքան անփոփոխ էին, որքան նրանց վերագրված սահմանափակումներն իրական կյանքում :

Վարդիմանի «Կինը հին աշխարհում» գիրքը հետազոտական հարուստ նյութ է տալիս հին աշխարհում ընտանեկան բարքերի, կնոջ կենսաբանական զգացողությունների, սեռական հակումների, սոցիալական կացության վերաբերյալ՝ ժամանակային լայն դիապազոնի (նեոլիթյան հեղափոխությունից մինչև քրիստոնեությունը) ուսումնասիրության մեջ վերցնելով Շումերը, Բաբելոնը, Եգիպտոսը, փոքրասիական երկրները, անտիկ Հունաստանն ու Հռոմը: Այստեղ նշվում է. «Քրիստոնեությունը մի ամբողջ հեղափոխություն նշանավորեց մարդկային կեցության բոլոր ասպարեզներում, այդ թվում նաև ընտանիքի և բարոյականության ոլորտում: Ընտանիքի, կնոջ, կենցաղավարության, սեռական, սոցիալական, և իրավունքի այլ հարցերում նա որոշակիորեն սահմանափակեց այն ազատությունները,

որոնք արտոնում էին հեթանոս աստվածները: Ընտանիքի մենամուսնական կառուցվածքը այլ հարաբերության վրա է դնում տղամարդու և կնոջ իրավունքը. կինը մեկուսանում է լիապես, դառնում ամուսնու ենթական՝ բացառապես ընտանեկան պետքերի ոլորտում՝ բացառելով սեռային ազատության հակումները» (տես՝ Քալոյան 2005:49-50):

Այսպես, տարբեր դարերում և տարբեր քաղաքակրթություններում «տղամարդ-կին» և «ընտանիք» մոդելների էությունն ու արժեքը սահմանվել է տարբեր կերպ, և թեպետ «կին» հասկացությունը միշտ դրվել է «տղամարդ» հասկացության կողքին՝ նրանց միջև աղերսները տարբեր են եղել: Օրինակ, 16-րդ դարի Եվրոպայի հասարակական կառուցվածքը կանանցից ակնկալում էր, որ նրանք կենտրոնանան տնային գործերի վրա, ինչն էլ կխթաներ նրանց ընտանիքների, հատկապես ամուսինների բարօրությունը: Տղամարդու գերիշխանությունը և նրա կամայականությունը կնոջ նկատմամբ անսահման էր, որը թույլ է տալիս տղամարդուն նույնիսկ կնոջ դավաճանության չնչին իսկ կասկածի դեպքում նրան ենթարկելու ծանրագույն պատժի՝ ցմահ փակելու մենաստանում, իսկ Անգլիայի ցածրադիր խավերի համար անգամ թույլատրելի էր համարվում ծանծրալի դարձած կանանց վաճառքը:

Ընտանիքի մոդելի մասին հետաքրքրական դրույթներ է պարունակում Ռուսոյի հայեցակարգը, որը ներառում է սեռերի բնութենական նախանշվածության դրույթը, ըստ որի՝ կանանց և տղամարդկանց առաքինությունները, դաստիարակության և կրթության նպատակները տարբեր են: «Էմիլ կամ դաստիարակության մասին» (1762) աշխատությունում Ռուսոն կարևորում է կնոջ գերազանցապես ընտանեկան առաքինությունների ձևավորումը: Կնոջ կրթությունը պետք է նրան նախապատրաստի ընտանեկան կյանքին և երեխաների դաստիարակությանը, դրանով է պայմանավորված, որ նա տեղ ունի միայն հասարակության կյանքի մասնավոր ոլորտում՝ ընտանիքում. «Կինը կապ է հանդիսանում երեխաների և նրանց հոր միջև. որքան քնքշանք ու խնամք պետք է գործադրի կինը ընտանիքում համերաշխություն պահելու համար: Եվ վերջապես այդ բոլորը կինը կատարում է սրտի թելադրանքով, այլ ոչ թե բարոյականության պահանջով: Այստեղից հետևում է, որ կինը պետք է հոգ տանի իր համբավի մասին և պահպանի իր պատիվն ու բարի անունը, նույնքան նախանձախնդրությամբ, ինչպես պահպանում է առաքինությունը» (Ռուսո 1960:10-11):

Հիրավի, հասարակական գիտակցության բոլոր մակարդակներում, ինչպես նաև գրականության մեջ հստակ գիտակցվում էր, որ այն միակ

ուղորտը, որում կինը կարող էր ինչ-որ ձևով դրսևորել իրեն և ինքնահաստատվել ամուսնությունն ու ընտանիքն են (Դրայգերի Անջելան, Ջեննի Գերհարդը, Ռոբերտան, Թեքերեյի Էմիլյա Սեդլին և Ռեբեկա Շարպը, Դիկենսի Էդիթը և այլք):

Ինչևէ, մի քանի դարերի նահատակությունից հետո՝ կանայք որոշեցին մարտահարավեր նետել սեռերի անհավասար պատկերումներին և հավաստել իրենց զորությունը՝ մշակույթի կերտման խնդրում: «Նոր կինը» ցանկանում էր ակտիվ մասնակցություն ունենալ իր կյանքի զարգացումներին և ոչ թե ընտանիքում կրավորական դերում հանդես գալ: 18-րդ և 19-րդ դարերում Արևմտյան Եվրոպայում կանանց շարժումն ուղեկցվում էր, այսպես կոչված, «կանանց» գրականությամբ, որն էլ լի էր կանացի զարմանահրաշ կերպարներով, սակայն ինչպես և նախորդ դարաշրջաններում, շեշտադրվում էր սոսկ կանանց գեղեցկությունը և ներդաշնակությունը ընտանիքում՝ Ֆրենսիս Բըրնիի Էվելինան, որը կարևորում էր կնոջ համեստությունը, միամտությունը և, նույնիսկ, անպատասխան սիրո հմայքը, Ջեյն Օսթինի՝ ռացիոնալ և զգացմունքային Ջեյնը, Էլիզաբեթը, Մարիանան և Էլինորը, Շ. Բրոնտեի Ջեյն Էյրը, որը անկախ, խելացի, ազատասեր, սակայն ոչ ազատամիտ կին էր, Էմիլի Բրոնտեի «այս աշխարհի համար չափազանց լուսավոր» Քեթին, Ջորջ Էլիոթի խորաթափանց ու շրջապատից առանձնացող կանայք: Սրանց փոխարինելու եկավ ամերիկացի գրող Քեյթ Չոփինի Էդնան, որը կիրքն ընդունեց որպես գրականության լուրջ և «օրինական» արժեք, Մարգարեթ Միթչելի համարձակ, ինքնաբավ, հնարամիտ և ազատամիտ Սքարլեթ Օ՛Հարան և այլ հերոսուհիներ, որոնք դառձան այն կերպարները, որոնք ներկայացնում են արժեքային նոր հաստատուններ որդեգրելու ուղին և դրա համար պայքարը:

19-րդ դարում կանանց կողմից կանանց համար ստեղծված գրականության լավագույն ներկայացուցիչների երկերում նորովի է պատկերվում կինը՝ արժևորելով կնոջը ոչ միայն որպես ընտանիքի անբաժան մասի, այլ նաև որպես անհատի իրավունքները: Դրանք սիրո, երջանկության, ընտանիքում, ամուսնական հարաբերություններում կնոջ դերի փոփոխության, արժևորման, ինքնագիտակցության և ինքնության փնտրտուքներ էին: Փոխվում է նաև ընտանիքի մոդելը՝ կին գրողները ստեղծում են երջանկության համար պայքարող կանանց կերպարներ՝ երազելով սիրո վրա խարխսված ընտանիքի մասին: 20-րդ դարավերջին արդեն կին գրողները դուրս են գալիս ընտանեկան բանտերում կողպված կանանց կյանքն ու տառապանքները նկարագրելու շրջանակներից և հասարակությանն առաջարկում ոչ միայն նոր թեմաներ, այլ նաև վարքի նոր մոդելներ և պաշտպանում կնոջ ինքնուրույն ճակատագրի

իրավունքը: Իսկ 21-րդ դարասկզբին ստեղծագործող կին գրողների երկերում ծնվում է նոր տիպի կերպար, որի մեջ հանդիպում են և սկսում միմյանց հետ փոխառնչվել արժեքային տարբեր կողմնորոշիչներ, որոնք երբեմն հակասում են այլ մարդկանց կենսակերպին և շրջապատող աշխարհի արժեհամակարգին:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին արևելահայ գրականության մեջ նույնպես տղամարդ գրողների կողքին երևան եկավ կին արձակագիրների մի ամբողջ համաստեղություն, անուններ, որոնք իրենց ստեղծագործություններով արտահայտում էին նոր գաղափարներ (Սաթենիկ Մկրտչյան, Ալիս Հովհաննիսյան, Նելլի Շահնազարյան, Սուսաննա Հարությունյան, Դիանա Համբարձումյան): Մերժելով միջնադարյան և պուրիտանական ասկետիզմը՝ ժամանակակից հայ կին գրողները հանդես են գալիս կյանքի, ընտանիքի, սիրո ամուսնության, սեռերի փոխհարաբերության, բարոյականության հարցերի վերաբերյալ՝ որպես ընտանեկան նոր հարաբերությունների ազդարարներ: Նրանց արձակում իշխող տեղ են գրավում ավանդական պատկերացումներից, նախապաշարումներից, կարծրատիպերից ազատ, սիրո, երջանկության, բարոյականության խնդիրները: Գրականագետ Ժենյա Քալանթարյանը, խոսելով արդի հայ գրական միտումների մասին՝ նշում է. «Գեղագիտական հիմնավորվածությունը պայմանավորված է որոշակի տարումների վերացմամբ, ժամանակակից ռեալիզմի կամ նրա այն տարատեսակի բնույթով, ըստ որի՝ ամեն ինչի մասին կարելի գրել ցանկացած ձևով: Այս դեպքում արդեն քաղաքակրթական նրբանկատությունը հետ է քաշվում, և ընթերցողը հայտնվում է մերկ իրականության առջև, ուր արագահոս մեր դարում բնազդն ավելի արագ է գործում, քանի որ շտապող մարդը զգացմունքների վրա ծախսելու ավելորդ ժամանակ չունի»: (տես՝ Քալանթարյան 2014):

Ներկայացնենք հայ ժամանակակից կին գրողների երկերում առկա ընտանիքների մոդելի մասին մի քանի դատողություն:

Ժամանակակից գրող Ալիս Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում է կինը, ընտանիքը, որտեղ առկա են սիրային ազատ կապերը, բնագիտության վերջին տվյալներով լուսաբանված մարդ արարածը՝ իր կրքերի, բնազդների, մղումների ապրումների մեջ, որը տանում է հաճույքի փիլիսոփայության ցինիզմին: Նրա «Օղակը փակվում է» վեպում ներկայացված է մի քանի ընտանիք՝ Քրիստինա-Սթեն, Աննա-Հիսուս, Մաքրուհի-Լևոն, Լուիզա-Հակոբ, հայր ձկնորսը-մայր ձկնորսուհին, Էմմա-Սեդրիկ): Վեպում հանդիպում ենք բնազդի մղումներին ենթակա կանանց բազում օրինակներ, որոնք կրքի անհաղթահարելի ճանապարհին են հայտվել կամ նախնական

բռնության ենթարկվելու, կամ անտեսված լինելու, կամ էլ իրենք իրենց հաղթել չկարողանալու պատճառով: Վեպի հերոսներից մեկի՝ Ֆոքսի կարծիքով, սիրո զգացումը իր տեղը ընդմիջտ զիջել է կրքին. «Կանացի այդ թանկարժեք մարմինը հիմա բոլոր անկյուններից մեզ վրա է նետվում, չի սպասում, որ մենք նետվենք իր ոտների առաջ» (Հովհաննիսյան 2003: 89):

Նար-Դոսի «Մեր թաղը» ժողովածուի պատմվածքների շարքն է հիշեցնում Ա. Հովհաննիսյանի «Պատահիկներ մեր փուչ կյանքից» խոսուն վերնագրի տակ ընդգրկված պատմվածքների հավաքածուն: «Եսթեր» պատմվածքում ընտանիքի ավանդական դերերը բոլորովին փոխված են. գեներալ տղամարդը զրկված է ձայնի իրավունքից, կինը նրան բազմիցս դավաճանում է, և նրա ձայնն է որոշիչ ընտանիքում: Իսկ Երկրորդ աշխարհամարտին մասնակցած գեներալի աննկուն, կոփված սիրտը կարողացել է դիմանալ սիրասուն կնոջ մանր ու մեծ դավաճանություններին, և տղամարդը դարձել է խղճուկ և անզոր:

Սուսաննա Հարությունյանն իր պատմվածքներով փորձում է մոտենալ ժամանակի էությանը՝ կյանքի խաչուղիներում ընկնող ու բարձրացող իր հերոսների ճակատագրով և նրանց խառնվածքի ու արարքների սեղմ նկարագրությամբ: Նրա «Հավերժություն» խորագիրը կրող ժողովածուի պատմվածքների հերոսուհիները կամային ուժեղ բնավորություններ են, որոնք համառորեն, հաղթահարելով հասարակական կարծրատիպերը՝ ձգտում են հասնել կամային կնոջ կերպարին, որը դեմ է ընտանիքում կնոջ համակերպությանը և գոյության խոնարհ կերպին: Հետաքրքրական է երկրորդ՝ «Իսաչելությունը» պատմվածքը: Հերոսը անուն չունի. նա ընդհանրական կերպար է՝ տղամարդ անվանումով, իսկ հերոսուհին Շուշանն է: Գրողը փորձում է հասկանալ և ներկայացնել ֆիզիկապես անզոր, հաշմանդանություն ունեցող տղամարդու հոգեկան բարդ աշխարհը, որն անմիջական ականատեսն է կնոջ դավաճանության: Համաշխարհային գրականության մեջ հաճախ ենք տեսնում նմանօրինակ պատկերներ: Հեմինգուեյի «Ֆիեստա»-ում պատերազմում հաշմանդան դարձած, տղամարդկային առնականությունը կորցրած, ֆիզիկապես անզոր Ջեյք Բարնսը կնոջը չէր կարող տալ երջանկություն և հասկանում է, որ այդ պակասը նա պետք է գտնի ուրիշ տղամարդկանց մեջ: Բայց այդպիսի գիտակցությունը փոքրինչ հարիր չէ գյուղական միջավայրում գտնվող հայ տղամարդու համար, որտեղ այնքան ուժեղ է տղամարդկային արժանապատվության զգացումը և հասարակական կարծիքի գերակայությունը: Տղամարդ-կին միջանձային հարաբերություններում այստեղ ուղղակի գլխիվայր է շրջված տղամարդու դերը: Արձակագիրը փորձում է նոր գիտակցությամբ օժտել

իր հերոսուհիներին, որոնք Շիրվանզադեի հերոսուհիների (Մելանյա, Հերսիլե, Արմենուհի) նման ընդվզում են հասարակական նորմատիվ օրենքների կաշկանդումների դեմ և ինքնական նվաճում իրենց ազատությունը՝ պայքարելով անձնական երջանկության համար: Սուսաննա Հարությունյանը փորձում է կերտել նոր գաղափարներով համակված, ավանդական հայ կնոջ մտածելակերպից ձերբազատված, ազատամիտ, համարձակ, հասարակական նախապաշարումներին ընդդիմացող կնոջ նոր կերպար:

«Լուրեր կյանքից» վերնագրի տակ ներկայացված պատմվածքների առանցքը գյուղն է ու նրա մարդիկ՝ բնական ու գոյության պայքարի տարերքի մեջ, որտեղ արժարժվում են սոցիալական ծանր վիճակով պայմանավորված գյուղական կյանքի հիմնախնդիրները և դրանցում հայտնված տարաբնույթ մարդկային ճակատագրեր, որոնք խեղվել են հասարակական և բարոյական արժեքների կործանումից: Իսեղճ ու խոնարհ, ամոթխած ու փխրուն հայ գեղջկուհիների, ռոմանտիկ երազողների փոխարեն, ինչպես նրանց նկարագրել է դասական գրականությունը, գրողը բացահայտում է երջանկությունը զգալ ցանկացող նոր բնավորություններ՝ փորձելով հասնել ժամանակակից կնոջ նոր մտածողությամբ պայմանավորված կյանքի բազմերանգությամբ: Հասարակական և սոցիալական կյանքի համար հատկանշական շատ երևույթներ միանգամայն այլ արձագանք ու փիլիսոփայական հիմնավորում ունեն Ս. Հարությունյանի արձակում: Նրա «Խմբանկար մեղայլներով և անմահներով» ժողովածուն իրականության գեղարվեստական վերակերպավորման ուշագրավ փորձ է, որում հեղինակը փորձում է առօրեական-կենցաղայնության նեղլիկ պատկերների մեջ, ավանդույթի էութաբանական- իմաստային ընկալումներից ձերբազատված, նորովի մտածողությամբ, նոր վարքագծով ներկայացված իր հերոսների միջոցով քննել կին-տղամարդ ֆենոմենը ամբողջացնող նեղ միջանձնային հարաբերությունները, որը երբեմն ընդհանրացվում է պատումների իմացաբանական իմաստների ու միֆապոետիկական ավանդույթի միջոցով. «Ու եթե XX դարի քննադատությունը իմաստավորում էր կնոջ սուբյեկտիվության հարցերը, ապա XXI դարասկզբում շեշտվում է կին-սուբյեկտը, քանզի վերջինիս սովորությունների սանդղակը (habitus) կազմում են նախաձեռնողության, կրթվածության, ինտելեկտի, սոցիալ-մշակութային դերի և այլ հատկանիշներները, որոք տոպոլոգիական բևեռում իզական կենսաէներգիան ուղղորդում են մասնավորի տիրույթ, որտեղ ինքնիրացման գաղտնագրված վեկտորը մշտապես կոնֆլիկտի մեջ է

ժամանակակից կնոջ՝ մեծ աշխարհը գրավելու մղումների հետ» (տես՝ Համբարձումյան, <http://hraparak.am/?p=81409&l=am/>,

Այսպիսով, կնոջ կերպարը վերոհիշյալ կին-գրողների արձակում հագեցած է դարին համահունչ երանգավորմամբ, երբեմն ժամանակակից թվալու ցանկությամբ: Հաճախ կարող ենք հանդիպել ամուսնական դաշինքը դավաճանող կերպարներ, որոնք հանդես են բերված իբրև նոր գաղափարների համարձակ արտահայտիչներ: Նրանք բնագոյին, ենթագիտակցային կրքերին գերի հերոսուհիներ են, երբեմն էլ նահապետական հայ կնոջն այնքան խորթ գոեհիկ բառապաշարի կրողներ: Բնական է, որ մեծ աշխարհի փոփոխությունները չէին կարող չարձագանքել նաև գյուղական իրականության մեջ: Զոհրապյան դժբախտ այրիների, այինկաների տեղը զբաղեցնում են հաճախ բամբասասեր, տղամարդու իրավունքները ոտնահարող, ընտանիքում նրա դերը խլած, տղամարդուն ստորացնող, կենցաղային մանր հաշիվներով ապրող կանանց կերպարներ: Կյանքի ճգնված ավանդույթի և նախապաշարումների ավերակներից դուրս է ելնում կինը՝ մարմնական, գայթակղիչ և դժբախտ, հայտնված կրքերի փոթորիկներում: Հերոսուհիները, մոռացած կարծրատիպերը, մերձենում են մեղքին, այդ մերձեցումը կնոջ ներքին պահանջների բավարարումն է, կին, որն իր անհատականությունը արտահայտում է արդարև մեղսագործուհի լինելու ցանկությամբ, որի նպատակը որ միայն ընտանիքում երջանիկ լինելու, այլև՝ լիարժեք կին զգալու բերկրանքն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Ա., «Հավերժություն», Ե., 1996:
2. Հարությունյան Ա., «Լուրեր կյանքից» Ե., 2006, 2017:
3. Հարությունյան Ա., «Խմբանկար մեռյալներով և անմահներով», Ե., 2013:
4. Հովհաննիսյան Ա., «Օղակը փակվում է», Ե., 2003:
5. Հովհաննիսյան Ա., «Ճյուղեր-տերևներ»(Պատառիկներ մեր փուչ կյանքից), Ե., 2009:
6. Համբարձումյան Ն., Մարգինալ արձակ <http://hraparak.am/?p=81409&l=am/>
7. Ռուսո Ժ.Ժ. Էմիլ կամ դաստիարակության մասին, 2-րդ մաս, Ե., 1960:

8. Քալանթարյան Ժ., Ժամանակակից հայ արձակի վիճակն ու հիմնախնդիրները «Գրական թերթ» (18/05/2014):
9. Քալոյան Ա., Կինը 19-րդ դարավերջի հայ գրականության մեջ, Ե., 2005:
10. Becer G. A, Treatise on The Family. Cambridge, 1981.
11. Veblen Thorstein Theory of the Leisure Class, 1899. <https://www.britannica.com/topic/luxury/Social-aspect#ref1253131>

REFERENCES

1. Harowt'yownyan S., «Haverjhowt'yown», E., 1996:
2. Harowt'yownyan S., «Lowrer kyanqic» E., 2006, 2017:
3. Harowt'yownyan S., «Xmbankar mer'yalnerov & anmahnerov», E., 2013:
4. Hovhannisyan A., «O'ghaky' p'akvowm e'», E., 2003:
5. Hovhannisyan A., «Twyowgher–ter&ner»(Patar'ikner mer p'owch kyanqic), E., 2009:
6. Hambard'owmyan N., Marginal ard'ak
<http://hraparak.am/?p=81409&l=am/>
7. R'owsso Jh.Jh. E'mil kam dastiarakowt'yan masin, 2-rd mas, E., 1960:
8. Qalant'aryan Jh., Jhamanakakic hay ard'aki vitwakn ow himnaxndirner' «Grakan t'ert'» (18/05/2014):
9. Qaloyan A., Kiny' 19-rd daraverji hay grakanowt'yan mej, E., 2005:
10. Becer G. A, Treatise on The Family. Cambridge, 1981.
11. Veblen Thorstein Theory of the Leisure Class, 1899. <https://www.britannica.com/topic/luxury/Social-aspect#ref1253131>

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН - ТРАНСФОРМАЦИЯ ТРАДИЦИОННОЙ МОДЕЛИ СЕМЬИ В ПРОИЗВЕДЕНИЯХ СОВРЕМЕННЫХ АРМЯНСКИХ ПИСАТЕЛЬНИЦ

Ключевые слова: современные армянские писательницы, модель семьи, трансформация, роли женщины в семье, стереотипы

В статье исследуются особенности трансформации модели семьи и роли женщины в семье в произведениях современных армянских писательниц. Анализ творчества рассматриваемых в статье авторов

иллюстрирует тот факт, что миф о наличии фактически равных социальных и политических прав с мужчинами заменяется на идею настоящей свободы. Упомянутые в статье авторы предлагают новое решение проблем традиционной семьи и роли женщины в ней, ставя во главу угла этические, социальные, биологические и философские аспекты обсуждаемых проблем.

GAYANE YEGHIAZARYAN – TRANSFORMAION OF THE TRADITIONAL FAMILY MODEL IN THE WORKS OF CONTEMPORARY ARMENIAN WOMEN WRITERS

Keywords: *contemporary Armenian women writers, family model, the transformation, the role of a woman in the family, stereotypes*

The article presents the peculiarities of the transformation of the family model and the role of woman in the works of contemporary Armenian female writers. The author of the article states that the presented writers come to claim that the formal myth of living and acting with equal social, political, legal and equal rights and opportunities for men and women has been dismantled and has been replaced by real liberation of women. These writers present a new solution to the problem of woman and family by proposing social, moral, biological and philosophical implications of the phenomenon.

Ներկայացվել է՝ 20.09.2019
Գրախոսվել է՝ 20.09.2019

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀՂՄԱՆ ՁԵՎԵՐ
(ԱԿՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏՈՒՄ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ)**

ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ մեդալեպս, բանաստեղծական ռեֆլեքսիա, գերմանական ռոմանտիզմ, մտացածին, իրականության ու մտացածինի փոխհարաբերություն, ինքն իրեն գիտակցող և մեդալեպսիկական գրականություն, ինքնավերաբերություն, լեզվի ռեֆլեքսիա, ինքնառեֆլեքսիա

Վերջին տասնամյակներում որպես **մետալեպս**¹ (Nünning 2013:516) հայտնի գրական հնարի կիրառումը աներևակայելիորեն աճել է թե՛ գրականության մեջ, թե՛ ֆիլմերում: Խոսքը նախևառաջ մանկական ու պատանեկան գրականության մասին է, այդ թվում նաև հոլիվուդյան արտադրանքի. օրինակ՝ «Inception» (2010) ֆիլմում «իրական» կերպարները կարող են թռչել կատարել դեպի մտացածին աշխարհ, իսկ մտացածին կերպարները՝ դեպի «իրական» աշխարհ, «The Ring» (2002) սարսափի ֆիլմում էլ հերոսը տեսաժապավենից հեռուստացույցի միջոցով հայտնվում է իրականության մեջ:

Ժամանակակից գերմանալեզու գրականության մեջ մետալեպսը լայն հասարակայնությանը հայտնի դարձավ Դանիել Քելմանի «Ruhm» («Փառք») (2009) վեպի շնորհիվ: Այսօր անգամ համակարգչային խաղերում է օգտագործվում «խաղը խաղի մեջ» կառույցը: Արվեստի տարբեր ձևերում մտացածինի ազդեցության մասին քննարկումներն իրականացվում են ինքնառեֆլեքսիա եզրույթի կիրառմամբ: «Մետալեպսի խաղային և հեգնական էֆեկտները, ինչպես նաև գրականության՝ որպես արվեստի ձև ռեֆլեքսիայի հնարավորությունները, որոնք ընձեռում է մետալեպսը, վերջինիս դարձնում են հաճախակի

¹*Metalépsis* եզրույթը՝ հունարենից թարգմանաբար, նշանակում է «փախանակում»; Ժերար Ժենեթի «Discours du récit» (Figures III, 1972) աշխատության մեջ այն հանդես է գալիս որպես փոխանակում պատումայի նմակարգակների միջև, մասնավորապես որպես փոխանակում (Umschalten) պատումային (Diegese) ու լրացուցիչ կամ մետապատումային (extra- pder metadiegesische Welt) աշխարհների միջև:

կերաովող պատկերման միջոց մոդեռնիստական և պոստմոդեռնիստական գրականության մեջ» (Nünning 2013:516):

Բանաստեղծական ռեֆլեքսիաների գրական սկիզբը, սակայն, դրվել է գերմանական ռոմանտիզմի շրջանակներում: Այս համատեքստում առանձնահատուկ է **Է.Թ.Հ. Հոֆմանը**, քանի որ նա գերմանալեզու գրականության մեջ ոչ միայն ստեղծել է առաջին նարատիվ մետալեպսը (Scheffel 2007:168), այլ նա հաճախ օգտագործել է այն հնարը, որն ընդգծում է ընթերցողի դերը մտացածինն ստեղծելու գործում՝ միաժամանակ քանդելով այն: Խոսքն այստեղ մասնավորապես ընթերցողին ուղիղ կոչանելու մասին է²: Գրականության՝ իրականություն «ներխուժման» միջոցով տեղի է ունենում ընթերցողի պոետիկականացումը (Poetisierung), այսինքն՝ ընթերցողի ներքաշումը մտացածին աշխարհ: Իրականության ու մտացածինի փոխհարաբերությունը Հոֆմանի գործերում հանդես է գալիս հետևյալ հնարներով, կրկնօրինակի, հեգնանքի ու հումորի միջոցով, երևակայականի և առօրյականի հարաբերակցությամբ, ըղձական եղանակի պոետիկայով, կոչերով ընթերցողին, սերապիոնտիկայի³ ու կրկնության եղանակներով:

«Մետալապես» եզրույթը, ինչպես արդեն նշեցինք, անքակտելիորեն կապված է ստեղծագործության մետամակարդակի, այլ բառերով՝ մետականացման երևույթի հետ: **Մետականացում** ասելով հասկանում ենք «մետամակարդակի ընդգրկում ստեղծագործության, ժանրի կամ արվեստի ձևի մեջ, որից մետալեքստերականորեն (metareferentiell) հղում է կատարվում հենց այդ ստեղծագործության, ժանրի կամ արվեստի ձևերի տարրերին կամ կողմերին: Դա տեղի է ունենում արտահայտված կամ առնվազն ակնարկված (բանական (rationaler) արտահայտությունների, մեկնաբանությունների և այլ ձևերով, ինչը ենթադրում է արվեստի ձևերի կամ գրական գիտակցություն» (Wolf 2007:131):

Շտեֆան Կրոյցերն այս առումով հղում է հեքիաթներին, որոնք, ըստ նրա, հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն նարատիվ ինքնառեֆլեքսիայի պատճառով, այլ նաև կարող են մեկնվել որպես մետաժանր, որի սկզբնաղբյուրը վերստին ռոմանտիզմի դարաշրջանն է: Ըստ Շ. Կրոյցերի՝ «մետատեքստերի շարքին են դասվում այն տեքստերը

²Այս հնարի օգտագործումը միասնական չէ, այն հանդես է գալիս նաև հետևյալ ձևակերպումներով. *ապոստրոֆ, ապոստրոֆում, դիմումխոսողին*:

³Ըստ դրա՝ պոետից պահանջվում է կենդանի պատկերացում՝ որպես հայեցում, ներքին աչքերի տեսողություն:

կամ տեքստերի մասերը, որոնք մետալեզվի նույնականացմամբ ընկալվում են որպես ինքնավերաբերվող (metareferentiell) ռեֆլեքսիայի ձև, որի դեպքում տրամաբանորեն վերադաս մակարդակից ինքնախորհրդածվում է տեքստուալության, մեդիալության և երկի կառույց հանդիսանալու մասին»(Kreuzer 2007:286): Նշենք, որ Շ. Կրոյցերը վկայակոչում է պատմողական մակարդակների հիերարխիային: Սակայն բանն այն է, որ մետալեպսների, Mises en abyme-ի (ստեղծագործության ստեղծագործության մեջ) և նման մետականացման երևույթների ազդեցությունը հենց գլխավայր է շուռ տալիս ընթերցողի կողմից ենթադրվող, որպես հեղինակ-պատմող-կերպարներ հայտնի համադրությունը:

Այն, որ հենց Է.Թ.Ա. Հոֆմանի հեքիաթներն են արմատապես կիրառում Ֆրիդրիխ Շլեգելի գրականության կոնցեպցիան ⁴ , Շտրոհշնայդեր-Կորսի «Ռոմանտիկական հեգնանքը տեսության և կիրառության մեջ» (1960) աշխատությունից հետո անառարկելի փաստ է: Հոֆմանին նվիրված հետազոտություններում ձևակերպվել են պոետիկական այնպիսի սկզբունքներ, որոնք բնորոշ են վերջինիս պոետիկային և ընդհանուր առմամբ ամփոփում են իրականության ու երևակայության հարաբերակցության խնդիրը, մասնավորապես մետականացում են այն:

Ռոմանտիկական պոեզիան՝ իր բնորոշ հեգնանքով, առնչվում է մետականացման տարբեր ձևերին (ինքնախորհրդածման, ինքնավերաբերության և ինքնահղման)՝ ստեղծելով մի գրականություն, որն ինքն իրեն գիտակցում է: Հենց այստեղից էլ բխում է ռոմանտիզմի դարաշրջանի գրականության հետազոտության կենտրոնական խնդիրը, ինչպես նաև հմայքը, որն արձակում է **ինքն իրեն գիտակցող և մետահորինվածքային գրականությունը**:

1. Պոետիկական ինքնառեֆլեքսիայի ձևեր

Պոետիկական ինքնառեֆլեքսիայի երևույթները գրականագիտության մեջ հանդես են գալիս տարբեր, ոչ միասնական եզրույթներով: Ընդ որում այստեղ խոսքը մշտապես **պոետիկական տեքստերի սկզբունքային ինքնավերաբերության մասին է**, որը հանդես է եկել Ռոման Յակոբսոնի՝ լեզվի պոետիկական գործառույթի ձևակերպմամբ: Համաձայն վերջինիս՝ գրական տեքստի լեզվի պոետիկական գործառույթն այն է, որ երկն ի ցույց է դնում լեզվի կիրառ-

⁴«Ունիվերսալ պոեզիան», ըստ Ֆրիդրիխ Շլեգելի, հանդես է գալիս միաժամանակ գրականություն ու տեսություն հանդիսանալու հավակնությամբ, ուստի նա յուրաքանչյուր գրական գործից պահանջում է մետականացում:

ման գեղարվեստականությունը և, դրան համապատասխան, առաջնահերթ չի ծառայում հաղորդակցությանը, այլ սկզբունքորեն բազմանշանակ է: Բացի բազմանշանակության, ձևի ու բովանդակության, օտարացման ու կրկնության համաձայնեցման՝ **ինքնավերաբերությունը (Selbstbezug) տիպիկ գրական սկզբունք է**, ինչպես նաև տեքստի գեղարվեստականության բաղադրիչ մաս: Լեզվական արվեստին պատկանող գործերը բնութագրվում են **լեզվական նշանների հատուկ կիրառմամբ**, որն ինքն իրեն ի սկզբանե որպես այդպիսին է ճանաչելի դարձնում և դրանով ուշադրությունը հրավիրում նշանի վրա: Եթե հետևենք այս փաստարկմանը, ապա լեզվական արվեստին պատկանող բոլոր գործերը, ըստ իրենց սահմանման, ինքնավերաբերվող (կամ իրենք իրենց հղող) են:

«Գեղագիտական-գրական համատեքստում ինքնավերաբերվածությունը (գերմ. Selbstbezüglichkeit) կարող է ընկալվել որպես հաղորդակցման յուրօրինակ ձև, որի ժամանակ կառույցներն արտացոլում են իրենք իրենց: Ընդ որում, լայն իմաստով յուրաքանչյուր առաջնային կամ առավելապես գեղագիտական-գրական հաղորդակցություն կարող է դիտվել որպես ինքնահղող, եթե փաստարկվի Ռոման Յակոբսոնի (1972) լեզվի պոետիկական գործառույթի համեմատ [...]: Ուշադրությունն այստեղ, այսպիսով, ուղղված է հաղորդակցվողի կառուցված լինելու վրա [...], և հենց այս ինքնահղումից է առաջանում նշանակությունը»: (Krah 2006:3-21)

Լեզվի պոետիկական գործառույթի համեմատ սկզբունքային ինքնավերաբերության ենթադրությունը այնուհանդերձ խնդիր է առաջացնում, որը վերաբերում է ստեղծագործության նշանային բնույթին: Բանն այն է, որ զուտ ինքնավերաբերություն չի կարող գոյություն ունենալ, քանի որ նշանները միշտ պետք է մեկ այլ բանի հղեն, քան իրենք իրենց, այլապես իրենք նշաններ չէին լինի: Ուստի ինքնավերաբերությունը կարող է առաջանալ այն դեպքում, երբ նույնպես «կառույցներ են հանդես գալիս, որոնք ինչ-որ բանից դուրս են գտնվում ու դրանով «արտաքին աշխարհի հետ» կապեր են ստեղծում, ընդ որում [...] այն [կարող է] միայն բավականաչափ համապարփակ համակարգերում հանդես գալ [...]»: (Krah 2006:7)

Այնուհանդերձ, գոյություն ունի որակական տարբերություն ինքնահղումի մեջ, որը առաջանում է նշանների յուրօրինակ արհեստական կիրառմամբ և այն ինքնահղումի, որն առաջանում է այն դեպքերում, երբ պոեզիան ինքն իր թեման /իր առարկան/ է դառնում: Գրականության նշանային բնույթի և բազմիմաստության հիմնարար խնդիրը տեսաբան Միխայել Շեֆելի խնդրո առարկան է: Նա

մասնավորապես անդրադառնում է բանաստեղծական ինքնա-
ռեֆլեքսիայի տեսակներին:

Պոեզիայում՝ պոեզիայի դիտարկման առարկա լինելը կարող է
դրսևորվել տարբեր ձևերով. հարկ է տարբերել, թե արդյոք պոեզիան
անդրադառնում է ընդհանուր, լեզվական ու լեզվափիլիսոփայական
խնդիրներին, թե խոսքը պոեզիայի մասին է ընդհանրապես կամ
մասնավորապես, թե նա պարզապես խորհրդածում է իր իսկ մասին:
Նաև այս պարագայում է անհրաժեշտ տարբերել բովանդակային և
ձևական մակարդակների միջև: Բացի այդ՝ դեռևս հարցական է մնում
այն, թե ինչպես են ինքնարտացոլման երևույթները ազդում պոեզիայի
մտացածին բովանդակության վրա:

Նախևառաջ հարկ է տարբերել հետևյալ սահմանումները՝ լեզվի
ռեֆլեքսիա, ինքնառեֆլեքսիա, ինքնարտացոլում և ինքնա-
վերաբերություն:

Բացի նրանից, որ գրական գործը նշանների յուրահատուկ
օգտագործման արդյունքում է հանդես գալիս որպես արվեստի գործ,
ինքնըստինքյան հնարավոր է, որ այն իր լեզվի մասին ինքնախորհրդածի⁵
թեմատիկ, բովանդակային կամ մոտիվային առումներով:

Լեզվի մասին ռեֆլեքսիաների հայտնի օրինակներից մեկը Խորխե Լուիս
Բորխեսի «Թյոն, Ուքբար, Օրբիս Տերցիուս» (Borges 1993:15-34)
պատմվածքն է, որում, չնայած բազմազան մետահորինվածքային
խառնաշփոթությունների, տարբեր լեզուներ են նկարագրվում, այլոց
թվում այնպիսինը, որը չի ճանաչում գոյականներ: Դա առիթ է ընձեռում
խորհրդածելու լեզուն կրողների աշխարհընկալման մասին: Այստեղ
բարձրացվում է լեզվափիլիսոփայական այն հարցը, թե արդյոք տարբեր
լեզուներ նույն բովանդակությունը տարբեր են արտահայտում, արդյոք
այս կամ այն լեզվի ուրույն փոխաբերականությունը ազդեցություն է
թողնում ասվածի բովանդակության վրա, արդյոք այն հնարավորություն է
ընձեռում հետևություն անելու մարդու բնավորության կամ խոսողի
աշխարհընկալման մասին (Հմմտ. Deutscher 2010):

Սակայն հարկ է նաև նշել, որ լեզվի ռեֆլեքսիան կարող է քննել
ասելիի, լեզվականի, գրավոր խոսքի, տեքստայինի սահմանները, բայց
դա դեռ չի նշանակում, որ այդ դեպքում ստեղծագործությունը ավտոմատ
կերպով դառնում է ինքնառեֆլեքսիվ կամ ինքնավերաբերական:
Այնուհանդերձ, երբ կոնկրետ տեքստի լեզվի գործածումը թեմայի

⁵Ինքնախորհրդածում և ինքնառեֆլեքսիա բառերը մենք գործածում ենք որպես
հոմանիշներ:

առարկա է դառնում, հանդես է բերում ձևական համապատասխանումներ, արտացոլում է պատմվածք և պատումը, այդ դեպքում **լեզվի ռեֆլեքիան դառնում է ինքնառեֆլեքսիա, քանի որ աստեղ հիմքում ընկած է լինում հայելու էֆեկտը:**

Գրականության ինքնառեֆլեքսիայի տակ սովորաբար հասկանում ենք գրականության արտացոլումը գրականության մեջ, ընդ որում սա բոլոր սահմանումներին բնորոշ ընդանրություն է: Այնուհանդերձ, տարբերություններ են առաջանում ինչպես «արտացոլում», այնպես էլ «գրականության» ու «գրականության ռեֆլեքսիայի» վերաբերության հետ կապված: Այս առնչությամբ առաջացող հարցերից են, թե արդյոք տեքստն ինքն իրեն է անդրադառնում բովանդակային թե ֆորմալ առումներով: Նույնը վերաբերում է ժանրի հետ կապված հարցերին, ինչպես նաև նրան, թե արդյոք գրականությունն ինքն իրեն ընդհանուր առմամբ է արտացոլում, թե ոչ, արդյոք այդ արտացոլումը գիտակցաբար թե անգիտակցաբար է կատարվում, և, ի վերջո, այն հարցը, թե ինչ գործառույթ է կատարում արտացոլումը:

Խոսելով ինքնառեֆլեքսիայի մասին՝ հարկ է տարանջատել **ինքնահղումն ու ինքնավերաբերությունը**, թեպետ երկուսն էլ ընկալում են տեքստը որպես համակարգ: Ինքնառեֆլեքսիվ տեքստերը հանդես են գալիս որպես ինքնավերաբերական համակարգեր, երբ իրենք իրենց են հղում որպես խորհրդանիշի:

Հանս Կրահը իրականացրել է ինքնահղման դասակարգումը գրականագիտության մեջ (Krah 2006:5-6).

- Նիլս Բորստնարը, Էքարդ Փաբստը և Հանս Յուրգեն Վուլֆը ինքնառեֆլեքսիվությունը դասում են ինքնավերաբերությունից բարձր: Ըստ նրանց՝ ինքնավերաբերականությունն այն ժամանակ է տեղի ունենում, երբ **մի տեքստում հղում է կատարվում կոնկրետ տեքստին (կամ ինքն իրեն)**, սակայն ոչ թե հղում ժանրին, արվեստի ձևին կամ ձևաչափին (Հմմտ. Borstnar: 2002):
- Քլաուս-Միխայել Օրտը տարանջատում է ուղիղ և անուղղակի ինքնավերաբերությունները (Հմմտ. Ort 2003):
- Քրիստեր Պետերսենը ինքնառեֆլեքսիայի տակ հասկանում է սեփական հաղորդակցական ակտի զննումը, ինչը համապատասխանում է Ռ. Յակոբսոնի մետալեզվական հաղորդակցական գործառույթին, սակայն այս պարագայում այն տարանջատվում է ինքնավերաբերությունից (հմմտ. Petersen 2003):
- Պետրա Քալվայթը ինքնառեֆլեքսիայի տակ հասկանում է արվեստի ձևի ինքն իրեն անդրադարձը, իսկ ինքնավերաբերությունը նա

ընկալում է որպես այս կառույցի գործառույթ ողջ համակարգի համար (հմմտ. Kallweit 1998: 213-218):

Տերմինաբանության հետ կապված՝ տարածայնությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արվեստում հետաքրքրություն է ներկայացնում, և հնարավոր է այն, ինչը բացառվում է գիտության մեջ, մասնավորապես օբյեկտի և մետալեզվի միախառնումը: Այսպիսով, տեքստը կարող է ինքնահղումն իրականացնել ոչ միայն մոտիվային հարթության վրա, այլ նաև կառուցվածքային, ընդ որում կարող է իրականացնել այն ինչպես պատումի, այնպես էլ պատմվածի մակարդակներում:

2. Ինքնահղման ակունքներ

Ինքնահղումն արվեստում վաղեմի երևույթ է: Դրա սկզբնական սիմվոլներից էր ուրոբորոսը՝ օձը, որն ինքն իր պոչն է կծում: Նրա հնագույն պատկերումը տեղի է ունենում Եգիպտոսում: Ուրոբորոսը արտահայտում է ժամանակի ցիկլիկ պատկերումը և խորհրդանշում է «միասնությունը փոփոխության մեջ»: օձերը փոխում են իրենց կաշին, արևը ծագում է, մայր է մտնում, կրկին ծագում: Սկսած առաջին դարից՝ «կան ապացույցներ եգիպտացիների բարքերից առ այն, որ նրանք տաճարների կառուցման ժամանակ կենդանի օձեր են դրել հիմքում՝ ելնելով այն պատկերացումից, որ օձերը սովից իրար կխժռեն, մինչև կմնար մեկը, որն էլ ինքն իրեն պոչից պետք է կծեր. այս երևույթը հայտնի է ուրոբորոսի սինդրոմ անունով» [Հմմտ. Kallweit 1994: 151]: Եգիպտական բառը, որն օգտագործվում էր ուրոբորոս սիմվոլի համար, այսօր գործածվում է «շրջանի» իմաստներով:

Հելլենների պանթեիստական աշխարհընկալումը ևս սերում է եգիպտական ավանդույթից: Ուրոբորոսի տարբերակ էր հանդիսանում իր սեփական մոխրից հարություն առնող փյունիկը: Նմանատիպ օրինակներ առկա են աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ: Օրինակ՝ Ց. Գ. Յունգի մոտ փյունիկը հանդես է գալիս որպես անհատականացման գործընթացի ծածկագիր: «Պիտ Մեոյգեն ուրոբորոսը համարում է ժամանակակից գրականության խորհրդանիշ , քանի որ նա, ինչպես [...] «ժամանակակից մտացածին գրականությունը» հակասություններ է պարունակում [...]» (հմմտ. Kallweit 1994:151): Ուրոբորոսը նաև ալքիմիայի ամենահին, հիմնական մոտիվն է: Նովալիսի մոտ այդ մոտիվը կարելի է նկատել Քլիզսորի հեքիաթում: Այդ մոտիվը կարևոր դեր է խաղում նաև (պոստ)մոդեռնիստական հորինվածքում: Միխայել Բլեբերգի «Մի պարտեզ հյուսիսում» (“Ein Garten im Norden”, 2002) վեպը, այնպես,

ինչպես Չարլի Քաուֆմանի «Հարմարում» (“Adaptation”, 2002) ֆիլմը, ուրոբորոսի կառուցվածքային կիրառման բնորոշ օրինակներն են:

Ինքնահողոլ մոդելները հաճախ հանգեցնում են հակասությունների: Դրանցից են, ասենք, Էշերի «Աստիճաններով վերև ներքև» (“Treppauf Treppab”) անվան տակ հայտնի պատկերը, Քյանշի «Շիշը», որը ո՛չ ներս ունի, ո՛չ էլ դուրս, կամ Ռենե Մագրիտի “Cecin’est pas une pipe” (անգլերեն թարգմանությամբ՝ “This is not a pipe”) անվանմամբ պատկերը⁶: Այս տիպի ինքնավերաբերությունը կրում է «տարօրինակ հանգույց» անվանումը, որը, ըստ Դուգլաս Հոֆշտեթերի, արտացոլում է մարդկային գիտակցությունը (Hofstadter 2008):

Ինքնավերաբերվածության հայտնի մոդելների շարքին են պատկանում Էպիմենիդեսի պարադոքսը որպես ստի պարադոքսի ամենահինագույն ձև⁷, ինչպես նաև Բուռալի-Ֆորտի⁸, Կանտորի⁹, Բեռտրամ Ռասելի¹⁰ պարադոքսները, նաև Գյոդելի անլիարժեքության հիպոթեզը¹¹, Պիրսի ինդեքսի նշանը¹², Հուսերի ֆենոմենոլոգիան¹³, աուտոպոեզիան¹⁴ (համակարգի տեսությունը), Նովալիսի լեզվի

⁶ Այս՝ Լուս-Անժելեսի «Գեղանկարչության ազգային թանգարանում» (“Country Museum of Art”) գնտվող յուղանկարի վրա պատկերված է չիբուխ, որի տակ գրված է. «Սա չիբուխ» չէ: Ամենահայտնի մեկնաբանության համաձայն՝ Մագրիթի մտահղացումը այն բանի ցուցադրումն է, որ անգամ օբյեկտի ռեալիստական պատկերումը չի կարող նույնացվել օբյեկտի հետ: Պատկերի դեպքում խոսքը պատկերվածի մասին է, սակայն ոչ իսկակա չիբուխի, որը կարելի է թափ տալ կամ ծխել: Նույնը, օրինակ, կարելի է, ըստ նշանագետ Վիլյամ Ջեյմսի, հետևել «շուն» բառի դեպքում, որը նույնպես չի կարող հաշել:

⁷ Համաձայն Էպիմենիդեսի՝ բոլոր կրեոացիները ստում են:

⁸ Ըստ որի՝ բոլոր դասական թվականները զանգված չեն:

⁹ Նա առաջ քաշեց քանակական թվականների անտիստիան:

¹⁰ Չանգվածի մասին պարզունակ ուսմունքի մասին:

¹¹ Նրա ոչ լիարժեքության նախադասությունը ժամանակակից տրամաբանության մեջ կարևորագույններից է: Նա ցույց է տալիս ձևական համակարգերի սահմանները՝ սկսած որոշ կարողությունից: Նա ապացուցում է, որ բավականաչափ ուժեղ համակարգերում, ինչպիսին թվաբանությունն է, գոյություն ունեն արտահայտություններ, որոնց ֆորմալ ձևով չի կարելի ո՛չ ապացուցել, ո՛չ էլ հերքել:

¹² Ինդեքսը ցույց է տալիս նշան, որի բնույթը կազմված է ուղիղ, իր ու նշանակիչի միջև ֆիզիկական ցուցող հարաբերությունից: Մեծամասամբ դա պատճառական կապ է ցույց տալիս: Ինդեքսը, այլ բառերով, նշան է, որը ժամանակային և տարածական առումներով հղում է ռեֆերենտին:

¹³ Որպես տեսության տեսություն՝ նա դառնում է իր իսկ առարկան:

¹⁴ Հին հունարեից թարգմանաբար այն նշանակում է համակարգի ինքնստեղծման և ինքնապահպանման գործընթաց:

փիլիսոփայությունը (մենախոսությունը), Էշերի պատկերները¹⁵ և Բախի խեցգետնի կանոնը¹⁶: Ի դեպ, այս բոլոր դեպքերում հարկ է ուշադրություն դարձնել այն փաստին՝ արդյոք ինքնավերաբերությունը արվեստում թե հորինվածքում է հանդես գալիս, իսկ գուցե և ձևական տրամաբանական կամ մաթեմատիկական խնդիրների մասնիկ է:

Օրինակները [Էշեր Մարգրիտ] ցույց են տալիս արվեստի սահմանները. դրանք ի ցույց են դնում նաև այն, որ արվեստն ի վերջո կարող է լինել ոչ պարադոքսալ, շրջանաձև կամ «միայն» ինքնատրամաբանական, թեև արվեստը, իհարկե, նման կառույցներ կարող է արտապատկերել, ինչը և արել է մինչ այժմ: Հենց արտապատկերումը, իրականության պրոյեկտումը արվեստի վրա կարող է առաջացնել իմաստաբանական ու տրամաբանական խնդիրներ [...], մասավորապես այն դեպքերում, երբ իրարահաջորդ ժամանակային ընթացքը արտապատկերվում է միաժամանակայնությամբ, երբ այս գործընթացն ու արդյունքը միաժամայնականացվում են [...]»(Krah 2016:14):

Հ. Կրահը հարց է բարձրացնում արվեստում պարադոքսալ արտապատկերումների իմաստի վերաբերյալ, թեև նրանցում ընդանրապես խոսք չի կարող լինել ճշմարտացիության մասին, քանի որ ճշմարտացիությունը չի գնահատվում «ճիշտ» ու «սխալ» հասկացություններով, և ստախոսի պարադոքսն անմիտ է այստեղ. չէ՞ որ այն մետալեպտիկ է (Krah 2016:14): Սակայն հենց այստեղից է սկսվում է **գրականության ինքնահղումը**, քանի որ այն **կրկին ու կրկին բարձրացնում է իր ճշմարտացիության հետ կապված հարցը**:

«Հղելով Ռ. Յակոբսոնին՝ նշենք, որ լեզվական արտահայտությունների պոետիկական ու մետատեսական գործառույթները՝ տեսությունն ու գործնականը մեկում ունենալու համար յուրահատուկ կերպով են փոխազդում: Ապա հարց է առաջանում այս սինթեզի գործառույթի ու արդյունավետության վերաբերյալ: Ընդ որում տրամաբանության բացակայությունն այդ դեպքում կարող է որպես հավելյալ արժեք հանդես գալ, երբ խոսքը պոետիկաների և գեղագիտությունների մասին է, քանի որ վերջիններս տրամաբանական-նացիոնալ առումներով դժվար են հիմնավորվում» (Krah 2016:16):

Մյուս կողմից՝ պոեզիայի՝ ինքն իրեն մշտապես հարցականի տակ դնելը, օրինակ, ռոմանտիկական պոեզիայում, մեկ այլ նպատակ է

¹⁵Մաուրիտուս Կոռնելիուս Էշերը նիդերլանդացի արվեստագետ և գծանկարիչ էր, որն ամենից առաջ հայտնի էր դարձել աներևակայելի պատկերների ստեղծմամբ:

¹⁶ Խեցգետնի կամ ռետրոգրադ կանոնը երաժշտական պալինդրոմ է, որը նշանակում է, որ նա և՛ հետ, և՛ առաջ նույն հնչեղությունն ունի, այսինքն՝ մի ծայրը մեղեդին առաջ է մղում, իսկ մյուսը՝ հետ:

հետապնդում, ընդ որում Հ. Կրահին հառական իմաստով. այն է՝ ստեղծել արվեստի օբյեկտիվ գործեր, քանի որ ծայրահեղ աստիճանի հասցված սուբյեկտիվությունը «պետք է վերածվի իր հակառակ պատկերի՝ օբյեկտիվության» (Klaus 1987:223), հետևաբար այդ դեպքում տրամաբանորեն այլևս չի դրվում պոեզիայի ճշմատացիության հարցը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Borges, Jorge Luis: *Tlön, Uqbar, Orbis Tertius*. Jorge Luis Borges: Werke in 20 Bänden. Bd. 5. Hg. Gisbert Haefs und Fritz Arnold. Frankfurt: Fischer, 1993.
2. Deutscher, Guy: *Spiegel der Sprache: Warum die Welt in anderen Sprachen anders aussieht*. München: Beck, 2010.
3. Haage, Bernhard Dietrich: „*Ouroboros und kein Ende*“. *Licht der Natur. Medizin in Fachliteratur und Dichtung*“. In: *Festschrift für Gundolf Keil zum 60. Geburtstag*. Hg. Josef Demes u.a. Göppinger Arbeiten zu Germanistik 585. Göppingen: Kümmerle, 1994.
4. Hofstadter, Douglas: *Ich bin eine seltsame Schleife*. Stuttgart: Klett-Gotta, 2008.
5. Kallweit, Petra: “Anmerkungen zu Selbstreflexion und Selbstreferenz in *Twin Peaks* und *Lost Highway*“.Hg. Eckhard Pabst: *A strange world: Das Universum des David Lynch*. Kiel: Ludwig, 1998.
6. Klaus, Peter: Friedrich Schlegel und Adorno: „Die Dialektik der Aufklärung in der Romantik und heute“. In: *Die Aktualität der Romantik*. Hg. Ernst Beher. Paderborn u.a: Schönigh, 1987.
7. Krahs, Hans: “Einführung. Selbstreferenz und literarische Gattung”. Hg. Hans Krahs. In: *Zeitschrift für Simeotik*27. Tübingen: Stauffenburg, 2006. S. 3-21.
8. Kreuzer, Stefanie: “Märchenhafte Metatexte: Formen und Funktionen von Märchenelementen in der Literatur”.In: *Metaisierung in Literatur und anderen Medien. Theoretische Grundlagen – Historische Perspektiven– Metagattungen – Funktionen*.Hg. Janin Hauthal u.a.spectrum Literaturwissenschaft 12. Brelm u.a.: De Gruyter, 2007.

9. Nünning, Ansgar (Hg.): Metzler Lexikon Literatur- und Kulturbegriffe. Ansätze – Personen – Grundbegriffe 5. Auflage, Stuttgart, Weimar: Metzler, 2013.
10. Ort, Klaus-Michael: *Medienwechsel und Selbstreferenz: Christian Weise und die literarische Epistemologie des späten 17. Jahrhunderts*. Tübingen: Niemeyer, 2003.
11. Petersen, Christer: *Der postmoderne Text: Rekonstruktion einer zeitgenössischen Ästhetik am Beispiel von Thomas Pynchon, Peter Greenaway und Paul Wühr*. Kiel: Ludwig, 2003.
12. Werner, Wolf: “Metaisierung als transgenerisches und transmediales Phänomen: Ein systematisierungsversuch metareferenzieller Formen und Begriffe in Literatur und anderen Medien”. In: *Metaisierung in Literatur und anderen Medien. Theoretische Grundlagen – Historische Perspektiven – Metagattungen – Funktionen*. Hg. Janin Hauthal u.a. spectrum Literaturwissenschaft 12. Berlin u.a.: De Gruyter, 2007.

**ЕЛЕНА ЭТАРЯН - ФОРМЫ САООТНЕСЕННОСТИ ЛИТЕРАТУРЫ:
ИСТОКИ И ПРИМЕРЫ В СОВРЕМЕННОМ ИСКУССТВЕ И ЛИТЕРАТУРЕ**

Ключевые слова: *металепсис, поэтическая рефлексия, немецкий романтизм, вымысел, взаимосвязь между реальностью и вымыслом, себя саму осознающая и метафигциональная литература, самоотнесенность, языковая рефлексия, саморефлексия*

Термины, характеризующие явления поэтической саморефлексии, неоднозначны в своем использовании. В нашей статье мы ссылаемся на принципиальную самоотнесенность художественных текстов, согласно функции поэтического языка Романа Якобсона. Однако мы обращаем внимание читателя на качественную разницу между самоотнесенностью, которая возникает в результате искусственного использования языковых знаков и той самоотнесенностью, которая возникает тогда, когда поэзия или литература становятся предметом собственного рассмотрения, т.е. в этом случае используют определения “поэзия о поэзии” или “литература о литературе”. Помимо трудов Р. Якобсона, в нашей работе мы также опираемся на работы немецкого литературоведа Михаила Шефеля, который исследует разновидности поэтической саморефлексии. Он проводит различия между языковой саморефлексией, саморефлексией литературы, самоотражением литературы и ее самоотнесенностью.

Причем языковая саморефлексия художественного произведения подразумевает рефлексию на формальном и содержательном уровнях, а также на уровне мотивов.

Важное место в статье занимают также примеры языковой саморефлексии из области современного искусства и литературы и, не в последнюю очередь, истоки, к которым восходит явление самоотнесенности искусства.

YELENA ETARYAN - FORMS OF SELF- REFERENTIALITY OF LITERATURE: ORIGINS AND EXAMPLES IN MODERN ART AND LITERATURE

Keywords: metalepsis, poetic reflection, German romanticism, fiction, the relationship between reality and fiction, self-aware and metafictional literature, self-referentiality, linguistic reflection, self-reflection

The terms characterizing the phenomena of poetic self-reflection are ambiguous in their usage. In our article we refer to the principals of self-referentiality of literary texts based on the function of the poetic language of Roman Jakobson. However, we have drawn the reader's attention to the qualitative difference between self-referentiality, which arises as a result of the artificial use of linguistic signs and to the one that arises when poetry or literature becomes the subject of their own independent consideration: thus, in this case, the definitions of "poetry about poetry" or "literature about literature" are used. Besides R. Jakobson's perception in our work we also rely on the works of the German literary scholar Michael Scheffel, who explores varieties of poetic self-reflection. He differentiates linguistic self-reflection, self-reflection of literature, self-expression of literature and its self-referentiality. Moreover, the linguistic self-reflection of a piece of art implies reflection on the formal and content levels, as well as, on the level of motives.

An important place in the article is also given to the examples of linguistic self-reflection taken from the field of modern art and literature, as well as to the sources that are the last but not the least and to which the phenomenon of self-referentiality of art goes back .

Ներկայացվել է՝ 18.09.2019
Գրախոսվել է՝ 06.09.2019

ՕՏԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԽԱԼԵԴ ՀՈՍԵՅՆԻԻ «ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔԵՑԻՆ
ԼԵՌՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ

ԱՄԱԼՅԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

*Հիմնաբառեր՝ էմիգրանտական գրականություն, լեռներ, արևելք,
մեղք, օտարում, անցյալ, հիշողություն, գաղտնիք, ապաքինում*

*«Մեր մտքերից, մեր ճիշտ և սխալ քայլերից անդին կա մի երկիր, ուր մենք
կհանդիպենք»:
Ջալալ ադ-Դին Ռումի, 13-րդ դար*

Սույն աշխատանքի շրջանակներում փորձ է արվում բացահայտել ժամանակակից աֆղան հեղինակ Խալեդ Հոսեյնիի «Եվ արձագանքեցին լեռները» վեպում ներկայացված կառուցվածքային և գաղափարական սկզբունքներն ու առանձնահատկությունները: Վերլուծության ընթացքում ներկայացվում են վեպի խորքային ու թաքնված իմաստները, ինչպես նաև հեղինակի գրականագիտական մոտեցումները հերոսների ճակատագրերին և կյանքի շարունակման հնարավոր ելքի փնտրտուքին էմիգրանտական գրականության համատեքստում:

Հոդվածի նորույթն այն է, որ թեպետ օտարման թեման¹ մշտապես առկա է համաշխարհային գրականության մեջ, սակայն տարբեր գրողներ տարբեր դիտանկյունից են փորձում այն մեկնաբանել: Այս համատեքստում հետաքրքիր է ուսումնասիրել աֆղան գրող Հոսեյնիի արձակը, քանի որ նա դեռևս չուսումնասիրված հեղինակ է հայ գրական ավանդույթում: Օտարման թեման² մշտապես արդիական է լինելու էմիգրանտական գրականության մեջ, քանի որ գլոբալիզացման դարաշրջանում ամեն օր ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր հեռանում են իրենց երկրից և իրենցից: Ստեղծագործությունն իրար կորցրած, իրարից բաժանված հերոսների, նրանց սիրո, ընտանիքի, սպանդից փրկվածի ճակատագրի ու բռնության մասին է, սակայն վեպը

¹ [Michiko Kakutani](https://www.enotes.com/topics/alienation-literary-theme) ‘Siblings Haunted by the Past, and by Afghanistan’s Cycle of Misery’ <https://www.enotes.com/topics/alienation-literary-theme>

² [Stanford Encyclopedia of Philosophy](https://plato.stanford.edu/entries/alienation/) ‘Alienation’ <https://plato.stanford.edu/entries/alienation/>

գրված է ոչ թե մարդկանցից արցունքներ կորզելու, այլ ընթերցողին գրողի մանկության երկիր՝ Աֆղանստան վերադարձնելու համար:

Ազգությամբ աֆղան գրող Խալեդ Հոսեյնին փոքր հասակում տեղափոխվում է Ամերիկա և որպես այդպիսին օտարվում իր հարազատ միջավայրից: Նա նկարագրում է Աֆղանստանը հազարավոր կիլոմետրերից, ներկայացնում աֆղանական ճակատագրերն այնպես կարծես ինքն ականատեսն է եղել բոլոր իրադարձությունների: Էմիգրանտական գրականության համատեքստում օտարումը սկսվում է հենց միջավայրից ու տեղափոխվում անձնական, ներքին ոլորտ: Հոսեյնին նկարագրում է իրենցից հեռացած, օտարացած հերոսների, որոնք շարունակում են ապրել կա՛մ իրենց միջավայրում, կա՛մ դրանից դուրս:

Հոսեյնիի ստեղծագործությանը մշտապես ուղեկցում են աֆղանական ընտանիքների բզկտված պատկերները: Հեղինակը լավ գիտի հերոսների կյանքի շերտերը թե՛ ներսից, թե՛ դրսից: Նա ընդհատ պատումներով մեզ տեղափոխում է պատերազմից քայքայված աֆղանական փոշոտ գյուղեր ու քաղաքներ և ցույց տալիս երկու երեխաների կյանքերը խեղած մի սպի, որի հետքերը արձագանքում են լեռներում ու շատ մարդկանց սրտերում:

Էմիգրանտական գրականությունը շատ հաճախ սովորեցնում է ապրել՝ անկախ տեղից ու ժամանակից: Հերոսները հեռանում են հայրենիքից, շարունակում ապրել, սակայն նրանցից շատերը չեն կարողանում վերգտնել կյանքի իմաստը: Հոսեյնինին հաջողվում է պատուհան բացել դեպի իր հերոսների հոգեկան աշխարհն ու թաքուն պահված կրքերը: Նա պատմության առանձին մասերից կարողանում է անբաժանելի ամբողջություն ստանալ ու դիպչել ընթերցողի սրտին: Նա կյանքի դաժանությունը ներկայացնում է թեթևությամբ, առանց ողբերգական երանգ հաղորդելու ու հերոսների հանդեպ խղճահարությամբ լցվելու:

Զրկանքներն ու կորուստներն անընդհատ ուղեկցում են սերունդներին և արձագանքում լեռներում:

Միջին Արևելքի փիլիսոփայության և գրականության մեջ լեռները գաղտնիքներ պահելու խորհուրդ ունեն: Լեռները կարող ենք նաև համեմատել վեպում ներկայացված ընտանիքի հետ: Վեպի հերոսները լեռների նման մասնատված են ու իրարից հեռու ու դա հենց այն արձագանքն է, որ լեռներն իրենց մեջ պահում են:

Քարով տանող ճանապարհին քույր ու եղբայր վերջին ժամերն են անցկացնում միասին³: Փարիի ու Աբդուլլայի կյանքի հետագա տարիները շրջանակվում են նվիրումի, անգթության ու վերադարձի պատմություններով: ԱՖղանստանում կյանքը աղետալի շրջադարձերով շարունակվում է, իսկ վեպի հերոսները դուրս են գալիս ԱՖղանստանից ու հայտնվում օտար ափերում: Էմիգրանտական գրականության առանձնահատկություններից մեկն այն է, որ գրողը, հեռու լինելով իր միջավայրից, ներկայացնում է դեպքերն ու դեմքերն այնպես, ասես ինքը դրա ականատեսն է եղել:

Հոսեյնին «Եվ արձագանքեցին լեռները» վեպն սկսում է հեքիաթ-պատումով: Հեքիաթը Բաբա Այուբի ընտանիքի, Քախս որդու և դևի մասին է, որ տանում է երեխաներին զառիթափ սարի անհասանելի գագաթին գտնվող իր ամրոցն ու այլևս չի վերադարձնում նրանց: Բաբայի համար իր որդին աշխարհում ամենաթանկն է և նա որոշում է սպանել դևին: Դևը թույլատրում է Բաբային նայել մի այգու, որի վայրի գեղեցկությունը նկարագրելու համար մի քանի կյանքն էլ չի բավականացնի: Այուբին ապշեցնում է այգում երջանիկ վազվզող երեխաների ուրախությունը: Երկար նայելուց հետո նա գտնում է ում փնտրում էր՝ Քախսին՝ ողջ և առողջ: Նա երջանիկ է, բայց չի հիշում հորը: Այստեղ նա ունի լավ ուտելիք, հագուստ, ընկերություն և սեր: Նրան ուսուցանում են արվեստներ, լեզուներ, իմաստություն: Նա ոչնչի կարիք չունի: Իսկ երբ մեծանա, կարող է հեռանալ. նա ազատ է: Դևը փորձության է ենթարկում Այուբին. շրջում է ավազե ժամացույցն ու հնարավորություն տալիս հորը որոշելու տանել որդուն ետ դեպի թշվառություն, թե՞ թողնել նրան կախարդական այգում: Որոշում կայացնելը շատ դժվար է հոր համար: «Կներե՞ս արդյոք քեզ, գիտակցելով, որ եսասիրությունից դրդված, զրկել ես նրան շքեղությամբ և բազում հնարավորություններով լի կյանքից» (Հոսեյնի 2016: 21):

Այուբը կատարում է իր ընտրությունն ու թողնում տղային: Դևը բացատրում է նրան, որ դաժանությունն ու բարեգործությունը նույն գույնի տարբեր երանգներն են): Նա մի սրվակ է տալիս Այուբին ու ճանապարհում: Սրվակը պատումում ծառայում է որպես մոռացության սիմվոլ: Հայրը վերադառնում է տուն և այլևս չի հիշում կատարվածը, միայն լինում են գիշերներ, երբ նա չի կարողանում քնել: Նա նստում է

³ Book Review: *'And the Mountains Echoed by Khaled Hosseini'*
<https://www.litro.co.uk/2013/07/book-review-and-the-mountains-echoed-by-khaled-hosseini/>

դաշտի պոնկին՝ մի տափակ քարի վրա, նայում է աստղերին ու զանգակի հեռավոր ու սուր զնգոց է լսում: Նա չի հասկանում, թե որտեղից է գալիս այդ ձայնը: Ալիքի պես մի բան, որ նման է տխուր երազից մնացած հետքի միշտ անցնում է իր սրտով, երբ զանգի ձայն է լսում, և ամեն անգամ իրեն զարմացնում է ինչպես անսպասելի բարձրացրած քամի: Իսկ հետո անցնում է, ինչպես ամեն բան աշխարհում⁴:

Այս ամբողջ պատմությունը հայրը պատմում է Աբդուլլային ու Փարիին: Պատմում է գիշերը, իսկ հաջորդ առավոտյան երեխաներին Շադբաղից տանում դեպի Քաբուլ: Սա Հոսեյնիի կողմից հատուկ ընտրված պատմությունն է, որը նույնությամբ կրկնվում է վեպում: Քաբուլ Փարիի նախատիպն է: Դևը Քաբուլն է, որը խլում է աղջկան հորից, բայց հայրը ինքնակամ է հրաժարվում Փարիից՝ նրա համար ավելի լավ ապագայի ակնկալիքով:

Ժամանակի կոնցեպտը մասամբ բացահայտվում է փետուրի սիմվոլի օգնությամբ: Տանը՝ Շադբաղում, Փարին բարձի տակ պահում է մի հին թիթեղյա թեյաման, որը եղբայրն է նրան տվել: Այդ թեյամանի մեջ բազմաթիվ փետուրներ կան: Փարին հավաքում է տարբեր թռչունների փետուրներ ու դա նրան երջանկացնում է: Աբդուլլայի և Փարիի մայրը մահանում է Փարիին ծննդաբերելիս, երբ Աբդուլլան յոթ տարեկան էր: Նա արդեն մոռացել է մոր դեմքը, միայն հիշում է, թե ինչպես էր մայրն ամեն գիշեր օրոր ասում իրեն:

«Ես գտա փոքրիկ, տխուր փերիին

Ստվերի տակ թթի ծառի:

Ես գիտեմ մի փոքրիկ, տխուր փերիի,

Ում մի գիշեր տարավ քամին» (Հոսեյնի 2016: 29):

Երգի ընտրությունը նույնպես պատահական չէ: Փերին Փարին է, ում մի գիշեր տանում է քամին: Մոր բացակայությունը լցնում է եղբայրը, ով ամեն ինչ անում է Փարիի համար: Աբդուլլան շատ է սիրում քրոջը և ընտանիքում միայն նա է խնամում Փարիին: Փարին նաև մի մեծ շուն ունի, որը խուսափում է բոլորից, Փարիից բացի: Շան սերն աղջկա հանդեպ անսահման է: Հետաքրքրական է, որ Փարիի կորուստը բոլորը յուրովի են զգում, բայց ամենից շատ Աբդուլլան ու շունն են կարոտում նրան:

⁴ The Guardian ‘And the Mountains Echoed by Khaled Hosseini’ – review <https://www.theguardian.com/books/2013/may/26/mountains-echoed-khaled-hosseini-review>

Վեպում Քարույի մասին պատմում է քեռի Նաբին: Նա աշխատում է մի հարուստ ընտանիքում և երբեմն գնում է Շադբաղ՝ քրոջ ընտանիքին այցելության: Նաբին աշխատում է պարոն Վահդատիի տանը, և երբ Վահդատին ամուսնանում է Նիլայի հետ, Նաբին միանգամից կապվում է տիկնոջ հետ ու ամեն ինչ անում նրան գոհացնելու համար: Վեպի ընթացքում պարզ է դառնում, որ տիկին Վահդատին երբեք չի կարողանալու երեխա ունենալ, և Նաբին որոշում է երջանկացնել կնոջը՝ մտքում Փարիին նվիրելով Նիլային: Որոշ ժամանակ անց հայրը վերջապես որոշում է աղջկան վաճառել Վահդատիների ընտանիքին ու այդ պահից Աբդուլլայի աչքում հայրը փոքրանում է, կորցնում մի կարևոր բան: Նա մտացրիվ քայլում է տանը, կամ նստում չուգունե վառարանի կողքին և դատարկ աչքերով նայում կրակին: Նա սուզվում է խոր լռության մեջ ու անթափանց դառնում: Նա այլևս հեքիաթներ չի պատմում: Երբեմն Աբդուլլային թվում է, որ հայրն իր պատմելու մուսան էլ է վաճառել Վահդատիների ընտանիքին: Կորսվել է, անհետացել, ոչինչ չի մնացել, էլ ասելու բան չի մնացել: Միայն Աբդուլլայի խորթ մայրը, Նաբիի քույրը՝ Փարվանան է կարողանում մի երկու բառ արտաբերել: «Դա քույրդ պիտի լիներ: Կներես, Աբդուլլա՛, հենց նա պիտի լիներ, ուրիշ ոչ ոք: Երբեմն կտրում ես մատը, որ պահպանես ձեռքը» (Հոսեյնի 2016: 33):

Վեպի ամբողջ ընթացքում Աբդուլլան ապրում է քրոջ մասին հուշերով: Հաճախ հիշում է Բաբա Այուբի և դևի մասին հոր պատմած հեքիաթն ու երազում կախարդական հեղուկի մասին, որ դևը տվել էր Այուբին՝ որդուն մոռանալու համար: Բայց Փարիին մոռանալն անհնար էր: Նրա կերպարը սավառնում է Աբդուլլայի երևակայության մեջ, ուր էլ նա գնար: Աբդուլլան բացում է Փարիի փետուրների տուփը, տուփի մեջ դնում ճանապարհին գտած դեղին փետուրն ու մտածում. «Օրը կգա»: «Օրը կգա» պատասխանում է հույսը» (Հոսեյնի 2016: 56):

Աբդուլլան այլևս չէր հաշվում իր կյանքի օրերը: Նա գիտեր, որ Շադբաղում ինքն այլևս ոչինչ չունի: Տուն էլ չունի: Ու սպասում էր, որ ձմեռն անցնի ու գարունը գա: Եվ հստակ գիտեր, որ մի օր արևածագից առաջ նա կհատի տան շեմն ու կհեռանա, ուր որ աչքը կտրի: Եվ եթե մի օր բաց դաշտում ճամփորդելիս հուսահատություն զգա, կանգ կառնի և աչքերը կփակի ու կսկսի մտածել բազեի փետուրի մասին որ Փարին գտել էր անապատում՝ պատկերացնելով թե ինչպես է փետուրը պոկվում ամպերից՝ երկրագնդից կես մղոն վերև, ոլորվելով հողմապտույտի մեջ, քամու ուժգին շնչով անապատի և սարերի միջով անցնում հսկայական տարածություն և վայրէջք կատարում, բոլոր հանգամանքներին հակառակ, հենց այն տեղում, այն բլրի ստորոտին, որտեղ Փարին կարող էր գտնել այն: Եվ դա միաժամանակ կլինի թե՛ կատարված հրաշք, թե՛

հույս, որ հրաշքներ դեռ պատահում են: Եվ այդ պատկերներից հուսադրվելով՝ Աբդուլլան կբացի աչքերն ու կշարունակի իր ճանապարհը:

Այս հատվածը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է վեպում կատարվող իրադարձությունները, Աբդուլլայի զգացմունքներն ու այն ճանապարհը, որն անցել են Աբդուլլան ու Փարին իրարից հեռու:

Վեպում զուգահեռաբար զարգանում է նաև մեկ այլ սյուժե: Փարվանայի և Մասումայի պատմությունը: Մասուման գեղեցկուհի էր, իսկ Փարվանան չսպասված ծնունդ: Աբդուլլայի ու Փարիի հայրը՝ Սաբուրը, միշտ կախարդական էակների մասին պատմություններ էր հորինում ու պատմում: Քույրերը սիրահարված էին նրան, բայց Փարվանան այդպես էլ քաջություն չունեցավ ասելու իր սիրո մասին: Փարվանան ամբողջ կյանքում խուսափում էր քրոջ հետ երկուսով հայելու դիմաց կանգնելուց: Նա հուսալքվում էր, երբ Մասումայի կողքին տեսնում էր իր դեմքը և հասկանում, թե ինչից է զրկվել: Բայց մարդկանց աչքերը յուրահատուկ հայելի էին, և ազատում չկար դրանից: Երբ քույրերը 17 տարեկան էին, Մասուման հայտարարեց, որ Սաբուրը գալու է իրեն ուզելու: Երբ Փարվանան հարցրեց թե ինչո՞ւ է քույրն այդքան համոզված, նա մեջքով շրջվեց ու սկսեց գրպանում ինչ-որ բան փնտրել: Հետո կատարվեց մի բան, որի մասին Մասուման այդպես էլ չիմացավ: Նա վայր ընկավ ծառից ու հաշմանդամ դարձավ: Այս գաղտնիքը Փարվանան պահեց նույնիսկ այն ժամանակ, երբ կյանքում երկրորդ անգամ էր ազատվում քրոջից: Նա լքեց քրոջը՝ թողնելով մենակ սայլակի վրա նստած ու մտածեց, որ ոչ ոք չի բացահայտի իր գաղտնիքն ու միայն սարերը մեղսակից կլինեն:

«Բոլորը քեզ սիրում էին, Մասումա,

Իսկ ինձ ոչ ոք չէր սիրում:

Բայց ինչո՞ւ, քույրս, ի՞նչ էի ես արել»(Հոսեյնի 2016: 77):

Ու քայլեց Փարվանան դեպի նոր կյանք ու նրան թվաց, որ ծնվեց երկրորդ անգամ:

Հիմնական պատմությունն անում է Նաբին՝ նամակի ձևով: Նա պատմում է Վահդատիների, նրանց դժբախտ ամուսնության ու իր պարտականությունների մասին: «Ամուսինները երբեք քնշանքով իրար չէին նայում և ջերմ խոսքեր չէին փոխանակում: Նրանք պարզապես ապրում էին միևնույն տանը, և նրանց ճանապարհները հազվադեպ էին խաչվում» (Հոսեյնի 2016: 87):

Նաբին հավատարիմ ընկեր է դառնում և՛ պարոն Վահդատիի, և՛ Նիլայի համար:

«Չեմ կարող ասել, թե իսկապես երբ այդ միտքը ծագեց իմ գլխում: Ես թեյ էի մատուցում Նիլային, երբ ուղիորդից հաղորդագրություն հնչեց,

որ սպասվող 1952 թվականի ձմեռն ավելի ցուրտ ու դաժան է լինելու, քան նախորդը: Թույլ տվեք ասեմ, որ խիղճս մաքուր է, և առաջարկս միայն բարի կամքի ու լավության մտադրությունների արտահայտություն էր: Դա մի բան էր, որ սկզբում ցավ էր պատճառելու, բայց վերջում բարիք էր պարգևելու այդ պատմության բոլոր մասնակիցներին: Բայց հոգուս խորքում իմ մղումներն այնքան էլ ազնիվ չէին, ես ունեի իմ անձնական շահը: Ցանկությունս էր Նիլային նվիրել այն, ինչ ոչ՝ ամուսինը, ոչ՝ վարդագույն պատերով տան տերը (Նիլայի սիրելեանը) երբևէ չէին կարող նվիրել» (Հոսեյնի 2016: 104):

Նաբիի նամակը վեպը բացահայտող լավագույն հատվածներից է: Նաբին նվիրեց Նիլային երջանկություն, բայց դժվար է ասել թե ումից ինչ խլեց իր արարքով: «Ես ավերեցի այդ երկու անօգնական երեխաներին միացնող մաքրագույն և հստակ սերը և նրանց կտրեցի իրարից: Անհնար էր մոռացության տալ այդ զգացմունքային ցնցումը: Փարին ուսերիցս կախված, խուճապահար եղած ոտքերն էր թափահարում և ճչում էր՝ Աբուլա՛, Աբուլա, իսկ ես նրան հետ էի քաշում: Աբդուլլան ճչում էր՝ Փարի՛, փորձում էր պոկվել հոր ձեռքից: Նիլան կանգնած էր աչքերը լայն բացած և երկու ձեռքով բերանը փակած, կարծես ուզում էր լռեցնել սեփական ճիչը: Այդ հիշողությունները ճնշում են ինձ: Ինչքան ժամանակ է անցել, բայց դեռ զգում եմ այդ ծանրությունը» (Հոսեյնի, 2016: 106):

Դժվար է այստեղ խոսել մեղքի կոնցեպտի մասին, որովհետև Հոսեյնին չի բացահայտում Նաբիի ապրումները, ուղղակի ներկայացնում է, թե ինչպես չորս տարեկան Փարիի աշխարհայացքը վերածնալորվեց և նա սկսեց մայրիկ ու հայրիկ անվանել իրեն օտար մարդկանց: Փարիի հայտնվելուց հետո Վահդատիների ընտանիքը նմանվեց լիարժեք ընտանիքի: Փարիի հանդեպ սերը ստիպեց նրանց փոխվել: Ըստ համաձայնության՝ Փարիի իսկական ընտանիքը չպետք է տեսներ երեխային: Որոշ ժամանակ անց Նաբին այլևս ոչ մեկին չտեսավ ու այլևս երբեք չվերադարձավ Շադբադ:

1955 թվականի գարնանը բոլորի կյանքում կտրուկ շրջադարձ եղավ: Պարոն Վահդատին անկողին ընկավ, իսկ Նիլան Փարիի հետ մեկնեց Փարիգ⁵: Հոսեյնին այստեղ ներկայացնում է նաև ասպատակված Քաբուլի պատմությունը, ներկայացնում թե ինչպես Նաբին ու պարոն Վահդատին անցան այդ տարիների միջով: Սուլեյմանը մահացավ Նաբիին

⁵ Community Note 'And the Mountains Echoed'
<https://www.gradesaver.com/and-the-mountains-echoed/study-guide/analysis>

ժառանգելով իր ամբողջ ունեցվածքն ու միայնակ թողնելով նրան իր տարիների հետ:

Վեպում ևս մի պատմություն է պատմվում Թիմուր և Ինդրիս եղբայրների և Ռոլի անունով մի աղջնակի մասին, ում ընտանիքի հետ դժբախտ պատահար է տեղի ունեցել: Փոքրիկի հորեղբայրը կացնով սպանում է աղջկա հորն ու մորը, իսկ հինգ տարեկան եղբայրն իրեն թոնիրն է նետում, որտեղ մայրը մեկ ժամ առաջ հաց էր թխել: Միայն Ռոլին է կենդանի մնում, բայց փոքրիկը լուրջ վիրահատությունների կարիք է զգում: Իդրիսը փորձում է օգնել աղջկան: Որոշ ժամանակ անց նա վերադառնում է տուն ու մոռանում աղջկա գոյության ու իր տված խոստումների մասին: Տարիներ անց՝ գրախանութում Իդրիսը մի գրքի է հանդիպում, որի տիտղոսային էջին գրված էր. «Նվիրում եմ իմ կյանքի երկու պահապան հրեշտակներին՝ մորս՝ Ամրային, և իմ կակա Թիմուրին: Ձեզ եմ պարտական այն ամենի համար, ինչ ունեմ հիմա» (Հոսեյնի 2016: 175):

Գրախանութում էր նաև հեղինակը՝ Ռոշին: Նա ստորագրում է գիրքն ու տալիս Իդրիսին: Իդրիսի ձեռքերը դողում էին, բայց նորից սկսում է թերթել գիրքը: Ռոշին չէր ստորագրել, երկու նախադասություն էր գրել անգլերեն: «Մի մտահոգվեք: Իմ գրքում Ձեր մասին հիշատակում չկա» (Հոսեյնի 2016: 176):

Իդրիսը երկար ժամանակ ուշքի չէր գալիս, հետո թողնում է գիրքը նստարանին ու հեռանում: Այս հատվածը նույնպես էմիգրանտական գրականության վառ դրսևորումներից է: Քաբուլում Իդրիսը կապվում է աղջկա հետ, ամեն օր այցելում նրան, օգնում, իսկ երբ վերադառնում է Ամերիկա աստիճանաբար մոռանում է աղջկա մասին, քանի որ հոգս ու ծանր բեռ է դառնում նրա մասին մտածելն ու օգնելը և օտարանում է:

Վեպի 6-րդ գլխում ներկայացվում է աֆղան բանաստեղծուհի Նիլա Վահդատիի հարցազրույցը, որից օրեր անց նա մահանում է: Մինչ Քաբուլում կյանքն ընթանում է Թալիբանի, Ալ Քաիդայի կամ ուրիշ կիսախելագար հրամանատարների բռնություններով, Փարին ու Նիլան շարունակում են իրենց կյանքը Փարիզում: Հարցազրույցի ընթացքում Նիլան իր կյանքից պատմում է մանրամասներ, որոնք նույնիսկ Փարիի համար էին անհայտ: Նա պատմում է իր մանկության, ծնողների, իր հիվանդության, Հնդկաստան այցի, չստացված ամուսնության ու դստեր մասին:

«Ինչ արել եմ, արել եմ արել եմ աղջկաս համար: Նա չի գնահատում և չի գիտակցում իմ նվիրման չափը: Եթե նա իմանար՝ ինչ կյանքով կարող էր ապրել, եթե ես չլինեի» (Հոսեյնի 2016: 214):

Իրականում պարզ չէ, թե ինչ կյանքով կապրեր Փարին, կամ իր համար ո՞ր տարբերակն ավելի ճիշտ կլիներ: Եթե Նիլան չորդեգրեր նրան, գուցե Փարին մնար Աֆղանստանում իր ընտանիքի, եղբոր հետ և երջանիկ լիներ, ավելի քան էր: Բայց կարող էր նաև ճիշտ հակառակը լինել: Գուցե Փարին մահանար, իսկ եթե նույնիսկ չմահանար, կապրեր դժվար, զրկանքներով լի կյանք: Նիլայի մահվանից հետո, երբ Փարին կարդում էր մոր հարցազրույցը, իր համար պարզում է, որ մայրը լրագրողին ավելի շատ բան է պատմել իր կյանքից, քան իրեն՝ իր հարազատ աղջկան: Երևի այդ հարցազրույցը նրա վերջին հեգնանքն էր: Նիլայի մահից հետո Փարին շարունակում է ապրել, ամուսնանում, երեխաներ ունենում, բայց ցանկությունը Աֆղանստան գնալու այդպես էլ չի մարում նրա մեջ: Նա գիտեր, որ մինչև վերջ չի բացահայտել այն զաղտնիքը, որն ուղեկցում էր իրեն ամբողջ կյանքի ընթացքում: Շուտով Փարին այրիանում է: Մի օր՝ 2010 թվականի գարնանը, Փարին հեռախոսազանգ է ստանում: Դա անակնկալ զանգ չէր, Փարին երկար էր սպասել այդ զանգին:

Հոսեյնին ընթերցողին արդեն ծանոթ երկու վեպերում՝ «Օդապարուկ թոցնողները» և «Եվ արծագանքեցին լեռները», անցյալի, հիշողությունների, զաղտնիքի բացահայտումն իրականացնում է միևնույն գործիքով՝ հեռախոսազանգի միջոցով: Երբ հեռախոսի մյուս կողմից Մարկոս Վարվարիսը խոսում էր նամակի մասին, Փարին ենթագիտակցորեն գիտեր, որ աշխարհի մյուս ծայրում ճշմարտությունն է: Նա գիտեր, որ մայրը ստել է իրեն իր մանկության մասին: Մարկոսն ընթերցում է նամակն ու այդ պահից Փարին սկսում է զգալ, թե ինչպես է իր մեջ բացվում դատարկությունը: Փարին հասկանում է, որ իր ամբողջ կյանքում եղել է մի ինչ-որ մեծ բանի բացակայություն, մի բանի, որի մասին նա միշտ գիտեր: Եվ հանկարծ ֆարսիով մի երգ սկսում է պտտվել Փարիի ուղեղում.

«Ես գիտեմ մի փոքրիկ, տխուր փերիի,
Ում մի գիշեր տարավ քամին» (Հոսեյնի 2016: 236):

Հանկարծ Փարին ամեն ինչ հիշում է. իր տունը, հորը, եղբորը, շանը, բարձր ու կապույտ երկինքը՝ ջրաղացի հետևում մայր մտնող արևով, և միշտ միզամած լեռնաշղթաները, որ անվերջանալի ձգվում են դեպի հորիզոնը: Հոսեյնին Փարիի պատմությունը ևս մեկ անգամ է ընդհատում՝ պատմելու Ադելի, նրա հոր՝ հրամանատար Սահիբի, Ղուամի և նրա հոր պատմությունը: Հոսեյնին այստեղ կրկին անդրադառնում է երկարատև տառապանքների կրած ու ապաքինման ճանապարհին գտնվող Աֆղանստանին: Հայրենիքի ճակատագիրը հանգիստ չի թողնում հեղինակին ու նա իր հերոսների միջոցով փորձում է արտահայտել այն

ցավն ու տառապանքը, որ կրել են աֆղանցիները պատերազմի ընթացքում ու դրանից հետո: Հրամանատար Սահիրը բարեգործություններ է անում, այնինչ խլել է Ղուլամին ու նրա հորը պատկանող տարածքն ու նույն տեղում կառուցել իր տունը: Այստեղ միջանկյալ պատմություններն ավարտվում են ու Հոսեյնին վերջապես Փարիի պատմությունն հասցնում է ավարտին: Խոսքն այստեղ ավագ Փարիի մասին է: Աբդուլլայի դստեր անունը նույնպես Փարի է: Նա խենթի պես սիրում է աղջկան և ամեն գիշեր բարի երազներ մաղթում ու հեքիաթներ պատմում նրա համար: Փոքրիկ Փարին նույնպես երազներ էր որսում հոր համար և երբ Աբդուլլայի հարցնում էր, թե ինչ է տեսնելու երազում Փարին լայն ժպտում էր, որովհետև վաղօրոք գիտեր երազը: «Աբդուլլան ու իր քույրը պառկած են ծաղկած խնձորենու տակ ու վայելում են միջօրեի նինջը: Արևը ջերմացնում է նրանց այտերը, շողեր գցում խոտի վրա, և տերևները շրշում են գլխավերևում» (Հոսեյնի, 2016: 342):

Փարին իրեն միայնակ է զգում, որովհետև միակ երեխան է: Նա ամենաշատը երկորյակ էր ուզում ունենալ, ում մեջ կգտներ իր սեփական արտացոլանքը: Եվ այսպես Բաբայի քույրը՝ Փարին դառնում է կրտսեր Փարիի գաղտնի ընկերուհին, ում կարող է տեսնել միայն ինքը: Փարին իր քույրն էր, այն քույրը, որ ծնողներն այդպես էլ չպարզեցին Փարիին: Ոչ ոք չգիտեր, որ նա խաղում է Փարիի հետ, նույնիսկ հայրը: Դա միայն իր գաղտնիքն էր: Փարին երբեմն տեսնում է նրան իր պերիֆերիկ տեսողությամբ: Փարին հոր քրոջ կորստի պատմությունը շատ լավ գիտեր, բայց պատրաստ էր նորից ու նորից լսել ու ամեն գիշեր խնդրում էր Աբդուլլային պատմել այդ տխուր և ուշագրավ պատմությունը: Փարին սիրում էր Փարիին: Միգուցե պատճառն այն էր, որ նրանք նույն անունն էին կրում, և Փարին զգում էր նրանց միջև ստեղծված աղոտ, անորոշ և անտեսանելի կապը: Բայց կար մի այլ բան. նա զգում էր Փարիի ազդեցությունն իր վրա, կարծես նրա հետ կատարվածը հետք էր թողել նաև Փարիի կենսագրության վրա: Նրանց միացրել ու շաղկապել էր մի անտեսանելի ձեռք, որն առաջացել էր իրենց անուններից, ընտանեկան կապերից, կարծես երկուսով կազմում էին մի խճանկար: Եվ միայն տարիներ անց նրանց հնարավորություն է տրվում հանդիպելու իրար: Փարին դիմավորում է Փարիին օդանավակայանում և տանում տուն, որտեղ Աբդուլլան է ապրում: Նրանք խոսում են իրար հետ այնպես, կարծես ամբողջ կյանքում ճանաչել են իրար:

«Մարդ պիտի իմանա՝ ինչպես է սկսվել իր պատմությունը, այլապես ամբողջ կյանքը անիրական կթվա: Խճանկարի պես: Երբ չգիտես պատմության սկիզբը, անվերջ փորձում ես ենթադրություններ անել» (Հոսեյնի 2016: 352):

58 տարի հետո Փարին գտավ եղբորը: Նրա մասին գրեթե ոչինչ չէր հիշում. ոչ՝ դեմքը, ոչ՝ ձայնը: Միայն հիշում էր, որ իր կյանքում մի լավ բան կար, որը միշտ կարոտում էր: Մի ինչ-որ լավ բան: Աբդուլլան կորցրել էր հիշողությունը: Նա կարծես բացակա լիներ՝ ներփակված իր աշխարհի մեջ, կարծես ուզում էր ուրիշ տեղ նայել, բայց հայացքն ընկնում էր դիմացինի երեսին: Փարին թվում էր, որ իրենց երգի օգնությամբ Աբդուլլան կհիշի իրեն, նրան կհաջողվի ճեղքել պատնեշը և միանալ եղբորը այդ կախարդական երգի միջոցով, բայց Աբդուլլան ուղղակի արձագանքում էր Փարիի հպմանը և սիրո դրսևորմանը: Դա միայն կենդանական բնագր էր, ուրիշ ոչինչ: Աստված Աբդուլլային պարզեցել էր մոռացության սրվակը, բայց այն ժամանակ, երբ արդեն պետք չէր: Ճակատագրի հեգնանք էր չհիշել Փարիին ամբողջ կյանքում հիշելուց հետո: Մոտ մեկ ամիս Փարին մնաց եղբոր մոտ, այդ ընթացքում մի քանի անգամ փորձելով հիշեցնել Աբդուլլային իր գոյության, իրենց մանկության մասին, բայց ապարդյուն: Փարիների շփումը ստացվում է, նրանք դառնում են լավ ընկերներ: Մի օր կրտսեր Փարին ցույց է տալիս հորաքրոջն այն նամակները, որոնք գրել է:

«Ես երևակայում էի, որ մենք երկվորյակներ ենք: Ես քեզ ամեն ինչ պատմում էի: Բոլոր գաղտնիքներս: Դու միշտ այնքան իրական էիր ինձ համար, այնքան մոտիկ: Քո շնորհիվ ես ինձ միայնակ չէի զգում: Ես պատկերացնում էի, որ մենք տերևներ էինք՝ նույն ծառից ընկած, և թեպետ քամին մեզ տարել է աշխարհի տարբեր ծայրեր, մեզ միացնում են ծառի արմատները» (Հոսեյնի 2016: 387):

Փարին վերջապես գտել էր իր երկորյակին և երջանիկ էր:

«Ինձ մոտ հակառակն էր: Դու ասացիր, որ ներկայություն էիր զգում, իսկ ես, ընդհակառակը, զգում էի, որ իմ կյանքից մի բան բացակա է: Դա անորոշ ցավ էր՝ անհայտ ակունքով: Ես նման էի մի հիվանդի, որը բժկին չէր կարող բացատրել, թե ինչն է ցավում: Միայն գիտի, որ ցավում է» (Հոսեյնի 2016: 387):

Փարին փոքրուց երագում էր լսել, որ հորաքույրը երջանիկ է: Երբ միայնակ էր զգում, շնչում էր իրենց ընդհանուր անունը և շունչը պահած սպասում էր, որ նա մի օր կարձագանքի և վերջապես նրանց բաժանող տարիները կարծես ծալվեցին, կծկվեցին՝ դառնալով լուսանկար, բացիկի չափ մի բան: Փարին իր մանկության մասունքի կողքին էր նստած և կարծես մի բան շխկոցով ընկավ տեղը: Մի պատռված բան նորից միացավ: Աբդուլլան մահացավ՝ թողնելով Փարիներին ինքնուրույն ավարտել պատերազմը: Փարին գտավ հոր նամակը և երախտագիտության զգացում ապրելով այն երեքշաբթիների համար, երբ Բաբան տանում էր իրեն ֆարսիի դասերի, սկսեց կարդալ Փարիի

համար. «Նրանք ասացին, որ ես սուզվում եմ ջրի հատակը և շուտով կխեղդվեմ: Եվ նախքան սուզվելը ավիին թողնում եմ սա քեզ համար: Ուզում եմ՝ գտնես այն, քույր՝ իմ, և հասկանաս, որ մինչև կյանքիս վերջ դու իմ սրտում էիր»(Հոսեյնի, 2016: 396):

Կար նաև ամսաթիվ՝ օգոստոս, 2007, հենց այն ժամանակ, երբ Բաբայանը Աբդուլլայի հիվանդությունը: Փարին հորաքրոջը հանձնեց նաև մի հին թիթեղյա տուփ, որի մեջ բազմաթիվ փետուրներ կային: Փարին չգիտեր, թե ինչ փետուրներ էին դրանք, բայց նա հաստատ գիտեր, որ իր եղբայրը տարիներ շարունակ մտածել էր իր մասին: Հիշել էր քրոջը:

«Երբ մենք իրար կորցրինք, Աբդուլլան ավելի մեծ ցավ ապրեց: Ես ավելի բախտավոր էի, որովհետև ավելի փոքր էի և կարող էի մոռանալ: Ես մոռանալու երջանկություն ունեցա, իսկ նա՝ ոչ»(Հոսեյնի, 2016: 396):

Վեպն ավարտվում է Պոնտ Սեն Բենեդեկտ կամրջի մոտ: Այս կամրջի մասին մանկական երգեր կան: Կամուրջը կիսված է, մնացել են նրա կամարներից չորսը միայն: Այն ջրի կեսին հասնելով ընդհատվում է: Կարծես ձգվելով ուզում է միանալ իր երկրորդ կեսին, բայց չի հասնում: Խալեդ Հոսեյնիի նկարագրած հերոսներն էլ կիսված կամուրջներ են, որոնք անընդհատ ձգտում են հասնել իրար, բայց չեն հասնում: Պատճառն օտարումն ու ինքնօտարումն է:

Եզրափակելով նշենք, որ Խալեդ Հոսեյնիի հերոսները նախ հեռանում են իրենց հայրենիքից, տեղափոխվում Ամերիկա և մեկուսանալով իրենց հարազատ միջավայրից՝ դառնում հազարավոր էմիգրանտներից մեկը: Հողվածում ներկայացված օտարման և ինքնօտարման իրողությունները էմիգրանտական գրականության համատեքստում գալիս են փաստելու, որ և՛ տարածական, և՛ հոգեբանական հեռավորությունը կարող է հանգեցնել ոչ միայն հասարակությունից օտարման, այլ նաև ներքին մեկուսացման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հոսեյնի Խ. Եվ արձագանքեցին լեռները, թրգմ.Անուշ Սեդրակյանի, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2016
2. “Existentialism and Human Emotions”: Philosophical Library, New York. Print.
3. Hosseini K. And the Mountains Echoed, US, Riverhead Books, 2013
4. [Michiko Kakutani](https://www.enotes.com/topics/alienation-literary-theme) ‘Siblings Haunted by the Past, and by Afghanistan’s Cycle of Misery’ <https://www.enotes.com/topics/alienation-literary-theme>
5. [Stanford Encyclopedia of Philosophy](https://plato.stanford.edu/entries/alienation/) ‘Alienation’ <https://plato.stanford.edu/entries/alienation/>

6. Book Review: 'And the Mountains Echoed by Khaled Hosseini'
<https://www.litro.co.uk/2013/07/book-review-and-the-mountains-echoed-by-khaled-hosseini/>
7. The Guardian 'And the Mountains Echoed by Khaled Hosseini' – review
<https://www.theguardian.com/books/2013/may/26/mountains-echoed-khaled-hosseini-review>
8. Community Note 'And the Mountains Echoed'
<https://www.gradesaver.com/and-the-mountains-echoed/study-guide/analysis>

REFERENCES

1. Hoseyni X. Ev ard'aganqecin ler'nery', t'rgm.Anowsh Sedrakyani, Er&an, Zangak hratarakchownt'yown, 2016

АМАЛИЯ СОГОМОНЯН - ПРОБЛЕМА ОТЧУЖДЕНИЯ В РОМАНЕ ХАЛЕДА ХОССЕЙНА «И ЭХО ЛЕТИТ ПО ГОРАМ»

Ключевые слова: эмигрантская литература, горы, перья, фея, грех, усыновление, отчуждение, прошлое, мемуары, секреты, исцеление

В рамках этой работы сделана попытка представить структурные и идеологические принципы и особенности современного афганского автора Халеда Хоссейна в романе «И эхо летит по горам». В ходе анализа делается попытка раскрыть глубокие и скрытые смыслы романа, а также литературные подходы автора к судьбам героев и поиску возможного выхода на жизненного пути в контексте эмигрантской литературы.

AMALYA SOGHOMONYAN – THE PROBLEM OF ALIENATION IN KHALED HOSSEINI’S NOVEL “AND THE MOUNTAINS ECHOED ”

Keywords: emigrant literature, mountains, feathers, fairy, sin, adoption, alienation, past, memoirs, secrets, healing

Within the framework of this article, an attempt is made to present the structural and ideological principles and peculiarities of modern Afghan author Khaled Hosseini in the novel "And the Mountains Echoed." During the analysis, an attempt is made to uncover the deep and hidden meanings of the novel, as well as the author's literary approaches to the destinies of heroes and the search for exit a way out in the context of emigrant literature.

Ներկայացվել է՝ 23.09.2019

Գրախոսվել է՝ 12.09.2019

Երաշխավորվել է ԵՊՀ Արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից՝ 18.09.2019

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ - հայցորդ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԵՊԼՀ

АНИ АСЛАНЯН - соискатель, каф. мировой литературы и культуры, ЕГУЯСН

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵԳՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, անգլերենի ամբիոն, ԵՊԼՀ

ГАЯНЕ БАРСЕГЯН - кандидат филологических наук, старший преподаватель, каф. английского языка, ЕГУЯСН

GAYANE BARSEGHYAN - Ph.D, senior lecturer, Chair of English, YSULS

ԶՈՐԻ ԲԱՐՍԵԳՅԱՆ - մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

ЗОРИ БАРСЕГЯН - кандидат педагогических наук, ассистент, Национальный политехнический университет Армении

ZORI BARSEGHYAN - Ph.D in Pedagogy, assistant, National Polytechnic University of Armenia

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայագիտության ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

ГАЯНЕ ГЕВОРГЯН - доктор филологических наук, профессор, зав. кафедрой арменоведения, ЕГУЯСН

GAYANE GEVORGYAN - Doctor in Philology, Professor, Head of the Chair of Armenian Studies, YSULS

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, ԵՊԼՀ

ЛИЛИТ ГЕВОРГЯН - кандидат филологических наук, доцент, каф. арменоведения, ЕГУЯСН

LILIT GEVORGYAN - Ph.D., Associate Professor, Chair of Armenian Studies, YSULS

ՌՈՒԶԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու,

դոցենտ, անգլերենի ամբիոն, ԵՊԼՀ

РУЗАННА ГЕВОРКЯН - кандидат филологических наук, доцент, каф. английского языка, ЕГУЯСН

RUZANNA GEVORGYAN - Ph.D., Associate Professor, Associate Professor, Chair of English, YSULS

ԹԱՄԱՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ - ասպիրանտ, Օտար լեզուների ամբիոն, Արցախի պետական համալսարան

ТАМАРА ДАНИЕЛЯН - аспирант, каф. иностранных языков, Арцахский Государственный Университет

TAMARA DANIELYAN - PhD student, Chair of Foreign Languages, ASU

ՐՈՒԶԱՆՆԱ ԴՈԽՈՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, ԵՊԼՀ

РУЗАННА ДОХОЯН - кандидат филологических наук, доцент, каф. арменоведения, ЕГУЯСН

RUZANNA DOKHOYAN - Ph.D., Associate Professor, Chair of Armenian Studies, YSULS

ԳԱՅԱՆԵ ԵԴԻԱԶԱՐՅԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերենի ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН - доктор филологических наук, профессор, зав. каф. английского языка, ЕГУЯСН

GAYANE YEGHIAZARYAN - Doctor in Philology, Prof., Head of Chair of English, YSULS

ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, գերմաներենի ամբիոն, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԵՊԼՀ

ЕЛЕНА ЭТАРЯН - кандидат филологических наук, доцент, каф. немецкого языка, каф. мировой литературы и культуры, ЕГУЯСН

YELENA ETARYAN - Associate Professor, Chair of German, Chair of World Literature and Culture, YSULS

ՍՅՈՒԶԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ - հայցորդ, ռոմանական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

СЮЗАН ТОРОСЯН - соискатель, каф. романских языков, ЕГУЯСН

SYUZAN TOROSYAN - Ph.D student, Chair of Romance Languages, YSULS

ԼԻԼԻԹ ՀԱԿՈՐՅԱՆ - ասպիրանտ, ԴՕԼՖ (ՉԺՀ), Կոնֆուցիուսի ինստիտուտի ուսումնական մասի համակարգող, ԵՊԼՀ

ЛИЛИТ АКОПЯН - аспирант ДУИЯ (Китай), координатор учебной части института Конфуция, ЕГУЯСН

LILIT AKOPYAN - PhD student, DFLU (China), Coordinator of Confucius Institute, YSULS

ԼԻԼԻԹ ՀԱԿՈՐՅԱՆ - բանասիրության մագիստրոս, ԵՊԼՀ

ЛИЛИТ АКОПЯН - магистр филологии, ЕГУЯСН

LILIT HAKOBYAN - Master's degree in Philology, YSULS

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՐՋԱՆՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, ԵՊԼՀ

АНАИТ АКОБДЖАНИЯН - кандидат филологических наук, доцент, каф. арменоведения, ЕГУЯСН

АНАИТ НАКОВЖАНЫАН - Ph.D., Associate Professor, Chair of Armenian Studies, YSULS

ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ - դոցենտ, ռոմանական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

ДОНАРА КАЗАРЯН - кандидат филологических наук, доцент, каф. романских языков, ЕГУЯСН

DONARA GHAZARYAN - Ph.D., Associate Professor, Chair of Romance Languages, YSULS

ԱՍՏԴԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ - հայցորդ, ռոմանական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

АСТХИК МАРГАРЯН - соискатель, каф. романских языков, ЕГУЯСН

ASTGHİK MARGARYAN - PhD student, Chair of Romance Languages, YSULS

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ - դասախոս, ռոմանական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

АНАИТ МКРЯН - преподаватель, каф. романских языков, ЕГУЯСН

АНАИТ МКРЯН - lecturer, Chair of Romance Languages, YSULS

ԼԻԼԻԹ ՄՈՎՍԵՍՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն, ԵՊԼՀ

ЛИЛИТ МОВСЕСЯН - кандидат филологических наук, старший преподаватель, каф. языкознания и теории коммуникации, ЕГУЯСН
LILIT MOVSESYAN - PhD, senior lecturer, Chair of Linguistics and Theory of Communication, YSULS
[

ՇԱՀԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ - հայցորդ, ռոմանական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ
ШАГАНЭ ПЕТРОСЯН - соискатель, каф. романских языков, ЕГУЯСН
SHAHANE PETROSYAN - PhD student, Chair of Romance Languages, YSULS

ԻՐԻՆԱ ՍԻՆԻՑԱ - բանասիրական գիտությունների դոկտոր, Դալյանի օտար լեզուների համալսարանի Ուկրաինայի հետազոտությունների կենտրոնի պրոֆեսոր (ՉԺՀ)
ИРИНА СИНИЦА - доктор филологических наук, профессор Центра исследований Украины Даляньского университета иностранных языков
IRYNA SYNYTSIA - Doctor of Philology, Professor at Ukraine Research Center of Dalian University of Foreign Languages (China)

ԱՄԱԼՅԱ ՍՈԴՈՄՈՆՅԱՆ - ասպիրանտ, արտասահմանյան գրականության ամբիոն, ԵՊԼՀ
АМАЛИЯ СОГОМОНЯН - аспирант, каф. иностранной литературы, ЕГУ
AMALYA SOGHOMONYAN - PhD student, Chair of Foreign Literature, YSU

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ - հայցորդ, անգլերենի ամբիոն, ԵՊԼՀ
СЮЗАННА СТЕПАНИЯН - соискатель, каф. английского языка, ЕГУЯСН
SYUZANNA STEPANYAN - Ph.D student, Chair of English, YSULS

Համակարգչային ձևավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի,
Աննա Ավետիսյանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական
համալսարան
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (374 11) 300-150
Էլ. հասցե՝ info@brusov.am
<http://www.brusov.am>

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական
համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 1(50) համարը
երաշխավորվել է տպագրության ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 04.11.2019
թվականի № 3 նիստի որոշմամբ: